ԱՆԺԵԼԱ ՏԵՐՅԱՆ

ՍԻՏԱԼԻ

ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՎԵՐԱԿԱՄՆԳՆՎԻ, ԵՐԲ ԱԶԳԸ ՃԱՆԱՉԻ ԻՆՔՆ ԻՐԵՆ

ԱՍԿԱՆ
ԵՐԵՎԱՆՑԻ

ANGELA TERYAN

MITANI
(HURRI-MITANI)
ANCIENT ARMENIAN STATE

АНЖЕЛА ТЕРЯН

МИТАНИ
(ХУРРИ-МИТАНИ)
ДРЕВНЕЕ АРМЯНСКОЕ ГОСУДАРСТВО

"VOSKAN EREVANTSI"
PUBLISHING HOUSE

ИЗДАТЕЛЬСТВО
"ВОСКАН ЕРЕВАНЦИ"

YEREVAN 2006 ЕРЕВАН

9(47.925)
Հ-47

ԱՆԺԵԼԱ ՏԵՐՅԱՆ

ՄԻՏԱՆԻ
(ԽՈՒՐՐԻ-ՄԻՏԱՆԻ)
ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

4876

«ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Տ 470

Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի և Երևանի պետության թանգարանի գիտամեթոդական խորհրդի երաշխավորությամբ:

Գրքի տպագրությունը հովանավորել է
Երևանի քաղաքապետ ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆԸ

Խմբագիր՝ պատմական գիտությունների
դոկտոր Ա. Վ. ՔՈՍՅԱՆ

Տերյան Անժելա

Տ 470 Միտանի (Խուրրի-Միտանի) Հայոց հնագույն պետություն.- Եր.: Ոսկան Երևանցի, 2006.-140 էջ:

Մ.թ.ա. 15–14-րդ դարերում Հայկական լեռնաշխարհի հարավում՝ Վանա լճի և Զագրոսի լեռների միջև ապրող հայկական (խուրրիական) միտանի ցեղի առաջնորդներին հաջողվել է ստեղծել մեզ հայտնի առաջին հզոր Հայկական պետությունը՝ Միտանին (Խուրրի–Միտանի): Միտանիի թագավորները Եգիպտոսի ու Խաթթիի հետ դժվարին պայքարում հաջողության են հասել և մոտ 2,5 դար պահպանել ուժեղ պետության համբավը, որի սահմանները տարածվում էին Միջերկրական ծովից մինչև Կովկասի նախալեռներ: Հայտնի է, որ այս տարածքը համաշխարհային քաղաքակրթության և մշակույթի ստեղծման հնագույն կենտրոններից է: Մեծ է Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայարմենների (խուրրիներ, ուրարտացիներ, նաիրցիներ) ավանդը այդ քաղաքակրթության ստեղծման մեջ:

Տ $\frac{0503020913}{847(01)06}$ 2006 ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 99930-0-108-2

© ՏԵՐՅԱՆ Ա., 2006թ.
© «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ», 2006թ.

ՆԱԽԱԲԱՆ

Առաջավոր Ասիայում (Խաթթուսաս, Ալալախ, Արրապխա) և Եգիպտոսում (Ամառնա) կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել են գրավոր տեքստեր, որոնք թույլ են տալիս ասելու, որ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին Առաջավոր Ասիայում ստեղծվել էր ժամանակի հզոր պետությունը՝ Միտանին, որի սահմանները տարածվում էին Միջերկրական ծովից, Կիլիկիայից մինչև Կովկասի նախալեռներ: Պետության հիմնական բնակիչները, ըստ գրավոր աղբյուրների, խուրրիներն էին, որոնց ուսումնասիրողները Հայկական լեռնաշխարհի բնիկներ են համարում (ИДМ, 1982, М, с.186): Այդ ժամանակաշրջանի գրավոր աղբյուրները վկայում են, որ տարածաշրջանում ստեղծվել էր քաղաքական մի վիճակ, երբ Հայկական լեռնաշխարհի և շրջակա տարածքների բնակիչներին անհրաժեշտ էր դիմակայել հզորացող Խաթթիին և Եգիպտոսին: Մ.թ.ա. 17-16-րդ դդ. Վան–Ուրմիա լճերի և Զագրոսի լեռների միջև ընկած տարածքներում ապրող խուրրիական միտանի ցեղի առաջնորդներին (թագավորներ) հաջողվել է միավորել Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ փոքր պետական կազմավորումները ու ցեղերը և ստեղծել Միտանի պետությունը: Միտանիի հռչակավոր մայրաքաղաքն էր Վաշշուգանեն: Միտանին և խուրրիները հայտնի են իրենց ստեղծած հզոր մշակույթով, որը մեծ ազդեցություն է ունեցել խեթական (խեթականի միջոցով՝ նաև հունական), եգիպտական, սեմական, մասնավորապես ասուրական ու բաբելական և այլ մշակույթների զարգացման վրա: Ցավոք, քիչ են հայտնաբերված խուրրիական գրավոր աղբյուրները, քիչ են նաև մշակութային արժեքները: Խուրրիների պատմությամբ ու մշակույթի հարցերով զբաղվել են Հ. Վինքլերը, է. Վայդները, Պ. Ենսենը, Լ. Մեսսերշմիդտը, Ա. Սեյսը, Ֆ. Բորկը, Ա. Ունգնադը, է. Սպայզերը, Գ. Վիլհելմը, Ա. Կամմենհուբերը, Ա. Խաչատրյանը, Ի. Դյակոնովը և ուրիշներ: Խուրրիագիտության մեջ առկա են տարակարծությունների տեղիք տվող մի շարք հարցեր: Առավել կարևոր են հետևյալ հարցերը. ի՞նչ փոխհարաբերությունների մեջ են եղել խուրրի-

ները և միտանիները, խուրրիները և սուբարիները, խուրրիները և ուրարտացիները: Կարևորվում են հատկապես երկու հարց՝ գոյություն է ունեցել մե՞կ (Միտանի), թե՞ երկու պետություն (Խուրրի և Միտանի): Իսկ ովքե՞ր էին երկրի բնակիչները՝ խուրրի-միտանիները: Նրանք արիակա՞ն, սեմակա՞ն, թե՞ այլ ցեղեր էին: Ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում են նաև փոքրասիական և խուրրիական կրոնական հարաբերությունները, մշակութային ու լեզվական հարցերը և այլն: Առաջավոր Ասիայում հայտնաբերված գրավոր աղբյուրներից Միտանիի պատմության ուսումնասիրման համար կարևոր են Խաթթիի մայրաքաղաք Խաթթուսասից (Անկարայի մոտ, այժմ Բողազքոյ), եգիպտական Ամառնա բնակավայրից հայտնաբերված, նաև ասուրա-բաբելական և խուրրիական գրավոր արձանագրությունները: Ուսումնասիրողների շրջանում մեծ տարածում է ունեցել այն տեսակետը, որ Միտանիում իշխել է արիական վերնախավ, արիական (միտանյան) արքայատոհմի գլխավորությամբ (O. Герих, Хеммы, с. 27): Ուսումնասիրողներից Հ. Վինքլերը, է. Վայդները (Politische Dokumente aus Kleinasien), Կոնտենոն, Կոհենը, Ա. Մեյեն (Հանդէս Ամսօրեա, 1913, 4) ընդունում են, որ Միտանի պետությունը ընդգրկում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհը: է. Վայդները գտնում էր, որ Միտանիի թագավոր Տուշրատայի նախորդների ժամանակ Խուրրին ընդգրկում էր Միջագետքն ու Հայաստանը: Հ. Վինքլերը Միտանիի սահմանները հասցնում էր մինչև Կովկաս և այլն: Հայկական լեռնաշխարհում ստեղծված այս պետությունը՝ Միտանին Առաջավոր Ասիայի գրավոր աղբյուրներում հանդես է գալիս տարբեր անվանումներով: Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայարմենների ստեղծած պետություններն ու պետական կազմավորումները վաղ պատմություն ունեն և հազարամյակների ընթացքում նրանց հարևանությամբ շատ ցեղեր ու ժողովուրդներ են հայտնվել, որոնք մեր ժողովրդի ու երկրի համար օգտագործել են բազմաթիվ անուններ: Այսպես. Խաթթուսասի տեքստերում հանդիպում են Խուրրի, Իսուվա (Իշուվա, Ծուիք), Կիզվատնա-Կիցվատնա (Կիլիկիա) անունները: Ամառնայի տեքստերում հանդիպում են Նահարինի «Միջագետք», (Հ. Վինքլեր, Տեղեկագիր, 1926, 1), Խանի Ռաբատ, Խանիգալբատ, Խալիգալբատ (այս անունը հաճախ համեմատվում է քանանացիների անվան հետ), Միտանի, Ալշե (Ալզի, Աղձնիք) անունները: Արևմտյան սեմիտները Միտանիի համար օգտագործում են Նահարաին «Գետերի երկիր» (էդ. Մեյեր, Տեղեկագիր, 1926, 1) անունը: Գրավոր տեքստերում երկրի անունը ընթերցվում է Mitanni, Mitâni, Mittanni ձևերով (ռուսական պատմագրությունը օգտագործում է Mitanni ձևը): Ներկայացվող աշխատության մեջ օգտագործվելու է երկրի անվան **Միտանի** ձևը, առանց կրկնավոր բաղաձայնների

օգտագործման, քանի որ հայերենին հատուկ չէ կրկնավոր բաղաձայնների օգտագործումը անունների մեջ:

Հայկական միջնադարյան (5-րդ դարից սկսած) գրավոր աղբյուրներում Խուրրի, Միտանի նաև Ուրարտու անուններով պետությունների մասին չկան վկայություններ: Այսօր հնարավոր չէ ստույգ որևէ բան ասել, սակայն պահպանվել են ինչ-որ հիշողություններ Մ. Խորենացու և այլ պատմիչների աշխատություններում (Հայկի ու Բելի պատերազմը՝ իբրև հայկական (արիական) ու սեմական աշխարհների բախում, Արամ աշխարհակալ թագավորի, Զարմայր Նահապետի, Արա Գեղեցիկ թագավորի և Շամիրամի մասին պատմություններն ու զրույցները և այլն): Առաջին խուրրիերեն բառերին ուսումնասիրողները հանդիպել են աքադական հոմանիշների բառարանում: Այդ բառերը ունեցել են նշում SU (-bir^{KI}), որը համընկնում էր աքադական այլ տեքստերում հանդիպող Սուբարտու (հնագույն ձևը Šubur, որը վերաբերում է հին աքադական՝ Նարամ-Սուենյան ժամանակներին) անվանը: Խուրրիների մասին հնագույն գրավոր աղբյուրներից կարևորվում են Ամառնայից հայտնաբերված դիվանագիտական տեքստերը, այդ թվում՝ Միտանիի թագավոր Տուշրատայի նամակը գրված միտաներենով, որի նախաբանը աքադերենով գրված ողջույնի տեքստ էր: Միջինսիրիական Թունիք քաղաքից, Խաթթուսասից և այլ վայրերից ևս հայտնաբերվել են տեքստեր, որտեղ ընթերցվել են միտանի, խուրրի անունները, նաև միտաներեն (խուրրիերեն) բառեր ու նախադասություններ: Ուսումնասիրողների շրջանում մեծ հետաքրքրություն են առաջացրել արձանագրություններում ընթերցվող Միտանի երկրի բնակիչների խուրրի և միտանի անունները:

Խուրրին տեքստերում նախ ընթերցվել է <u>h</u>ar խար (հար) ձևով: Այս ընթերցումը ուսումնասիրողների մի մասը կապել է արիներ անվան հետ, իսկ խուրրիերենը համարվել է հին արիական լեզու (H. Winckler, Vorläufige Nachrichten über die Ausgrabungen in Boghaz-köi im Sommer, 1907, MDOG, 35: H. Winckler, Orientalistische literatur Zeitung Leipzig, 1909-10.): Այլ ուսումնասիրողներ միայն միտանիներին են համարել արիներ (B. Hrozny, Archiv, Oriental, N 3, 1929, 296, Ա. Խաչատրյան, 1933, էջ 153): Սակայն այս տեսակետը մերժվել է, երբ Խաթթուսասից հայտնաբերված տեքստերում անունը ընթերցվել է այլ ձևով՝ <u>h</u>u-ur խուր: Խուրրիերեն լեզվի ուսումնասիրությամբ զբաղվել են Պ. Ենսենը, Ա. Սեյսը, L. Մեսսերշմիդտը, Ֆ. Բորկը և ուրիշներ: Եղած ուսումնասիրությունները հանրագումարի է բերել է. Սպայզերը (E. Speiser, Introduction to Hurrian, New Haven, 1941): Ուսումնասիրողները ուշադրություն են դարձրել այն փաստին, որ խուրրիերենն ու ուրար-

տերենը մերձավոր կապի մեջ են (A. Sayce, The Language of Mitanni Proceedings of the Society of Biblical Archaeology, 1890. P. Jensen, Vorstudien Zur Entrifferung des Mitanni, 1891: Friedrich, Zwei churritisch–urartäische Wortgleichungen, Հանդէս Ամսօրեայ, 1961: P. Jensen, 1891, Friedrich, 1933, 1935, 1961): Այս հարցին ուշադրություն են դարձրել նաև Ի. Դյակոնովը (И. Дьяконов, 1967, 1968), Գ. Մելիքիշվիլին, Ա. Կամմենհուբերը, Գ. Ջահուկյանը և ուրիշներ: Նրանք առաջ են քաշել այն տեսակետը, որ խուրրիերենն ու ուրարտերենը ունեցել են նույն նախալեզուն (պրոտո խուրրի-ուրարտական) և նրանցից յուրաքանչյուրը այդ նախալեզվի առանձին ճյուղն է: Ա. Կամմենհուբերը մեծ նշանակություն էր տալիս խուրրի-ուրարտական լեզվական ազգակցությանն ու մերձավոր կապին: Ուսումնասիրողների, մասնավորապես Գ. Կլիմովի և Ի. Դյակոնովի կողմից առաջ է քաշվել նաև մեկ այլ տեսակետ, որի համաձայն խուրրի–ուրարտական լեզուները կապ ունեն կովկասյան լեզուների հետ, սակայն այս կապը անհամոզիչ է համարում Գ. Ջահուկյանը (1992, էջ. 57): Ի. Դյակոնովը բացառում է որևէ կապ խուրրի-ուրարտական լեզվաընտանիքի և հնդեվրոպական լեզվաընտանիքի, մասնավորապես հայերենի միջև, իսկ եղած մերձավոր կապը համարվում է ուրարտացիների և հնդեվրոպական անատոլիական կամ խեթալուվիական ցեղերի միջև եղած նախապատմական շփումների արդյունք: Հայ լեզվաբաններից Մ. Մկրյանը ևս ուրարտերենը հնդեվրոպական լեզու է համարել՝ կապելով այն հայոց լեզվի հետ (Մ. Մկրյան, ԲԵՀ, 1967, I, էջ 49, 57):

Ուսումնասիրողների շրջանում գիտական վեճերի, անհամաձայնությունների տեղիք է տվել Առաջավոր Ասիայում և Միջագետքում խուրրիների հնագույն էթնոս լինելու հարցը: Ա. Ունգնադը խուրրիներին Միջագետքի հնագույն էթնոս էր համարում (A. Ungnad, Subartu, Berlin-Leipzig 1936), որն այդ տարածքում գործում էր նեոլիթից՝ նոր քարի դարից սկսած (մ.թ.ա. 8-5-րդ հազարամյակներ), և ըստ նրա խուրրի-միտանիները՝ արիներն են կանգնած Առաջավոր Ասիայում ստեղծված հնագույն մշակույթի և քաղաքակրթության ստեղծման ակունքներում: Սակայն այս տեսակետը միանշանակ չեն ընդունել շատ ուսումնասիրողներ, նշելով, որ դա հիմնավորված չէ լեզվաբանական, հնագիտական ու պատմական փաստերով և որ Ունգնադը ռասայական մոտեցում է ցուցաբերում՝ արիական ցեղ ու մշակույթ տեսնելով հանձին խուրրի-միտանիների: Առաջ քաշվեց նաև մեկ այլ տեսակետ, որի համաձայն միտանիները նվաճող արիական ցեղեր էին, որոնք եկան ինչ-որ տեղից (Կովկաս, Հնդկաստան), նվաճեցին Հայկական լեռնաշխարհի բնակիչներին՝ խուրրիներին և ստեղծեցին արիական վերնախավ ունեցող Միտանի պետությունը:

Հին Գասուր քաղաքի (Նուզի, այժմ Քերքուկից հարավ) պեղումների արդյունքների հիման վրա ուսումնասիրողները եզրակացնում են, որ մ.թ.ա. 1400 թվականից շուտ այդ տարածքում խուրրիների հետքեր չկան: Այս տեսակետը մի շարք գիտնականների (Է. Սպայզեր, Ի. Գելբ) ստիպել է փոխել իրենց նախնական կարծիքը այդ տարածքում խուրրիների հնագույն էթնոս լինելու մասին: Առաջ է քաշվում նոր տեսակետ, որի համաձայն Հյուսիսային Միջագետքի հնագույն էթնոս են սուբարիները: Խուրրիները համարվում են ուշ եկվորներ, որոնք եկել են Հյուսիսային Միջագետքի հյուսիսարևելյան նախալեռներից, այն է Հայկական լեռնաշխարհի հարավային մասերից մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերին, կրել են շումերա-աքադական մշակույթի ազդեցությունը և կարևոր դեր են խաղացել այդ մշակույթը մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին Սիրիա ու Փոքր Ասիա փոխանցելու գործում (E. Speiser, The Hurrian Participation in the Civilizations of Mesopotamia, Suria and Palestine, 1953-1954, CHM, 1. H. Guterbock, The Harrian Element in the Hittite Empire, CHM, 2, 1954): Մինչև 20-րդ դարի կեսերը ընդունված էր այն տեսակետը, որ Միտանիում կամ Խանիգալբատում ապրել են երկու ցեղեր՝ ոչ հնդեվրոպացի բնիկներ՝ սուբարիներ և եկվոր հնդեվրոպացիներ՝ արիներ (խարի-միտանիներ): Ինչպես տեսնում ենք, Միտանիի պատմությանը վերաբերող շատ հարցերի շուրջ առաջ են քաշվել բազմաթիվ տեսակետներ ու կարծիքներ, որոնք հաճախ ոչ միայն չէին պատասխանում առաջ քաշված շատ հարցերին, այլև նոր հակասություններ էին առաջացնում: Օրինակ՝ հակասություններ են նկատվում 20-րդ դարի կեսերին խորհրդային գիտնականների աշխատություններում: Այսպես. խորհրդային պատմագրության մեջ Հայկական լեռնաշխարհը համարվում էր խուրրիների (միտանիներ) հայրենիքը, որոնց (նաև ուրարտացիներին) ուսումնասիրողների մեծ մասը (Ի. Դյակոնով) հնդեվրոպացիներ չի համարում: 1980-ական թվականներին մի շարք ուսումնասիրողների կողմից գրվեցին աշխատություններ (Թ. Գամկրելիձե, Վ. Իվանով), որտեղ նրանք Հայկական լեռնաշխարհը և շրջակա տարածքները համարում են հնդեվրոպացիների նախնիների նախահայրենիքը:

Հակասությունները առկա են նաև մշակութային հարցերում, օրինակ՝ մ.թ.ա. 27-26-րդ դարերով թվագրվող Քիրբեթ-Քերակյան մշակույթը վերագրվում է խուրրիներին, սակայն ուսումնասիրողները խուրրիներին այդ տարածքում՝ Պաղեստինում, նաև Սիրիայում տեսնում են միայն մ.թ.ա. 2-րդ հազարամյակում (ըստ հայտնաբերված գրավոր արձանագրությունների): Չպարզաբանված են մնում շատ կարևոր հարցեր՝ Միտանիի բնակչության անվանման ու էթնիկ պատկանելության մասին: Ովքե՞ր էին խուրրիները,

ովքե՞ր էին միտանիները: Այս անվանումները նույն ցեղի տարբեր անվանումնե՞րն են, թե՞ երկու տարբեր ցեղերի անուններ: Ի՞նչ է նշանակում Խուրրի, ի՞նչ է նշանակում Միտանի և այլն: Ինչպես տեսնում ենք, առաջ քաշված շատ հարցեր շարունակում են մնալ չպարզաբանված և թեմայի վերաբերյալ գրված յուրաքանչյուր նոր ուսումնասիրություն շատ կարևոր է հայոց հնագույն Միտանի պետության պատմության համար:

Ներկայացվող աշխատության մեջ փորձ է արվում պատասխանել ինչպես վերոհիշյալ, այնպես էլ այլ հարցերի, որոնք վերաբերում են Հայկական լեռնաշխարհում ստեղծված Միտանի պետության պատմությանն ու մշակույթին: Ուսումնասիրվել է թեմայի հետ առնչվող մատչելի ամբողջ գրականությունը (աշխատություններ, հոդվածներ, հնագիտական պեղումների արդյունքներ): Հաշվի են առնվել նոր ուսումնասիրություններն ու առաջ քաշված նոր տեսակետները, որոնք հնդեվրոպացիների՝ արիական ցեղերի նախահայրենիք են համարում Հայկական լեռնաշխարհը և շրջակա տարածքները: Այս առումով կարևորվում է Հայկական լեռնաշխարհի դերը իբրև հնագույն մշակույթի ու քաղաքակրթության ստեղծման կենտրոն:

Անդրադառնանք աշխատության մեջ քննարկվող մի շարք հարցերի: Ուսումնասիրողների կողմից քննարկված կարևոր հարցերից մեկը վերաբերում էր Միտանիի բնակչությանը՝ խուրրիներն ու միտանիները նույն ժողովուրդն են, թե՞ տարբեր ժողովուրդներ են: Այս հարցի պատասխանը տվել են Միտանիի և հարևան երկրների թագավորները իրենց արձանագրություններում: Այսպես. Միտանիի թագավոր Սաուսադատտարի կնիքի վրա գրված է «Սաուսադատտար... արքա Մայտենիի»: Ալալախից հայտնաբերված պայմանագրի տեքստում Սաուսադատտարը վկայված է իբրև «խուրրի ռազմիկների թագավոր»: Միտանիի մեկ այլ թագավոր՝ Տուշրատան եգիպտական փարավոնին ուղարկած նամակներից մեկում իրեն անվանում է «Խուրրիի թագավոր», երկիրը՝ «խուրրիական», մեկ այլ դեպքում իրեն համարում է «Միտանիի թագավոր» (I.Gelb, Hurrians and Subarians, Chicago, 1944,էջ 73) և այլն:

Հայոց պատմության հնագույն շրջանի ուսումնասիրության համար շատ կարևոր են նաև Խուրրի-Ուրարտու առնչությունները: Տարածված և ընդունված կարծիքի համաձայն խուրրիները և ուրարտացիները պատկանել են խուրրի-ուրարտական լեզվաընտանիքին: Խուրրիների և ուրարտացիների միջև առկա են լեզվական ու մշակութային ընդհանրություններ (խուրրի-ուրարտական հարաբերությունները կարիք ունեն խոր և բազմակողմանի ուսումնասիրության): Ասուրական և ուրարտական արձանագրությունները վկայում են, որ Վանա լճի հարավարևելյան մասերում բնակվող

ուրուատրի (ուրատրի, ուրարտու) ցեղի առաջնորդներին ևս հաջողվել է միավորել Հայկական լեռնաշխարհը և ստեղծել Բիայնա կամ Արարատ-Ուրարտու պետությունը (մ.թ.ա. 9-րդ դար) Միտանիի կործանումից (մ.թ.ա. 13-րդ դար) մի քանի դար հետո: Ե՛վ խուրրիները (խարրիներ), և ուրարտացիները (արարտացիներ) Հայկական լեռնաշխարհի բնիկներն են, որոնք Առաջավոր Ասիայի մ.թ.ա. 3-1-ին հազարամյակների գրավոր աղբյուրներում հանդես են գալիս օտար սեպագրերով գրված և օտար հնչողությամբ խուրրի, ուրարտացի և այլ անուններով:

1930-ական թվականներին հայ ուսումնասիրողներից պրոֆեսոր Ա. Խաչատրյանը անդրադարձել է խուրրիներին և Միտանի պետության պատմությանը: Նա գրել է հոդված («Արիական խավը նախաուրարտական Հայաստանում», Տեղեկագիր, 1929, 4) և աշխատություն («Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն», Երևան, 1933): Աշխատության մեջ Ա. Խաչատրյանը օգտագործել է թեմայի վերաբերյալ այդ ժամանակ հրատարակված համարյա բոլոր աշխատությունները: Նա ծանոթ էր նաև առաջ քաշված բոլոր տեսակետներին ու կարծիքներին, որոնք էլ ավելի է հարստացրել իր դիտարկումներով: Կարևոր էր հատկապես այն, որ նա հայոց պատմության արմատները հասցնում էր մինչև Միտանի, հայ ժողովրդի պատմության մեջ ներառելով նաև Ուրարտուի պատմությունը: Ա. Խաչատրյանը նաև շատ արժեքավոր մեկ այլ աշխատանք է կատարել: Նա հայերեն է թարգմանել Է. Վայդների կողմից 1923թ. Բեռլինում հրատարակված Բողազքյոյից (Խաթթուսաս) հայտնաբերված խեթական քաղաքական դաշնագրերի ու թագավորների նամակների հավաքածուի հայոց պատմությանը վերաբերող խուրրի-միտանյան հատվածը, որը հրատարակել է առանձին հավելվածով (Ա. Խաչատրյան, 1933, հավելված):

Խուրրիներին և Միտանիի պատմությանը անդրադարձել է նաև Մ. Գավուքչյանը: Նա ևս իր ուսումնասիրության մեջ խուրրիներին Հայկական լեռնաշխարհի բնիկներ է համարում: Նա նույնպես կապ է տեսնում խուրրի և հայ-հար անունների միջև և այլն: Մ. Գավուքչյանը հիմնվելով Մ. Խորենացու այն վկայությանը, որ Հայկի սերունդներից Խոռը և Մանավազը եղբայրներ են, կապ է տեսնում Խոռ (Խոր), Խոռխոռունի (խոռի հոգնակի ձևը) ազնվականական տան անվան ու խուրրիների միջև: Նա առաջ է քաշում նաև այն տեսակետը, որ Մանավազը Ուրարտուի արքա Մենուան է: Հետևաբար խուրրիները (Խոռ) և ուրարտացիները (Մանավազ–Մենուա) եղբայրներ ու ցեղակիցներ են և Հայկ-Արայի որդիները: (Մ. Գավուքչյան, 1973, էջ 318-319):

Ավելի ուշ շրջանի խորհրդահայ ուսումնասիրողները իրենց աշխատություններում համարյա նույնությամբ կրկնել են խորհրդային ուսումնասիրողների, մասնավորապես Ի. Դյակոնովի տեսակետները խուրրիների և Միտանի պետության պատմության մասին:

Այսպիսով, Միտանիի պատմությունը հայոց պատմության շատ կարևոր մասն է: Այն Հայկական լեռնաշխարհում ստեղծված ու մեզ հայտնի առաջին հզոր պետության պատմությունն է, որի ստեղծած քաղաքակրթությունը հիմք է հանդիսացել Առաջավոր Ասիայում ավելի ուշ հանդես եկած այլ ժողովուրդների մշակույթների ստեղծմանն ու զարգացմանը:

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԽՈՒՐՐԻՆԵՐԸ

Առաջավոր Ասիայի տարբեր մասերում (Զագրոսի նախալեռներ, Հայկական լեռնաշխարհ, Կոնիայի հարթավայր, Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջաններ) կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են նյութական մշակույթի բազմաթիվ արժեքներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. 10-9- րդ հազարամյակներով:

Լավ ուսումնասիրված հուշարձաններ են Շանիդար և Զավի Չեմի (այժմ Իրաքի տարածքում) բնակավայրերը Զագրոսում և Մեծ Զաբ գետի հովտում (մ.թ.ա. 10-9-րդ հազարամյակներ, միջին քարի դար՝ մեզոլիթ): Այս տարածքները հնագույն երկրագործների բնակավայրեր են: Այստեղ հանդիպում են արտադրող տնտեսաձևի ամենավաղ հետքերը: Հայտնաբերվել են աղորիքներ, սանդեր, հավանգներ, սանդակոթեր, տրորիչներ, ուլունքներ և այլ իրեր, որոնք վկայում են հացաբույսերի մշակման և վերամշակման մասին: Այս բնակավայրերում հատկապես լավ զարգացած է քարի մշակումը: Շանիդարից հայտնաբերվել են մանգաղի ներդիրներ (առաջին անգամ), փայլեցված սայրով սեպաձև կացին, ոսկրե դանակ և այլն: Հատնաբերված աշխատանքային գործիքների մեջ մեծ թիվ են կազմում օբսիդիանից (վանակատ) պատրաստված գործիքները: Հումքը՝ օբսիդիանը բերել են Հայկական լեռնաշխարհից՝ Նեմրութի լեռներից: Իսկ բիտումը, որով ամրացրել են աշխատանքային գործիքները, բերել են հարավից: Ուլունքները և կախիկները պատրաստված են օճառաքարից, կրաքարից, մարմարից, նույնիսկ պղնձից (բնակտոր) և ոսկորից: Կացարանները կլոր կամ օվալաձև հիմքեր են ունեցել, պատերը եղել են հյուսածո ու կավով սվաղված: Կացարաններում եղել են նաև օջախներ: Հայտնի հնագույն հուշարձան է Յերիխոն (Երիքով) բնակավայրը (մ.թ.ա. 8-7-րդ հազարամյակներ, այժմ Թելլ Էլ-Սուլթան, Մեռյալ ծովից հյուսիս, Հորդանանի հովիտ): Յերիխոնի մշակույթը, որը հայտնի է Նատուֆյան մշակույթ անունով, արխայիկ է ու աղքատ: Վաղ Նատուֆյան մշակույթում բացակայում է օբսիդիանը, գործիքները պատրաստվել են կայծքարից: Այս մշակույթի մեջ առաջնային տեղ է զբաղեցնում որսորդությունը (հայտնաբերվել են անապատի ձիու,

վիրի, ցուլի, ոչխարի, ընտելացված շան մնացորդներ): Զբաղվել են նաև հողագործությամբ ու անասնապահությամբ: Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված նեոլիթյան հնագույն հուշարձանը Աղձնիքի (այժմ Դիարբեքիրի շրջան) Արգունա գյուղի տարածքում գտնվող Չոյունյու-թեփեսի հուշարձանն է (մ.թ.ա. 8-7-րդ հազարամյակներ), որն ունի մշակութային 5 շերտ: Այս հուշարձանը այն եզակի բնակատեղին է, որտեղ այլ գտածոների հետ հայտնաբերվել են մետաղից պատրաստված առաջին կենցաղային իրերը՝ պղնձե ասեղներ, ուլունքներ, ծակիչներ և կոփածո պղնձի կտորներ[1]:

Հայկական լեռնաշխարհի մի շարք հուշարձաններ, այդ թվում Արագած լեռան համակարգը, Ազոխը, Լիգքը, Հրազդան գետի ավազանը, Երևան 1-ը, Նուռնուսը և այլ բնակատեղիներ մշակութային էլ ավելի հին, ստորին շերտեր ունեն (հին քարի դար, միջին քարի դար): Հայկական լեռնաշխարհի վաղ նեոլիթյան հայտնի ու լավ ուսումնասիրված երկրագործական բնակավայրեր են Զաղան, Բառոժը (Թալինի շրջան), Թեղուտը, Կղզյակ բլուրը (Աղաբլուր), Մաշտոցի բլուրը, Վերին Խաքունարխը (Արարատյան դաշտավայր), Անի Պեմզան (Շիրակ) և այլ հուշարձաններ, որոնք թվագրվում են մ.թ.ա. 7-6-րդ հազարամյակներով: Այս բնակավայրերի կացարանները ունեն քարե հիմք և հում աղյուսե շարվածք: Այս հուշարձաններից հայտնաբերվել են օբսիդիանից, կրաքարից և բազալտից պատրաստված աշխատանքային գործիքներ՝ աղորիքներ, սանդակոթեր, տրորիչ-մուրճեր, նաև ոսկորից պատրաստված մանգաղի հիմքեր, բզեր և այլ իրեր, որոնք առկա են նաև Կոնիայի հովտի՝ Չաթալ-հույուքի մշակույթում: Հայտնաբերված կավե ամանները (կավի, ավազի ու հարդի խառնուրդով) զարդարված են փորագրված նախշերով (հորիզոնական ուղիղ գծեր, եղունգաձև, հասկաձև ու եղևնու ճյուղերի նման նախշեր): Ամանների շուրթերին կպցրել են մեծ ելուստներ, որոնք իրենց զուգահեռներն ունեն Մերսինում (Կիլիկիա), Չաթալ-հույուքում, Ալաձ-հույուքում, Հաջիլարում, նաև Երիքովում, Զարմոյում (ստորին շերտում) և այլն: Նեոլիթյան հայտնի հուշարձաններ են Յանիկ-թեփեն ու Հաջի Ֆիրուզը (Ուրմիա լճից հարավ): Այս բնակավայրերի շինությունները աղյուսաշար են, ուղղանկյուն կամ կլոր հիմքով, հատակը ներկված է կարմիր օխրայով, խեցեղենը կոպիտ է և վատ թրծված: Այդպիսին է նաև Հաջիլարի մշակույթը (Կոնիայի հովիտ):

Մ.թ.ա. 7-րդ հազարամյակում հյուսիսից Հորդանանի հովիտներում և Պաղեստինում տարածվել է նոր մշակույթ: Ենթադրվում է, որ նոր մշակույթը կրող ցեղերը եկել են անատոլիական սարահարթից կամ Հյուսիսային Սիրիայից: Նոր մշակույթի հետքերը երևում են նաև ամայացած Երիքովի տարածքում, Ռաս Շամրայում, Բիբլոսում, Ամուկի հովտում և այլ բնակավայրերում[2]

1. *Э.Ханзадян*, Вопросы геологии..., с .106, *Ս. Եսայան*, Հայաստանի հնագիտություն, 1993, էջ 66:

(ենթադրվում է, որ տաք, չոր եղանակի ու երաշտի հետևանքով էին ամայացել այս բնակավայրերը մինչև նոր բնակիչների գալը): Նոր մշակույթը լիովին տարբերվում է Նատուֆյան մշակույթից: Ռաս Շամրայում և Ամուկում միատարր խեցեղենը փոխարինվել է նուրբ խեցեղենով, հայտնվել են մուգ, փայլուն, երկրաչափական նախշերով զարդարված բաց գույնի գոգավոր անոթներ, որոնք դրանք ավելի քիչ զարգացած են, քան Կիլիկիայում (Մերսին), անատոլիական ու իրանական սարահարթերում հայտնաբերված գտածոները: Նորություն էր օվալաձև աղորիքը: Երիքովը դարձել է պաշտպանված բնակավայր, խոշոր քարերից կառուցվել է պարիսպ: Տները ուղղանկյուն քարե հիմքերով են, պատերը և հատակը սվաղված են կավով: Զգացվում է, որ մ.թ.ա. 7-րդ հազարամյակից սվաղված հատակով ուղղանկյուն տների կառուցման հյուսիսային (անատոլիական, սիրիական, այն է. Հայկական լեռնաշխարհ) ավանդույթը դուրս է մղել Նատուֆյան (պաղեստինյան) կլոր (կամ օվալ) ձևերին[3] (որոշ բացառություններ կան Երիքովում, ուր շարունակում են կառուցել կլոր հիմքով տներ): Ենթադրվում է, որ եղել են նաև պաշտամունքային նշանակության կառույցներ: Այդ է վկայում հայտնաբերված 8 մետր բարձրության աշտարակը[4]: Հայտնաբերվել են մայրաստվածուհիների և կենդանիների արձանիկներ, որոնք պտղաբերությունն են խորհրդանշում: Երիքովի մինչխեցեգործական մշակույթը թվագրվում է մ.թ.ա. 6968-6918 թվականներով[5] և բացահայտորեն հյուսիսի ազդեցությունն է կրում: Այս նոր մշակույթը արդյունք էր հյուսիսից բնակչության նոր տեղաշարժերի:

Մ.թ.ա. 7-րդ հազարամյակի վերջերին–6-րդ հազարամյակի սկզբներին Առաջավոր Ասիայի այլ մասերում ևս զգացվում է նոր, մինչխեցեգործական մշակույթի ներկայություն: Նեոլիթյան հայտնի ու լավ ուսումնասիրված հուշարձաններ են Չաթալ-հույուքը (մ.թ.ա 7–6-րդ հազամյակներ), Ալաձ-հույուքը (մ.թ.ա. 6-րդ հազարամյակ), Հաջիլարը (մ.թ.ա. 6-րդ հազարամյակ), Ջան Հասանը (մ.թ.ա. 6-րդ հազարամյակ), որը մոտավորապես մ.թ.ա. 5000թ. ոչնչացել է հրդեհից և այլևս չի վերականգնվել (Կոնիայի հովտում), Տրոյան (մ.թ.ա. 6-րդ հազարամյակ)՝ Փոքր Ասիայի արևմտյան մասում, Հալաֆը (մ.թ.ա. 6-5-րդ հազարամյակներ), Հասունան (մ.թ.ա. 6–5-րդ հազարամյակներ) Հյուսիսային Միջագետքում և այլն:

2. Ենթադրվում է, որ մինչկերամիկական նեոլիթյան մշակույթի անկման ու անհետացման պատճառ է հանդիսացել եղանակի փոփոխությունը, սկսվել են տաք, չորային տարիներ և առաջացած երաշտը ստիպել է բնակիչներին հեռանալ հյուսիսի անտառային ու լեռնային շրջաններ՝ Լևանտ, Սիրիա, Հյուսիսային Միջագետք և ավելի հյուսիս: Ուսումնասիրողները ենթադրում են, որ դա տևել է մոտ 500 տարի, որից հետո բնակիչները հարստացած նոր գիտելիքներով ու փորձով վերադարձել են Պաղեստին (նեոլիթյան խեցեգործություն):

3. *Д.Мелларт*, с. 58.

4. ИДВ, I, с. 51.

5. *Д.Мелларт*, с. 47.



ա բ

Պարուրաչև արևանշաններով խեցեղեն, մ.թ.ա. 6–4-րդ հազարամյակներ, ա. Չաթալ-հույուք, բ. Շենգավիթ



Թաս, Շենգավիթ, մ.թ.ա. 4–3-րդ հազարամյակներ

Փոքր Ասիայում այս մշակույթը հիմնականում ներկայացվում է Չաթալ-հույուքից հայտնաբերված նյութերով: Այս հուշարձանը մշակութային 12 շերտ ունի, թվագրվում է մ.թ.ա. 6500-5650 թվականներով և անընդմեջ որպես բնակավայր գոյություն է ունեցել մոտ 1000 տարի: Այս բնակավայրերի տները կառուցվել են աղյուսից առանց քարե հիմքերի: Յուրաքանչյուր 4-5 տուն ունեցել է իր սրբատեղին (տոհմական սրբատեղի): Զենքերը և աշխատանքային գործիքները պատրաստվել են քարից ու ոսկորից: Մեծ տարածում են ունեցել վանակատից պատրաստված նետերի ու տեգերի ծայրակալները, մանգաղի ներդիրները: Չաթալ-հույուքի բնակիչները ծանոթ են եղել պղնձին ու կապարին: Հայտնաբերվել են այդ մետաղներից պատրաստված զարդեր: Զգացվում է, որ ծանոթ են եղել նաև խեցեղեն պատրաստելու արվեստին, սակայն կենցաղում հիմնականում օգտագործել են փայտե (նաև հյուսածո ու կաշվե) սպասք: Հայտնաբերվել է նաև վանակատե հայելի, ոսկրե գդալ և այլն: Չաթալ-հույուքի բնակիչները իրենց հանգուցյալներին թաղել են տներում, հատակի տակ կամ սրբատեղիներում (նախնիների պաշտամունք): Սրբարանների պատերը զարդարել են որսի և կենդանիների (ցուլ, այծ, ոչխար) ռելիեֆ պատկերներով: Մեծ տարածում է ունեցել ցուլի պաշտամունքը՝ իբրև տղամարդու ուժի վկայություն: Հիշենք, որ Հայկական լեռնաշխարհում ևս ցուլի պաշտամունքը տղամարդու ուժի վկայությունն էր: Տղամարդ աստվածները պատկերվել են երկու բնույթով՝ երիտասարդ և մորուքավոր ծերունի, որը նստած է ցուլի մեջքին: Կանանց պաշտամունքը արտահայտվել է մայր-աստվածուհիների



Փայտե կենցաղային իր, մ.թ.ա. VI հազ., Չաթալ-հույուք

երկրպագությամբ: Մայր-աստվածուհին կերպավորվել է երեք բնույթով. երիտասարդ կին, կյանք տվող կին և ծեր կին, որը հաճախ պատկերվում էր ուղեկցող գիշատիչ թռչունի՝ անգղի հետ (որպես մահվան գաղափար): Մայր-աստվածուհիների սրբազան կենդանին հովազն էր: Նրանք հաճախ են պատկերվել այդ կենդանու հետ: Չաթալ-հույուքը բարձր զարգացման հասած վաղ երկրագործական ցեղերի փայլուն օրինակ է[6]: Չաթալ-հույուքի մշակութային ազդեցությունը զգացվում է Բալկաններում՝ Հունաստանում, Մակեդոնիայում և Բուլղարիայում (Ստարչևո): Կարմիր զարդանախշված ապիտակ խեցին (կամ հակառակը), որը բնութագրական է Հաջիլար 1-ին (մ.թ.ա. մոտ. 5250-5000 թթ.), համադրվում է Կենտրոնական Հունաստանից և Թեսալիայից հայտնաբերված նույնատիպ խեցու հետ (մ.թ.ա. 5080թ.):

Մակեդոնիայի Նիա Նիկոմեդիա բնակավայրի պեղումների արդյունքները վկայում են անատոլիական մշակույթի ազդեցության մասին: Հայտնաբերվել են Առաջավոր Ասիայի հյուսիսին հատուկ ուղղանկյուն մեծ տներ: Խեցին միագույն է, ծեփածո, փայլուն և զարդանախշով ու ձևով նման է Հաջիլարի խեցեղենին: Մեծ նմանություններ ունեն նաև աստվածուհիների պատկերներով անոթները, կնիքադրոշմները (մ.թ.ա. 6-րդ հազարամյակի վերջ) և այլն: Նիա Նիկոմեդիայում օգտագործել են կայծքարից պատրաստված աշխատանքային գործիքներ՝ կացիններ, ուրագներ և կտրիչներ, որոնք շատ նման են անատոլիական (Հաջիլար) նույնատիպ աշխատանքային գործիքներին[7] (բացակայում են օբսիդիանե գործիքները): Ավելի հյուսիս (Պորոդին) և արևելք (Վյշկով–Սոֆիայի ծայրամաս) գտնվող հուշարձաններից (մ.թ.ա. 5160 և 4915թթ.), նաև Մարիցայի հովտում հայտնաբերված գտածոները մշակութային նույն ազդեցությունն են կրում[8]: Ինչպես տեսնում ենք Կոնիայի հարթավայրի մշակույթի ազդեցությունը զգացվում է Բալկաններում, բայց ոչ Հայկական լեռնաշխարհում կամ Միջագետքում: Այս փաստը վկայում է, որ մ.թ.ա. 7-րդ հազարամյակում Կոնիայի հարթավայրի բնակիչները իրենք են հանդիսացել այլ մշակույթի ազդեցության կրողներ (հավանաբար արևելքից՝ Հայկական լեռնաշխարհից): Ուշադրության արժանի է այն, որ Կոնիայի հարթավայրի մշակույթը, որի հնագույն, ստորին շերտը թվագրվում է մ.թ.ա. 6500 թվականով, չունի մշակութային ավելի վաղ, ստորին

6. ИДВ, I, с. 54.
7. *Д. Мелларт*, с. 110.
8. Մելլարտը ենթադրում է, որ Բալկանների գաղութացումը եղել է Անատոլիայից եկած ցեղերի կողմից, կամ զարգացած անատոլիական մշակույթն ու գաղափարներն են թափանցել Բալկաններ:

շերտեր, ինչպես Հայկական լեռնաշխարհի շատ հնավայրերում է (Արագած լեռան համակարգ, Հրազդան գետի ավազան, Երևան 1, Նուռնուս, Ազոխ):

Մ.թ.ա. 7-րդ հազարամյակով թվագրվող նեոլիթյան հուշարձաններ են հայտնաբերվել նաև Զագրոսի նախալեռներում: Այս շրջաններում ստեղծվել է վաղ երկրագործների այն մշակույթը, որը հայտնի է Ջարմոյի, Թելլ-Շեմշարի (Իրաք), Թեփե Գուրանի և Թեփե Սոհրաբի (Իրան) պեղումներից հայտնաբերված նյութերով (օբսիդիանից, կայծքարից, ոսկորից պատրաստված աղորիքներ, շեղբեր, մանգաղի ներդիրներ, ասեղներ): Նեոլիթյան մշակույթը Հայաստանում ներկայացված է Արարատյան դաշտավայրի (Սև բլուր 1, Մաշտոցի բլուր 3, Մոխրաբլուր 1, Շրեշ բլուր 1, Կողյակ բլուր) վաղ երկրագործական բնակավայրերից հայտնաբերված նյութերով, որոնց հաջորդում է Շենգավիթ 1-ը: Արարատյան դաշտավայրի բնակլիմայական պայմանները, հատկապես գետերի հին հունների ուսումնասիրությունը վկայում է, որ երկրագործությունը զարգացել է արհեստական ոռոգումների հիման վրա[9]: Նոր քարեդարյան (նեոլիթյան) խեցին լավ որակի է, նկատվում է նախշերի բազմազանություն (գծեր, կետեր, երկրաչափական նախշեր): Այս մշակույթը ներկայացված է նաև ավելի վաղ շրջանի երկրագործական ու անասնապահական բնակավայրերով՝ Շամիրամալթիի (Վանա լճի ափին), Նորշուն-թեփեի, Տյուլին-թեփեի (Խարբերդի դաշտ), Նախիջևանի Քյուլ-թափա 1-ի (Մոխրաբլուր), Թեղուտի (Արարատյան դաշտավայր) հուշարձաններով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ հուշարձանները մշակութային ընդհանրություններ ունեն Հասունայի և վաղ Հալաֆի նյութերի հետ (քարե գործիքներ, հարդախառն խեցե անոթներ)[10]: Շամիրամալթիում, նաև Արարատյան դաշտավայրի հուշարձաններում հայտնաբերվել են հալաֆյան և ուբեյդյան մշակույթների խեցեղենի նմուշներ: Աղստև գետի հովտի էնեոլիթյան հուշարձաններից (Բաբաղերվիշ, Շոմու-թեփե 1, Գարգալար-թեփեի) հայտնաբերված քարե (վանակատ, գետաքար) գործիքները տեղական ծագում ունեն: Հայտնաբերված գդալները իրենց զուգահեռները ունեն Չաթալ-հույուքում, նման են նաև նետասլաքները: Մշակութային ընդհանրություններ ունեն Շենգավիթ 1-ը, Նախիջևանի Քյուլ-թափայի (Մոխրաբլուր) ստորին շերտը, Գեոյ-թեփեն (Կապույտ բլուր, Ուրմիա լճի արևմտյան ափին), Շամիրամալթին (ստորին 3-րդ շերտը) (կլոր կամ ուղղանկյուն հիմքով կացարաններ, քարե հիմք, հում աղյուսե պատեր, կավե կլոր օջախ, կոպիտ խեցեղեն) և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մ.թ.ա. 7-րդ հազարամյակում Զագրոսի երկրագործ բնակիչները տարածվել են դեպի անմարդաբնակ Միջագետքի ցածրավայրեր՝ նոր հողեր ու արոտավայրեր փնտրելու նպատակով: Մ.թ.ա. 6-5–րդ հազարամյակներում Առաջավոր Ասիայում ստեղծված ու լավ

9 *Ս. Եսայան*, 1973, էջ 79:
10. *Ս. Եսայան*, 1973, էջ 78:



Հասունյան մշակույթի խեցե ափսեներ, Սամարրա, մ.թ.ա. 5-րդ հազարամյակ

ուսումնասիրված մշակույթը կոչվում է հալաֆյան կամ հասունյան (նաև հալաֆ-հասունյան) մշակույթ, համանուն բնակավայրերի անուններով: Հալաֆյան մշակույթի ազդեցության գոտին ընդգրկում է Եփրատ ու Մեծ Զաբ գետերի միջև ընկած տարածքը: Հյուսիսում նրա ազդեցությունը զգացվում է Տավրոսի լեռներում և ավելի վերև ընկած տարածքներում: Այս մշակույթը շատ հզոր է: Ենթադրվում է, որ այն ստեղծել են հյուսիսից եկած ցեղերը և «նրա հայրենիքը գտնվում էր Հայկական Միջագետքում»[11]: Հալաֆյան մշակույթի լավ ուսումնասիրված բնակավայր է Արպաչին (մ.թ.ա. 6-րդ հազարամյակի սկիզբ-5-րդ հազարամյակի սկիզբ, Մոսուլի մոտ):

Ցուլի պաշտամունքը, մետաղի մշակումը, ոստայնագործությունը, հոյակապ սպասքը և բարձր զարգացման հասած մշակութային այլ տարրեր հիշեցնում են Փոքր Ասիայի արևմտյան մասի՝ Չաթալ-հույուքի, Հաջիլարի և Ջան Հասանի մշակույթը: Հալաֆյան հուշարձանների ձգվածությունը դեպի հյուսիս հիմք է տալիս ենթադրելու, որ այն կրողները կարող էին լեռների ու նախալեռների բնակիչներ լինել[12], որոնք իջել են հարթավայրեր, որպեսզի ավելի հաջողությամբ զբաղվեն երկրագործությամբ և անասնապահությամբ: Խեցեղենի միջոցով տարբերվում են հալաֆյան մշակույթի երկու հիմնական տիպեր. արևելյան՝ Արպաչի, Թեփե-Գավրա (Մոսուլի մոտ) և արևմտյան՝ Չագար-բազար, Թելլ-Հալաֆ, Յունուս Կարքեմիշ (Սիրիա): Այս երկու տիպերը իրարից տարբերվում են ձևերով և նախշազարդերով: Մեծ նվաճումներ կան ճարտարապետության

11. *Д.Мелларт*, с. 112 (հեղինակը օգտագործում է Թուրքական Միջագետք անվանումը): ИДВ, I, с.74.
12. *Д.Мелларт*, с. 138 (Ծանոթագրություն 35).

(երկսենյականոց, հիմնականում ուղղանկյուն քարե հիմքով և աղյուսե պատերով բնակարաններ), քարի մշակման, ոստայնագործության ու առևտրի մեջ: Հալաֆյան մշակույթը կրող ցեղերը երկրագործներ էին: Հայտնաբերվել են կայծքարից և օճառաքարից պատրաստված մանգաղի բազմաթիվ ներդիրներ, որոնք հղկված ու փայլեցված են աշխատանքի ընթացքում: Աճեցրել են գարի, էմմար, ձեթ ստանալու համար վուշ և այլն: Զբաղվել են նաև անասնապահությամբ, հայտնաբերվել են ցուլի և ոչխարի գլուխների ու եղջյուրների պատկերներով արձանիկներ, որոնք դարձյալ տղամարդու ուժի պաշտամունքն ու պտղաբերությունն են խորհրդանշում: Հայտնաբերված կանացի արձանիկները (նստած կամ կծկված) մայր-աստվածուհիների պաշտամունքի մասին են վկայում: Ինչպես Անատոլիայում, այս դեպքում ևս արձանիկները ծածկված են խաչերով և շերտագծերովփ իբրև պտղաբերության խորհրդանշաններ: Արվեստի իսկական գործեր են վանակատից պատրաստված ուլունքները, մետաղե թերթաշերտերը և սպասքը: Օգտագործել են նաև պղինձ ու կապար: Զարգացած են եղել առևտրական կապերը, հայտնաբերվել են վանակատից պատրաստված հարյուրավոր աշխատանքային գործիքներ և զարդեր, որոնք բերվել են Վանա լճի շրջակայքից: Հայտնաբերվել են նաև խխունջներ (բերվում էր Պարսից ծոցից): Իր հերթին հալաֆյան խեցի է հայտնաբերվել Թիլկի-թեփեում (Շամիրամալթի, Վանա լճին մոտ) և Մալաթիայի շրջանում: Այս մշակույթը տարածվել է առևտրի միջոցով Միջերկրական ծովից Պարսից ծոց ընկած տարածքում:

Փոքր Ասիայի արևմտյան մասի, Կիլիկիայի, Փյունիկիայի (Ամուկի հովիտ), Վերին Միջագետքի (Ջարմո, Ռաս-Շամրա, Բիբլոս), Պաղեստինի և Իրանի (Գեոյ-թեփե) հնագույն բնակավայրերից հայտնաբերված մշակութային արժեքների նույնությունը:

Հայկական լեռնաշխարհից, հատկապես Արարատյան բնակավայրից հայտնաբերված մշակութային արժեքների՝ նեոլիթյան խեցեղենի հետ, որը թվագրվում է մ.թ.ա. 6-րդ հազարամյակի սկիզբ – մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջ ընկած ժամանակաշրջանով, վկայում է Հայկական լեռնաշխարհի, Կիլիկիայի և Առաջավոր Ասիայի այլ տարածքների բնակչության հնագույն կապերի մասին: Փաստերը վկայում են, որ Անդրկովկասի հյուսիսը (Կուրի հովիտ) և արևմտյան Փոքր Ասիան այդ մշակույթի ծայրամասային շրջաններն են: Նեոլիթյան մշակույթի, հատկապես խեցեղենի նմանությունները, որպես այդ մշակույթի սկզբնական օջախ, մատնանշում են Հայկական լեռնաշխարհը և Կիլիկիան: Նոր քարի դարի (նեոլիթ) մշակութային առանձնահատկություններով բնակավայրեր են հայտնաբերվել Հայկական լեռնաշխարհից հարավ-արևմուտք ընկած տարածքներում: Այդպիսի բնակավայրեր են Տախունեն (Պաղեստին, մ.թ.ա. 6-րդ հազարամյակի սկիզբ, նախնական հողագործություն), որը նման է Բառոժին ու Զաղային, Երիքովը (Հորդանան) և Ջարմոն (Վերին Միջագետք): Նրանք ունեն պաշտպանական կառույցներ, վանակատից և կայծքարից պատրաստված

աշխատանքային գործիքներ: Խեցի չկա: Այդ ժամանակաշրջանի լավ ուսումնասիրված հուշարձան է Մերսինի Յումուկ-թեփեն (Կիլիկիա, մ.թ.ա. 6-րդ հազարամյակ): Այս հուշարձանի ստորին շերտը (նեոլիթ) նման է Կղզյակ-բլուրի վաղ նեոլիթյան շերտերին՝ **հասարակ** (գորշ, հարդի խառնուրդով) և **լավ որակի** (փայլեցված, սև, կարմիր) խեցեղեն, կայծքարից և վանակատից պատրաստված աշխատանքային գործիքներ: Մերսինի ուշ նեոլիթյան շերտերում խեցեղենի մեջ հանդիպում են պարզ ու նախշազարդ (1-2 շարք գծիկներ) անոթներ, որոնք ունեն կպցված փոքր կանթեր[13]:

Կպցված փոքր կանթերը բնորոշ են Մաշտոցի բլուրի նեոլիթի վերին շերտին: Այդպիսի փոքր կանթերը և խեցեղեն ամանների գունազարդ նախշերը էնեոլիթի (պղնձի քարի դար, մ.թ.ա. 5-3-րդ հազարամյակներ) ժամանակ տարածված են եղել Առաջավոր Ասիայի ընդարձակ տարածքում: Մերսինի վերին հորիզոնում հայտնաբերվել է գունազարդ խեցի (գորշ գույնի վրա կարմիր նախշեր), որը թվագրվում է էնեոլիթի սկզբով (մ.թ.ա. 4-րդ հազարամյակի սկիզբ): Այդպիսի գունազարդ խեցի հանդիպում է Հասունայի 1-ին Բ հորիզոնում, Կղզյակբլուրի 3-րդ շերտում և այլն: Վաղ Մերսինի և Տարսուսի մինչխեցեգործական գտածոները նման են Հայկական լեռնաշխարհի բնակավայրերից՝ Բառոժից և Զաղայից հայտնաբերված մշակութային արժեքներին: Ռաս-Շամրայի 5-րդ շերտից հայտնաբերված մշակույթը, ուր խեցեղեն է հանդիպում, նման է Մերսինի, Կղզյակ բլուրի և Մաշտոցի բլուրի մշակույթին (խեցեղենը հասարակ է, ակոսավոր նախշերով), իսկ 4-րդ շերտի գունազարդ խեցին նման է Մերսինի խեցեղենին (թվագրվում է էնեոլիթի սկզբներով): Բիբլոսի նեոլիթյան խեցեղենի մեջ հանդիպում է եղևնաձև ակոսավոր նախշերով խեցի, որը հանդիպում է նաև Պաղեստինում (Յարմուկ, Երիքով-8) ու Հայաստանում (Մոխրաբլուր 1, Շենգավիթ 1, Շրեշ բլուր 1), որոնք թվագրվում են ուշ նեոլիթի ժամանակաշրջանով: Մոխրաբլուր 1-ի և Սև բլուր 1-ի հետ նմանություններ ունի Հասունայի (Մոսուլից հարավ, Տիգրիսի աջ ափին) ստորին շերտերից հայտնաբերված խեցեղենը (թասերի նմանվող սև, գորշ, հղկված ամաններ):

Ուսումնասիրողները Հասունյան մշակույթի ծագման կենտրոնը ևս կապում են Հայկական լեռնաշխարհի հարավային մասերի ու Հայկական Միջագետքի՝ Մարդինի և Դիարբեքիրի (Ամիդ) միջև ընկած տարածքների հետ[14]: Հասունյան մշակույթի յուրահատկությունը զարգացած խեցեգործությունն է, երբ անոթի մակերեսը և զարդանախշը անգոբապատել են (ապակենման փայլուն ծածկույթ): Պղնձե իրեր քիչ են հանդիպում: Հասունյան մշակույթի բարձրագույն էտապը Սամարրյան մշակույթն է[15] (Բաղդադից վեր, Տիգրիսի հոսանքի միջին

13. *Ս. Սարդարյան.* Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, 1968, էջ 152:
14. *Д. Мелларт*, с. 65.
15. ИДВ, I, с. 70 (Որոշ ուսումնասիրողներ Սամարրյան մշակույթը համարում են առանձին մշակույթ):

մասում): Մյուս յուրահատկությունն այն է, որ բնակավայրեր էին հիմնվում այնպիսի վայրերում, ուր տարեկան միջին տեղումները քիչ էին ու աննպաստ երկրագործության համար: Այդ պատճառով բնակիչները ստեղծել են արհեստական ոռոգման համակարգ և յուրացրել անջրդի հողերը: Այդ են վկայում Թելլ Էս-Սավվանայի (Իրաքի կենտրոն) և Մանդալիի մոտ մի շարք բնակավայրերում (Չոգա Մամա, Տիգրիսի հոսանքի միջին մաս) կատարված պեղումների արդյունքները: Ոռոգովի երկրագործությունը թույլ էր տալիս արագ հասնել բարեկեցիկ կյանքի: Պեղված բնակավայրերը պարսպապատ են, տները բազմաբնակարան, խեցեղեն սպասքը՝ նախշազարդ: Սամարրյան մշակույթի ազդեցությունը զգացվում է նաև Շոշում (Էլամ) և Էրեդուում (Միջագետքի ծայր հարավ, Շումեր):

Այս բնակավայրերի մշակույթը Առաջավոր Ասիայում ստեղծված հաջորդ մշակույթն է, որը համանուն բնակավայրի անունով կոչվում է Ուբեյդյան (մոտավորապես մ.թ.ա. 4750թ.): Ընդունված է, որ Սամարրյան մշակույթը կրող ցեղերն են յուրացրել Ստորին Միջագետքը, հիմք դնելով շումերական քաղաքակրթությանը[16]:

Ուբեյդյան մշակույթը ավելի աղքատ է, պակասում է ճարտարապետական հարուստ ոճը (Պաղեստինում հայտնաբերվել են գետնափոր տներ և ոչ ամուր բնակավայրեր): Խեցեղենը տեխնիկապես կատարյալ է, փայլուն, բայց միօրինակ է և համեմատելի չէ հալաֆյան նրբագեղ խեցու հետ: Ուբեյդյան մշակույթի մեջ նորություն էր տաճարների կառուցումը բարձունքների վրա, որոնք զիկուրատների և այլ սրբավայրերի նախատիպերն էին: Ուբեյդյան մշակույթի ուշ շրջանում երևան են գալիս առաջին ոսկե զարդերը[17] (Ուրի Ուբեյդյան մշակութային շերտից հայտնաբերվել է առաջին ոսկե զարդը): Ենթադրվում է, որ Ուբեյդյան մշակույթը կրող կամ այն սեփականացրած կիսաքոչվոր ցեղերն են ոչնչացրել Հալաֆյան մշակույթը, որոնք Տիգրիսի ու Եփրատի հոսանքներով բարձրացել են դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք՝ հասնելով Մալաթիա, Տավրոսի լեռներ ու Կիլիկիա (Մերսին), իսկ արևելքում՝ Ուրմիա լիճ: Պեղումների արդյունքները վկայում են, որ մի շարք բնակավայրերում (Արպաչի) նորեկներին դիմադրել են: Արպաչիում հայտնաբերվել են ավերված շինություններ և բնակիչների մասսայական ոչնչացման դեպքեր[18]: Սա հայտնի առաջին դեպքն է, երբ Ուբեյդյան մշակույթը կրող ցեղերը տեղաշարժվել են դեպի հյուսիս: Ուսումնասիրություններն ու փաստերը վկայում են, որ հարավն է մշտապես կրել հյուսիսի ազդեցությունը, այստեղից է մշակույթի ու տեղաշարժվող ցեղերի ներհոսք եղել դեպի Միջագետքի հարավային մասեր: Այս դեպքում հակառակ երևույթն է նկատվում՝ իր բացասական հետևանքներով, որը շարունակվում է նաև հետագա հազարամյակներում: Գրավոր աղբյուր-

16. ИДВ, I, с. 122.
17. ИДВ, I, с. 72.
18. *Д. Мелларт*, с. 122.

ները վկայում են, որ մ.թ.ա. 4-րդ հազարամյակից սկսած Արարական թերակղզուց Միջագետքում հայտնված սեմական ցեղերը մշտապես բախանցել ու փորձել են ամրապնդվել Հյուսիսային Սիրիայում, Հայկական Միջագետքում, Միջերկրական ծովի արևելյան ափերին և այլ վայրերում: Սկսվել են հազարամյակներ տևած Հայկական լեռնաշխարհ ու սեմականացող Միջագետք ռազմական ընդհարումներն ու հակամարտությունները:

Լիբանանը և Պաղեստինը Ուբեյդյան աղքատ մշակույթից անցում են կատարել մշակութային հարուստ ու ծաղկուն շրջան՝ մ.թ.ա. 3600-3500 թթ.:

Հյուսիսից այս տարածք է թափանցել նոր բնակչություն, որն իր հետ բերել է նոր մշակույթ, և որը հայտնի է էնեոլիթյան (պղնձեքարեդարյան) մշակույթ անունով: Սկիզբ է դրվել մետաղի (պղինձ) մշակմանը: Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհը հարուստ է տարբեր մետաղահանքերով (պղինձ, կապար, արծաթ, երկաթ): Ընդունված է, որ Հայկական լեռնաշխարհը մետաղահանության ու մետաղամշակության հնագույն կենտրոններից է (Շենգավիթ, Գառնի, Նախիջևանի Քյուլ-թափա, Արտաշավան): Մ.թ.ա. 5-3-րդ հազարամյակներում, որն ընդգրկում է նաև վաղ բրոնզի դարը, Հայկական լեռնաշխարհում ստեղծվել է բարձր զարգացած մշակույթ[19], որը հայտնի է Կուր-արաքսյան (Բ. Կուֆտինի առաջարկով) կամ շենգավիթյան (Ե. Բայբուրթյանի առաջարկով) մշակույթ անունով: Շենգավիթյան մշակութային գոտին շատ ընդարձակ է, այն սկսվում է Հայկական լեռնաշխարհի կենտրոնից և տարածվելով դեպի ծայրամասեր հասնում է հարավ-արևելքում՝ Ուրմիա լիճ (Գեոյ-թեփե, Յանդ-թեփե), հյուսիսում՝ Թռեղք (Թրիալեթ), հարավում՝ Ասորիք (Ամուկ 1, 2) ու Պաղեստին (Քիրբեթ-Քերակ, Բեթ-Շան), իսկ արևմուտքում՝ Եփրատ գետ: Այս մշակույթին բնորոշ է գեղեցիկ ու զարգացած խեցեգործությունը, որի բնորոշ հատկանիշներն են՝ երկգույն խեցեղենը, արտաքինից սև, փայլուն (հաճախ մետաղափայլի աստիճան), ներսից՝ կարմիր-վարդագույն, որոնք զարդարված են ռելիեֆ կամ ներճկված զարդանախշերով: Բնորոշ է նաև խեցու միայն մի կողմից զարդանախշված լինելը: Կուր-արաքսյան մշակույթը ներկայացնող հուշարձաններ են հայտնաբերվել Երևանում (Շենգավիթ, որի անունով մշակույթը կոչվում է շենգավիթյան), Աբովյանում, Էջմիածնում (Մոխրաբլուր, Սև բլուր), Վանում (Շամիրամալթի), Խարբերդում (Նորշուն-թեփե), Նախիջևանում (Քյուլ-թափա 1), Բագրևանդում, Ուրմիա լճի ավազանում (Գեոյ-թեփե 1) և այլն:

Այս և այլ բնակավայրերի պեղումների ժամանակ խեցեղեն սպասքի հետ հայտնաբերվել են ոչ միայն մետաղե իրեր (կացիններ, տեգի ծայրեր, գնդասեղներ, ապարանջաններ), այլև դրանք պատրաստելու կավե ու քարե կաղապարներ, հալոցներ ու խարամի մնացորդներ (Շենգավիթ, Գառնի, Նախիջևա-

19. *Г. Чайлд*, Древнейший Восток в свете новых раскопок, М., 1956, с. 167., *В. Массон*, Средняя Азия и Древний Восток, М-Л., 1964, с. 65-67.

նի Քյոլ-թափա, Արտաշավան), որոնք վկայում են, որ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված մետաղե իրերը ձուլվել ու պատրաստվել են տեղում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մետաղե իրերի վաղագույն նմուշները, ինչպես նաև հումքը՝ մաքուր պղինձը, մետաղահանքերից զուրկ Միջագետք, Եգիպտոս ու այլ տարածքներ են թափանցել Հայկական լեռնաշխարհից[20]: Այդ են վկայում Առաջավոր Ասիայի հնագույն բնակավայրերից պեղված մշակութային արժեքների ձևերի, զարդանախշերի և պատրաստման տեխնիկայի բացահայտ նմանությունները Հայկական լեռնաշխարհից հայտնաբերված մշակութային արժեքներին: Հայկական լեռնաշխարհից դուրս շենգավիթյան մշակույթի բացահայտված ու լավ ուսումնասիրված հուշարձաններ են պաղեստինյան հուշարձանները (Քիրբեթ-Քերակ, Բեթ-Շան): Այս մշակույթը կոչվում է նաև քիրբեթ-քերակյան մշակույթ՝ վերոհիշյալ բնակավայրի անունով:

Այսպիսով կարելի է ասել, որ Տիգրիսի ակունքների հովիտներում և Եփրատի միջին ու վերին հոսանքների շրջանում էր գտնվում նստակյաց երկրագործների և անասնապահների այն մշակույթը, որն ընկած էր Միջագետքի քաղաքակրթության հետագա բոլոր նվաճումների հիմքում[21]: Ընդհանրացնելով վերոհիշյալ նյութը նկատում ենք. Առաջավոր Ասիայի հնագույն բոլոր բնակավայրերում՝ Չաթալ-հույուքից մինչև Զագրոսի լեռներ (Շանիդար) և Անդրկովկասից մինչև Պաղեստին (Երիքով) ու Ստորին Միջագետք հայտնաբերվել են օբսիդիանից պատրաստված տասնյակ հազարավոր աշխատանքային գործիքներ: Հայկական լեռնաշխարհից սկսվող «օբսիդիանի» ճանապարհը հազարավոր կիլոմետրերով ձգվում էր դեպի Առաջավոր Ասիայի հեռավոր անկյունները[22]:

Մ.թ.ա. 7-րդ հազարամյակում հյուսիսից (ենթադրվում է Հյուսիսային Սիբիրից ու Անատոլիական սարահարթից) Հորդանանի հովիտներ ու Պաղեստին են թափանցել զարգացման բարձր աստիճանի վրա գտնվող ցեղեր, որոնք օգտագործել են օբսիդիանից պատրաստված գործիքներ, պատրաստել են նուրբ խեցեղեն, կառուցել են քարե հիմքով տներ և պարսպապատ բնակավայրեր (Կոնիայի հարթավայրի մշակույթը):

Մ.թ.ա. 6-5-րդ հազարամյակներում հյուսիսից մշակութային նոր ալիք է տարածվել Առաջավոր Ասիայում: Այդ մշակույթը կոչվում է հալաֆ-հասունյան, իսկ մշակույթի ծագման կենտրոնը գտնվում էր Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում և Հայկական Միջագետքում[23]:

Այս մշակույթի ազդեցությունը զգացվում է նաև Զագրոսի նախալեռնե-

20. *Ա. Իեսսեն*, Кавказ и Древний Восток в 4-3-ем тысячилетиях до н. э., КСИА. 1963, вып. 93, с. 6.

21. *Դ. Մելլարտ*, с. 121.

22. Отчет археологической коммисси за 1899г., С. Петербург, 1902, с. 71., *Ս. Սարդարյան*, 1967, էջ 151:

23. *Ա. Վուլլի*, 1986, с.20, *Դ. Մելլարտ*, с. 112.

րում՝ Զարմո, Թելլ-Շեմշար (Իրաք), Թեփե-Գուրան, Սոհրաբ (Իրան) բնակավայրերում:

Կուր-արաքսյան կամ շենգավիթյան մշակույթը (մ.թ.ա. 5-3-րդ հազարամյակներ) ևս ազդեցության մեծ գոտի է ունեցել Առաջավոր Ասիայում՝ հասնելով մինչև Սիրիա ու Պաղեստին և նոր, ծաղկուն մշակույթ է ապահովել ուբեյդյան համեմատաբար աղքատ մշակույթից հետո: Կուր-արաքսյան մշակույթը ևս հյուսիսային ծագում ունի (Հայկական լեռնաշխարհ):

Ինչպես տեսնում ենք, ժամանակ առ ժամանակ հյուսիսից նոր, բարձր, էլ ավելի զարգացած ու կատարելագործված մշակութային ալիք էր տարածվում Առաջավոր Ասիայում, որն իրենց հետ բերում էին բարձր մշակույթ ստեղծող և զարգացման բարձր մակարդակ ունեցող ինչ-որ ցեղեր: Հայկական լեռնաշխարհից դուրս հայտնաբերված մշակութային արժեքները ընդհանրություններ ունեն Հայկական լեռնաշխարհի տարբեր բնակավայրերում հայտնաբերված մշակութային արժեքների հետ (օբսիդիանե գործիքներ, վաղ երկրագործության և անասնապահության հետքեր, վաղ մետաղամշակություն, Արև-աստծո և նրա խորհրդանշանների՝ խաչի, սվաստիկայի ու ցուլի պաշտամունք): Հետևաբար կարելի է ասել, որ այն տարածքը, որտեղ ստեղծվում էին այդ բարձր մշակույթները, հյուսիսն է՝ Հայկական լեռնաշխարհն ու շրջակա տարածքները: Նոր մշակույթ կրող ցեղերը այն տարածում էին իրենց ցեղակիցների կողմից ավելի վաղ բնակեցված տարածքներում, իսկ առևտրական, տնտեսական ու մշակութային կապեր միշտ եղել են նրանց միջև: Այդ է վկայում այն փաստը, որ այդ բնակավայրերի մշակութային շերտերում չեն նկատվել բռնության, ավերածության հետքեր, ինչպես օրինակ՝ ուբեյդյան օտար մշակույթի (նաև ցեղերի) տարածման ժամանակ էր, երբ այն կրող հարավային կիսաքոչվոր ցեղերը Տիգրիս և Եփրատ գետերի հոսանքներով շարժվել են հյուսիս (Վերին Միջագետք) և ներխուժել այդ շրջանների ծաղկուն բնակավայրերը (Արպաչի)՝ հասնելով մինչև Միջերկրականի արևելյան ափեր (Բիբլոս) ու Կիլիկիա (Մերսին): Իսկ ովքե՞ր են ստեղծել Առաջավոր Ասիայի մ.թ.ա 9-4-րդ հազարամյակներով թվագրվող հնագույն այս մշակույթները: Ովքե՞ր էին երկրագործ-անասնապահ այն ցեղերը, որոնց մոտ բարձր զարգացման էր հասել խեցեգործությունը, որոնց ծանոթ էր վաղ մետաղամշակությունը և որոնք ապրել են Միջագետքից հյուսիս և Սիրիա-Պաղեստինից հյուսիս-արևելք ընկած տարածքներում:

Մ.թ.ա. 10-5-րդ հազարամյակներն ընկած ժամանակաշրջանում գրավոր աղբյուրներ չեն հայտնաբերվել և հայտնի չէ, թե ինչպես են իրենց կոչել հնագույն ցեղերն ու ժողովուրդները[24]: Հայտնի չէ նաև, թե ինչ լեզվով են խոսել

24. Նրանց արտաքինի մասին որոշ, ոչ ամբողջական պատկերացում կարելի է կազմել հայտնաբերված գանգերի միջոցով, որոնք երկու տիպի են. նրբագեղ պրոտոմիջերկրածովյան (Երիքով, մ.թ.ա 7-րդ հազարամյակ) և ավելի մասիվ գանգվածեղ՝ եվրոաֆրիկյան: Այս երկու տիպերն էլ դոլիխոցեֆալ են (երկարագանգ): Որոշ մարդաբաններ գտնում են,որ եվրոաֆրիկյան գանգեր կրողները ներկայացնում են եվրոպական վերին պալեոլիթյան մարդուն:


ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՆ Մ.Թ.Ա. 6-3-ՐԴ ՀԱՅՐԱՄԱՅԱԿՆԵՐՈՒՄ
(Սև ծով)
(Միջերկրական ծով)
ՍԻՐԻԱ
ՄԵՍՈՊՈՏԱՄԻԱ
ՄԻՋԱԳԵՏՔ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻ ՄԻՋԱԳԵՏՔ
ՄԵԴԻԱ
ԷԼԱՄ
ՇՈՒՄԵՐ
ՍԱՄԱՐԻԱ
ՍՈՒՍԱ
ԲԱԲԵԼ
ԱՔԿԱ
ՏՅՈՒՐՈՍ
ՍԻԴՈՆ
ԵՐՈՒՍԱԼԵՄ
ԹԵԼԼ-ԷԼ-ՇԵՅԽ
ԱԼԱԼԱԽ
ՍԱՄՈՍԱՏ
ԱՆԱՏՈԼԻԱ
ՍԱՐԴԵՍ
ՍԱՄՈՍ
ՍՈՒՍԱ
ԱՍՈՒՐԻԱ
ԲԱԲԵԼ
ԱՔԿԱ
ՍԻՐԻԱ
ՍԱՄԱՐԻԱ

լեռներից (Հայկական լեռնաշխարհ), իսկ այդ շրջանի ամբողջ պատմությունը վկայում է, որ Ալալախի զարգացումն ընթացել է հյուսիսի ազդեցության տակ[28]: Թելլ-Էլ-Շեյխի 11-րդ շերտի պեղումների ժամանակ հայտնաբերվել է ոչ միայն տեղական սև խեցի, այլև Հալաֆի նախշազարդ նուրբ խեցեղեն, որի կենտրոնը, ինչպես վերևում նշվել է, Հյուսիսային Միջագետքն էր: Խեցեղենը Ամուկի հովիտ է բերվել առևտրականների կողմից, որոնք այստեղ էին գալիս անտառափայտի համար (լիբանանյան մայրի ծառ): Թելլ-Էլ-Շեյխի 11-րդ շերտում հայտնաբերվել է տեղական վարպետների կողմից պատրաստված խեցեղեն, որն իր որակով չի զիջում Հալաֆյան խեցուն, իսկ հին տեղական նեոլիթյան սև խեցին անհետացել է: Զգացվում է, որ նոր բնակիչներ են հայտնվել, որոնք զարգացման բարձր մակարդակ են ունեցել: Նրանց հայտնի էր բրուտի անիվը, մետաղների մշակման գաղտնիքը (հայտնաբերվել է մետաղե ուրագ պատրաստելու քարե կաղապար): Նրանք նաև կառուցել են ամուր կառույցներ թրծված աղյուսից և այլն: Նոր բնակիչները բնակություն են հաստատել ոչ թե հին բնակավայրերում, այլ հիմնել են իրենց նոր բնակավայրերը: Հին բնակիչներն ապրել են գյուղերում և զբաղվել են գյուղատնտեսությամբ: Իսկ նոր բնակիչները հիմնել են քաղաքներ և տաճարներ: Սկսվել է նոր ժամանակաշրջան Ամուկի հովտի համար, որը շարունակվել է մոտ 1000 տարի, առանց դրսի մասնակցության[29]: Թելլ-Էլ-Շեյխի մշակութային ստորին շերտում (5-րդ շերտ) հայտնաբերված խեցեղենը իր որակով հիշեցնում է խուրրիական մշակույթին բնորոշ խեցի՝ սև կամ շագանակագույն ֆոնի վրա սպիտակ ներկով զարդանախշեր են արված: Թելլ-Էլ-Շեյխի հաջորդ շերտում նկատվում է ուբեյդյան խեցեղենի առկայություն (կանաչ-սպիտակ գույնի խեցեղեն՝ զարդարված սև կամ շագանակագույն երկրաչափական նախշերով), որը բացառությամբ Հյուսիսային Միջագետքի, տարածվել է ողջ Միջագետքում:

Թելլ-Էլ-Շեյխի մշակութային հաջորդ շերտերում նկատվում է Քիրբեթ-Քերակի մշակույթի, հատկապես խեցեղենի առկայություն: Հայտնաբերվել է նաև կավե օջախ, որը նման է Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված օջախներին: Իսկ Քիրբեթ-Քերակի մշակույթը ստեղծող ցեղերը շենգավիթյան կամ Կուր-արաքսյան մշակույթը կրող ցեղերն էին, որոնց հայրենիքը Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան և կենտրոնական մասերն են: Մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջում անհայտ պատճառով (այլ ցեղերի հարձակում, սով, երաշտ) կուր-արաքսյան կամ շենգավիթյան մշակույթը կրող ցեղերը տեղաշարժվել են դեպի Ամուկի հովիտ: Ամուկի հովտի բնակիչները իրենց ծագմամբ ու մշակու-

28. *Л.Вулли*, с. 20. Այս տեսակետը կիսում են նաև Ս. Հուդը, Վ. Լամբը և ուրիշներ: Իսկ Ռ. և Լ. Բրեյդվուդները և Ա. Իեսենը ցուցաբերելով զգուշավոր մոտեցում, գտնում են, որ Արևմտյան Հայաստանից տեղի է ունեցել բնակչության կարճատև ու արագ ներթափանցում դեպի Սիրիա-Պաղեստին, ՀԺՊ, 1971, էջ 140:

29. *Л.Вулли*, с. 38.

թային ավանդույթներով բացահայտորեն տարբերվել են իրենց հարևաններից՝ Հարավային Սիրիայում և Պաղեստինում ապրող ցեղերից: Դա հետևանք էր այն բանի, որ Ալալախի զարգացումն ընթացել է հյուսիսի՝ Հայկական լեռնաշխարհի ազդեցության ներքո: Հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ Ամուկի հովիտը նվաճվել է նաև սեմական ցեղերի՝ Միջագետքի վաղդինաստիական, Սարգոնիդների և Ուրի 3-րդ դինաստիայի տիրակալների կողմից: Հայտնաբերվել է անարտահայտիչ, քիչ նախշազարդված խեցեղեն (բացակայում է Հալաֆյան նրբագեղ զարդանախշ խեցեղենը՝ թռչունների և գազանների պատկերներով): Յամխադի կամ Հալեպի թագավորության ժամանակներով թվագրվող մշակութային շերտերում հայտնաբերվել են այրված պալատ, տաճար և պետական այլ շինություններ: Հայտնաբերվել են նաև գրավոր աղբյուրներ[30]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Ալալախում ապստամբություն է եղել և դրսից օգնության շնորհիվ օտար տիրակալներին դուրս են շպրտել երկրից: Գրավոր աղբյուրները վկայում են, որ այդ ժամանակ Ալալախում իշխում էին Յամխադի կամ Հալեպի թագավորության (կենտրոնը Հալեպ) տիրակալները՝ Յարիմ-լիմի դինաստիայի (մ.թ.ա. 1792-1750 թթ.) ներկայացուցիչները: Ապստամբությունը հավանաբար եղել է մ.թ.ա. 1750-1730-ական թվականներին: Այն, որ այդ դինաստիան օտար էր և նրան վերջ են տվել ուժով, զգացվում է այն փոփոխությունից, որ կատարվել է մշակույթի մեջ: Այն է. վերադարձ է կատարվել դեպի հին՝ գծանախշ խեցեղենը, որը հավանաբար որպես «ազգայինի խորհրդանիշ» արգելվել էր օտար տիրակալների՝ Յարիմ-լիմի դինաստիայի տիրակալների կողմից: Պեղումները ցույց են տալիս, որ Յարիմ-լիմից հետո նոր պալատն ու տաճարը կառուցվել են ոչ թե հնի տեղում, ինչպես ընդունված էր, այլ նոր տեղում, քանի որ օտար (սեմական ծագումով) Յարիմ-լիմն ու Յամխադի այլ թագավորներ պղծել էին հինը իրենց պալատն ու տաճարը կառուցելով այն վայրում, ուր կառուցված են եղել շատ հին պալատն ու տաճարը[31]:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսին Ալալախը Մուկիշե թագավորության մայրաքաղաքն էր և գտնվում էր Միտանիի քաղաքական, տնտեսական ու մշակութային ազդեցության տակ: Այդ ժամանակաշրջանի մի տեքստ վկայում է, որ քաղաքի մի բնակիչ՝ ոմն Իրիբ-խազի ինչ-որ գործի համար դատարանում հաղթել է միայն այն բանի համար, որ եղել է Միտանիի թագավոր Սաուսադատտարի այլ ոչ Մուկիշեի թագավոր Նիկմեպայի վասալը: Իսկ Ատչանայից հայտնաբերված մի տեքստ վկայում է, որ Նիկմեպային հաջորդած Իլիմ-Իլիման Միտանիի թագավորի վասալն էր[32]: Պեղումները ցույց են տվել, որ Իլիմ-Իլիմայի պալատն այրված է: Հավանաբար այն այրվել է վերոհիշյալ

30. Հայտնաբերված գրավոր աղբյուրները հրատարակվել են Դ. Վայզմանի կողմից: D. Wiseman, The Alalack Tablets, London, 1953 (AT).

31. *Л.Вулли*, с. 70, 71.

32. *Л.Вулли*, с. 109.

ապստամբության ժամանակ: Նրա որդի Իդրիմիի արձանագրությունից հայտնի է դառնում, որ նա երկար ժամանակ եղել է վտարանդի, այնուհետև հովանավորություն է խնդրել Միտանիի թագավոր Շուտառնայից (կամ Պարատտարնայից), որին դիմում է «իբրև հզոր արքա, Խուրրի երկրի ռազմիկների տիրակալ»: Արձանագրության մեկ այլ հատվածում գրված է. «Մեր խոսքը ընդունեցին թագավորները՝ Խուրրի երկրի ռազմիկների տիրակալները»[33]: Այդ տեքստը նաև պայմանագրի տեքստ է՝ կնքված Շուտառնայի և Իդրիմիի միջև: Ընդունելով Շուտառնայի բոլոր պայմանները Իդրիմին դարձել է Մուկիշեի (Ալալախ) թագավոր: Իսկ պայմանագրով Իդրիմին պարտավորվել է հրաժարվել Հալեպից (Խալապ), խուրրիների և խեթերի միջև պատերազմ ծագելու դեպքում պատերազմի մեջ մտնել խուրրիների կողմից և այլն: Նիկմեպայի պալատի այրվելուց ու ավերվելուց հետո Իդրիմին նոր տեղում կառուցել է նոր տաճար ու նոր պալատ:

Այդ ժամանակաշրջանի՝ մ.թ.ա. 1450-1350-ական թվականների քաղաքական փոփոխությունների մասին է վկայում Նուզից (այժմ՝ Յորղան-թեփե, Քերքուկի մոտ) հայտնաբերված խեցեղենի յուրահատուկ տիպը, այն է. սև կամ շագանակագույն ֆոնի վրա պատկերվել են սպիտակ զարդանախշեր: Այդ տիպի խեցեղեն հայտնաբերվել է նաև Ատչանայում (Ալալախ, 5-րդ շերտ, Նիկմեպայի ժամանակ): Այդ տեսակի խեցեղեն տարածված էր Միտանիի թագավոր Սաուսաղատտարի ժամանակ: Խեցեղենի այս տեսակի տարածվածությունը վկայում է ինչպես խուրրիների տարածվածության, այնպես էլ նրանց մշակութային, տնտեսական ու քաղաքական ազդեցության մասին: Խեցեղենի այս տեսակը Ալալախում հայտնաբերվել է միայն Իդրիմիի ժամանակ (նրան փոխարինել է որդին՝ Ադադներարին): Այնուհետև Ալալախը Հյուսիսային Սիրիայի մյուս քաղաքների նման Միտանիի թուլացումից հետո ընկել է խեթերի տիրապետության տակ, դարձել կռվախնձոր խեթերի ու եգիպտացիների միջև:

Ինչպես տեսնում ենք, Առաջավոր Ասիայում ստեղծված հնագույն մշակույթները մեծ ընդհանրություններ ու նմանություններ ունեն Հայկական լեռնաշխարհում ստեղծված հնագույն մշակութային արժեքների հետ: Հետևաբար Հայկական լեռնաշխարհի բնակիչները, որոնք հնագույն գրավոր աղբյուրներում հանդես են գալիս խուրրիներ (նաև սուբարիներ), միտանիներ, նաիրցիներ և այլ անուններով, գործուն մասնակցություն են ունեցել Առաջավոր Ասիայում ստեղծված հնագույն քաղաքակրթության, այդ թվում՝ նյութական մշակույթի ստեղծման գործում:

33. *Л. Вулли*, с. 111,112. *A. Kammenhuber*, Die Arier..., p. 63-64, *И. Дьяконов*, Арийцы...,с. 48.

ՀՆԱԳՈՒՅՆ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԽՈՒՐՐԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջավոր Ասիայի հնագույն գրավոր աղբյուրները (շումերական, աքադական, խեթական, եգիպտական, խուրրիական) վկայում են, որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Հայկական լեռնաշխարհը և շրջակա տարածքները բնակեցված էին խուրրիներով (հայ-արմենները): Խուրրիներով էին բնակեցված նաև Կիլիկիան (Կիցվատնա), Հյուսիսային Սիրիան, Ամուկի հովիտը (Օրոնտես գետի ստորին հոսանքի շրջան), Հյուսիսային Միջագետքը, Եփրատի հովիտը, Ասորեստանը, Քերքուկի շրջանը (Արրապխա), Զագրոսի լեռների արևմտյան մասը և Ուրմիա (Կապուտան, Մանտիեենե) լճի ցածրավայրերը: Հնագույն ժամանակներից խուրրիական ցեղերը խաղաղ կերպով տարածվել են դեպի Միջերկրական ծովի արևելյան ափերը, Պաղեստին ու Երուսաղեմ[1] (հիմնադրել են), Ուգարիտ, Աշշուր[2] (հիմնադրել են), Նինվե[3] (հիմնադրել են), Բաբելոն[4]

1. Manetho, The Aegyptiacc..., p. 89, *Է. Դանիելյան*, 1997թ., էջ 73:

2. Հնագույն գրավոր աղբյուրները (ИДВ, II, с.25) Աշշուրի հիմնադիրներ ու առաջին բնակիչներ են համարում Կիկկիային, Աուշպիային կամ Ուշպիային ու Ադասիային (Ադաս), որոնք ունեն խուրրիական անուններ: Ի. Դյակոնովը այդ անունները ոչ խուրրիական, ոչ էլ սեմական է համարում: Նա գտնում է, որ դրանք անհայտ ծագում ունեն: Գրավոր աղբյուրները վկայում են, որ խուրրիական անունով Ուշպիան (Աուշպիա) Աշշուրի տաճարի հիմնադիրն ու կառուցողն է, իսկ Աշշուրի պարիսպները, ըստ Ասորեստանի թագավորների արձանագրությունների կառուցել է Կիկկիան, արդեն տաճարի կառուցումից հետո: Այն փաստը, որ Կիկկիան ու Աուշպիան հայրանուններով չեն ներկայացված, ուսումնասիրողներին թույլ է տալիս եզրակացնելու, որ նրանք նշանակված պաշտոնյաներ էին, որոնք ժամանակավորապես ղեկավարում էին բաղաքամրոցները, այս դեպքում՝ Աշշուրը (Ա. Խաչատրյան, 1933, էջ 77-78):

3. Ուսումնասիրողները Միջագետքի հայտնի քաղաքներից մեկի՝ Նինվեի հիմնադիրներ են համարում խուրրիներին (Նինվե անունը խուրրիական է համարվում, ИДВ, II, с. 92): Ի դեպ մասնագետները գտնում են, որ Ասորեստանի բնակչության մեջ գերակշռել է արմենոիդ տիպը (S. Smit, Er. History of Assuria, էջ 151, Ա. Խաչատրյան, 1933, էջ 78): Դա կարելի է բացատրել նրանով, որ խուրրի բնակչություն ունեցող այդ տարածքը (ապագա Ասորեստանը) մ.թ.ա. 2-րդ հազարամյակում ենթարկվել է սեմական ցեղերի ներհոսքի, որի արդյունքում նորից գերակշռել է արմենոիդ տիպը:

4. Ուսումնասիրողները առաջ են քաշում այն տեսակետը, որ Բաբելոնը ևս հիմնել են խուրրիները և որ նրա առաջին բնակիչները եղել են խուրրիներ, մինչև Համմուրաբիի (1792-1750) իշխանության գալը (Ա. Խաչատրյան, էջ 78): Ի դեպ ուսումնասիրողները գտնում են, որ միտանիները արշավել են Բաբելոնի վրա և կործանել Համմուրաբիի տոհմը, հեշտացնելով իրենց ցեղակից կասիտական հարստության հաստատվելը բաբելական գահին (Տեղեկագիր, 1926, 1, էջ 31):

(հիմնադրել են) և այլն: Հյուսիսում որևէ սահման չի հիշատակվում: Գրավոր աղբյուրները լռում են այդ մասին, հավանաբար այն պատճառով, որ ամբողջ Հայկական լեռնաշխարհը բնակեցված էր խուրրիներով[5], իսկ ավելի հյուսիս (Կովկասյան լեռներ) չկար որևէ ուժեղ հարևան, որի հետ ընդհարումներ կամ տնտեսական, առևտրական կարգի հարաբերություններ եղած լինեին, և «Խուրրի պետությունը հյուսիսում ապահով կերպով տարածվում էր մինչև Կովկաս»[6]:Հակառակ դեպքում այդ մասին վկայություններ կլինեին գրավոր աղբյուրներում:

Շումերները խուրրիների բնակության վայրերը՝ Հայկական լեռնաշխարհի հարավային մասերն ու Հյուսիսային Միջագետքը կոչում են Su-bir[7] (կրճատ Su^ki), աքադացիները՝ Subaru, Subari, Subartu (Šubartu): Սարգոն Հինը (Աքադացի, 2316-2216) իր արձանագրության մեջ գրում է, որ երբ ինքը արշավանքի մեջ է եղել ու գտնվել է երկրից դուրս, Աքադի (Աքքադ) վրա է հարձակվել Տիգրիսի միջին ու վերին հոսանքների շրջանում գտնվող երկիրը՝ Սուբարտուն: Նա գրում է նաև, որ մոտավորապես մ.թ.ա. 2500թ. կասեցրել է սուբարիների հարձակումը, իսկ այնուհետև ինքն է հարձակվել Սուբատուի վրա, ոչնչացրել նրանց «նետաձիգ զորքը», թալանել ու մեծ ավարով վերադարձել Աքադ[8]: Նկատում ենք, որ Սարգոն Աքադացու դեմ ոտքի էր կանգնել Սուբարուի՝ Արրապխայի (Քերքուկ) մոտակա դաշտերում ապրող ժողովրդի կանոնավոր «նետաձիգ» զորքը, որը Արրապխայի մոտակայքում ճակատամարտ է տվել Սարգոնի զորքի դեմ:

Աքադի մեկ այլ թագավորի՝ Նարամ-Սուենի արձանագրություններում ևս վկայված է Subir երկիրը և Ազուխինոնում քաղաքը Ստորին Զաբ գետի ափին: Հիշատակվում է նաև խուրրիական անունով ոմն Տախիշատիլի: Ենթադրվում է, որ այդ անձը՝ Ազուխինոնում քաղաքի կառավարիչը կամ զորահրամանատարը կարող էր լինել: Իր արձանագրություններից մեկում Նարամ-Սուենը գրում է. «հաղթողը Սուբարուի մինչև անտառը մայրիների»[9] (Ամանոս): Նկատում ենք, որ Հայկական լեռնաշխարհի Սուբիր (Սուբարու) կոչվող երկիրը սահմանակից էր Աքադին ու Շումերին և ձգվում էր Զագրոսից մինչև Ամանոս ու Կիլիկիա: Ընդունված է, որ Սուբիրը աշխարհագրական անվանում է, ուրեմն երկրի բնակիչները խուրրիներն էին: Հին բաբելական ավանդությունը հիշատակում է Սի-

5. Որոշ ուսումնասիրողներ (Ի. Դյակոնով) Հայկական լեռնաշխարհի հյուսիսում (Մեծ Հայքի Այրարատ նահանգից մինչև Սևանա լիճ) տեսնում են մի երրորդ Էբիուն երկիր, որը մերձավոր կապի մեջ էր և՛ խուրրիների, և՛ ուրարտացիների հետ: И. Дьяконов, 1968, с. 18. Էբիուն անվանումը հայտնի է ուրարտական արձանագրություններից:

6. Հ. Փիրլիր, Արիացիները Բողազ-Քյոյի արձանագրությունների համաձայն, ՀԱ, 1913, ապրիլ (թարգմանությունը գերմաներենից Հ. Մատիկյանի):

7. АВИИУ, 1, 3.

8. ИДВ, 1, с. 239. S. Smit., Er. History of Assuria, էջ 93.

9. G. Contenau, 1948, էջ 58-59, Մ. Գավուրջյան, 1973, էջ 299.

մուրրում երկիրը և նրա Պուտտիմ-աթալ խուրրիական անունով թագավորին[10]: Շումերի հոգևոր կենտրոն Նիպուրում հայտնաբերվել է աքադական շրջանի արձանագրություն, որտեղ ընթերցվում են խուրրիական անուններ: Կա հագուստի ցուցակ, որը տրվել է խուրրիական անունով մի մարդու՝ Շեխրին-Էվրին: Այդ արձանագրությունը փորագրված է մարմարի (և ոչ կավի տախտակի) վրա, որը վկայում է այդ անձնավորության հարգարժան մարդ լինելու մասին[11]:

Աքադական արձանագրություններում subartum, subaru, «սուբարեցի» տերմինը նշանակում էր Սուբարուի բնակիչ և օգտագործվում էր որպես խուրրի անվանը հոմանիշ[12]:

Եգիպտացիները (18-րդ հարստության փարավոնները) խուրրիների համար օգտագործում են h'rw (խարու, խուրու ընթերցմամբ) անունը[13]: Եգիպտացիները այդ անունը օգտագործում են Պաղեստինում, Սիրիայում, Փյունիկիայում ապրող ցեղերի համար որպես էթնոնիմ և ոչ որպես երկրի անուն: Եգիպտացիները Արևմտյան սեմական ցեղերի (քանանացիներ) նման օգտագործում են նաև Nhrjn[14] Նախրինա, Նախարինի (Նախարինա) անունը, որը «Եփրատի ճյուղավորումների երկիր» իմաստն ունի: Եգիպտացիները օգտագործում են նաև Maittani և Mittani անունները[15], որպես երկրի անուն: Աքադալեզու (բաբելերեն, ասուրերեն) գրավոր աղբյուրները օգտագործում են Hanigalbat, Haligalbat, Hanagalbat[16] անունները: Խանիգալբատ էր անվանվում այն տարածքը (երկիրը), որը գտնվում էր Եփրատի ճյուղավորումների և Տիգրիսի վերին հոսանքների միջև (Խաբուրի վտակներից կազմված եռանկյունին):

Խաթթուսասից հայտնաբերված խեթական հնագույն երկլեզվյան (խեթերեն, աքադերեն) արձանագրությունների խեթերեն տեքստերը օգտագործում են Hurri (Hurla), իսկ աքադերեն տարբերակները՝ Hanigalbat, Haligalbat անունները[17]: Խեթերը իրենց արձանագրություններում ավելի հաճախ օգտագործում են Hurla ձևը, որը հիմնականում հանդես է գալիս որպես ժողովրդի հավաքական անուն, էթնոնիմ: Միայն մեկ անգամ է այն օգտագործվում որպես երկրի

10. Г. Вильхельм, Древний народ хурриты, с. 32.

11. Г. Вильхельм, с. 32.

12. Ուսումնասիրողները (Ի. Դյակոնով) սուբարիներին և կուտիներին խուրրիական ցեղեր են համարում: ИДВ, 1, с. 362.

13. И. Дьяконов, 1967, с. 117, Ա. Խաչատրյան, 1933, էջ. 163-164,:B. Hrozni, Archiv, vol 2, 1929, էջ 98: Եգիպտացիները մ.թ.ա. 16-րդ դարում Խուրրի էին (H´rw/Hôr) անվանում նաև Պաղեստինն ու Սիրիան, որոնք այդ ժամանակ հավանաբար խուրրիաբնակ էին: Տեղի վասալ թագավորները հիմնականում խուրրիներ էին և դինաստիական կամ ազգակցական կապերով կապված էին խուրրիական արքայական տան հետ:

14. И. Дьяконов, Арийцы... с. 60.

15. Г. Вильхельм, с. 54.

16. И. Дьяконов, Арийцы... с. 60, И. Дьяконов, 1967, с. 117.

17 Г. Гиоргадзе, Хетты и хурриты..., ВДИ, 1969, I, с. 71-73.

անուն: Խուրրի թագավորները իրենք իրենց անվանում են hurri, իսկ երկիրը՝ հաճախ Mitanni: Ավելի վաղ շրջանի թագավորներ Շուտառնա 1-ինը և Սաուսադատտարը իրենց անվանում են Maittani-ի թագավորներ: Սաուսադատտարի կնիքի վրա գրված է՝ «Սաուսադատտար... արքա Մայտենիի»: Իսկ Ալալախից հայտնաբերված պայմանագրի տեքստում Սաուսադատտարը վկայված է, որպես «Խուրրի ռազմիկների թագավոր», Պարատտարնան «Խուրրի մարդկանց թագավորն» է: Տուշրատան իր երկիրը անվանում է hurrioḫe «Խուրրիական», իսկ իրեն անվանում է «Խուրրիի թագավոր»[18]: Տուշրատայի և իր եղբոր՝ Արտադամա 2-րդի միջև գահի համար մղված պայքարի ժամանակ խեթական աղբյուրները Տուշրատային անվանում են «Միտանի երկրի թագավոր», իսկ Արտադամային՝ «Խուրրի երկրների թագավոր»[19]:

Տուշրատան խուրրիական միտանի ցեղի թագավորն էր մնում, իսկ Արտադամա՝ ամբողջ խուրրիական ցեղերի: Ինչպես տեսնում ենք, Միտանիի թագավորները իրենք իրենց անվանում են խուրրի (խուրրիների թագավոր), իսկ երկիրը շատ հաճախ Միտանի: Նույն կերպ են վարվում խեթերը, ժողովրդին հիմնականում անվանելով խուրրիներ[20]: Խաթթիի թագավոր Սուպիլուլիումաս 1-ինի և Միտանիի թագավոր Շատտիվազայի միջև կնքված պայմանագրի տեքստում գրված է՝ «Թող կրկին ու կրկին կարդացվի այս (դաշնագիրը) Միտանի երկրի արքայի ու խուրրի մարդոց առջև» և այլն: Այս և այլ նույնատիպ արձանագրություններից երևում է, որ դաշնագրի կատարման, նաև երկրի համար հավասարապես պատասխանատու են և՛ թագավորը, և՛ խուրրի մարդիկ: Եթե խուրրիները միտանիների հետ այդ երկրի տերերը չլինեին, նրանց հետ հավասար պատասխանատու չէին լինի երկրի ճակատագրի համար: Եթե խուրրիները նվաճված լինեին, իսկ ազնվականությունը արիական ծագմամբ միտանյան վերնախավ լիներ, ապա բացառվում էր հավասարությունը նրանց միջև: Պատմության մեջ չկա օրինակ, երբ նվաճողները (իշխողները) և նվաճվածները հավասար իրավունքներով կառավարում են երկիրը: Ուրեմն բացառվում է միայն միտանիներին իբրև արիական ցեղ ներկայացնելը, որոնք իբր եկան ինչ-որ տեղից, նվաճեցին Հայկական լեռնաշխարհը և ստեղծեցին արիա-

18. *I. Gelb*, Hurrians..., էջ 73.

19. *И. Дьяконов*, Арийцы... с. 60.

20. Խեթերը Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների համար օգտագործում են Ḫurri և Ḫajaša անվանումները: Հայկական լեռնաշխարհի հյուսիսում կազմավորված պետությունը խեթական արձանագրություններում կոչվում է Hajaša Խայաշա, որը ուսումնասիրողները միանշանակ կարդում են Հայասա, այն է՝ «հայերի երկիր»: Նույն ժամանակաշրջանում (2-րդ հազարամյակի 1-ին կես) Հայկական լեռնաշխարհի հարավում կազմավորված պետության համար խեթերը օգտագործում են Hurri և Mitanni անունները: Կարելի է մտածել, որ hurri-ի դեպքում ի նկատի է առնվել Ar –ր /har/, որպես հավաքական անուն Հայկական լեռնաշխարհի բնակիչների համար, առանց –ma, –me բաղադրիչների: Սա այն դեպքերից է, երբ հանդիպում ենք մեր երկրի ու ժողովրդի անվան har (h-ar) ձևին, ինչպես Հարք, Հարիա, Հարմինույա դեպքերում էր:

կան վերնախավ ունեցող Միտանի պետությունը: Հնագույն արձանագրությունների ḫu-u-ur-սեպախումբը մի շարք ուսումնասիրողներ (Հ. Վինքլեր. Էդ. Մեյեր, Է.Վայդներ, Է. Ֆորեր, Վայսբախ) կարդում էին ḫar (նաև ar), այլ ուսումնասիրողներ՝ (Բ.Հրոզնի, Ա.Ունգնադ) ḫur: Ḫar (har) ընթերցման ժամանակ ուսումնասիրողները անունը կապում են արիների անվան հետ, իսկ խուրրիներենը համարում էին հին արիական լեզու: Ավելի ուշ Խաթթուսասից հայտնաբերված տեքստում hurlili-ն (խեթերեն hurla «խուրրի») ընթերցվեց ḫurri ձևով: Սրանով մերժվեց ḫarri ձևը և խուրրիների արիներ լինելու տեսակետը: Գիտական աշխարհում ընդունվեց անվան ḫurri-խուրրի ձևը:

Hurlili-ն նմանություն ունի Ամառնայի միտանյան նամակում հիշատակված ḫurwoḫe խուրրիական անվան հետ: Նկատում ենք, որ անունների հիմքում hur (hurr) ինքնանվանումն է: Սա պարզ է բոլորի համար, սակայն որոշ ուսումնասիրողներ (Ունգնադ) գերադասում են օգտագործել Սուբարտու, սուբարերեն անունները[21]: Նկատում ենք նաև, որ և՛ hurri, h-ur-ri, և՛ harri h-ar-ri անունների մեջ առկա է ar (ur) բաղադրիչը, որը կարող է հանդես գալ նաև ur, ir, er ձևերով: Անդրադառնանք նաև խուրրի անվանը: Բոլոր ուսումնասիրողները ընդունում են, որ ḫurri-ն էթնոսի անվանում է, ընդունում են նաև, որ խուրրի անվան հիմքը ḫur-ն է: Ուշադրություն էր դարձվում այն փաստին, որ և՛ խուրրիերենում, և՛ ուրարտերենում կան ḫuradi, ḫurade բառերը, որոնք «զինվոր, ռազմիկ» իմաստներն ունեն, և որոնց հիմքը ḫur-ն է: Հետևաբար և՛ hurri-ն, և՛ harri-ն իրենց -ar, -ur արմատներով կապվում են Արարիչ Ար Աստծո անվան և Հայկական լեռնաշխարհի հետ: Հայտնի է նաև, որ Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում (Վանի բարբառ) h-ն հնչում է խ ձևով: Իսկ խեթական սեպագիր տեքստերում h և ḫ (խ) հնչյունները չեն զանազանում, ու մասնագետները այդ հնչյունը պայմանականորեն կարդում են ḫ(խ): Երկու դեպքում էլ հանդիպում ենք Հայկական լեռնաշխարհում շատ տարածված հատուկ անունների (տեղանունների ու անձնանունների) ար-, ուր- բաղադրիչների: Նկատում ենք նաև, որ երկրի, նաև ժողովրդի անվան Խարրի (Հարրի) ընթերցումը լրացնում է Հայաստանի համար օգտագործվող Հարք, (Հայք), Հարիա, Հարմինույա անունների շարքը, իսկ Խուրրի ընթերցումը՝ Ուրարտու (Արարատ), Ուրմե (Արմե) անունների շարքը: Հետևաբար և՛ խուրրի (հուրրի), և՛ խարրի (հարրի) ընթերցումները Հայկական լեռնաշխարհի բնիկներին՝ հայարմենիներին օտարների կողմից տրվող անուններից են և իրենց ար-, ուր-արմատներով կապվում են Հայկական լեռնաշխարհի ու հայերին տրվող անունների (արմեն, ուրարտացի) հետ:

Արձանագրությունների տեքստերից (եգիպտական, խեթական, խուրրիական) երևում է, որ ի տարբերություն միտանի անվան, խուրրի անունը հանդես

21. *Г. Вильхельм*, с. 23.

է գալիս իբրև հավաքական անուն, երկրի էթնոսի անվանում, իսկ Միտանի անվանումը մ.թ.ա. 16-րդ դարում կազմավորված պետությանը տրվող անուն էր: Այսպիսով կարելի է ասել, որ միտանի ցեղը խուրրիական ցեղերից մեկն էր, որոնց առաջնորդներին (թագավորներ) հաջողվել է միավորել խուրրիական ցեղերին ու ստեղծել Միտանի պետությունը: Հետևաբար և՛ խուրրին, և՛ միտանին նույն ցեղին՝ Հայկական լեռնաշխարհի բնիկներին՝ հայ-արմենոիներին տրվող հնագույն անվանումներն են: Իսկ երբ գահակալական գժտությունների ու արտաքին ուժերի խարդավանքների հետևանքով Միտանին բաժանվել է երկու մասի՝ Միտանի (երկրի հարավային մասը) և Խուրրի (երկրի հյուսիսային մասը), ապա ամբողջ երկիրը շարունակում էր լինել խուրրիաբնակ (հայաբնակ): Այդ բաժանումը էթնիկ բաժանում չի եղել, որովհետև միտանի ցեղը շարունակում էր իրեն համարել խուրրի: Այդ են վկայում Միտանիի և հարևան երկրների թագավորների արձանագրությունները, որոնց մասին նշվել է վերևում: Նույնիսկ Միտանի պետության կործանումից հետո հնագույն տեքստերը խուրրի անունը շարունակում են օգտագործել որպես Հայկական լեռնաշխարհի բնիկներին տրվող անուն: Աստվածաշնչի մեջ վկայված hori (m) անունը անմիջականորեն չի վկայում, բայց անշուշտ վերաբերում է խուրրիներին: Գոյություն է ունեցել խուրրիական Միտանի պետություն, որի թագավորներին անվանել են «խուրրի ռազմիկների թագավոր», «Միտանիի թագավոր» և այլն: Հետևաբար և՛ խուրրին, և՛ միտանին նույն էթնոսին տրվող անուններ են: Այս իմաստով հետաքրքիր է G. Contenau-ի եզրահանգումներից մեկը: Նա գրում է «խուրրիներին ներկայացնող հուշարձաններից երևում է, որ նրանք կլոր գանգ և բարձր քթոսկր (մեծ) քիթ են ունեցել: Հետևաբար խուրրիների մարդաբանական տիպը ըստ հուշարձանների գտնվում է ներկայիս հայերի մոտ»[22]:

22. *G. Contenau*, La civilization des Hittites et des Hurrites du Mittanni, Paris, 1948, էջ 29:

ԽՈՒՐՐԻԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ուրկեշից (Հյուսիսային Միջագետք, ենթադրվում է այժմյան Մարդինի մոտ) և Նավարից[1] (Տիգրիսի հարավարևելյան վտակ Դիյալա գետի հովիտ) հայտնաբերվել են հին աքադական սեպագրերով արձանագրություններ, որոնք թվագրում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կեսով (24-22-րդ դդ.): Ուրկեշից հայտնաբերված արձանագրությունը խուրրիերենով գրված հնագույն տեքստն է: Այդ արձանագրությունը Ուրկեշի թագավոր և քուրմ endan Տիշարիի (Տիշաթալ) շինարարական արձանագրությունն է: Նույն ժամանակաշրջանով (մ.թ.ա. 24-22-րդ դդ.) թվագրվող մյուս աղբյուրը Նավարի թագավոր Արիսենի կամ Արիշենի[2] (Արիժեն, Աթալշեն) արձանագրությունն է (հին աքադերենով) գրված բրոնզե թիթեղի վրա՝ նվիրված Խանիլումա քաղաքի տիրակալ Ներգալ (Ներիգալ) աստծո տաճարի հիմնադրմանը:

Ցավոք, դեռևս չեն հայտնաբերվել կամ չեն պահպանվել խուրրի թագավորների տարեգրություններն ու այլ տեքստեր, որոնք անկասկած գոյություն են ունեցել: Դեռ ստույգ հայտնի չէ նույնիսկ մայրաքաղաք Վաշշուգանիի տեղը (նաև Վաշշուգանե, տեղադրվում է Խաբուրի ակունքներում, միջին ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում է Ուշշուկանի, այնուհետև Սիկանի անուններով, ենթադրվում է այժմյան Ֆեխերիա բնակավայրը), որտեղ անկասկած եղել է արքունական դիվան: Ամառնայում և Խաթթուսասում պահպանված պայմանագրերի կամ այլ գրավոր հուշարձանների օրինակներ անշուշտ եղել են նաև Վաշշուգանիում: Ենթադրվում է, որ գոյություն են ունեցել խուրրիական «արքայական տարեգրություններ», որոնք չեն հասել մեր օրերը (կամ դեռ չեն հայտնաբերվել): Խեթական «Տարեգրություններում» հանդիպում են արտահայտություններ, սահմանումներ, որոնք համընկնում են ուրարտական թագա-

1. Այս տարածքները Տիգրիսի վերին և միջին հոսանքների երկարությամբ ձգվող տարածքներն են, որոնք տեղադրվում են Խաբուրի ակունքներում:

2. Անունը նախ ընթերցվել է Arisen ձևով, ավելի ուշ՝ Arišen: Նկատում ենք, որ Արիսեն կամ Արիշեն անունը բաղկացած է երկու հնդեվրոպական բաղադրիչներից՝ Արի-(Ար)/ և -սեն (=շեն): -սեն բաղադրիչը (sen=son=sin) որդի իմաստն ունի: Նույն իմաստն ունի նաև հայերենի -զուն (հայկազուն, իշխանազուն) բաղադրիչը:

վորների արձանագրություններում օգտագործված արտահայտություններին: Հայտնի է, որ ուղղակի կապ չի եղել խեթերի և ուրարտացիների միջև: Այդ արտահայտությունները չկան ասուրական արձանագրություններում: Ուրեմն կարելի է մտածել, որ եղել են խուրրիական «Տարեգրություններ», որոնք ուրարտացիները ժառանգել են, իսկ խեթերը ժամանակին օգտվել են դրանից: Ուրկեշից հայտնաբերված արձանագրության լեզուն տարբերվում է մյուս տեքստերի լեզուներից, որոնք ավելի մոտ են իրար և որոշ չափով մոտ են ուրարտերենին: Ուսումնասիրողները (Ի. Դյակոնով) նշում են, որ Տիշաթալի արձանագրության լեզուն հավասարապես կարելի է համարել և՛ հին խուրրիերենը, և՛ հին ուրարտերենը, քանի որ այն հավասարապես մոտ է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի խուրրիերենին և մ.թ.ա. 1-ին հազարամյակի ուրարտերենին[3]: Այս առումով կարելի է ապացուցված համարել, որ ուրարտական սեպագիրը ծագում է ոչ թե աքադական գրի ասուրական խմբից, այլ խուրրի-միտանյան խմբից[4]:

Խուրրիերենով գրված հնագույն ու հայտնի տեքստը Միտանիի թագավոր Տուշրատայի նամակն է՝ ուղղված եգիպտական փարավոն Ամենհոտեպ 3-րդին[5] (մ.թ.ա. 14-րդ դարի 1-ին կես, հայտնաբերվել է Ամառնայի արխիվում): Կարելի է մտածել, որ եթե փարավոնին հասցեագրված նամակը գրվել է խուրրիերենով, ուրեմն այն Եգիպտոսում կարող էին կարդալ ու հասկանալ:

Խուրրիների մասին տեղեկություններ և խուրրիական անուններ հաճախ վկայված են Ուրի 3-րդ դինաստիայի (մ.թ.ա. մոտ. 2100-2000 թթ., հիմնականում Նիպպուրից) տնտեսական փաստաթղթերում, Էլամից (Շոշ), Արրապխայից, Նուզից, Աշշուրից, Բաբելոնից (անեծքի տեքստեր, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկիզբ Լարսայից), Մարիից (այժմ՝ Թելլ-Խարիրի, հատված ինչ-որ նամակից, վերաբերում է Համմուրաբիի ժամանակներին, մ.թ.ա. 18-րդ դ.), Ալալախից, Ուգարիտից (այժմ Ռաս-Շամրա, մ.թ.ա. 14-րդ դար, շումերերեն-խուրրիերեն բառարան գրված աքադերենով) և այլ հնագույն բնակավայրերից հայտաբերված տեքստերում[6]:

Խուրրիերեն բառեր կան խուրրիերենից խեթերեն թարգմանված Կիկկուլիի «Տրակտատ ձիավարժության մասին» ձեռնարկում, որտեղ հանդիպում են երկու-երեք անվանումներ ձիաբուծության մասին և թվերի անուններ հնդեվրոպական լեզվով՝ aika «մեկ», tri «երեք», panca «հինգ», sapta «յոթ», nava «ինը»[7]:

Խուրրիերեն հնագույն տեքստեր, բառապաշարի բազմաթիվ նմուշներ կան նաև Խաթթուսասից և խեթական պետության տարբեր վայրերից հայտնաբերված արխիվներում: Դրանք պաշտամունքային, առասպելաբանական ու դիցաբանական տեքստեր են, աստվածների անուններ և այլն: Այդ տեքստերի խեթական տարբերակներում հանդիպում են խուրրիական ծիսական արարողությունների նկարագրություններ, խուրրիական գրականությունից կատարված խեթերեն թարգմանություններ, առասպելներ, պոեմներ, զրույցներ («Խեդամմու օձի մասին», «Կումարբիի մասին», «Երկնային թագավորության մասին»), նաև «Գիլգամեշի» խուրրիական տարբերակը և այլն: Այս ստեղծագործությունները խուրրիական մեծ գրականությունից պահպանված փոքր մնացորդներ են: Խուրրիերենի բառապաշարի բազմաթիվ նմուշներ կան Ալալախից և Արրապխայից հայտնաբերված աքադերեն տեքստերում: Զգացվում է, որ այդ տեքստերը գրվել են խուրրիերենին լավ տիրապետող «գրիչների» կողմից, որոնք տեքստերում լայնորեն օգտագործել են խուրրիերեն բառեր, պաշտոնյաների անուններ և այլն: Ընդհանուր թվով հայտնի են ավելի քան 500 տող արձանագրված տեքստեր և մոտ 250 խուրրիերեն բառեր[8]: Խուրրիերեն լեզուն և քերականությունը ուսումնասիրել են Լ. Մեսսերշմիդտը, Ա. Գյոտցեն, Է. Սպայզերը և ուրիշներ: Խուրրիերենի քերականական քննությունը դժվարանում է խուրրիների կողմից օգտագործված աքադական սեպագրերի և խուրրիերեն լեզվի յուրահատկությունների պատճառով: Գիրը վանկագիր է; որը դժվարացնում է խուրրիերենի հնչյունական կազմի վերականգնումը և ընթերցումը: Խուրրիական վանկագիրը ունի հետևյալ յուրահատկությունները. Մարից, Արրապխայից (մ.թ.ա. 14-րդ դար) և Նուզից (մ.թ.ա. 15-րդ դար) հայտնաբերված արձանագրությունների տեքստերում, նաև Ուգարիտի (մ.թ.ա. 14-րդ դար) վանկային տեքստում կրկնվող խուլ բաղաձայններ չեն գրվել: Տարբերվել են ta, te, ti, tu վանկերը da, di, du վանկերից, ka, ki, ku վանկերը ga, gi, gu վանկերից, pa վանկը՝ ba-ից, սակայն pi-ն չի տարբերվում bi-ից, u-ն՝ o-ից, s-ն՝ z-ից[9] և այլն: Այդ պատճառով խուրրիական շատ անուններ կարդալու ժամանակ օգտագործվում են խուլ նշաններ, օրինակ՝ կարդացվում է Խեպատ և ոչ Խեբատ, Կուշուխ և ոչ Կուժուգ[10] և այլն: Խուրրիական ուղղագրությանը հատուկ է ավելորդ ձայնավորների գրությունը: Գրության այս ձևը հատուկ է նաև ուրարտական ուղղագրությանը, որը պահպանել է խուրրիական ուղղագրությանը հա-

3. *И. Дьяконов*,1968, с.14.
4. *И. Дьяконов*,1967, с.119.
5. *Ա. Խաչատրյան*, 1933, էջ 188-190, 271:
6. Նկատում ենք, որ խուրրի-միտանական անունների մեջ զգալի թիվ են կազմում Ար (Էր)-ով սկսվող անձնանունները: Արդեն հիշատակված Ari-sen-ից (Ari-šen, Ուրկեշ) բացի գրավոր աղբյուրներում հիշատակվում են Ar-si-ih (Ar-ši-ah) Արսիհի, I-ri-im Էրրիմ (Erreśum, Կապադովկյան տեքստեր), A-ri-a, A-ra-am –mu su-ni, (Թելլ-Ատչանա), Ari-Kumme (Աշշուր), A-ri-ip-ḫu-ur-ra (տարբերակներ-Ari-ip-ḫur-ra, A-rip-ḫur-ra), Ari-ḫu-ḫa (Նուզի), Ari-meme, Arip-atal, Arip-ḫuppi, Ari-tup(u)k (Ուրի 3-րդ դինաստիայի ժամանակաշրջան), I.Gelb, Hurrians...,էջ 117, նաև Artaššumara, Artatama (Միտանիի թագավորներ) և այլն:

7. *Ա. Խաչատրյան*, 1933, էջ 194-195:
8. *И. Дьяконов*, 1967, с.118-119.
9. *И. Дьяконов*, 1967, с.120.
10. *Г. Вильхельм*, с. 18.

տուկ ձայնավորների գրության ձևը[11]: Այսպես. խուրրիերենում գրվում է Me-i-nu-a, ուրարտերենում՝ Minua, խուրրիերենում՝ e-u-ri-i-e, ուրարտերենում՝ ewri-ja[12] և այլն:

Ուսումնասիրողները նշում են, որ խուրրիները միաձույլ ազգ չեն եղել, այլ՝ մերձավոր կապեր ունեցող ցեղերի միավորում: Հսկայական այդ տարածքում՝ Հայկական լեռնաշխարհում և շրջակա տարածքներում բնականաբար միասնական մշակված լեզու չէր կարող լինել: Յուրաքանչյուր աշխարհագրական միջավայրում՝ Հայոց Մեծ ու Փոքր աշխարհներում խոսում էին յուրահատուկ բարբառներով, որոնք հաճախ դժվար էին ընկալվում մյուս արյունակից ցեղերի կողմից: Այսպես. Միտանիի խուրրիների բարբառը տարբերվում էր Ուգարիտի, Սիրիայի, Արրապխայի, Կիցվատնա-Կիլիկիայի խուրրիների բարբառներից: Մ. Խաչիկյանը նշում է հետևյալ բարբառները. Ուրկեշի (Տիշաթալի արձանագրությունը), Բաբելոնի (Բաբելոնից և Մարից հայտնաբերված արձանագրությունը), շումերերեն-խուրրիերեն բառարանի, Ուգարիտի (իր երկու ենթաբարբառներով), Խաթթուսասի արխիվների, Միտանիի (Տուշրատայի նամակը), Ալալախի, Արրապխայի[13] և այլ բարբառներ: Ինչպես տեսնում ենք, շատ ընդարձակ է այն տարածքը, որտեղից հայտնաբերվել են խուրրիների մասին վկայություններ պարունակող գրավոր տեքստեր: Այդ տեղեկությունները հավաստում են, որ մ.թ.ա. 3–2 -րդ հազարամյակներում և ավելի վաղ Կիլիկիան, Հյուսիսային Սիրիան, Հյուսիսային Միջագետքը և Տիգրիսից արևելք ընկած տարածքները, այդ թվում Հայկական լեռնաշխարհը բնակեցված էին խուրրիներով, որոնք խոսել են խուրրիերենի տարբեր բարբառներով:

11. Մի շարք ուսումնասիրողներ (Ֆ.Բորկ, Յա. Բրաուն, Գ. Կլիմով) այն տեսակետն են արտահայտում, որ խուրրիերենն ու ուրարտերենը մերձավոր կապի մեջ են կովկասյան (աբխազ-ադիգեյան, նախյան, դաղստանյան) լեզուների հետ: Ավելի ուշ Ի. Դյակոնովը շարունակեց աշխատանքները այդ ուղղությամբ, ուշադրություն դարձնելով նաև խուրրիերենին: Այդ մասին նա գրում է «Արդյունքը կարծես գոհացուցիչ է, չնայած վերջնականորեն ապացուցված չէ»: *И. Дьяконов*, 1967, с. 165: Գ. Ջահուկյանը փորձում է կապ գտնել ուրարտերենի և հնդեվրոպական լեզուների միջև: Սակայն այդ կապը Ի. Դյակոնովը անընդունելի է համարում: Նա խուրրիերենը ոչ հնդեվրոպական լեզու է համարում, իսկ քանի որ խուրրիերենն ու ուրարտերենը մերձավոր կապի մեջ են, ուրեմն այդ կապը ըստ Ի.Դյակոնովի անընդունելի է:

12. *И. Дьяконов*,1967, с.122.

13. *М. Хачикян*, 1985, с.19.

ՄԻՏԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Հին աշխարհի հնագույն պետություններից մեկը՝ Աքադը, որ ստեղծվել էր Միջագետքի հարավում հայտնված սեմական ցեղերի և նրանց առաջնորդ Սարգոն Աքադացու (նաև Սարգոն Հին, մ.թ.ա. 2316-2261) նվաճումների հետևանքով, կործանվեց 22-րդ դարի կեսերին: Աքադի կործանման գործում ակտիվ դեր են խաղացել կուտիները (գուտիներ), որոնք ապրում էին Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում, Խաբուրից մինչև Դիյալա գետի հովիտ ու Զագրոսի լեռներ ընկած տարածքներում: Կուտիները (Կորդվաց լեռների բնակիչներ) որոշելով վերջ տալ Աքադի տիրակալների հաճախակի հարձակումներին, իրենց առաջնորդ Էնրիդավազիրի գլխավորությամբ խոշոր ռազմական արշավանք են կազմակերպել դեպի Հարավային Միջագետք, որն ավարտվել է հաջողությամբ: Մոտավորապես մ.թ.ա. 2200թ. տեղի ունեցած ճակատամարտում աքադացիները պարտություն են կրել, իսկ նրանց տիրակալ Նարամ-Սուենը սպանվել է: Կուտիների այս արշավանքից հետո Աքադը թուլացել է, իսկ Նարամ-Սուենի որդու՝ Շալկալիշարիի (2200-2176) մահից հետո՝ կործանվել:

Աքադի կործանումից հետո հայտնաբերված գրավոր աղբյուրները (հին աքադական սեպագրերով) ավելի հաճախակի են վկայում գոյություն ունեցող խուրրիական թագավորությունների մասին: Հյուսիսային Միջագետքում և Զագրոսի նախալեռներում ստեղծված խուրրիական պետական կազմավորումների մասին (Ուրկեշ, Նավար, Կարախար, Շուշշարա, Արրապխա) վկայություններ կան դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսից, մինչև Միտանի պետության ստեղծումը: Արդեն նշվել է, որ Ուրկեշից և Նավարից[1] հայտնաբերվել են աքադական սեպագրերով արձանագրություններ, որոնք թվագրվում են մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կեսով (24-22-րդ դդ.):Հայտնաբերվել է Նավարի թագավոր Արիսենի, Արիշենի կամ Աթալշենի արձանագրությունը: Արիսենը (կամ Աթալշենը) իրեն համարում է ոմն Շատարմատի[2] (Շատ-արմատ) որդի: Նրա արձանագրությունը գրված է բրոնզե տախտակի վրա (հին աքադերեն) և

1. Սրանք գտնվում էին Տիգրիսի վերին ու միջին հոսանքների երկարությամբ ձգվող շրջաններում, որոնք համապատասխանում են Սուբարտու պետության տարածքին: ИДВ, I, с. 258:

2. *I.Gelb*, Hurrians..., էջ 56.

նվիրված է Ներգալ (Ներիգալ)[3] աստծո՝ Խանիլումա քաղաքի տիրակալի տաճարի հիմնադրմանը: Արիսենը իրեն համարում է Ուրկեշի և Նավարի (այն է Սուբարտուի) թագավոր:

Ուրկեշից հայտնաբերված արձանագրությունը, որը գրված է խուրրիերենով, բայց աքադական սեպագրերով, Ուրկեշի[4] թագավոր և endan (քուրմ) Տիշաթալի շինարարական արձանագրությունն է: Արձանագրության մեջ Տիշաթալը իրեն համարում է «մարդը Նինուայից» (Նինվե): Իսկ սա վկայում է, որ այդ ժամանակ խուրրիների տիրապետության տակ էին գտնվում Ասորեստանի հյուսիսային մասերը, որոնք հավանաբար նաև խուրրիաբնակ էին: Տիշաթալը իր արձանագրության մեջ գրում է, որ 100 հոգուց բաղկացած շքախմբով այցելել է իր քեռուն՝ Ուրի թագավոր (զորավար) Շու-Սենին, որը վերադարձել էր Սիմանում երկրին հաղթելուց հետո[5]: Հայտնաբերվել է նաև կնիք, որի վրա գրված է «Տիշաթալ, Կարախարի թագավոր»[6]:

Հաջորդ խուրրի թագավորը Կիկլիպ-աթալն է[7], որը իշխում էր Տուկրիշ քաղաքում[8] (տեղադրվում է Միջագետքից արևելք, ստույգ տեղը հայտնի չէ): Այդ մասին է վկայում Խաթթուսասից հայտնաբերված ծիսական արարողությունների նկարագրություններ պարունակող արձանագրությունը: Խուրրիների մասին կան նաև կցկտուր, ոչ ամբողջական տեղեկություններ փոքրասիական կամ Կապադովկյան Քանեշ[9] (Կեսարիայի մոտ, այժմյան Քյուլ-թեփեն) և Մարի (միջինեփրատյան խուրրիական թագավորություն) քաղաքներից հայտնաբերված հնագույն տեքստերում (առևտրական պայմանագրեր, նամակներ): Այդ տեքստերը վկայում են, որ մ.թ.ա 19-րդ դարի Առաջավոր Ասիայի առևտրական հայտնի կենտրոններում՝այդ թվում Քանեշում և Բաբելոնում գործում էին խուրրի առևտրականներ: Վկայված անունների շարքում ուսումնասիրողները ընթերցում են մոտ 20 խուրրիական անուններ. Ab-si-e-ni, Ar-si-ih, Ki-ib-si-im, Wa-ab-si-im, I-ri-si-im, La-ki-ib[10] և այլն: Առևտրական գլխավոր քաղաք Քանեշից բացի խուրրի բնակչություն, նաև առևտրականներ կային Հյուսիսային

3. Ներիգալ (Ներգալ) աստվածը խուրրիների հնագույն աստվածն էր, ավելի ուշ Ներիգալը մեծ տեղ գրաղեցրեց բաբելական պանթեոնում: Անդրաշխարհի տիրակալ ներգալը Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ հանդես է գալիս Անգեղ անունով:

4 Ուրկեշը խուրրիների հոգևոր կենտրոններից էր, Կումարբի աստծո պաշտամունքի կենտրոնը:

5. *Г. Вильхельм*, с. 36.

6. *Г. Вильхельм*, с. 36.

7 Խուրրիական անձնանունների տարածված բաղադրիչներ են –atal (գուցե ate, atae «հայր, մայր, նախնի» հնդեվրոպական ձևերից), -sen (šen) «որդի» և evri «տեր» մասնիկները:

8. *Г. Вильхельм*, с. 34.

9. Կեսարիայի մոտ (Քյուլ-թեփե) հայտնաբերվել են աքադերենով գրված տեքստեր, որոնք անվանվում են Կապադովկյան տեքստեր: Դրանք առևտրական պայմանագրեր են, նամակներ, անձնական կնիքներ և այլն:

10. ИДВ, II, с 67, *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I,с.76, *I.Gelb*, Hurrians..., էջ 61:

Սիրիայի և Փոքր Ասիայի արևելյան մասի այլ քաղաքներում ևս: Մ.թ.ա. 19-18-րդ դարերի հայտնաբերված տեքստերում նշված են առանձին խուրրիական թագավորությունների և թագավորների անուններ: Այսպես. Քանեշի թագավորությունից հարավ-արևելք, Տավրոսի փոքրասիական լեռներում գտնվող Մամա երկրի (Մարաշի շրջան) թագավորը կրում էր Anum-hirbi Անում-Խիրբի (Խիրվե) անունը: Հայտնաբերվել է Անում-Խիրբիի նամակը ուղղված Քանեշի տիրակալ Վարշամային[11], որտեղ Անում-Խիրբին Վարշամային առաջարկում էր առևտրական պայմանագիր կնքել: Մարից հայտնաբերված տեքստից հայտնի է դառնում, որ Եփրատից արևմուտք, Հյուսիսային Սիրիայում կից շրջաններում գտնվող Խաշշու կամ Խասսուվա երկրի թագավորը կրում էր խուրրիական Անիշ-Խիրբի (Խուրվե) անունը, իսկ Ուրշուի թագավորը՝ Շեննամ անունը[12]: Խուրրիաբնակ էին նաև Օրոնտես գետի հոսանքի ստորին մասերում՝ Ալալախում (7-րդ շերտից վկայված անձնանունների մոտ կեսը խուրրիական է) և Խաբուր գետի վերին հոսանքի Չագեր-բազար և Թելլ-Բրակ բնակավայրերը: Հավանաբար այս քաղաքների տիրակալները (թագավորներ) նշանակվել են խուրրի թագավորների կողմից, քանի որ այդ տարածքներում գտնվող զորքը ևս կազմված էր խուրրիներից:

Ստորին Զաբի վերին հոսանքի շրջանում՝ Շուշշարում հայտնաբերված արձանագրության մեջ վկայված է Կուվարի խուրրիական անունով կառավարիչ: Հայտնաբերված տեքստերում հաճախ են հանդիպում խուրրիերեն բառեր ու նաև այլ անուններ[13]: Հյուսիսային Միջագետքում հայտնի են փոքր թագավորություններ, որոնք ունեն խուրրիական անուններով թագավորներ, օրինակ՝ Աբալ-շեն, Շուկրում-Թեշշուպ և այլն: Ասորեստանից հյուսիս, Տիգրիսի վերին հասանքի շրջանում հանդիպում են Նաննիպ-Շավարի, Շադու-Շարրի, Տիշ-Ուլմե[14] անուններով թագավորներ[15] և այլն: Կապադովկյան տեքստերում ընթերցվում են այլ խուրրիական անուններ ևս, որոնք կրել են տարբեր աշխատանքներ կատարող մարդիկ: Այսպես. տեքստերից մեկը վկայում է, որ Խուրամա (Խուրմե/Խուրումմե) քաղաքում ապրում էր Hasim-nauar անունով «գրիչը»[16]: Խուրրիական է համարվում նաև Harama անունը (խուրրիական hurra բառից), որը (Hurra) վկայված է Նուզիից հայտնաբերված Arip-Hurra

11. ИДВ, II, с 48.

12. ИДВ, II, с 67.

13. *Г. Вильхельм*, с.39.

14. *Г. Вильхельм*, с.41.

15. Շատ ուսումնասիրողներ այս և այլ տեքստերից հայտնի անունները միտանյան չեն համարում: Սակայն շատ անուններ համեմատվում են հայոց անունների հետ, հաճախ էլ՝ բացատրվում հայերենով (չնայած սեպագիր տեքստերի հաճախ ոչ ճիշտ ընթերցվելու): Այդպիսի անուններ են Շատարմատ, Վարշամ, Էվարիշատունի, Աբա (հայր, նախնի) և այլն:

16. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с. 76. *H.Guterbock*, The Hurrian Element..., էջ 383.

անվան մեջ[17]: Կապադովկյան (փոքրասիական) այս տեքստերը վկայում են, որ խուրրիներով էին բնակեցված ոչ միայն խեթերին հարևան Եփրատի վերին ու միջին հոսանքներից արևելք ընկած տարածքները, այլև Հյուսիսային Սիրիան, որի գլխավոր քաղաքն էր Խասսուվա/Խաշշուն:

Հնագույն գրավոր աղբյուրներից կարևորվում են հատկապես խեթական ու եգիպտական տեքստերը: Խեթական Հին (մ.թ.ա.17-15-րդ դդ.) ու Նոր (մ.թ.ա. 14-13-րդ դդ.) թագավորությունների թագավորների ու եգիպտական փարավոնների գրավոր աղբյուրներում գտնում ենք պատմական այն փաստերը, որոնք հիմք են հանդիսացել Միտանի պետության ստեղծման ու հզորացման համար: Հետևենք խեթական ու եգիպտական գրավոր աղբյուրների վկայություններին, որոնց շնորհիվ մեզ է ներկայանում Հայկական լեռնաշխարհի հզոր պետություններից մեկի՝ Միտանիի կազմավորումը, հզորացումը, ինչպես նաև բուլացումն ու անկումը:

Միտանի պետության կազմավորման համար կարևոր են հատկապես խեթական վաղ շրջանի (մ.թ.ա. 18-րդ դար) տեքստերը, քանի որ դրանք վերաբերում են խուրրիական ցեղերին և նրանց բնակության վայրերին, մինչև Միտանի պետության ստեղծումը: Խեթական հնագույն մայրաքաղաք Խաթթուսասից հայտնաբերված սեպագիր տեքստերը, որոնք տարեգրություններ, հրամանագրեր, միջազգային պայմանագրեր, հրահանգներ, պաշտամունքային ու ծիսական տեքստեր են, նաև նամակագրություն (հին խեթերեն ու աքադերեն լեզուներով) կարևոր տեղեկություններ են հաղորդում խեթական թագավորներ Խաթթուսիլիս 1-ինի, Մուրսիլիս 1-ինի ու Խանտիլիի ժամանակներում (մ.թ.ա. 17-16-րդ դդ.) գոյություն ունեցած խուրրի-խեթական հարաբերությունների մասին: Հին խեթական տեքստերում խուրրի անվանումը գրված է Hurla և Hurri[18] ձևերով: Խեթերն իրենց արձանագրություններում ավելի շատ օգտագործել են Hurla ձևը, որը հանդես է գալիս որպես խուրրիների հավաքական անուն՝ էթնոնիմ: Միայն մեկ անգամ տեքստերում այն կարդացվում է որպես երկրի անուն: Արձանագրությունների աքադական տարբերակում օգտագործվում է Hanigalbat անվանումը (հանդիպում է նաև Hurri ձևը):

Անդրադառնանք խուրրիների մասին վկայող հնագույն խեթական արձանագրություններին: Մ.թ.ա. 19-րդ դարի կեսից Փոքր Ասիայի կենտրոնական մասերում գտնվող քաղաքներից գերիշխող դիրք է գրավել Կուսսար քաղաքը (ճշգրիտ տեղը հայտնի չէ), ուր իշխում էր Անիտտասը: Անիտտասը հին խեթերենով արձանագրության մեջ գրում է, որ իր հայրը՝ Պիտխանասը գրավել է Նեսա քաղաքը և իր մայրաքաղաքը տեղափոխել այնտեղ: Անիտտասը իրեն համարում է Նեսայի «մեծ թագավոր»: Նա ևս արշավանքներ է կազմակերպել,

17. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I,с.76. J.Lewy, Old Assirian Evidence Concerning Kuššara, էջ55:
18. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с. 71.

որոնց ընթացքում գրավել է Ցալպա և Խաթթի (Խաթթուսաս) քաղաքները[19]: Խեթերի ուշադրության կենտրոնում էին Խուրրին և Սիրիայի հյուսիսում կազմավորված խուրրիական Խալապի (Խալպա, Հալեպ, Յամխադ) թագավորությունը: Հյուսիսային Սիրիան այդ ժամանակ կարևոր առևտրական կապող օղակ էր Առաջավոր Ասիայի և Էգեյան աշխարհի միջև իր ծովափնյա քաղաքներով: Հյուսիսային Սիրիան հարուստ էր անտառներով, մայրի ծառերով, մետաղներով: Զարգացած էր հողագործությունը: Բարձր զարգացման էր հասել հատկապես մետաղամշակությունը: Բնակչության մեջ առանձնացել էին ոսկերիչները, կաշեգործները, ներկողները, ջուլհակները, դերձակները, հյուսները, վարսավիրները և այլն: Զարգացած արհեստների և առևտրի հետևանքով այս տարածքում առաջանում էին զարգացած քաղաքներ, որոնք հետո դառնում էին փոքր թագավորություններ (Խալապ, Ալալախ, Կարքեմիշ, Ուգարիտ): Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին այս քաղաքներում կուտակվել էր մեծ հարստություն, որն էլ գրավեց օտարների՝ խեթերի, ապա եգիպտացիների ուշադրությունը:

Խեթական թագավորությունը Անիտտասից հետո հաջողություններ է արձանագրել Խաթթուսիլիս 1-ինի (1650-1620) ժամանակ: Ենթադրվում է, որ այս տիրակալը նույն ինքը Լապարնան է (նաև Լապարնաս), որն ավելի ուշ «խաթթուսացի» է կոչվել այն պատճառով, որ մայրաքաղաքը Կուսսարից տեղափոխել է Խաթթուսաս՝ խուրրիների հարձակումներից այն պաշտպանելու համար: Լապարնան իր ձեռնարկած արշավանքների հետևանքով ընդարձակել է խեթական թագավորության սահմանները դեպի Միջերկրական, Էգեյան և Սև ծովեր: Սակայն հայտնաբերված գրավոր աղբյուրներում («Տելեպինուսի հրովարտակը», մոտավորապես մ.թ.ա. 1525թ.) տեղեկություններ չկան այն մասին, որ Լապարնան իր արշավանքների ժամանակ թափանցել է արևելյան, մերձեփրատյան և այլ շրջաններ, որոնք բնակեցված էին խուրրիներով կամ գտնվում էին նրանց ազդեցության տակ: Խեթական թագավորներ Խաթթուսիլիս 1-ինը, Մուրսիլիս 1-ինը (մ.թ.ա. 16.-րդ դարի սկիզբ) և Խանտիլին էլ ավելի են ընդլայնել իրենց նվաճումների աշխարհագրությունը՝ հայտնվելով Խաթթիից արևելք ու հարավ-արևելք ընկած տարածքներում, նաև Հյուսիսային Սիրիայում: Այս տարածքներում կազմավորված հիմնական քաղաք-պետությունները երկուսն էին. Հալեպը (Խալապ), որն արևմտյան սեմիտների իշխանության ժամանակ (մ.թ.ա.18-րդ դար) կոչվում էր Յամխադ, և Կարքեմիշը Եփրատի որոնում (այժմ Ջերաբլուս քաղաքը): Խեթական թագավորները իրենց արշավանքների ժամանակ հանդիպում են խուրրիների դիմադրությանը: Սկսվում են խուրրի-խեթական ռազմական ընդհարումները: Խաթթուսիլիս 1-ինը իր թագա-

19. ИДВ, II, с. 127.

վորության 3-րդ տարում գրավել է Ալալախը (այժմ Ատչանա) ու ավերել: Խաթթուսիլիս 1-ինը իր արձանագրություններում գրում է՝ «Հաջորդ տարի ես Ալալախի վրա գնացի ու ավերեցի»[20]: Հնագետները Ալալախի 7-րդ շերտի ավերածությունները կապում են Խաթթուսիլիս 1-ինի այս արշավանքի հետ: Ալալախում խեթերի դեմ հիմնականում կռվում էին խուրրիական ջոկատներ: Այդ են վկայում Ալալախի պեղումների 7-րդ շերտից հայտնաբերված տեքստերը, որոնց մեջ հանդիպում են խուրրիական անուններ: Այսպես. քաղաքը պաշտպանող զորքի հրամանատարի անունը Զուկրաշի էր[21], որը ուսումնասիրողները խուրրիական են համարում: Հյուսիսային Սիրիայի ոչ միայն այդ, այլև այլ քաղաքներ հիմնականում խուրրիաբնակ էին: Ալալախից հետո Խաթթուսիլիսը պաշարել է Կիլիկիայի (Կիլիկիա) հարևանությամբ գտնվող Վարսուվա (աքադական տարբերակում՝ Ուրշու, այժմյան Գազիանթեպի մոտ) քաղաքը Հյուսիսային Սիրիայում: Հին խեթական «Ուրշուի պաշարումը» տեքստում մանրամասն գրված է քաղաքի պաշարման, պաշտպանների ու նրանց օգնության եկած խուրրիների մասին: Տեքստերից հայտնի է դառնում, որ Ուրշուին օգնության են եկել խուրրիական ջոկատներ և Հյուսիսային Սիրիայի Արուարա (Զարուարա, որի թագավորի անունը խուրրիական էր Aniš-ḫurpi), Խալապ և Յուպպա թագավորությունների ջոկատները[22], որոնց մեջ ևս անշուշտ շատ են եղել խուրրի ռազմիկները: Անկասկած Ուրշուի բնակիչների մեջ ևս մեծ թիվ են կազմել խուրրիները, իսկ քաղաքի առաջին կառավարիչներից մեկը կրել է Šennam խուրրիական անունը: Խաթթուսիլիս 1-ինի տեքստից զգացվում է, որ պակաս հաջող է եղել Ուրշուի գրավումը: Նա գրում է Ուրշու երկիրը ավերելու մասին, բայց ոչ քաղաքի, իսկ դա նշանակում է, որ չի հաջողվել գրավել քաղաքը և Խաթթուսիլիսը շրջանցել է այն[23]: «Տարեգրություններում» նշվում է, որ Ուրշուի պաշարման անհաջողության մեղավորը խեթական պաշտոնյաներն են: Նշվում է նաև քաղաքին օգնության եկած խուրրիների առաջնորդի մասին, որին «Ամպրոպի աստծո որդի» են անվանում[24]: Խաթթուսիլիս 1-ինը գրավելով Ալալախը և Ուրշուն, Հալեպին զրկել է դեպի Միջերկրական ծով ելքից: Իսկ Սուկցիա քաղաքը (ուգարիտյան տեքստում՝ Շուկսի, այժմ՝ Թելլ-Սուկաս) զրկվել է դեպի Հյուսիսային Սիրիա և Միջագետք ցամաքային ճանապարհից: Երբ խեթերը գրավել են Արցավան (Փոքր Ասիայի հարավ-արևմտյան ծովեզերք), ապա Սուկցիան զրկվել է նաև մոտակա շրջանցող ճանապարհներից[25] ու գրավվել

20. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1964, I, с.11-12.
21. *Г. Вильхельм*, с.49.
22. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с. 72.
23. *Г. Вильхельм*, с.49.
24. *Г. Вильхельм*, с.50.
25 .ИДВ, I, с.130.

խեթերի կողմից, չնայած դարձյալ օգնության էին եկել խուրրիական ջոկատները: Խեթերը Ալալախից և Ուրշուից հետո գրավել են նաև Խասսուվան /Խաշշուն/ և Խախխուն: Խաթթուսիլիս 1-ինի ժամանակներին վերագրվող խեթական տեքստերից մեկում նկարագրված է թագավորի արշավանքը դեպի Հյուսիսային Սիրիա, որի գլխավոր քաղաքն էր Խասսուվան, և Հյուսիսային Միջագետք: Տեքստի պահպանված հատվածում կարդացվում է «/Խ/ասսուվա /քաղաքի/ խուրրիները», նույն տեքստի մեկ այլ հատվածում պահպանվել է, «...ոչնչացրին նրանք: Խուրրիները»[26], մեկ այլ տեքստում, որը վերագրվում է Մուրսիլիս 1-ինին (մոտավորապես մ.թ.ա. 1620-1590թթ.)[27] գրված է՝ URU Haš-š /u-ua/ (3-րդ տող) և Hur–la–aš-ša[28] (4-րդ տող): Խասսուվան տեղադրվում է Կոմմագենեում, Եփրատից արևմուտք, Ուրշու (Վարսուվա) քաղաքից հյուսիս: Այն որ Խասսուվան հիմնականում խուրրիաբնակ է եղել, վկայում է այն փաստը, որ Խաթթուսիլիս 1-ինը դեպի այս քաղաքը կատարած իր արշավանքի ժամանակ ստիպված է եղել ծանր մարտեր մղել քաղաքի խուրրի բնակիչների դեմ[29]: Իսկ Խասսուվայի գրավումը ռազմական մեծ նվաճում է եղել Խաթթուսիլիսի համար: Նա մեծ նշանակություն է տվել քաղաքի գրավմանը, որի ժամանակ վերցրել է մեծ քանակությամբ ավար: Ավարի մանրամասն ցուցակը տրված է հայտնաբերված տեքստում: Ավար վերցված իրերի ցանկում մեծ է պաշտամունքային իրերի թիվը: Ավարը Խաթթուսիլիսը տեղափոխել է Խաթթիի Արինննա քաղաքի Արևի-Աստծո և նրա դուստր Մեցցուլայի տաճարները: Խաթթի են տեղափոխվել ոչ միայն Ամպրոպի աստծո, Խեպատ և այլ աստվածների տաճարների պաշտամունքային իրեր, այլև նրանց պաշտամունքները: Նշենք նաև, որ Խասսուի վաղ շրջանի (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկիզբ) թագավորներից մեկը կրել է Anis – ḫurpi անունը[30]: Խասսուվա երկրում ապրող խուրրիների մասին վկայում են «Տարեգրությունները»: Այդ տարեգրության մեջ պահպանվել է մի հատված, որը վերաբերում է խեթերի կողմից Խասսուվան գրավելուց հետո կատարված մի դեպքի: Հատվածի բովանդակությունը այսպիսին է. «Խասսուվա քաղաքում Սանդա անունով մի պաշտոնյա էր ապրում Խուրմա քաղաքից: Եվ նա խուրրիներից /վախենում էր?/ և իր տիրակալ/ի/ մոտ գնաց: Թ/ագավորը/՝ հայրը /հրաման/ տվեց և նրան /Սանդային/ դաժանորեն հաշմեցին»[31]: Ենթադրվում է, որ Խաթթուսիլիս 1-ինն է եղել պատժողը: Կարելի է մտածել, որ Խասսուվայի բնակիչները՝ խուրրիները

26. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с 77.
27. Խեթական թագավորների իշխանության տարիները տրվել են ըստ Ս. Սմիթի հաշվարկների (О. Герни, Хетты):
28. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с 77.
29. KUB, XXXVI, 100, 1, 1. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с. 76.
30 . ВДИ, 1940, I, с 43. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с. 76.
31. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с. 77.

խեթերին դիտել են իբրև զավթիչներ և հաճախ սպառնացել, վախեցրել, նաև սպանել են քաղաքի խեթական պաշտոնյաներին, որի պատճառով խեթերը վախեցել են խուրրիներից: «Տարեգրություններում» վկայություն կա նաև Խասսուվայում ապրող մի պաշտոնյայի մասին, որի անունը բացահայտորեն խուրրիական է. Էվարիշատունի ('E – ua̱a – riš) a – tu – ni – ša: Խաթթուսիլիս 1–ինը նվաճել է նաև Իլանցուրա քաղաքը, որը գտնվում էր Եփրատից արևմուտք՝ Հալեպի ճանապարհին: Իլանցուրա քաղաքը ևս խուրրիաբնակ է եղել: Այդ է վկայում հին խեթական մի տեքստ, որը վերաբերում է Խաթթուսիլիս 1–ինի ժամանակներին. «Երբ մենք երկիրը /Իլանցուրու/ նեղեցինք, ապա Իլանցուրա քաղաքի թագավորը խուրրի ռազմիկների թագավորներին ... /դիմեց?/ Ուվանտի, Ուրուտիտի, Արկա ... և Ուվագացցանի /թագավորներին/: Եվ /նա/ նրանց ոսկե գավաթներ /ուղարկեց?/»[32]: Այս տեքստը կարևորվում է նրանով, որ վկայված են խուրրիների վաղ շրջանի թագավորների անուններ, որոնք չկան այլ տեքստերում: Այս թագավորները հավանաբար անդրեփրատյան (Եփրատից արևելք) առանձին խուրրիական պետական կազմավորումների տիրակալներ էին մինչև Միտանի պետության կազմավորումը: Ի դեպ, նույնանման («խուրրի ռազմիկների թագավորներ») արտահայտություններ կան Ալալախից հայտնաբերված տեքստում՝ «խուրրի ռազմիկների թագավորները»[33], Ամառնայից հայտնաբերված տեքստում՝ «խուրրի ռազմիկների թագավորի թագավորները»[34] և այլն:

Եփրատից արևելք Խաթթուսիլիսը գրավել է նաև Խախխու քաղաքը: Այդ մասին նա պարծենկոտությամբ գրում է, որ Սարգոն Հինն (Աքադացի) անգամ չի կարողացել գրավել Խախխուն, իսկ ինքը ոչ միայն գրավել ու այրել է քաղաքը, այլև նրա թագավորին գերել ու շղթաներով կապել է սայլակառքին[35]: Ինչպես տեսնում ենք, Հյուսիսային Սիրիայի և Վերին Միջագետքի խեթերի հարձակմանը ենթարկված թագավորություններն ու քաղաքները օգնության համար դիմել են խուրրիներին, և Խաթթուսիլիս 1–ինը այդ տարածքներ կատարած իր արշավանքների ժամանակ ստիպված է եղել ծանր մարտեր մղել խուրրիների դեմ: Այս փաստը վկայում է այն մասին, որ Հյուսիսային Սիրիան և Վերին Միջագետքը ոչ միայն այդ ժամանակ, այլև ավելի վաղ խուրրիաբնակ էին և գտնվում էին խուրրիների վերահսկողության ներքո (տեղի թագավորներին նշանակում էր խուրրիական բանակը): Խեթերը նվաճելով Խաթթիից հարավ-արևելք ընկած տարածքները վտանգի տակ են դրել Եփրատից արևելք

32. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с. 78.
33. AT, 2, 73.
34. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с. 78. *B. Landeberger*, Assyrische Konigsliste und „durkles Zeitalter". JCS, 8,1954, 2, c. 53.
35. ИДВ, II, с. 130.

գտնվող խուրրիների երկրի ու բնակչության անվտանգությունը: Գրավոր աղբյուրները վկայում են, որ չի ուշացել խուրրիների պատասխան հարվածը: Խաթթուսիլիս 1-ինի թագավորության մոտավորապես 4-րդ տարում կատարվում են դեպքեր, որոնց մասին «Տարեգրությունների» խեթական տարբերակում գրված է. «Միաժամանակ իմ թիկունքում թշնամի խուրրին (աքադական տարբերակում՝ Խանիգալբատ) երկիրը մտավ և իմ դեմ բոլորը թշնամացան: Եվ միայն Խաթթուսաս քաղաքը մնաց /հավատարիմ/»[36]: Ի դեպ, Խաթթուսիլիսը ծնունդով այդ քաղաքից էր: Խուրրի անվան աքադական տարբերակի Խանիգալբատ անունը (Վերին Միջագետքի հյուսիսային մասը) թույլ է տալիս մտածելու, որ խեթերի երկիր են մտել Հյուսիսային Սիրիայի և Եփրատի վերին հոսանքների շրջանում ու դրանից արևելք ապրող խուրրիները, որոնք անցնելով Տավրոսը մտել են Խաթթի: Խեթական գրավոր աղբյուրները վկայում են, որ Խաթթին այլ կողմերից ևս հաճախ հարձակման էր ենթարկվում. «Թշնամին Կասկա երկրից եկավ և ավերեց երկիրը ..., Արցավայից թշնամին երկիր մտավ..., Արաուննայից թշնամին եկավ ..., Իսուվայից հայտնվեց թշնամին..., Աննիից հայտնվեց թշնամին..., թշնամին եկավ Արմատանայից և նա նույնպես ավերեց Խաթթին...»[37]: Այս հարձակումներն անշուշտ իրականացնում էին խուրրիները և հզորացող Միտանի պետությունը: Գրավոր աղբյուրները մանրամասներ չեն հաղորդում խուրրիների ներխուժումների մասին, բայց կարելի է մտածել, որ այն ընդգրկել է Կուսարի թագավորության տարածքը և սկսվել է այն ժամանակ, երբ խեթական զորքը Խաթթուսիլիս 1-ինի գլխավորությամբ արշավանք էր կազմակերպել դեպի Արցավա (Լուվիա) երկիր: Չի բացառվում, որ խուրրիները հարվածել են խեթերի այն ժամանակվա մայրաքաղաք Կուսարին և այլ խոշոր քաղաքների: Օգտվելով խուրրիների հարձակումից, ինչպես գրում է Խաթթուսիլիս 1-ինն իր արձանագրության մեջ, իրենց անկախ են հռչակել նախկինում խեթերի կողմից նվաճված թագավորություններ ու քաղաք-պետություններ և՛ Հյուսիսային Սիրիայում, և՛ Փոքր Ասիայում, բացառությամբ Խաթթուսաս քաղաքի, որն ավելի ուշ դարձել է խեթական պետության մայրաքաղաքը (ենթադրվում է, որ մայրաքաղաքը ավելի ապահով վայրում գտնվող Խաթթուսաս է տեղափոխվել խուրրիների այս արշավանքից հետո, երբ գրավվեց սահմանի վրա գտնվող Կուսարի մայրաքաղաքը): Խուրրիների հաջողությունն ակնհայտ էր: Հյուսիսային Միջագետքը նորից լիովին խուրրիների ազդեցությանն է ենթարկվում: Միտանիի հզորացումը ճգնաժամ է առաջացրել Խաթթիում: Հին խեթական մի տեքստից երևում է, որ Խաթթուսիլիսը իր կյանքի վերջում ցանկացել է գրավել Խալապը, առանց

36. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с. 73.
37. *О. Герни*, с. 28.

որի հնարավոր չէր հաջողություններ ունենալ Հյուսիսային Սիրիայում: Սակայն նրան չի հաջողվել գրավել Խալապը, հավանաբար այդ արշավանքը նույնիսկ կյանք է արժեցել նրան, և նվաճել Հյուսիսային Սիրիան և Հալեպը նա կտակել է իր հաջորդին՝ Մուրսիլիս 1-ին[38]: Խուրրիների աճող հզորությունը և հաջողությունները խանգարելուն, թույլ չտալուն էր ուղղված խեթական հաջորդ թագավոր Մուրսիլիս 1-ինի կազմակերպած նոր արշավանքը դեպի Հյուսիսային Սիրիա: Նրա կազմակերպած արշավանքը հաջողություն է ունեցել և Մուրսիլիս 1-ինը նախ գրավել է Խալապ (Խալպա) քաղաքը, ապա նաև Բաբելոնը՝ մ.թ.ա. 1595 թվականին:

Հին խեթական տեքստերը պատմում են Խալապի նվաճման մասին: Տեքստերը վկայում են. «Եվ նա /Մուրսիլիսը/ /մարդկանց խուր/ րիների երկր/ից ամբ/ ողջովին/ ջարդեց»: Նույն տեքստի մեկ այլ հատված վկայում է. «և նա /Մուրսիլիսը/ խուրրիներին հաղթեց»: Խուրրիներին հաղթելու մասին նշվում է Խալապ և Բաբելոն քաղաքները նվաճելուց և ավերելուց հետո: Մուրսիլիսի այս արշավանքի և Խալապն ու Բաբելոնը նվաճելու մասին նույն տեքստի մեկ այլ հատվածում գրված է «/…/ և սա /Մուրսիլիսը/ ուժեղ /թագավոր էր: Եվ նա Խալապի վրա գնաց և Խալապ քաղաքը /ավերեց/: Այնուհետև նա Շանխար (այսինքն՝ Բաբելոն) քաղաքի վրա գնաց և Շանխար քաղաքը ավերեց: Եվ նա խուրրիներին /…հաղթեց…/ Շանխարա քաղաքի /…/ Խաթթուսաս քաղաքը տ/արավ/»[39]: Ինչպես տեսնում ենք, այս տեքստերը վկայում են խուրրիների դեմ Մուրսիլիս 1-ինի մղած մարտերի մասին: Այդ տեքստերում, սակայն, ժամանակագրական համաձայնություն չկա Մուրսիլիս 1-ինի ժամանակ կատարված դեպքերի մասին: Տեքստերից մեկում Մուրսիլիսը խուրրիներին հաղթել է Խալապը նվաճելուց հետո, մեկ այլ տեքստում՝ դեպի Բաբելոն կատարված արշավանքից հետո: Ավելի հավանական է թվում, որ Մուրսիլիսը խուրրիներին հաղթել է Բաբելոնը նվաճելուց առաջ և Խալապը նվաճելուց հետո: Հակառակ դեպքում Մուրսիլիսը դժվար թե Բաբելոնի վրա հարձակվեր իր թիկունքում ունենալով այնպիսի հզոր թշնամիներ, ինչպիսին խուրրիներն էին: Հավանաբար Խալապի մոտ Մուրսիլիսը հաղթել է քաղաքի պաշտպաններին օգնության եկած խուրրիներին՝ «խուրրիների երկրների մարդկանց» ինչպես տեքստն է վկայում: Իսկ օգնության են եկել հավանաբար Հյուսիսային Սիրիայից և Եփրատից արևելք ընկած խուրրիական տարածքներից՝ Խուրրի երկրից: Հետագա դեպքերը ցույց են տալիս, որ չնայած գործադրված մեծ ջանքերին, Խաթթուսիլիսը և Մուրսիլիսը չեն կարողացել վերջնականապես վերացնել խուրրիներից եկող վտանգը: Դրա վկայությունն է խուրրիների կազմակերպած նոր արշավանքը դեպի Խաթթի, խեթական հաջորդ թագավոր

38. *Г. Вильхельм*, с. 52.
39. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с 79.

Խանտիլիի ժամանակ: Խուրրիների նոր արշավանքը իր մասշտաբներով չի զիջել Խաթթուսիլիսի ժամանակ կազմակերպված արշավանքին: Խուրրիների հարձակումը անսպասելի չի եղել խեթերի համար: Նրանք հասկանում էին, որ խուրրիների պատասխան հարվածը չի ուշանալու: Այդ են վկայում հին խեթական տեքստի վատ պահպանված որոշ հատվածներ. «Խուրրինե/ր/ դեռ չեն գալիս: Եվ չորս տարի (կանցնեն): Երկու ռազմիկներ- և նրանք երգում են…»: Այնուհետև ինչ-որ անձ ռազմիկներին հարցնում է՝ «ես նրանց հարցնում եմ, որին նրանք պատասխանում են. «Այսպես են /ասում/ նրանք. Զորքը /խուրր/ իի երկրի վրա կհարձակվի /…/ շունը, որը … երկիրը շան նման կկ/ծի/»[40]: Տեքստից զգացվում է, որ խոսքը խուրրիների սպասվելիք ներխուժման մասին է, որը կարող էր կատարվել արևելքից կամ հարավ - արևելքից: Հավանաբար խեթերը իրենց սահմանների վրա դիտարկումներ էին կատարում և հատուկ հսկողություն էին սահմանել սպասվող ներխուժումները հենց սահմանի վրա հետ մղելու համար: Խուրրիների նոր ներխուժումների մասին վկայող հին խեթական տեքստերի խեթական տարբերակը խիստ վնասված է: Պահպանված աքադական տարբերակը ընդհանուր պատկերացում է տալիս խուրրիների ներխուժման մասին: Խեթական տեքստի պահպանված մասը վկայում է, որ խուրրիների ներխուժումը Խաթթի կատարվել է այն ժամանակ, երբ հայտնի է դարձել, որ Խանտիլին ժամանել է Թեգարամա, դեպի Աշտատու, Խուրպանու և Կարքեմիշ կատարված հաջող արշավանքներից հետո: Այնուհետև գրված է. «Խուրրիները սրընթաց արշավով / ’/ /…գ/ռռում էին նրանք, թշնամին Խաթթի եր/կիրը/ մտավ և /…եր/ կրում պտտվում էր նա…, … գոռում էին նրանք և …/[41]: Նույն տեքստի աքադական տարբերակում գրված է. «/…/ խուրրիները ձիերի վրա /էշեր/ /…/, նրա …, որոնք կռվում էին /…/ ժամանեցին նրանք Խաթթի երկիրը /…/ և երկրում պտտվում էին նրանք /…/: Նրանց ջախջախեց /նա/», (հավանաբար Խանտիլին): Հետագա գործողությունների մասին տեքստի աքադական տարբերակում (խեթերեն տարբերակը չի պահպանվել) գրված է. «մարդկանց Խուրրի /երկրից/ իմ երկրից դուրս քշեցին: /Թագուհի Խարապսիլի/ին իր որդիների հետ /տարան Սուկցիա: Խարա/պսիլին, թագուհին հիվանդացավ…/»: Խեթական տարբերակի պահպանված մասից հայտնի է դառնում, որ թագուհին իր որդիների հետ սպանվել է Սուկցիա քաղաքում (որդիներից մեկը փրկվել է): Իմանալով կատարվածի մասին Խանտիլին վրեժ է լուծել մեղավորներից: Հավանաբար դրանք թագավորին դավաճանած ազնվականներն էին, որոնց օգնությամբ գերեվարվել ու սպանվել էր թագուհին: Խեթերին հաջողվել է խուրրիներին դուրս մղել երկրից: Այդ են վկայում պահպանված տեքստերը: Արշավանքների ընթացքում ավելի

40. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с. 81.
41. *Г. Гиоргадзе*, ВДИ, 1969, I, с. 82.

շատ տուժել են Խաթթիի հարավային սահմանները: Իսկ այն փաստը, որ խուրրիները գերեվարված թագուհուն տարել են Սուկցիա, վկայում է, որ այնտեղ ուժեղ էր խուրրիների ազդեցությունը:

Այսպիսով համաձայն փոքրասիական (Քանեշ, Մարի) գրավոր աղբյուրների, խուրրիները Հյուսիսային Սիրիայի, Փոքր Ասիայի հարավարևելյան շրջանների (նաև Կապադովկիայի) հնագույն բնակիչներն են: Հին խեթական գրավոր աղբյուրները (Խաթթուսիլիս 1-ինի ժամանակներից սկսած) տեղեկություններ են հաղորդում խուրրիների ռազմական գործողությունների մասին ոչ միայն քաղաքներում, որոնք գտնվում էին Խաթթիից արևելք ու հարավ-արևելք, այլև հենց խեթերի երկրում: Քանի որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կես) դժվար է կասկածել խուրրիների ներկայությանը Խասսուվայում (Խաշշու), Վարսուվայում (Ուրշու) և Խաթթիին մոտ գտնվող Հյուսիսային Սիրիայի այլ քաղաքներում, ուրեմն խեթերը (նեսիտներ) դեռ վաղ ժամանակներից գտնվում էին խուրրիների ներխուժման վտանգի տակ և արևելքից՝ Եփրատի վերին հոսանքի շրջանից, որից հետո սկսվում էր խուրրիների բնակության շրջանը, և հարավ-արևելքից՝ Հյուսիսային Սիրիայից (հատկապես Խասսուվայից): Հին խեթական գրավոր աղբյուրներում վկայություններ չկան այն մասին, որ խեթերը կարողացել են ներխուժել խուրրիների երկրի խորքը: Տեղեկություններ չկան նաև խուրրիների ներքին կյանքի՝ սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին: Խուրրիների մոտ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին դեռ ուժեղ կենտրոնացված պետություն չկար: Կային առանձին քաղաքական կազմավորումներ, որոնք ունեին առաջնորդներ՝ «խուրրիների ռազմիկների թագավորներ»: Խեթերի և խուրրիների միջև, բացի ռազմական կապերից, այլ բնույթի կապերի մասին վկայություններ չկան հին խեթական տեքստերում: Սակայն հենվելով այն փաստի վրա, որ Խաթթուսիլիս 1-ինը Խասսուվից իր երկիր է ուղարկել խուրրիական աստվածների արձանիկներ և այլ թանկարժեք պաշտամունքային առարկաներ, կարելի է ասել, որ դեռ վաղ ժամանակներից խուրրիական ազդեցությունը մեծ է եղել խեթական մշակույթի և կրոնական հավատալիքների ձևավորման ու զարգացման վրա: Այդ ազդեցությունը, որը հստակ երևում է խեթական Նոր թագավորության ժամանակ (մոտ.1450-1200), իր արմատներով հասնում է Հին Խեթական թագավորության շրջան (1650-1590), երբ խուրրիները դեռ չունեին միասնական ուժեղ պետություն, ինչպիսին որ ավելի ուշ կազմավորված Միտանի պետությունն էր:

Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ խուրրիները մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներում ակտիվ շփումների մեջ էին ոչ միայն խեթերի, այլև եգիպտացիների հետ, որոնց հարևանությամբ են հայտնվել Սիրիա-Պաղեստինը յուրացնելուց հետո: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի կեսերին Սիրիա-Պաղեստին են թափանցել Հայկական լեռնաշխարհի շենգավիթյան կամ Կուր-արաքսյան մշակույթը կրող ցեղեր, որոնք տեղում ստեղծել են Քիրբեթ-Քերակյան մշակույթը (համանուն բնակավայրի անունով): Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբին Հյուսիսային Սիրիան և Օրոնտես գետի հովիտը հիմնականում բնակեցված էին Հայկական լեռնաշխարհի բնիկներով՝ խուրրիներով և բնակչությունը հիմնականում խուրրիալեզու էր[42] (կար նաև սեմական բնակչություն):

Հայտնի է, որ հայկական ցեղերը վաղ են տիրապետել մետաղների (պղինձ, բրոնզ, երկաթ) մշակման արվեստին: Հայտնի է նաև, որ Հայաստանը ձիու բնտելացման հնագույն տարածքներից է, և հայերը ձին վաղ են օգտագործել ռազմական նպատակներով: Նրանք ունեին նաև մարտակառքեր, որը թույլ էր տալիս արագ մեծ տարածություններ անցնել: Տարածված է այն կարծիքը, որ ձիաբուծությունը և մարտակառքերով մարտի տակտիկան Միջագետքում, Հյուսիսային Սիրիայում և Եգիպտոսում տարածել ու զարգացրել են խուրրիները[43] (Եգիպտոսում հիքսոսներ):

Մ.թ.ա. 18-րդ դարի վերջին Միջերկրական ծովի արևելյան ափերը՝ Փյունիկիան, Պաղեստինն ու Սիրիան յուրացնելուց հետո խուրրիները հայտնվել են եգիպտացիների հարևանությամբ: Եգիպտական 12-րդ և 13-րդ դինաստիայի փարավոնները հաճախ են թալանչիական, կողոպտչական արշավանքներ կազմակերպել դեպի խուրրիաբնակ Սիրիա-Պաղեստին: Եվ մոտավորապես մ.թ.ա. 1650 թվականին խուրրիների (հիքսոսներ) դեպի Եգիպտոս կազմակերպած արշավանքները կարելի է դիտել իբրև պատասխան հարված: Հիքսոսների մեկնակետը Հայկական լեռնաշխարհն էր՝ Սուբարտուն[44] (Միտանի):

Հայկական լեռնաշխարհից դեպի Եգիպտոս կատարված այս արշավանքը տարաբնույթ կարծիքների տեղիք է տվել ուսումնասիրողների շրջանում: Քննարկման առարկա է դարձել հատկապես հիքսոսների էթնիկ պատկանելիության հարցը: Պահպանված գրավոր աղբյուրները կցկտուր տեղեկություններ են հաղորդում հիքսոսների մասին: Արժեքավոր են հատկապես եգիպտացի քուրմ Մանեթոնի տեղեկությունները (մ.թ.ա. 4-րդ դ.), որն օգտվելով եգիպտական տաճարներում պահպանվող մեզ անհայտ, չպահպանված գրավոր աղբյուրներից գրել է Եգիպտոսի պատմությունը: Այդ աշխատությունից միայն հունարեն թարգմանված հատվածներ են պահպանվել, որոնք մեզ են հասել Հովսեփոս Փլավիոսի և Եվսեբիոս Կեսարացու աշխատությունների միջոցով: Մանեթոնի աշխատության պահպանված հատվածներից հայտնի է դառնում, որ մոտավորապես մ.թ.ա. 1650թ. Պաղեստինից Եգիպտոս, Նեղոսի դելտա են ներխուժել անխոցելի զրահներով, սուր, հատող թրերով և նետերի երկաթե

42. ИДВ, II, с. 203, 211.

43. ИДВ, II, с. 236.

44. Ուսումնասիրողները հիմնականում համակարծիք են, որ հիքսոսները Հայկական լեռնաշխարհի՝ Սուբարտուի բնակիչներն էին: Հիքսոսների մեկնակետը Սուբարտուն է, գրում է Է. Ֆորերը: Մ. Օպենհայմը ևս նշում է, որ հիքսոսները սուբարիներն էին՝ Միտանիի իշխանների գլխավորությամբ (Ա. Խաչատրյան, 1933, էջ 82):

պաքներով զինված, մարտակառքեր վարող լեռնական քաջ ռազմիկների ջոկատներ, որոնք հեշտությամբ պարտության են մատնել եգիպտական հետևակին ու գրավել Եգիպտոսը[45]: Նրանք «առանց պատերազմի դիւրաւ տիրեցին մեր աշխարհին»[46] դառնությամբ գրում է Մանեթոնը: Հիքսոսները Սալիտիս, Հիան (Խիան), Ապոպի անուններով զորավարների (փարավոններ) գլխավորությամբ աստիճանաբար գրավել են Եգիպտոսի հյուսիսային շրջանների՝ նոմերի իշխանությունը: Նրանց առաջնորդները սկսել են կրել փարավոն տիտղոսը: Մանեթոնը վկայում է, որ 15-րդ և 16-րդ դինաստիայի փարավոնները հիքսոսներ էին: Նա հիշատակում է 15-րդ դինաստիայի փարավոնների անուններ: Բացի վերը հիշատակված զորավար-փարավոններից նշվում են նաև Բնոն, Ապախնան, Ասսիս (կամ Կերտոս) անուններով հիքսոս փարավոններ: Հիքսոս փարավոնների անուններ են պահպանվել նաև կոյաքզեզ-կնիքների վրա. Մանեբրա, Նեբվախաբ, Նեբկարա, Իխա, Նեբուսերա, Կար, Իկեբար, Մարա, Խեմուրա, Կարա, Նեֆերկարա[47]: Հիքսոսները հիմնել են նոր մայրաքաղաք՝ Ավարիսը, իսկ մինչ այդ հիմնել էին Երուսաղեմը Քանանում[48]: Հիքսոսները մոտ 108 տարի իշխել են Եգիպտոսում:

Գրավոր աղբյուրները (հունական) ներխուժող լեռնականներին անվանում են հիքսոս (hik-sos): Հայտնի է, որ –sos-ը հունական վերջավորություն է: Հիքսոս (հաքսոս) անունը «անապատների առաջնորդներ», «հովիվների թագավորներ», «օտար երկրների թագավորներ»[49] իմաստներով է բացատրվում: Հնում հովիվը «առաջնորդ» իմաստն է ունեցել, արևին նվիրված խեթական հիմներից մեկում Արև-Աստվածը երկնքի ու երկրի արքան է, մարդկության հովիվը, որի առջև խոնարհվում են երկնքի ու երկրի բոլոր աստվածները[50]: Հիքսոսների էթնիկ պատկանելության հարցը լուծելու համար շատ կարևոր է Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրականք» աշխատությունը: Պահպանվել են այդ աշխատության որոշ հատվածներ հայերեն թարգմանությամբ: Հայերեն թարգմանության մեջ նվաճողների համար օգտագործվել է **hak** անվանումը[51], առանց հունարեն –sos վերջավորության: Մխիթարյան միաբանության անդամ Հ. Յ. Ավգերը դեռ 19-րդ դարի կեսերին ուշադրություն է դարձրել **hak** անվանը, նույնացնելով այն հայերի հայ ինքնանվանման հետ[52]:

45. *Manetho*, The Aegyptiace ..., London, 1948, p. 89, *Է. Դանիելյան*, 1997, էջ 73:
46. Բազմավէպ, 1912, 7-9, էջ 297:
47. *Лапис И.*, ВДИ, 1959, 1
48. *Manetho*, The Aegyptiace ..., p. 89.
49. Բազմավէպ, 1912, 7-9, էջ 280-286:
50. ՀԱՊ, էջ 172:
51. *Մխիթարի Պամփիլեաց* Կեսարացիոյ, Ժամանակագրականք, մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 227-229:
52. Բազմավէպ, 1912, 7-9, էջ 289-297: Նշենք, որ հայոց որոշ բարբառներում Հայկը (հայ) հնչում է հեք (Այնթապ), խեք (Մոկք) ձևերով: Նկատում ենք, որ հեք, խեք նաև հիք, հաք ձևերը նման են: Հետևաբար հիք, հաք ձևերը ևս հայ ու Հայկ անվան տարբերակներն են:

Եղած փաստերը («լեռնային երկիր, լեռնական քաջ ռազմիկներ», ձիերի, մարտակառքերի, երկաթե զենքերի առկայություն) վկայում են, որ մ.թ.ա. 1650թ. Եգիպտոսը հեշտությամբ գրաված հիքսոսները Հայկական լեռնաշխարհի բնիկներն էին՝ խուրրիները: Հատկանշական է նաև, որ հիքսոսները իրենց համարում էին Արևի որդիներ[53] ու նրանց ազդեցության հետևանքով էր, որ Արևի պաշտպանությունը Եգիպտոսում բարձրացվեց պետական մակարդակի (Ռա/Ար/ Աստծո պաշտամունքը): Եգիպտացիները նրանց օտար էին համարում և մ.թ.ա. 16-րդ դարի սկզբներին Եգիպտոսում սկսվել է պայքար հիքսոսների դեմ: Այն սկսել են 17-րդ դինաստիայի փարավոնները: 18-րդ դինաստիայի (1580-1314) փարավոն Յախմոս 1-ինը գրավել է Ավարիսը և հիքսոսներին դուրս մղել դեպի Ասիա: Յախմոս 1-ինը հիքսոսների հետքերով մտել է Պաղեստին և նվաճել նրանց վերջին հենակետը Հարավային Պաղեստինում՝ Շարուխենը (այժմ Թելլ-էլ-ֆարա): Սկսվել են Եգիպտոս – Միտանի երկարատև ռազմական բախումներ: Ինչպես տեսնում ենք, եգիպտացիները հիքսոսներին դուրս մղելով իրենց երկրից պատերազմ են սկսել խուրրիական Միտանի պետության դեմ, համարելով, որ հենց այս երկիրն ու խուրրիներն էին մեղավոր իրենց երկրին պատճառված աղետի համար[54]:

53. ИДВ, II,с. 415.
54. *Ն Ադոնց*, Հայաստանի պատմություն, 1972, էջ 31:

ՄԻՏԱՆԻՆ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՀԶՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Մ.թ.ա. 15-րդ դարում խուրրիների հարևանությամբ սկսել էին գործել զավթողական տրամադրություններ ունեցող հարևաններ՝ խեթերը և եգիպտացիները: Խեթերը ցանկանում էին ընդլայնել իրենց տիրույթները՝ ի հաշիվ խուրրիաբնակ Հյուսիսային Սիրիայի և Հյուսիսային Միջագետքի, իսկ եգիպտացիները սկսել էին ծրագրավորված թալանչիական արշավանքներ կազմակերպել դեպի Սիրիա-Պաղեստին, որոնք նույնպես խուրրիաբնակ էին: Այս երկու վտանգավոր հարևանների թշնամական գործողություններին դիմագրավելու համար խուրրիներին անհրաժեշտ էր միավորվել, ստեղծել ուժեղ պետություն: Այս խնդիրը հաջողությամբ իրագործում են խուրրիական միտանի ցեղի թագավորները:

Մ.թ.ա. 16-րդ դարի կեսերի Առաջավոր Ասիայի գրավոր աղբյուրները (խեթական, եգիպտական) վկայում են, որ Առաջավոր Ասիայում ստեղծվել էր նոր ուժեղ պետություն՝ Միտանին: Ուսումնասիրությունները թույլ են տալիս ասելու, որ Իրանական բարձրավանդակից արևելք ընկած տարածքներում, Վան-Ուրմիա լճերի և Զագրոսի լեռների միջև ընկած տարածքներում ապրող խուրրիական միտանի ցեղի առաջնորդները (թագավորներ) կարողացել են միավորել խուրրիական ցեղերին և ստեղծել Միտանի պետությունը Վաշշուգանե մայրաքաղաքով[1]: Հայտնի չեն Միտանի պետության ստեղծման պայմանները: Ինչպես վերևում նշվել է՝ դրա համար կարևոր պայման կարող էր լինել արտաքին վտանգը: Խուրրիական ցեղերի հարևանությամբ, հիքսոսներին դուրս մղելուց հետո, ուժեղանում էր Եգիպտոսը: Խաթթին ևս վտանգավոր հարևան էր դարձել խուրրիների համար: Իրադարձությունների զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ հենց արտաքին վտանգն է կարևոր գործոն եղել

1. Տեսակետներից մեկի համաձայն (Ի. Դյակոնով) արիական ցեղերը Առաջավոր Ասիա են եկել արևելաեվրոպական և միջինասիական տափաստաններից մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբին: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 2-րդ կեսին Ուրմիա լճի ավազանում իբր կայացել են արիական և միտանի ցեղերի առաջին շփումները, որոնց արդյունքում միտանի ցեղը արիների գլխավորությամբ կարողացել է միավորել խուրրիներին և ստեղծել խուրրիական Միտանի պետությունը, որի ազնվական դասը արիներ էին (И. Дьяконов, Арийцы… , ВДИ, 1970, 4, с. 162):

խուրրիական ցեղերի համախմբման և ուժեղ թագավորի գլխավորությամբ ուժեղ պետություն ստեղծելու համար:

Մինչև խուրրիական ցեղերի միավորումը և Միտանի պետության կազմավորումը խեթական տեքստերը բազմիցս վկայում են «խուրրի ռազմիկների թագավորների» ռազմական միության մասին: Խեթերի դեմ մղված պայքարի ժամանակ միտանի ցեղի թագավորին (անունը հայտնի չէ) հաջողվել է գլխավորել արդեն կազմավորված «խուրրի ռազմիկների թագավորներին», իսկ այնուհետև՝ նաև խուրրի ցեղերի թագավորների երկրները[2]: Ինչպես տեսնում ենք, արտաքին վտանգի ժամանակ միավորված ցեղերի ռազմական միությանը հաջողվել է նրանց քաղաքական ու տնտեսական միավորումը:

Գրավոր աղբյուրներում վկայված Միտանիի առաջին թագավորը Շուտարնա 1-ինն է Su-ut-ta-ar-na (նաև Սուտարնա, մ.թ.ա. 16-րդ դարի վերջ), Կիրտայի որդին, որի կնիքը, որպես պետական ու «դինաստիական» նշան օգտագործվել է ավելի ուշ շրջանի թագավոր Սաուսադատտարի (մ.թ.ա. 15-րդ դարի 1-ին կես) կողմից: Ալալախից հայտնաբերված կնիքի վրա գրված է «Շուտարնա, որդի Կիրտայի, թագավոր Մայտանիի»[3]: Հայտնի չէ, Կիրտան (Ki-ir-ta) թագավոր եղել է, թե ոչ: Իսկ ո՞վ է եղել Միտանիի առաջին թագավորը, պետության ու դինաստիայի հիմնադիրը, հայտնի չէ: Ինչպես վերևում նշվեց, Շուտարնան առաջին թագավորն է, որի մասին վկայություն կա գրավոր աղբյուրներում: Շուտարնային հաջորդել է Պարատտարնան Ba-ra-at-tar-na (մ.թ.ա. 15-րդ դարի սկիզբ): Այս թագավորի ժամանակ կատարված իրադարձությունների և քաղաքական իրավիճակի մասին համեմատաբար ավելի շատ տեղեկություններ կան, շնորհիվ Մուկիշեի (Ալալախ) թագավոր Իդրիմիի հայտնաբերված արձանագրության: Իդրիմին հայտնում է, որ Սիրիայի մի շարք քաղաքներ, այդ թվում Հալեպը անհնազանդություն են հայտնել իրեն և ինքը ստիպված փախել է Էմար քաղաքը (Հալեպից հարավ-արևելք, Եփրատի ափին): Այնտեղ 7 տարի ապրելուց հետո բանակցությունների մեջ է մտել Միտանիի թագավորի հետ, պայմանագիր կնքել, և ընդունելով նրա գերիշխանությունը «հզոր Միտանիի թագավոր Պարատտարնայի օգնությամբ» վերադարձրել է հոր գահը: Իդրիմիի տեքստում Պարատտարնան «խուրրի մարդկանց թագավորն է» Ba-ra-at-tar-na LUGAL EREN^{MES} Hur-ri ^{ki4}:

Այս բանակցությունների հետևանքով Պարատտարնան Միտանիի գերիշխանությունն է հաստատել Հյուսիսային Սիրիայում և Օրոնտես գետի ափերին: Այնուհետև նա արշավանք է կազմակերպել դեպի Խաթթի և թալանել մի շարք

2. ИДВ, II, с.72.
3. *A.Kammenhuber,* Die Arier..., էջ 62-63. *И. Дьяконов,* Арийцы…, ВДИ, 1970, 4, с. 48.
4. *A.Kammenhuber,* Die Arier..., էջ 62-63. *И. Дьяконов,* Арийцы…, с. 48.



ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՆ Մ.Թ.Ա. 2-1-ԻՆ ՀԱՅԱՐԱՏԱԿՆԵՐՈՒՄ

քաղաքներ, համարյա չհանդիպելով դիմադրության: Նուզից հայտնաբերված արձանագրության մեջ վկայություն կա Պարատտարնայի մահվան մասին:

Համեմատաբար շատ տեղեկություններ կան Միտանիի հաջորդ թագավոր Պարսադատտարի որդի Սաուսադատտարի մասին (մ.թ.ա.15-րդ դարի առաջին կես): Նուզից հայտնաբերված կնիքի վրա գրված է Sa-us-ta-at-tar LUGAL Ma-i-ta-ni «Սաուսադատտար, թագավոր Մայտանիի»[5]: Իսկ Ալալախից հայտնաբերված արձանագրության մեջ անունը գրված է Sa-us-sa-ta-(at)-tár LUGAL ձևով: Այս դեպքում ևս հայտնի չէ, հայրը՝ Պարսադատտարը եղել է թագավոր, թե՞ ոչ: Խուրրիական գրավոր աղբյուրների սակավությունը բացատրվում է այն հանգամանքով, որ մայրաքաղաք Վաշշուգանիից և երկրի կենտրոնական մասերից չեն հայտնաբերվել պետության դիվանը, թագավորների արձանագրությունները, գրագրությունները և այլ տեքստեր, ինչպես Ամառնայում (Եգիպտոս) և Խաթթուսասում (Խաթթի): Եղած բացը որոշ չափով լրացվում է երկրի ծայրամասերից (Նուզի, Արրապխա, Ալալախ) հայտնաբերված նյութերով: Սաուսադատտարի միակ նամակը հայտնաբերվել է Արրապխայի Նուզի քաղաքից: Այդ նամակը կնքված է մի կնիքով, որը պատկանել է Սաուսադատտարի հորը՝ Պարսադատտարին (կնիքը նրա անունով է): Ալալախում ևս հայտնաբերվել են տեքստեր՝ դատական որոշումներ, որոնք դարձյալ հաստատված են «դինաստիական կնիքով»՝ Սաուսադատտարի նախորդներից մեկի կնիքով: Ինչպես տեսնում ենք, Միտանիի թագավորները հաճախ են օգտագործել «դինաստիական կնիքներ»: Իսկ սա վկայում է, որ գահը գտնվում էր նույն արքայատոհմի ձեռքին և ժառանգվում էր հորից որդուն:

Միջերկրական ծովի արևելյան ափերին, Ամուկի հովտում (Սիրիայի հյուսիսարևմտյան մաս) Օրոնտես գետի ափերին կազմավորվել էր Ալալախի (այժմ Ատչանա) թագավորությունը համանուն կենտրոնով: Այս թագավորությունը (նաև Մուկիշե թագավորության) կարևոր աշխարհագրական դիրք է ունեցել և իրար է կապել Շումերը, Բաբելոնը, Եգիպտոսը, Խաթթին և Խուրրին: Ալալախը այս երկրները կապել է նաև Միջերկրական ծովի, Կնոսոսի ու հունական այլ կղզիների հետ: Ալալախում կատարված պեղումների ժամանակ (Լ.Վուլլի) մշակութային 5-րդ շերտում հայտնաբերվել է խուրրիական մշակույթին բնորոշ խեցեղեն, հայտնաբերված խեցեղենի վրա սև կամ շագանակագույն ֆոնի վրա սպիտակ ներկով զարդանախշեր են արված (այդ Նիկմեպա թագավորի ժամանակաշրջանն է, որը Սաուսադատտարի վասալն էր):

Ալալախը ոչ միայն խուրրիների տնտեսական ու մշակութային ազդեցությունն է կրել, այլև ռազմաքաղաքական առումով գտնվել է Միտանիի ենթակայության տակ, իսկ Ալալախի թագավոր Նիկմեպայի (Իդրիմիի որդին) և Տունիբի թագավոր Իր-Թեշշուբի միջև կնքված պայմանագրի տեքստում Նիկմեպան

5. *И. Дьяконов*, Арийцы… , с. 48.

իրեն համարում է «խուրրի ռազմիկների թագավորի» վասալը[6] (այս դեպքում Սաուսադատտարի), որը ոչ միայն Միտանիի, այլև ինչպես երևում է տեքստերից, Խանիգալբատի թագավորն էր[7]: Խուրրիական մշակույթին բնորոշ խեցեղեն է հայտնաբերվել նաև Նուզիում, որն ըստ հայտնաբերված տեքստերի թվագրվում է մ.թ.ա. 1450-1350 թվականներով և վերաբերում է Սաուսադատտարի ժամանակներին[8]: Հնագիտական պեղումները պարզել են, որ հին Գաուր բնակավայրի տեղում կառուցվել է նոր քաղաք՝ Նուզի, որը մ.թ.ա. 15-14-րդ դարերում ունեցել է խուրրի բնակչություն: Քաղաքի անվանափոխման կամ նոր քաղաքի հիմնադրման պատճառը հայտնի չէ: Կարելի է ենթադրել, որ դա կարող էր կապված լինել Թեշշուբ աստծո տաճարի կառուցման հետ: Նուզիում կատարված պեղումների ժամանակ հայտնաբերվել է կնիք, որի վրա գրված է «Սաուսադատտար, որդի Պարսադատտարի, թագավոր Միտանիի»: Այդ կնիքը կցված է Արրապխայի թագավոր Խտխիին ուղղված նամակին: Այս փաստը վկայում է, որ Արրապխան և Նուզին ևս գտնվել են Միտանիի ենթակայության տակ: Միտանիի ենթակայության տակ է եղել նաև Կիցվատնան (Կիլիկիա): Այդ է վկայում Ալալախից հայտնաբերված Սաուսադատտարի և Կիցվատնայի թագավոր Սունասսուրա(u)-ի միջև կնքված պայմանագրի տեքստը[9]: Սունասսուրա անունը ուսումնասիրողները համարում են հնդեվրոպական՝ արիական անուն[10]: Նկատում ենք նաև, որ Սունասսուրա անունը շատ նման է հայոց «Սասնա ծռեր» դյուցազնավեպի հերոսներից մեկի՝ Սանասարի անվանը:

Սաուսադատտարը հաջող արտաքին քաղաքականություն է վարել: Իր արշավանքներից մեկի ժամանակ նա գրավել է Աշշուրը և Աշշուր աստծո տաճարից որպես ավար իր մայրաքաղաք Վաշշուգանե տարել այդ տաճարի ոսկեպատ դուռը: Այնուհետև Սաուսադատտարը Աշշուրում վերացրել է տեղական իշխանությունը և ստեղծել քաղաքային խորհուրդ, որի կազմի մեջ եղել է նրա կողմից նշանակված ներկայացուցիչ՝ սուկալլու: Սաուսադատտարը իր ազդեցությունը տարածել է նաև Աշշուրից հարավ գտնվող խուրրիաբնակ Արրապխայի վրա, որը նույնպես պահպանել է իր ինքնավարությունը[11]:

Միտանին իր հզորությանն ու ծաղկմանն է հասել Սաուսադատտարի ժամանակ: Նրա ազդեցությունը տարածվել է Միջերկրականի արևելյան ափամերձ շրջաններից, Կիցվատնա-Կիլիկիայից մինչև Աշշուր, Արրապխա, Տիգրիս ու Եփրատ գետերի ավազաններ և ավելի հյուսիս ընկած տարածքներ:

6. AT, 2, *Г. Аветисян*, 1984, с. 41.
7. AT, 2, 3.
8. *Л.Вулли*, с.114.
9. *Г. Аветисян*, 1984, с. 41.
10. *И. Дьяконов*, Арийцы... , с. 50.
11. ИДВ, II, с.73.

Միտանի պետությունը ստեղծվում ու հզորանում էր բարդ արտաքին ռազմաքաղաքական պայմաններում: Շարունակվում էին եգիպտական փարավոնների թալանչիական արշավանքները դեպի Սիրիա-Պաղեստին: Հաջորդ փարավոնը, որ Յախմոս 1-ինից հետո արշավանք է կազմակերպել դեպի Սիրիա-Պաղեստին Թութմոս 1-ինն է (մ.թ.ա. 16-րդ դարի 2-րդ կես): Թութմոս 1-ինը հեշտությամբ անցել է Սիրիա-Պաղեստինը և դուրս եկել Օրոնտես գետի ափ: Այստեղ նրա դեմ ոտքի է կանգնել Քադեշ քաղաքը: Այնուհետև եգիպտացիների դեմ ոտքի են կանգնել ու միավորվել բոլոր ուժերը՝ Պաղեստինից մինչև Եփրատ գետ: Պայքարը կազմակերպել ու ղեկավարել է Միտանին: Եգիպտացիները Թութմոս 1-ինի այս արշավանքի ժամանակ Միտանիի համար օգտագործում են Նախրինա «գետերի երկիր» կամ Նախրեն «Միջագետք» անունները[12] այն է. «Եփրատի ճյուղավորումների երկիր», որն օգտագործել են քանանացիները: Քադեշի մոտ Թութմոս 1-ինին հաջողվել է անսպասելիորեն հարձակվել ու տեղի ունեցած ճակատամարտում հաղթել իր դեմ միավորված ուժերին: Հարուստ ավարով ու գերիներով Թութմոս 1-ինը վերադարձել է Եգիպտոս: Քադեշի ճակատամարտի ժամանակ Միտանին «միացյալ ուժերին» օգնել է զինվորներով (700 զինվոր) և ձիերով(50 ձի)[13]: Այնուհետև սկսվել են ամենամյա եգիպտական արշավանքները: Իր հաջորդ արշավանքի ժամանակ Թութմոս 1-ինը դարձյալ հեշտությամբ անցել է Սիրիա-Պաղեստինը և դուրս եկել Եփրատ գետի ափ: Գետի հոսքը զարմացրել է Թութմոսին և մյուս եգիպտացիներին, քանի որ այն ի տարբերություն Նեղոսի հոսում էր հյուսիսից հարավ և Թութմոսը գետը անվանել է «շրջված ջուր»[14]: Եփրատի ափին եգիպտացիները հանդիպել են Միտանիի թագավորի դիմադրությանը: Տեղի ունեցած ճակատամարտում եգիպտացիները հաղթել են: Եփրատի ափին Թութմոսը արձանագրություն է թողել, որտեղ իրեն հռչակել է «աշխարհի տիրակալ» Եթիոպիայից մինչև Եփրատի ափեր: Նորից մեծ ավարով ու գերիներով Թութմոս 1-ինը վերադարձել է Եգիպտոս:

Թութմոս 1-ինին պատկանող արձանագրությունների առանձին հատվածներում առաջին անգամ հիշատակվում է Մահիտանի, ապա Միտտանի անվանումը, որն օգտագործում էին այդ երկրի բնակիչները իրենց երկրի համար: Թութմոս 1-ինի մահից հետո որոշ խաղաղություն է տիրել: Մի քանի ամսից մահացել է նաև Թութմոս 1-ինին հաջորդած որդին՝ Թութմոս 2-րդը և գահը անցել է Թութմոս 3-րդին, որից սակայն այն խլել է կինը՝ Խաթշեպսուտը: Խաթշեպսուտի մահվանից հետո փարավոն է հռչակվել Թութմոս 3-րդը (15-րդ դարի 2-րդ կես): Նոր փարավոնի ժամանակ կտրուկ փոփոխություններ են կատար-

12. ИДВ, II, с. 238.
13. ИДВ, II, с. 437.
14. ИДМ, 1982, с. 244.

վել արտաքին քաղաքականության մեջ: Թութմոս 3-րդը ակտիվ ռազմական գործողություններ է սկսել: Մեծ բանակով փարավոնը ներխուժել է Ասիա, գրավել Պաղեստինը, Փյունիկիան և Սիրիան: Այս արշավանքի ժամանակ Թութմոս 3-րդին հաջողվել է Մեգիդդոյի մոտ պարտության մատնել Քադեշի թագավորի գլխավորությամբ միավորված ուժերին և գրավել Քադեշը: Միացյալ ուժերին դարձյալ ոգևորել ու օգնել է Միտանին: Եգիպտական արձանագրություններից պարզ է դառնում, որ Սիրիայի միջին ու հարավային մասերում ևս խուրրիական բնակչություն կար, որոնց առաջնորդները (թագավորները) նույնպես խուրրիներ էին[15]: Մեգիդդոյի ճակատամարտից հետո Աշշուրի տիրակալը և Խաթթիի թագավորը նվերներ են ուղարկել փարավոնին: Խաթթիի թագավոր Թութխալիա 1-ինը (կամ 2-րդ) առաջարկել է նաև դաշինք կնքել: Ենթադրվում է, որ Խալապի նվաճումը խեթերի կողմից համաձայնեցված է եղել փարավոնի հետ և կնքված պայմանագրի արդյունք է[16]: Քադեշից հետո Թութմոս 3-րդը գրավել է նաև Կարքեմիշը և Եփրատ գետի միջին հոսանքի շրջանում մտել Միտանիի տարածք: Միտանիի թագավորը նահանջել է Եփրատի ձախ ափը: Թութմոս 3-րդի հրամանով Փյունիկիայում մայրի ծառից պատրաստել են նավակներ և սայլերով հասցրել Եփրատ գետի ափ: Անցնելով Եփրատը Թութմոսը չի գտել Միտանիի թագավորին: Գետի արևելյան ափին, ժայռի վրա իր պապ Թութմոս 1-ինի արձանագրության մոտ Թութմոս 3-րդը նոր հաղթական արձանագրություն է թողել և հեռու մնալով երկրի խորքերը թափանցելուց, գետի հոսանքով իջել է ցած, ավերելով ու թալանելով քաղաքներ և գյուղեր: Հարուստ ավարով ու գերիներով փարավոնը վերադարձել է նույն ճանապարհով: Նիյա քաղաքի մոտ (Եփրատից արևմուտք) փարավոնը զբաղվել է փղերի որսով: Իր արձանագրության մեջ Թութմոս 3-րդը պարծենում է, որ փղերի մեծ որս է արել (120 հատ), բայց նրա զորական Ամենեմխեբի արձանագրությունից երևում է, որ Թութմոսը հազիվ է փրկվել փղի ոտքերի տակ տրորվելուց և զոհվելուց: Նրան փրկել է Ամենեմխեբը, որը կարողացել է ճարպկորեն կտրել փղի կնճիթը[17]: Նշենք, որ եգիպտացիների կազմակերպած արշավանքների մասին տեղեկությունները միակողմանի են: Դրանք հիմնականում փարավոնների արձանագրություններն են, որոնք թույլ չեն տալիս ամբողջական պատկերացում կազմելու ռազմական գործողությունների մասին: Չնայած իր ունեցած ռազմական հաջողություններին Թութմոս 3-րդին չի հաջողվել ամրանալ գոնե Հյուսիսային Սիրիայում, կամ այն դարձնել իր կայսրության կայուն մասերից մեկը: Եգիպտացիների հեռանալուց հետո անմիջապես սկսվել են հակաեգիպտական ապստամբություններ: Ապստամբել են Թունիբ և Քադեշ քաղաքները: Նրանց

15. *Г.Вильхельм*, с. 57.
16. *Г.Вильхельм*, с. 57.
17. ИДВ, II, с.437. *F. Petrie*, A history of Egypt...2,61.

դարձյալ ոգեշնչել և օգնել է Միտանին: Թութմոս 3-րդը ստիպված էր նոր արշավանք կազմակերպել: Արշավանքներից մեկի ժամանակ Միտանիի արքան մեծաքանակ զորք է դուրս բերել եգիպտացիների դեմ: Ճակատամարտը տեղի է ունեցել Արան քաղաքի մոտ: Թութմոս 3-րդը անձամբ մասնակցել է ճակատամարտին: Եգիպտացիների ճնշումը ուժեղ էր, ու խուրրիները ստիպված նահանջել են: Եգիպտացիները որպես ավար վերցրել են 10 գերի, 180 ձի և մոտ 60 մարտակառք[18]: Իր երկարատև գահակալության շրջանում Թութմոս 3-րդը համարյա ամեն տարի արշավանք է կազմակերպել դեպի Սիրիա-Պաղեստին: Իր արշավանքների ժամանակ փարավոնը հիմնականում բախվել է Միտանիի վասալ թագավորների հետ: Գրավոր աղբյուրների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ փարավոնի հաղթանակները հիմնականում եղել են Միտանիի դաշնակիցների դեմ, որոնք Միտանիին ենթակա վասալ թագավորություններ էին, միավորված «Հալեպի շուրջը»[19]: Իսկ նրանց անշուշտ կազմակերպել և ղեկավարել է Միտանին: Չնայած Թութմոս 3-րդը հասել է Միտանիի սահմանները, բայց երկրի խորքը մտնել, հաղթել կամ ջախջախել խուրրիներին նրան չի հաջողվել: Թութմոս 3-րդի ժամանակակիցն է եղել Սաուսադատտար թագավորը, որն ինչպես նշվել է վերևում Միտանիի քաղաքական հզորության հիմնադիրն էր: Սաուսադատտարին հաջողվել է ամրացնել Միտանիի սասանված դիրքերը: Նա նվաճել է Աշշուրը , որը կանխատեսելով դա, նախօրոք բանակցությունների մեջ էր մտել եգիպտացիների հետ: Սաուսադատտարը իր հսկողությունը տարածել է նաև Ալալախի (Մուկիշ), Ուգարիտի ու Կիցվատնայի վրա: Նա նորից նվաճել է նաև Հալեպը, իսկ արևելքում նրա վասալն էր Արրապխայի թագավորը: Արրապխայում հայտնաբերված նրա արձանագրությունը վկայում է, որ նրա ժամանակ Միտանիի ազդեցությունը տարածվում էր Միջերկրական ծովից մինչև Զագրոսի լեռներ, ներառյալ Աշշուրը, ընդգրկելով ողջ Առաջավոր Ասիայի խուրրիալեզու մշակութային արեալը:

Իբրև երկարատև ռազմական գործողությունների արդյունք Թութմոս 3-րդի և Սաուսադատտարի միջև կնքվել է հաշտության պայմանագիր, որի համաձայն Հյուսիսային Սիրիան Քադեշով ու Հալեպով մնում էր Միտանիին, իսկ Պաղեստինն ու Հարավային Սիրիան անցել են Եգիպտոսին: Վերևում նշվել է, որ եգիպտացիների այս արշավանքները հիմնականում թալանչիական էին: Նրանք չէին ամրապնդվում գրավված տարածքներում, այլ ավերում, թալանում էին բնակավայրերը, մարդկանց և տանում նրանց կայքն ու անասունը: Եգիպտացիները հսկողություն էին սահմանում հիմնական ճանապարհների վրա և հարկատու դարձնում նվաճված երկրները: Սակայն եգիպտացիներին հարկ էր լինում ամեն տարի նորից նվաճել նույն քաղաքները, քանի որ նրանց թիկուն-

18. ИДВ, II, с.437.
19. *F. Petrie*, A history of Egypt..., 2,61. *Ա. Խաչատրյան*, էջ 316:

բում մշտապես կազմակերպվում էր դիմադրություն: Խուրրիները մշտական կապի մեջ էին սիրիա-պաղեստինյան ուժերի հետ և օգնում էին նրանց ամեն ինչով, այդ թվում՝ մարտական ջոկատներով (ինչպես Քադեշի ժամանակ էր): Իսկ մի անգամ, Ամենհոտեպ 2-րդի արշավանքի ժամանակ Նիյայի մոտ եգիպտացիներին հաջողվել է բռնել Միտանիի թագավոր Սաուսադատտարի հետախույզին, որը վզին կապած պարանի մեջ նամակ-հրահանգ էր տանում Սիրիա-Պաղեստինի տեղական թագավորներից մեկին[20]: Միտանիի ազդեցությունը մեծ էր այդ տարածքներում: Չնայած Սիրիա-Պաղեստինում արդեն հայտնվել էին սեմական ցեղեր (Պաղեստինի հարավում հաստատվել էին քանանացիները, հյուսիսում՝ ամորիական և այլ սեմական ցեղեր), բնակիչները հիմնականում խուրրիներ էին: Ստեղծված փոքր պետական կազմավորումների տիրակալները ևս խուրրիներ էին, որոնք դինաստիական կապերով կապված էին խուրրիական արքունիքի հետ (օրինակ՝ Արիսենի արձանագրությունը աքադերեն է, բայց տիրակալի անունը խուրրիական է):

Ռազմական այս գործողությունները ծանր հարված են հասցրել Միջերկրականի արևելյան ափամերձ շրջանների և Հյուսիսային Միջագետքի տնտեսական աճին: Եգիպտական արշավանքների հետևանքով մեռել է առևտուրը, ավերվել են բարգավաճող ու զարգացող քաղաքները: Հարկատու դարձնելով այս տարածաշրջանի երկրները, եգիպտացիները տանում էին այնտեղից ոսկի, արծաթ և այլ բարիքներ, նաև ստրուկներ, որոնք անշուշտ անսպառ չէին:

Թութմոս 3-րդի մահից հետո Սիրիա–Պաղեստինը փորձել է թոթափել Եգիպտոսի լուծը: Բայց Թութմոս 3-րդի որդին և հաջորդը՝ Ամենհոտեպ 2-րդը (մ.թ.ա. 15-րդ դարի վերջ) շատ ավելի համառ ու վտանգավոր է եղել Սիրիա-Պաղեստինի հարցում: Իր թագավորության 7-րդ տարում նա նոր արշավանք է կազմակերպել դեպի Սիրիա-Պաղեստին, հասել Եփրատի ափեր և մեծ ավարով ու գերիներով ետ վերադարձել: Ամենհոտեպ 2-րդը իր արձանագրության մեջ գրում է, որ «Միտանիի առաջնորդները (անշուշտ, վասալները) եկան իր մոտ, շալակած իրենց տուրքերը և աղաչեցին նորին մեծությանը, որ նա իրենց բողնի կյանքի քաղցր շունչը, մի կարևոր դեպք, որը բնավ չէր լսվել աստվածների ժամանակներից սկսած: Այս երկիրը, որ չի ճանաչել, չի հանդուրժել Եգիպտոսին, աղերսում է «Բարի Աստծուն»[21] (փարավոնին): Ինչպես տեսնում ենք, փարավոնը ինքն է վկայում, որ աստվածների ժամանակներից սկսած այս երկիրը չի ճանաչել Եգիպտոսին: Իսկ սա վկայում է, որ Միտանին մեծ ուժ և զորություն է ունեցել, և կարող էր նաև չենթարկվել փարավոնին: Հենց այդ են վկայում այն բազմաթիվ արշավանքները, որ ամեն տարի կազմակերպել են

20. ИДМ,1982, с.224.
21. *Ա.Խաչատրյան*, էջ 318:

փարավոնները: Ամենհոտեպ 2-րդի ժամանակ լուրջ նվաճումներ չեն եղել, այլ կարծես նորից կարգավորվել են սահմանները և նոր պայմանագիր է կնքվել խուրրիների հետ:

Ամենհոտեպ 2-րդի մահից հետո գահը անցել է որդուն՝ Թութմոս 4-րդին: Այս փարավոնը 18-րդ դինաստիայի վերջին փարավոնն էր, որ եղել է Եփրատի ափերին: Թութմոս 4-րդի ժամանակ բարեկամական հարաբերություններ են հաստատվել Միտանիի հետ: Հյուսիսում հայտնվել էր նոր թշնամի՝ Խաթթին, և Թութմոս 4-րդը ստիպված էր բանակցությունների մեջ մտնել Միտանիի թագավոր Արտաղամայի հետ: Կնքվել է հաշտության պայմանագիր[22], որտ որի Կարքեմիշը, Հալեպը և Ալալախը մնացել են Միտանիի ազդեցության ոլորտում: Միտանին ելք է ստացել դեպի Միջերկրական ծով: Պաղեստինն ու Սիրիայի հարավային մասերը տրվել են Եգիպտոսին: Հաշտության պայմանագիրը ամրապնդվում է ամուսնությամբ: Արտաղամայի դուստրը կնության է տրվել Թութմոս 4-րդին: Նրա մահից հետո գահը անցել է Ամենհոտեպ 3-րդին (մոտ մ.թ.ա.1400 թ.): Այս փարավոնը Սիրիա-Պաղեստինում չի եղել: Այնտեղից ստացել է տուրք, հաճախ նաև նրան հարկ էր լինում ոչ մեծաքանակ զորք ուղարկել այնտեղ «կարգ ու կանոն» հաստատելու համար և այլն: Ամենհոտեպ 3-րդի ժամանակ դադարել են ռազմական ընդհարումները, այնուհետև սկսվել ու ամրապնդվել են տնտեսական և դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի ու Միտանիի միջև: Ամենհոտեպ 3-րդը նաև բարեկամական հարաբերություններ է հաստատել Միտանիի հետ: Նրա սիրելի կանանցից էր Նիֆրիայի (Նաիրի) իշխանի դուստր Թիան, որի հետ ամուսնացել էր իր թագավորության 2-րդ տարում: Թիան ոչ գեղեցիկ, բայց շատ խելացի թագուհի է եղել և չնայած իր ոչ արքայական ծագմանը ազդեցիկ դիրք է ունեցել արքունիքում: Ամենհոտեպ 3-րդի կառուցած տաճարներից մեկում հարգանքի տուրք են մատուցել Թիային որպես փարավոնի սիրելի կին: Ամենհոտեպ 3-րդը օտար կանայք շատ է ունեցել (2 բաբելացի, 13 խուրրի, 1 արցավացի), բայց Թիան միշտ առաջինն է եղել և արձանագրություններում փարավոնի անվանը հաջորդել է Թիայի անունը: Իր թագավորության տասներորդ տարում Ամենհոտեպ 3-րդը կնության է առել Ար-

Թիա

22. Այս պայմանագրի կնքումը կապվում է խեթական պետության ուժեղացման հետ: Հին և նոր խեթական թագավորությունների միջև խզում կա, որը բացատրվում է գրավոր աղբյուրների բացակայությամբ: Այս պայմաններում դժվար է մտածել, որ խեթերը մ.թ.ա. 14-րդ դարի սկզբներին այնքան էին հզորացել, որ սպառնալիք լինեին Եգիպտոսի կամ Միտանիի համար: Պայմանագրի կնքումը կարող էր հետևանք լինել ներքին երկպառակությունների, որոնք փարավոնին թույլ չտվեցին նոր արշավանքներ կազմակերպել:

տաղամայի որդի և հաջորդ Շուտարնա 2-րդի աղջիկներից մեկին՝ Գիլու-Հեպային[23]: Արքայադստեր Եգիպտոս գալու առիթով կոյաբզեզ-կնիքի վրա արձանագրվել է՝ «Հրաշալիք է տրվել Նորին մեծությանը, Նախրենայի (Միտանիի) թագավոր Սուտառնայի դուստր Գիլու-Հեպան իր 327 սպասավորների հետ»[24]: Ամենհոտեպ 3-րդի ժամանակներով թվագրվող մշակութային արժեքների մեջ ոսկու և պղնձի հետ հայտնաբերվել են նաև երկաթե իրեր: Երկաթն այդ ժամանակ թանկարժեք մետաղ էր համարվել և հաճախ այն դրվել է ոսկե շրջանակի մեջ: Տուշրատան Ամենհոտեպ 3-րդին ուղարկել է երկաթե շեղբով երեք դաշույն, 2 երկաթե մատանի և էլի ինչ-որ իր, նրա որդի Ամենհոտեպ 4-րդին՝ 3 երկաթե մատանի և այլն: Իսկ Թութանհամոնի դամբարանից հայտնաբերվել են փայտե մեծ դաստակով և երկաթե փոքր շեղբով դաշույններ:

Նեֆերտիտի

Ամենհոտեպ 3-րդին հաջորդել է որդին՝ Ամենհոտեպ 4-րդը, որը նույնպես բարեկամական հարաբերություններ է պահպանել Միտանիի հետ: Այս փարավոնը ամուսնացել է Տուշրատայի դուստր Տադու-Հեպայի հետ, որը հայտնի է Նեֆերտիտի անունով: Տադու-Հեպան սկզբում ամուսնացել էր Ամենհոտեպ 3-րդի հետ, իսկ նրա մահից հետո՝ Ամենհոտեպ 4-րդի հետ[25]: Ամենհոտեպ 4-րդը հայտնի է որպես արևապաշտ փարավոն: Նա ընդունել է Էխնաթոն՝ «Արևի սկավառակ» անունը և կրոնական մեծ հեղափոխություն կատարել Եգիպտոսում, մտցնելով Արևի պաշտամունքը: Ռա աստծո պաշտամունքը պահպանվել է: Կրոնական այդ հեղափոխության մեջ անշուշտ մեծ է եղել կնոջ՝ Նեֆերտիտիի դերը: Ամենհոտեպ 4-րդը՝ Էխնաթոնը մեծ ցանկություն, նաև դրամ չուներ Սիրիա-Պաղեստինը պահելու համար: Իր ֆինանսական կարողությունը նա ծախսում էր արևին նվիրված տաճարներ, քաղաք (Ախեթաթոն) և կրոնական արարողություններ կատարելու համար: Այս պայմաններում, երբ բարեկամական, բարիդրացիական հարաբերություններ էին հաստատվել Եգիպտոսի ու Միտանիի միջև, նպաստավոր պայմաններ են ստեղծվում Միտանիի ու Սիրիա-Պաղեստին երկրամասի տնտեսական ու մշակութային զարգացման համար: Միտանին գտնվելով նպաստավոր աշխարհագրական պայմաններում՝ Առաջավոր Ասիայի կենտրոնում, իր ձեռքում էր պահում հաղորդակցության այն բոլոր ուղիները, որոնք կապում էին Ստորին Միջագետքը Միջերկրական ծովի արևելյան ափերի և Փոքր Ասիայի կենտրոնական ու արևմտյան մասերի հետ: Քաղաքական ու առևտրական բոլոր կարգի հարաբերությունները վերահսկվում էին խուրրիների կողմից: Եգիպտոսի հետ հաշտության պայմանագիր կնքելով Միտանին էլ ավելի բարգավաճելու և հզորանալու հնարավորություն էր ստանում:

Սակայն այդ վիճակի հետ չէր ցանկանում հաշտվել Խաթթին (քիչ ավելի ուշ նաև՝ Բաբելոնն ու նոր կազմավորվող Ասորեստանը): Խաթթին մեծ հավակնություններ ուներ ընդարձակվելու հատկապես դեպի հարուստ ու բարգավաճ խուրրիաբնակ Սիրիա, որը գտնվում էր Միտանիի ենթակայության տակ: Խեթերի ընդարձակվելու բոլոր փորձերը անհաջողությամբ էին ավարտվում՝ բախվելով խուրրիների ռազմական ուժին: Նոր խեթական թագավորության ժամանակ[26] (մ.թ.ա. 1450-1200) վերսկսվում են խուրրի-խեթական ռազմական բախումները: Հյուսիսում հզորացող Խաթթին ամեն կերպ ձգտում էր թուլացնել Միտանին, տարածվել դեպի Հարավային Սիրիա և ինքը տիրել առևտրական ու հաղորդակցության բոլոր ուղիներին: Մ.թ.ա. մոտավորապես 1345թ. Խաթթիում գահ է բարձրացել ակտիվ, նախաձեռնող ու դիվանագիտական հմտություններով օժտված Սուպիլուլիումաս 1-ինը (1345-1322), որը մեծ ցանկություն ուներ Խաթթին դարձնել հզոր պետություն:

Միտանիի թագավոր Շուտարնա 2-րդին հաջորդել է որդին՝ Արտաշումարան, որի թագավոր լինելը վկայում են Թելլ-Բրակից հայտնաբերված գրավոր տեքստերը: Այդ տեքստերի վրա դրված է Արտաշումարայի նախնիների՝ այդ դեպքում Սաուսադատտարի կնիքը, որն ինչպես Շուտարնա 1-ինի ժամանակ, դարձյալ վեր էր ածվել «դինաստիական կնիքի»: Սակայն Արտաշումարային վիճակված չէր երկարատև գահակալություն: Շուտարնայից հետո երկրում սկսվել է գահակալական պայքար Արտաշումարայի և Շուտարնայի եղբոր՝ Արտադամայի միջև: Այդ պայքարի ժամանակ Արտաշումարան սպանվել է ոչ արքայական տոհմից սերված պալատական Ուտխիի կողմից: Սակայն Արտաշումարայի կողմնակիցներին հաջողվել է գահ բարձրացնել նրա փոքր եղբորը՝ անչափահաս Տուշրատային[27]:

Ի պատասխան այս իրադարձությունների, Եգիպտոսը խզել է դիվանագիտական հարաբերությունները Միտանիի հետ: Դավադրություններն ու բանսարկությունները շարունակվել են Միտանիի շուրջ: Հատկապես նպատակասլաց է գործել Խաթթիի թագավոր Սուպիլուլիումաս 1-ինը:

23. *I .Gelb*, Hurrians..., էջ 77.
24. ИДВ, 2, с.452.
25. *I .Gelb*, Hurrians..., էջ 77.

26. Նոր խեթական թագավորության առաջին դինաստիայի թագավորները ունեն խուրրիական անուններ և խեթական (գահակալական) անուններ: Այսպես. Մուվատալլիի խուրրիական անունը Teššub է, համաձայն իր անձնական կնիքի, Մուրսիլիսի խուրրիական անունը Urḫi Teššub է, Թութխալիա 3-րդինը՝ Šarruma, (И. Дьяконов, Арийцы..., с. 44), Մուրսիլիս 2-րդի եղբոր խուրրիական անունը Շարրի-Կուշուխ էր, իսկ երբ դարձել է Կարքեմիշի թագավոր, ստացել Պիասսիլի խեթական անունը և այլն:
27. AT,17,19 (26).

Այս գործողությունների արդյունքում, Խուրրի-Միտանին բաժանվում է երկու մասի. Խուրրին՝ երկրի կենտրոնական և հյուսիսային մասերը (Արածանիի ավազան) անցնել են Արտաղամային (Արտաղամա 2-րդ), իսկ Միտանին՝ երկրի հարավարևմտյան մասերը՝ Աղձնիքը, Հյուսիսային Միջագետքը (Տիգրիսի ավազան), տրվել են Տուշրատային (Տուշրատա 1-ին): Միտանիի այս բաժանումը արտաքին (նաև ներքին) թշնամի ուժերի հաղթանակն էր: Այս գործում փոքր չէր Սուպիլուլիումաս 1-ինի դերը: Նա շտապել է դաշն կնքել Խուրրիի թագավոր Արտաղամա 2-րդի հետ, անշուշտ իր թիկունքն ապահովելու նպատակով: Կարելի է մտածել, որ քաղաքական այդ քառսը Միտանիում ու արքունիքում ստեղծվել էր քաղաքական կողմնորոշման պատճառով, այն է. դաշնակից լինել Եգիպտոսի՞ն, թե՞ Խաթթիին: Հավանաբար Սուպիլուլիումասին հաջողվել է կողմնակիցներ ձեռք բերել խուրրիական արքունիքում: Քանի որ նա պայմանագիր է կնքել Արտաղամա 2-րդի հետ, ուրեմն Արտաղաման կողմնակից էր խեթերին: Տուշրատայի Ամենհոտեպ 3-րդին ուղարկված նամակներից հայտնի է դառնում, որ արքունիքում գործել է բարձրաստիճան դավաճան Ուտխի (նաև Tuḫi, Purhi, Parḫi) անունով[28], որը Տուշրատայի խնամակալն էր: Սակայն արքունիքում եղել են նաև գործիչներ, որոնք հասկացել են խեթերի մտադրությունը և դեմ են դուրս եկել Սուպիլուլիումասին: Նրանք համախմբվել են Շուտառնա 2-րդի որդու՝ Արտաշումարայի շուրջ և գահ բարձրացրել նրան: Սակայն, ինչպես վերևում նշվեց, նրա դեմ դավադրություն է կազմակերպվել, և նա սպանվել է: Նրա կողմնակիցները գահ են բարձրացրել եղբորը՝ անչափահաս Տուշրատային:

Նոր թագավորը ժողովրդի առջև իրեն արդարացնելու համար վրեժ է լուծել իր եղբոր սպանության համար, սպանելով դավադրության մասնակիցներին, այդ թվում դավադրության հիմնական կազմակերպիչ Ուտխիին, որն «այդքան մեծ չարիք էր պատճառել երկրին»[29], գրում է Տուշրատան Ամենհոտեպ 3-րդին ուղարկված իր նամակում: Պատժելով դավադիրներին, Տուշրատային հաջողվել է բարեկամական հարաբերությունները վերականգնել Եգիպտոսի հետ:

Միտանին շրջապատված էր թշնամի երկրներով: Միակ երկիրը, որը որոշ չափով բարեկամաբար էր տրամադրված Տուշրատայի հանդեպ, Եգիպտոսն էր և փարավոն Ամենհոտեպ 3-րդը, որը մոր կողմից ուներ խուրրիական ծագում (Արտաղամայի դուստրը Մուտեմույե անունով նրա մայրն էր):

Ինչպես տեսնում ենք, խեթերը կարողացան հասնել նրան, որ Միտանին (Խուրրի-Միտանի) բաժանվեց երկու մասի: Իսկ տրոհված, ոչ միասնական երկրի դեմ շատ հեշտ էր գործելը: Այս պայմաններում, ինչպես վերևում նշվեց,

28. *I. Gelb*, Hurrians..., էջ 77.
29. ИДВ, I, с. 289, *Ա. Խաչատրյան*, էջ 330 (ծանոթագրություն):

Սուպիլուլիումասը անմիջապես պայմանագիր է կնքել Խուրրիի թագավոր Արտաղամա 2-րդի հետ, չեզոքացրել նրան, ապահովել իր թիկունքը և հարձակվել Միտանիի վրա: Խեթերը անցել են Տավրոսի լեռնային ոլորանները և մտել Խուրրի երկիր: Մեծ զոհերի գնով Տուշրատային հաջողվել է խեթերին դուրս շպրտել երկրից: Այդ մասին նա գրել է Եգիպտոսի փարավոն, իր բարեկամ Ամենհոտեպ 3–րդին ուղարկված նամակում. «Տերը՝ Թեշշուբ աստվածը նրանց իմ ձեռքը տվեց և ես ջախջախեցի նրանց: Եվ այժմ խեթերից վերցված ավարից ուղարկում եմ քեզ մի մարտակառք, երկու ձի, մեկ պատանի և մեկ աղջիկ»[30]–գրում է Տուշրատան: Այժմ՝ ավելի քան երբևէ Տուշրատային անհրաժեշտ էր բարեկամներ ձեռք բերել, և նա շտապում է էլ ավելի ամրապնդել իր բարեկամությունը Եգիպտոսի հետ, միաժամանակ դրդելով փարավոնին հարձակվել Խաթթիի վրա, որը երկուսի համար էլ վտանգավոր թշնամի էր դարձել:

Սուպիլուլիումասը դասեր քաղելով դեպի Միտանի իր կատարած առաջին արշավանքի անհաջողությունից, նախապատրաստական մեծ աշխատանք է կատարում իր նոր արշավանքը հաջող կազմակերպելու համար: Անհրաժեշտ էր նախ թիկունքը ապահովել: Խեթերը պատերազմում էին հայկական մեկ այլ պետության՝ Հայասայի հետ: Սապիլուլիումասին հաջողվել է բանակցությունների մեջ մտնել և հաշտության պայմանագիր կնքել Հայասայի թագավոր Հուկաննայի հետ:

Հուկաննան երդվել է հավատարիմ լինել խեթական թագավորին: Նա պարտավորվել է օգնություն ցույց տալ խեթերին՝ նրանց ռազմական արշավանքների ժամանակ: Նա պարտավորվել է նաև ետ վերադարձնել Հայասա փախած խեթ փախստականներին և այլն: Սուպիլուլիումասին հաջողվել է փոխադարձ օգնության պայմանագիր կնքել Հայկական լեռնաշխարհի մեկ այլ թագավորության՝ Ալզիի (Ալշե, Աղձնիք) թագավոր Անտարատալի հետ ևս: Խուրրիի թագավոր Արտաղամա 2-րդի աջակցությունը նա արդեն ուներ:

Ապահովելով իր թիկունքը Սուպիլուլիումասը պատրաստվել է նոր վճռական հարձակման Միտանիի վրա: Չունենալով ոչ մի դաշնակից կամ բարեկամ երկիր՝ Տուշրատան շարունակել է հույսեր կապել Եգիպտոսի ու Ամենհոտեպ 3-րդի հետ: Ամառնայից հայտնաբերված, փարավոնին ուղարկված նրա նամակները վկայում են, որ նա ամեն գնով ցանկացել է շարունակել բարեկամությունը Ամենհոտեպ 3-րդի հետ: Նրանց անշուշտ հայտնի էր, որ խեթերը նոր արշավանք են նախապատրաստում: Անհրաժեշտ էր, որ Տուշրատան ևս նախապատրաստվեր: Իսկ դրա համար անհրաժեշտ էր շատ ոսկի, որն արդեն չէր կարող ստանալ ծայրամասային հպատակ թագավորներից, քանի որ նրանք կամ խեթերի ազդեցության տակ էին (Ալզի, Կիցվատնա) կամ այլևս

30. *Ա. Խաչատրյան*, էջ 328:

չէին ենթարկվում Միտանիին (Աշշուր, Բաբելոն): Եվ Տուշրատան իր նամակներում անընդհատ «շատ ոսկի» էր խնդրում իր միակ բարեկամից՝ Ամենհոտեպ 3-ից: Այն ստանալու ակնկալիքները ավելի են մեծանում, երբ արդեն ծեր Ամենհոտեպ 3-ը ցանկություն է հայտնել ամուսնանալ Տուշրատայի դուստր Տադու-Հեպայի հետ[31]: Այս ամուսնությունը կարելի է դիտել իբրև ռազմական դաշինքի մի դրսևորում, քանի որ Եգիպտոսը ռազմական օգնություն էր ցույց տալու Միտանիին Խաթթիին դիմագրավելու համար: Փարավոնը Միտանի է ուղարկել իր դեսպան Մանեին մի նամակով, որի մեջ գրված էր՝ «Իմ եղբայր, ինձ ուղարկիր քո դուստրը իբրև տիրուհի»: Տուշրատան սովորության համաձայն անմիջապես չի տվել իր համաձայնությունը: Սկսել են երկարատև բանակցություններ, որոնք շարունակվել են շատ ամիսներ: Տուշրատայի դեսպան Կելիան, որ մեծատոհմիկ պաշտոնյա էր, մի քանի անգամ ուղևորվել է Եգիպտոս: Տուշրատան փորձել է օգտագործել առիթը և շատ ոսկի ստանալ, «որովհետև իմ եղբոր երկրում ոսկին այնքան շատ է, որքան փոշին կամ ավազը»[32] –իր նամակներից մեկում գրել է Տուշրատան: Բանակցությունների թեմա է դարձել հարսնացուի համար տրվելիք օժիտը: Այդ խնդիրն է արծարծված նաև Տուշրատայի խուրրիերենով գրված միակ նամակում[33]: Ենթադրվում է, որ նամակը Եգիպտոս է ուղարկվել հարսնացուի՝ Տադու-Հեպայի հետ: Ներկայացնենք հատվածներ նամակից. «Նիմմուրիային, Եգիպտոսի թագավորին, իմ եղբորը, իմ փեսային, որին ես սիրում եմ, որը ինձ սիրում է, ասա: Այսպես է ասում Տուշրատան, Միտանի երկրի թագավորը, քո աները, որը քեզ սիրում է, քո եղբայրը: Ես լավ եմ, թող դու էլ լավ լինես: Իմ փեսան, իր կանայք, իր երեխաները, իր որդիները, իր ձիերը, իր մարտակառքերը, իր զորքը, իր երկիրն ու ունեցվածքը թող լավ լինեն ... Իմ եղբայրը կին էր ուզում, և ես տվել եմ, և նա ուղևորվել է իմ եղբոր մոտ ...»[34]:

Փարավոնի դեսպան Մանեի և Տուշրատայի դեսպան Կելիայի փոխադարձ բազմաթիվ այցելություններից հետո լուծվել են բոլոր հարցերը: Սակայն Տուշրատան չի ստացել իր ակնկալած մեծ քանակությամբ ոսկին: Այնուամենայնիվ Տուշրատան օրհնել է իր դստերը և ուղարկել Եգիպտոս, ուր նրան ընդունել են արքայավայել: Ե՛վ փարավոնը, և՛ եգիպտացիները ջերմությամբ ու մեծ հանդեսներով են ընդունել Միտանիի գեղեցիկ արքայադուստրը: Եգիպտացիները

31. AT. 22, 26: *Г. Вильхельм*, с. 65.

32. *Ա. Խաչատրյան*, 1933, էջ 335, *H. Winckler*, Letter, 17.

33. Շնորհիվ նամակի բովանդակության և ոճի, որոնք նման են Տուշրատայի մյուս նամակներին, հնարավոր է դարձել մասնակիորեն վերծանել և ընթերցել խուրրիերենով գրված այդ նամակը: Նամակի ընթերցումը օգնել է ուսումնասիրողներին նաև խուրրիական քերականության մշակման ժամանակ:

34. *Г. Вильхельм*, с. 65.

շատ են հավանել հարսնացուին և գնահատելով նրա գեղեցկությունը անվանել են Նեֆերտիտի, որը «գեղեցկուհին եկավ» (կամ «գեղեցկուհին կգա») իմաստն ունի: Սակայն շուտով հիվանդացել է ծերունի փարավոնը: Տուշրատային ուղարկված նամակում Ամենհոտեպ 3-ը հայտնելով իր հիվանդության մասին խնդրել է Եգիպտոս ուղարկել Նինվեի հովանավոր աստվածուհի Իշտարի (Շավուշկա)[35] արձանը, որը պետք է բուժեր իրեն: Տուշրատան ուղարկել է Իշտարի արձանը, որը սակայն չի փրկել փարավոնի կյանքը, և նա վախճանվել է: Նրանից հետո գահը անցել է որդուն՝ Ամենհոտեպ 4-ին (ավելի ուշ Էխնաթոն), որը նույնպես մոր կողմից խուրրի էր (Թիայի որդին էր): Նոր փարավոնը հոր մահվան մասին լուրը անմիջապես հայտնել է Տուշրատային և խնդրել հոր հետ սկսած բարեկամությունը[36] շարունակել իր հետ, քանի որ «ինքը որոշել է Տուշրատայի դստերը՝ Տադու–Հեպային (Նեֆերտիտի) ընդունել իր կանանոցը իբրև իրեն կին, որպես իշխանուհի հարավի և հյուսիսի, տիրուհի երկու երկրների»[37]: Սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ նոր փարավոնի՝ Ամենհոտեպ 4-ի և Տուշրատայի միջև սկսված բարեկամությունը երկար չի շարունակվել: Քաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխման պատճառով Եգիպտոսը երերուն հենարան դարձավ Միտանիի համար:

35. Ըստ Ասորեստանի թագավոր Սարգոն 2-ի արձանագրության Իշտարի հնագույն անունը Շավուշկա էր (խուրրիական աստվածուհի, ՀԱ, 1913, IV, էջ 209):

36. Իբրև բարեկամության նշան Ամենհոտեպ 3-ը Տուշրատային էր ուղարկել (թագուհի Թիայի խորհրդով) իրենց մոտ պահվող խուրրիական մի դրոշ, որը հավանաբար իբրև ավար տարվել էր Եգիպտոս՝ փարավոնների դեպի Սիրիա-Պաղեստին կատարած արշավանքներից մեկի ժամանակ (Ա. Խաչատրյան, 1933, էջ 343, ծանոթագրություն):

37. «Որպես իշխանուհի հյուսիսի և հարավի, տիրուհի երկու երկրների» արտահայտությունների հիման վրա Ֆ. Պետրին ենթադրում է, որ Միտանիի թագավորները կարող էին ունենալ եգիպտացի կանայք, որոնցից ծնված երեխաները (աղջիկներ) լիովին կարող էին դառնալ Եգիպտոսի թագուհիներ (F. Petrie, A history of Egypt..., p. 182, Ա Խաչատրյան, 1933, էջ 352):

ՄԻՏԱՆԻԻ ԹՈՒԼԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Խաթթիի թագավոր Սուպիլուլիումասի դավաղրությունները շարունակվում էին: Ապահովելով իր թիկունքը և լավ նախապատրաստվելով նա նորից հարձակվել է Միտանիի վրա: Նախքան հարձակվելը Սուպիլուլիումասը Տուշրատայից պահանջել է վերադարձնել Միտանի փախած փախստականներին (հավանաբար խուրրիներ), որոնք բռնությամբ վերաբնակեցվել էին Խաթթիում: Մերժում ստանալով Սուպիլուլիումասը անցել է հարձակման: Հյուսիսից Եփրատի հոսանքով խեթերը շարժվել են դեպի Միտանիի կենտրոնական մասեր՝ Կարքեմիշ և Վաշշուգանե մայրաքաղաք: Խեթերի հարձակման թափը շատ մեծ էր, և Տուշրատան խուսափելով մարտի մեջ մտնելուց, փախել է: Ավելի ուշ նա սպանվել է անունն անհայտ իր որդու և նրա ծառաների կողմից[1]: Խեթերը մտել են Վաշշուգանե և Միտանիի թագավոր հռչակել Արտադամա 2-րդին: Հաղթողները դաժան դատաստան են տեսել Տուշրատայի կողմնակիցների հետ: 1200 հոգու (հիմնականում ազնվականներ՝ մարդանիներ) ցից են հանել: Այդ դաժան կոտորածը իրականացրել են ասորեստանցիները, որոնց օգնությանն էին դիմել (նաև ալշեցիների) խեթերն ու Արտադամա 2-րդի որդի Շուտարնան, որին հայրը Միտանիում «փոխարքա» էր նշանակել[2]: Հայտնաբերված տեքստի համաձայն կոտորածի մեղավորը և կազմակերպիչը Շուտարնան է, սակայն պետք է նկատել, որ նա գործիք էր դաշնակիցների ձեռքին և այդ կոտորածի համար առաջին հերթին մեղավոր են խեթերը: Կողոպտվել և ավերվել է Վաշշուգանիի արքայական պալատը: Սառասադատարի կողմից Աշշուրից ավար բերված ոսկեպատ դուռը, իբրև փոխհատուցում, Շուտարնան հանձնել է ասորեստանցիներին[3]: Տուշրատայի որդին՝ Շատտիվազան խույս տալով Շուտարնայից իր մարդանիներով փախել է Բաբելոն: Սակայն Բաբելոնի թագավոր Ակիտ-Թեշշուբը խլել է նրա ունեցած 200 մարտակառքը և փորձել սպանել

1. KBO, I, 1, VO, 45, 48 (տեքստը Ա. Խաչատրյանի թարգմանությամբ), *Ա. Խաչատրյան*, 1933, էջ 477:
2. *Ա. Խաչատրյան*, 1933, էջ 388:
3. KBO, Բ, 5, 10, *Ա. Խաչատրյան*, 1933, էջ 485:

նրան: Շատտիվազային այս անգամ ևս հաջողվել է խույս տալ սպանվելուց: Նա փախել է Խաթթի և ապաստան գտնել Սուպիլուլիումասի մոտ[4]:

Այդ արշավանքի ժամանակ Սուպիլուլիումասը գրավել է Միտանիի այն տարածքները, որոնք ընկած էին Եփրատի ճյուղավորումների և Միջերկրական ծովի միջև: Խեթերը զավթել են Լիբանանը, Սիրիան, որի իշխանները (առաջնորդներ) զրկված լինելով Միտանիի օգնությունից, ենթարկվել են խեթերին: Խեթերը հասան Աբինա (Դամասկոսի մոտ) և Ալալախ (Ատչանա), սահմանակից դառնալով Եգիպտոսին[5]: Այս փաստը դժգոհություն է առաջացրել Եգիպտոսում, որն այդ ժամանակ զբաղված էր ներքին պետական վերակառուցումներով: Խեթերը գրավել են նաև Կարքեմիշը, որտեղ Սուպիլուլիումասը թագավոր է նշանակել իր որդի Պիյասսիլիսին: Այդ նշանակումից հետո նա ստացել է Շարի-Կուշուխ խուրրիական գահակալական անունը[6]: Նրա հետնորդները ևս հետագայում կրել են խուրրիական անուններ: Այս փաստը վկայում է, որ Կարքեմիշը շարունակել է մնալ հիմնականում խուրրիաբնակ և շարունակվել են խուրրիական ավանդույթները: Այս պետությունը դառնում է խեթերի գլխավոր հենակետը ռազմավարական և տնտեսական իմաստով: Կարքեմիշի արքաներն էին վերահսկում Խաթթիից կախյալ Ուգարիտի և Ամուրրուի թագավորությունները և անմիջական ռազմական աջակցություն ցուցաբերում Միտանիին՝ Ասորեստանի հնարավոր ոտնձգությունների ժամանակ[7]: Սուպիլուլիումասի մյուս որդին՝ Տելեպինուսը հռչակվել է Կումմանիի քուրմ, իսկ այնուհետև՝ Խալապի թագավոր:

Այս ընթացքում Խաթթիի թագավորը (տեքստում անունը չի պահպանվել, վնասված է, ենթադրվում է Սուպիլուլիումասը, Թուդխալիաս 2-րդը կամ Թուդխալիաս 3-րդը) պայմանագիր է կնքել մեկուսացման մեջ հայտնված մեկ այլ թագավորության՝ խուրրիաբնակ Կիցվատնայի թագավոր Սունասսուրասի հետ, որը Միտանիի դաշնակիցն էր: Կիցվատնան (Կիլիկիա) պահպանել է կիսանկախ վիճակ և ենթարկվել է Խաթթիին: Նա պարտավորվել է պատերազմի ժամանակ 100 մարտակառք և 1000 հետևակ զինվոր տրամադրել խեթերին: Սապիլուլիումասը պայմանագրի մասին իր արձանագրության մեջ գրել է. «Խուրրիները Սունասսուրասին ստրուկ էին անվանում, իսկ իմ Արևը (Նոր խեթական թագավորության արքաների տիտղոսը) նրան դարձրեց օրինական թագավոր»[8]: Նկատենք, որ այստեղ չափազանցություն կա, քանի որ Կիցվատնա-Կիլիկիան հիմնականում խուրրիաբնակ է եղել և հնագույն ժամա-

4. ИДВ, II, с 147, KBO, Բ, 1, 5, 10.
5. *О. Герни*, с . 29.
6. *A. Kammenhuber*, 1976, էջ 182, *Г. Вильхельм*, с. 70.
7. *Ա. Քույան*, 1999, էջ 142:
8. KBO, 15,38: *Ա. Խաչատրյան*, 1933, էջ 498:

նակներից մտել է խուրրիական մշակութային արեալի սահմանների մեջ: Իսկ Սունասսուրասը կարող էր լինել տեղական առաջնորդ (արքայիկ), ինչպես Միտանիի մյուս շրջանների առաջնորդ-արքայիկներն էին: Սուպիլուլիումասը ցանկանալով արդարացնել իր նկրտումները Կիցվատնայի հանդեպ, հաղորդել է, որ իր պապի ժամանակ Կիցվատնան խեթական թագավորության մաս է եղել, իսկ հետո՝ Սառուսաղատտարի ժամանակ անցել է խուրրիներին: Կիցվատնան Խաթթիին է կցվել Թութխալիասի ժամանակ, երբ նվաճվել է նաև Հալեպը: Արնուվանդաս 1-ինի ժամանակ Կիցվատնան հիշատակվում է որպես Խաթթիի մաս, բայց որպես հատուկ տարածքային միավոր:

Քաղաքական խառնաշփոթը և ինտրիգները շարունակվել են Միտանիում: Այս իրավիճակը շարունակելու և էլ ավելի խորացնելու համար Սուպիլուլիումասը նոր խաղաքարտ է ստացել: Նրա մոտ է հայտնվել Տուշրատայի որդի Շատտիվազան (Շատիուազա, նախկինում անունը կարդացվել է Կուրտիվազա, Մատիվվազա կամ Մատիուազա): Շատտիվազան (Kili–Tešub), որն ինչպես արդեն նշվել է, փախել էր Շուտարնայի և Բաբելոնի թագավորի հետապնդումներից, խնդրել է, որ Սուպիլուլիումասը իրեն ընդունի որպես Արտաղամայի հետնորդ: Սուպիլուլիումասը հասկացել է, որ այս քայլը իրեն նոր հնարավորություն կտա էլ ավելի խորացնելու քաղաքական քառսը Միտանիում: Նա ընդունել է Շատտիվազային[9] և ամուսնացրել իր աղջկա հետ: Վերևում նշվել է, որ Միտանիից խլված տարածքներում Սուպիլուլիումասը իր երկու որդիների համար ստեղծել էր Խալապի (Հալեպ) և Կարքեմիշի թագավորությունները: Սուպիլուլիումասը որոշել է ստեղծել նոր Միտանի պետություն, որը կլիներ միջանկյալ (բուֆերային) պետություն հզորացող Ասորեստանի և Խաթթիի միջև: Այդ պետությունը ստեղծելու համար շատ հարմար էր օգտագործել Տուշրատայի որդուն՝ Շատտիվազային: Անհրաժեշտ էր որդուն վերադարձնել հոր գահը: Դրա համար Սուպիլուլիումասը որոշել է օգտագործել իր որդուն՝ Կարքեմիշի թագավոր Պիյասսիլիսին: Սուպիլուլիումասը անձամբ դա չէր կարող անել, քանի որ ինքն էր Միտանիի գահին նստեցրել Արտաղամա 2-րդին: Պիյասսիլիսին (գահակալական անունը՝ Շարրի-Կուշուխ) հանձնարարվում է Շատտիվազայի հետ վերանվաճել Միտանիի գահը[10]:

Միտանին նորից նվաճելը և մայրաքաղաք Վաշշուգանե մտնելը դժվար չէր, քանի որ ժողովուրդը, նաև ազնվականությունը դժգոհ էր Արտաղամայի որդի Շուտարնայից ու նրա դաժանություններից: Եվ Տուշրատայի որդի Շատտիվազայի առջև բացվել են մայրաքաղաքի դարպասները: Վերականգնվել է Միտանի պետությունը, բայց դա արդեն նախկին հզոր պետությունը չէր:

9. KBO, I,1,VS, 55: *Ա. Խաչատրյան*, 1933, էջ 478, *Ա.Քոսյան*, 2004, էջ 123:
10. KBO, P, 35, 40: *Ա. Խաչատրյան*, 1933, էջ 485-486:

Այս նոր պետությունը Խաթթիին ենթակա, վասալ պետություն էր: Միտանիի թուլացմանն ու անկմանը մասնակցել է նաև հզորացող Աշշուրը (ապագա Ասորեստանը): Աշշուրի տիրակալ Աշշուրուբալիտ 1-ինը (1365-1330) խեթերի հետ գործուն մասնակցություն է ունեցել Միտանիի հզորությունը կործանելուն: Նա կապ է պահպանել Եգիպտոսի փարավոնի հետ, «եղբայր» անվանել նրան և նվերներ ուղարկել: Աշշուրուբալիտը ձգտում էր «Խանիգալբատի թագավորի»՝ իր նախկին տիրակալ Տուշրատայի հետ հավասար իրավունքներ ստանալ: Ամենհոտեպ 4-րդը համաձայնվել է ճանաչել Ասորեստանի անկախությունը: Տուշրատան բողոքել է դրա դեմ, բայց արդեն ուշ էր: Միտանիի անկումը ակնհայտ էր: Եվ Աշշուրուբալիտ 1-ինը Սուպիլուլիումաս 1-ինի հետ մասնակցել է այն բարդ ռազմաքաղաքական խաղին, որի արդյունքում պարտվել է Միտանին: Աշշուրուբալիտը դեմ է դուրս եկել խեթերի կողմից նշանակված Արտաղամա 2–րդին, ապա նաև՝ խեթերի օգնությամբ թագավոր դարձած Տուշրատայի որդուն՝ Շատտիվազային:

Բաբելոնի թագավորը ևս ձգտել է հզորանալ՝ ի հաշիվ Միտանիի: Նա պահանջներ ուներ Միտանիի արևելյան տիրույթների՝ Աշշուրի և Արրապխայի հանդեպ: Բաբելացիները նույնիսկ ներխուժել են Արրապխա, գրավել ու ավերել մինչև Ստորին Զաբ ընկած տարածքները: Տիգրիսի հոսանքի վերին շրջանում, Միտանիի հյուսիսում գործել են ասորեստանցիները, որոնք Սուպիլուլիումասի միջնորդությամբ պայմանագիր են կնքել Միտանիից հյուսիս գտնվող խուրրիական Ալշե (նաև Ալզի) երկրի (Աղձնիքի) հետ ընդդեմ Տուշրատայի, պաշտպանելով Արտաղամային: Այս համաձայնագիրը ճակատագրական է եղել Միտանիի համար: Ընդդեմ Միտանիի միավորվել էին Խաթթին, Ասորեստանը, Բաբելոնը և Ալշեն: Գահակալական պայքարի մեջ ներքաշված Միտանին անկարող եղավ պահպանել իր տարածքների ամբողջականությունը: Արդյունքում Միտանին պարտություն է կրել և բաժանվել Խաթթիի, Ասորեստանի և մեկ այլ խուրրիական թագավորության՝ Ալզիի (Աղձնիքի) միջև: Պահպանվել է Խաթթիին ենթակա, փոքր Միտանի պետություն Վաշշուգանե մայրաքաղաքով: Այս պայմաններում անհայտ է մնում Շատտիվազայի հետագա ճակատագիրը: Հավանաբար նրան հաջողվել է հասնել ներքին համախմբման և ունենալ ինչոր հաջողություններ:

Ասորեստանի հաջորդ թագավոր Ադադնիրարի 1-ինը (1296-1264) էլ ավելի մեծ հաջողություններ է ունեցել: Նա իր երկրին է միացրել Միտանիի այլ տարածքներ ևս: Հզորացող Ասորեստանի նպատակն էր նվաճել Հյուսիսային Միջագետքը մինչև Եփրատ գետ: Արշավանքներից մեկի ժամանակ Ադադնիրարի 1-ինը անցել է Միտանիի ամբողջ տարածքով և գերեվարել թագավորին՝ Շատուարա 1-ինին: Ադադնիրարիի հայտնաբերված տեքստը վկայում է, «Երբ Շատուարան, Խանիգալբատի թագավորը ինձ թշնամի դարձավ և թշնամական

գործողություններ ձեռնարկեց իմ դեմ, ես վերցրի նրան և Աշշուրի, իմ տիրոջ հրամանով, իմ Աշշուր քաղաքը բերեցի: Ես նրանից երդում ստացա և հետ վերադարձրի իր երկիրը: Եվ ամեն տարի, քանի դեռ նա ողջ էր, ես նվերներ էի ստանում իմ Աշշուր քաղաքում»[11]: Այս տեքստից երևում է, որ Շատուարա 1-ինը ապստամբել է և հավանաբար փորձել է խեթերի օգնությամբ վերջ տալ Ասորեստանի գերիշխանությանը: Սակայն փորձը ձախողվել է, հավանաբար պահի ոչ ճիշտ ընտրության պատճառով (այդ ժամանակ սրվել էին Խաթթիի հարաբերությունները Եգիպտոսի հետ, նաև 1274թ. Քադեշի ճակատամարտն էր եղել): Ասորեստանը նորից գրավել ու հարկատու է դարձրել Միտանին: Իսկ Շատուարային նորից նստեցրել է գահին, դարձնելով իր վասալը:

Շատուարա 1-ինի մահից հետո ապստամբել է նրա որդին՝ Վասաշատան, որը ըստ Ադադնիրարիի տեքստի «դարձյալ թշնամաբար էր տրամադրված Ասորեստանի հանդեպ»: Վասաշատան ևս օգնության համար դիմել է խեթերին: Խաթթիի թագավորը վերցրել է դեսպանների միջոցով ուղարկված ընծաները, սակայն հրաժարվել է օգնել: Ադադնիրարին իր արձանագրության մեջ հայտնում է, որ իր աստվածների օգնությամբ նորից նվաճել է Միտանին, ներառյալ Վաշշուգանեն և Կարքեմիշը: Վասաշատան սակայն փրկվել է գերի ընկնելուց և նույնիսկ ինչ-որ դիմադրություն է կազմակերպել, որը շարունակել է նրա հաջորդը՝ Շատուարա 2-րդը (13-րդ դարի 1-ին կես):

Ադադնիրարի 1-ինի որդի Սալմանասար 1-ինը (1263-1234) ստիպված է եղել նոր արշավանք կազմակերպել դեպի Միտանի: Սալմանասար 1-ինը մեծ վտանգ է ներկայացրել նաև խեթերի համար: Չբավարարվելով Կարքեմիշով, ասորեստանցիները խորացել են դեպի Հայկական լեռնաշխարհի խորքերը, անմիջական վտանգ ստեղծելով խեթական տիրույթների համար: Այդ պատճառով Խաթթուսիլիս 3-րդը փորձել է օգնել Միտանիի թագավոր Շատուարա 2-րդին: Այդ ժամանակ խեթական արքունիքում գործում էին ազգությամբ խուրրի ազդեցիկ գործիչներ, և խուրրիների ազդեցությունը խեթերի վրա շարունակվում էր: Խաթթուսիլիս 3-րդի կինը խուրրիական ծագումով Պուդու Հեպան էր, որը ազդեցիկ թագուհի էր (tawannas), ծնունդով խուրրիական Կիցվատնայից (Կիլիկիա): Նա Կիցվատնայի գլխավոր քրմի աղջիկն էր, գործել է իր քրմերի ու քրմուհիների հետ և մեծ ազդեցություն է ունեցել խեթական արքունիքում: Պուդու Հեպան կիրթ, զարգացած կին է եղել, այդպիսին է եղել նաև նրա շրջապատը: Նրա ազդեցությունը այնքան մեծ է եղել արքունիքում և թագավորը այնքան է վստահել նրան, որ Խաթթուսիլիսի անունից կազմված պետական փաստաթղթերի տակ հաճախ դրվել է Պուդու Հեպայի կնիքը[12]: Խեթերի և օգնության

11. *Г. Вильхельм*, с. 73.
12. ИДВ, II, с. 151.

կանչված սեմական ախլամու ցեղի (քոչվոր ցեղեր, որոնք ավելի ուշ կոչվեցին արամեացիներ) օգնությամբ Շատուարա 2-րդը ասորեստանցիներին դշել է Միջագետքի անջրդի տափաստան: Սակայն Սալմանասար 1-ինին հաջողվել է դուրս գալ շրջափակումից: Իր արձանագրության մեջ Սալմանասար 1-ինը գրում է, որ դժվարանց ճանապարհներով և անմատչելի անցումներով հարձակվել է Խանիգալբատ (Միտանի) երկրի վրա. «Խանիգալբատի թագավորը և նրա հետ Խաթթիի ու Ախլամուի բանակը շրջապատեց անցումները և գրավեց իմ ջրարբին: Իմ բանակի ծարավ ու հոգնած լինելու ժամանակ, իրենց բանակի բազմությանը, ահավոր կերպով հարձակվեցին, իսկ ես հարվածեցի և նրանց պարտության մատնեցի»[13]:

Նորից Սալմանասար 1-ինը գրավել է Տայդե, Իրիդե, Սուդա, Խառան քաղաքներից մինչև Կարքեմիշ ընկած տարածքները, այն է. Տուր Աբդինը (Քաշիարի լեռներ) և նրանից արևմուտք ու հյուսիս-արևելք ընկած տարածքները: Իր արձանագրության մեջ Սալմանասար 1-ինը պարծենկոտությամբ գրում է, որ «կուրացրել է 14000 գերու, ավերակների է վերածել բազմաթիվ բնակավայրեր»[14]: Շատուարա 2-րդը փախել է դեպի Խաթթիի սահման: Միտանիի թագավորի վերջին ճիգը, պահպանել պետությունը, ավարտվել է անհաջողությամբ: Միտանին պարտվել է և որպես ամբողջական պետություն դադարել գոյություն ունենալուց: Ի դեպ ասորեստանցիների այս արշավանքների ժամանակ Վաշշուգանեն, որ մի քանի անգամ գրավվել, ավերվել ու թալանվել էր, հանդես է գալիս Ուշշուկանի անունով: Այս ավերածություններից հետո մայրաքաղաքը տեղափոխվել է դրանից ոչ հեռու գտնվող Տայդե քաղաքը:

Միտանիի թագավոր Շատուարա 2-րդի պարտությունից հետո և Սալմանասար 1-ից կրած պարտությունից հետո խեթերը վճռական քայլի դիմեցին: Ասորեստանի հզորացման դեմն առնելու համար Խաթթուսիլիս 3-րդը մոտավորապես 1258թ. հաշտության և բարեկամության պայմանագիր է կնքել եգիպտական փարավոն Ռամզես 2-րդի հետ: Այս պայմանագիրը ևս ամրապնդվել է ամուսնությամբ: Խեթերի արքայադուստրը կնության է տրվել փարավոնին: Հաստատվել է խաղաղություն: Բայց Խաթթին ևս գնում էր դեպի անկում: Իրավիճակը էլ ավելի է ծանրացել մ.թ.ա. 12-րդ դարի սկզբերին (Ժողովրդական հուզումներ, համաճարակներ, «ծովի ժողովուրդների գալը») և կործանվել է նաև Խաթթին: Մայրաքաղաք Խաթթուսասը հրդեհվել է: Հետագայում խեթական ավանդույթները պահպանվել են լուվիացիների մեջ:

Չնայած Սալմանասար 1-ինից կրած պարտությունից հետո Միտանին որպես ամբողջական պետություն դադարել է գոյություն ունենալուց, սակայն Ասորեստանի թագավորները իրենց արձանագրություններում շարունակել են

13. ՀԺՊՔ, էջ 14-15:
14. ИДВ, II, с. 101. ՀԺՊՔ, էջ 15:

խոսել խուրրիների և ստեղծված խուրրիական թագավորությունների անհնազանդության ու ապստամբությունների մասին, որոնց ժամանակ հաճախ միավորվել են խուրրիները:

Սալմանասար 1-ինի հաջորդ Թուկուլթի-Նինուրթա 1-ինը հաղորդում է, որ սուբարիները (խուրրիները) ապստամբել են իր հոր դեմ և հարկ չեն վճարել: Իսկ սա վկայում է, որ Սալմանասարի հաջողությունները Խանիգալբատ-Միտանիում կայուն չեն եղել: Եվ Թուկուլթի-Նինուրթան նորից արշավանք է ձեռնարկել դեպի Հայկական լեռնաշխարհի հարավային մասի երկրներ՝ Բաբխի «Լեռնային» (երկիր), Կաղմուխի (Տիգրիսի վերին հոսանքների շրջան), Ալզի (խեթական տեքստերում Ալշե, ուրարտականում՝ Ալզի(նի), Աղձնիք), Պուրուլումզի և այլ երկրներ: Իր արձանագրության մեջ Ասորեստանի թագավորը գրում է, որ այրել է գրավված բնակավայրերը և նորից հարկատու դարձրել դրանք[15]: Ի դեպ Ալզիի թագավորի անունը հայտնի է՝ Էխլի- Թեշշուպ[16], որը խուրրիական անուն է: Ինչպես երևում է Թուկուլթի-Նինուրթայի արձանագրությունից, նորից կազմվել էր խուրրիական երկրների միություն, որը սակայն պարտություն է կրել: Մ.թ.ա. 13-րդ դարի վերջին կամ 12-րդ դարի սկզբին հիշատակվում է Խանիգալբատի ինչ-որ թագավոր Աթալ-Թեշշուպ անունով[17]:

Խուրրիական անուններ են կրում Թիգլաթպալասար 1-ինի (1115-1077) արձանագրության մեջ վկայված հյուսիսային և հյուսիսարևելյան երկրների թագավորները, որոնք պայքարում էին Ասորեստանի դեմ: Թիգլաթպալասար 1-ինի արձանագրությունից հայտնի է դառնում, որ նրա դեմ ապստամբել է Կաղմուխի երկիրը (Կուղմուխի, Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքներից հարավ): Նրանց պատժելու համար Թիգլաթպալասար 1-ինը արշավանք է կազմակերպել դեպի հյուսիս և հյուսիս-արևելք: Կաղմուխիին օգնության են եկել բաբխիները իրենց թագավոր Քալի-Թեշշուբի որդու՝ Քիլի-Թեշշուբի գլխավորությամբ, որին անվանում էին նաև Իրրուպի[18]: Թիգլաթպալասարը հաղորդում է, որ հաղթել է Քիլի-Թեշշուբին, այնուհետև հարձակվել է նրանց Ուրբախինաշ (Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքների շրջան) ամուր քաղաքի վրա, որի թագավորը Շաղի-Թեշշուպն էր՝ Խաթթուխիի որդին[19]:

Ինչպես տեսնում ենք, ասորեստանյան տեքստերը վկայում են, որ 2-րդ հազարամյակի վերջերից–1-ին հազարամյակի սկիզբ ընկած ժամանակահատվածում Հայկական լեռնաշխարհում գոյություն են ունեցել խուրրիական փոքր

15. АВИИУ, 1,3.

16. *Г. Вильхельм*, с. 75.

17. *Г. Вильхельм*, с. 75.

18. Ենթադրվում է, որ irrupi-ն կարող էր տեղացի թագավորի տիտղոս լինել, և եթե ճիշտ է ընթերցվում, խուրրիերեն ewr-iffa «տեր իմ» ընթերցումն է, Г. Вильхельм, с. 76: I.Gelb, Hurrians, էջ 82:

19. АВИИУ,10, II, 25, II, 36: ՀԺՊՔ, էջ 17-18:

պետություններ, որոնք անհրաժեշտության դեպքում, արտաքին վտանգի ժամանակ (այս դեպքում Ասորեստանի դեմ) միավորվել են: Միտանիի անկումից հետո խեթական և աքադալեզու գրավոր աղբյուրներում աստիճանաբար վերացել է Միտանի անվան օգտագործումը: Սակայն շարունակվել են օգտագործվել Խուրրի երկրներ և Խանիգալբատ անունները: Ի դեպ Խուրրի և Խանիգալբատ անունները օգտագործվել են Միտանի պետության գոյության ընթացքում: Հարավից, սեմականացած Ստորին Միջագետքից եկող նորանոր սեմական ցեղերի (ամորեացի, սութի, ախլամու, յաուրի) և հզորացող Ասորեստանի ճնշման տակ Հյուսիսային Միջագետքի բնիկները՝ հայկական ցեղերը (խուրրիներ) աստիճանաբար մղվում են դեպի լեռներ և ավելի հյուսիս՝ երկրի խորքը: Չհեռացող բնակիչները սեմական շրջապատում աստիճանաբար սեմականանում են[20]:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերին խուրրիների թիվը դեռ այնքան զգալի էր, որ Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար 1-ինը Հյուսիսային Միջագետքը՝ Միտանիի տարածքը և Վերին Եփրատի հովիտն ու Արածանին անվանել է Խանիգալբատ[21]:

Աղաղնիրարի 2-րդը (911-891) ևս Հյուսիսային Միջագետքը անվանել է հին, պատվավոր Խանիգալբատ անունով և այլն:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերին – 1-ին հազարամյակի սկզբներին Վան–Ուրմիա լճերի միջև ընկած տարածքներում, մինչև Զագրոսի լեռներ, որոնք համարվել են խուրրիական միտանի ցեղի նախնական բնակության վայրերը, ստեղծվել է Մանա պետությունը Արդինի (Մուսասիր) կենտրոնով: Այս պետության ստեղծումը մատիեն-միտանի ցեղի նոր հաջողությունն էր: Մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերի հույն հեղինակները վկայում են Հայկական

20. Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերին կուտիները (Կորդվաց լեռների բնակիչներ) հայտնվել են միջին Եփրատի ու նրա վտակ Խաբուրի շրջանում, որտեղ աստիճանաբար սկսել է գերակշռել սեմական տարրը: Ապրելով սեմական ցեղերի հարևանությամբ, ի վերջո կուտիները ձուլվել են նրանց: Սակայն երկար ժամանակ կուտիները պահպանել են հիշողությունը իրենց հատուկ ծագման մասին (ИДВ, I , с. 255) և որպես հատուկ ծագման ճշան տղամարդիկ ապրել են գյուղերը, քրմերը հագել են դեղին հագուստ (ծիրանի) և այլն: Մ.թ.ա. 9-8-րդ դարերում Հարավային Սիրիան Դամասկոս կենտրոնով սեմականացել էր (արամեացիներ) արդեն, իսկ Հյուսիսային Սիրիան դեռևս դիմադրում էր սեմական ցեղերի ճնշմանը և պահպանել էր հիշողությունը իր ոչ սեմական ծագման մասին: Այդ է վկայում այն փաստը, որ երբ մ.թ.ա. 9-րդ դարում կազմավորված հայկական նոր պետության՝ Արարատ-Ուրարտուի արքաներ Մենուա 1-ինը (810-786), Արգիշտի 1-ինը (786-764) և Սարդուրի 2-րդը (786-735) հասնում են Եփրատի ափեր, Մելիդը (Մալաթիա), Կարքեմիշը, Կումմուխը, (Կոմագեն) և այլ երկրամասեր ոչ միայն չեն դիմադրել, այլև անցել են նրանց կողմը «հավանաբար էթնիկ կամ մշակութային ինչ-որ հարազատություն զգալով ուրարտացիների հանդեպ» (О. Герни, с. 42): Նույնը կատարվել է նաև Տիգրան 2-րդ Մեծի ժամանակ (95-55), երբ Սիրիա-Պաղեստինի բնակչությունը, առանց դիմադրության, կամովի ընդունել է Տիգրան Մեծի իշխանությունը:

21. АВИИУ, V, 33.

լեռնաշխարհում և շրջակա տարածքներում ապրող մատիենների մասին: Ըստ Հերոդոտոսի մատիենները շարունակում էին ապրել Հալիս գետի վերին հոսանքների շրջանում, Ուրմիա լճից արևմուտք ընկած տարածքներում, նաև Տիգրիսի վերին հոսանքների շրջանում և Զագրոսից արևմուտք ընկած տարածքներում: Իսկ «Արաքս գետը բխում է մատիենների երկրից»[22]–գրում է Հերոդոտոսը: Ստրաբոնը Ուրմիա լիճը կոչում է Մանտիենե[23], անշուշտ կապելով այն մատիեն-միտանի անվան հետ: Ի դեպ Հերոդոտոսը բոլոր խուրրիներին անվանում է մատիեներ[24]: Այս փաստը դարձյալ վկայում է, որ մատիեն-միտանիները խուրրիական ցեղեր էին: Ի դեպ հենց Հերոդոտոսի և Ստրաբոնի աշխատություններում վկայված վերոհիշյալ տարածքներում են տեղագրական և անվանաբանական տվյալներով վկայված խուրրիները (նաև հնագույն սեպագիր աղբյուրներում):

Մ.թ.ա. 13-րդ դարի կեսերին ավարտվել է Հայկական լեռնաշխարհում ստեղծված հայոց հնագույն պետության՝ Միտանիի պատմությունը: Պետության պատմությունը ավարտվել է, բայց ժողովուրդը շարունակում է ապրել: Միտանիի տարածքի զանազան մասերում ստեղծվել են խուրրիական (հայկական) փոքր թագավորություններ. Շուպրիան (Տիգրիսի վերին հոսանքների շրջան), Իսուվան (Ծոփք, Արածանի գետի միջին ու ստորին հովիտներ և ավելի հյուսիս), Բաբխին (Հայկական Տավրոսի լեռնային շրջաններ) և այլն: Միտանիից հետո, մ.թ.ա. 12-րդ դարի սկզբներին պատմության թատերաբեմից նախ անհետացել է Խաթթին, ապա նաև՝ փարավոնների Եգիպտոսը (մ.թ.ա. 1-ին հազարամյակի վերջ): Միջագետքում և Եգիպտոսում ամրապնդվել և պետական կազմավորումներ են ստեղծել սեմական ցեղերը (Ասորեստան, Բաբելոն):

Եվ եթե Խաթթին ու Եգիպտոսը անհետացան, թողնելով միայն անուն ու մշակութային արժեքներ, ապա Միտանին նոր շարունակություն ունեցավ՝ ի դեմս մ.թ.ա. 9-րդ դարում կազմավորված հայոց նոր՝ Արարատ–Ուրարտու պետության:

22. *Հերոդոտոս*, 1986, 1, 72, 189, 202:3, 94:5, 49, 52:
23. *Ստրաբոն*, 9,/8/:
24. *Հերոդոտոս*, 1, /72, 202/:5,/49/:

ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՏԱՆԻՈՒՄ

ԱՐՔՈՒՆԻՔԸ, ԲԱՆԱԿԸ

Խուրրիական հասարակարգի (նաև խեթական) և այնտեղ գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին տեղեկություններ կան Արրապխեից (Էլամերեն Արրապխա, այժմ Քերքուկ), Այալախից և Սիրիայից հայտնաբերված գրավոր աղբյուրներում: Արրապխա թագավորությունը Միտանիի ծայրամասային թագավորություններից մեկն էր: Արրապխան գտնվում էր Էլամից ու Բաբելոնից Վերին Միջագետք և Իրանական լեռնաշխարհ տանող առևտրական ճանապարհների վրա: Արրապխան մասնակցում էր առևտրին, արտահանելով ոչխարի բուրդ: Արրապխա պետության տարածքում կատարված պեղումները հարուստ հնագիտական նյութ են տվել: Հայտնաբերվել են այս պետության երեք քաղաքների արխիվները: Պետության կենտրոնը Արրապխան էր «Աստվածների քաղաքը»: Արրապխա պետության վարչաքաղաքական կենտրոնը Նուզին էր (այժմ՝ Յորղան–թեփե, Քերքուկից 15 կմ հեռու):

Պեղվել է նաև Քերքուկից 45 կմ հարավ-արևմուտք գտնվող մի բնակավայր՝ Գասուր քաղաքը (այժմ Թելլ-ալ-ֆախխարա): Պեղումների ժամանակ հայտնաբերվել են տեքստեր, որոնց նշանակությունը շատ մեծ է, եթե ի նկատի ունենանք, որ խուրրիերեն քիչ գրավոր աղբյուրներ կան: Տեքստերի մոտ կեսը հայտնաբերվել է Նուզի միջնաբերդից ու կից բնակելի տների պեղումներից: Նուզին մշակութային 12 շերտ ունի: Ստորին՝ 12–րդ շերտը մերձավոր կապի մեջ է Հյուսիսային Միջագետքի մշակույթի հետ (խեցեղենը իր զարդանախշերով նման է Սամարրայի խեցուն):

Նուզի ստորին 8–3–րդ շերտերը վկայում են, որ Գասուր քաղաքը առևտրական կապերի մեջ է եղել Աշշուրի և Քանեշի հետ (մ.թ.ա. 2–րդ հազարամյակի սկիզբ): Նուզի մշակութային 2–րդ շերտը թվագրվում է մ.թ.ա. 15– 14–րդ դարերով, իսկ բնակիչները խուրրիներ էին: Հարթավայրում ապրող խուրրիները հիմնականում զբաղվել են երկրագործությամբ: Զարգացած են եղել նաև արհեստները: Երկրագործ բնակչությունը ապրել է ընտանեկան մեծ համայնքներով: Ընտանե-

կան համայնքը[1] խուրրիերեն կոչվում էր **դիմտու** «աշտարակ», աքադերեն՝ բիտու «տներ», իսկ ուրարտերեն՝ բուրգանա: Դիմտուն հաճախ դիտարկվում է իբրև ֆեոդալական ամրոց[2]: Դիմտուները դիտվում են նաև որպես բնակատեղիներ, որոնք բնակեցված էին նույն արհեստներով զբաղվող վարպետներով՝ խեցեգործներով, ջուլհակագործներով, առևտրականներով, ներկողներով[3] և այլն:

Կավե ծիսական ամրոց-աշտարակի պատկերով, Նուզի

Յուրաքանչյուր ընտանեկան համայնք ապրել է դիմտուի՝ ամրոց-աշտարակի մեջ: Աշտարակի առաջին հարկում պահում էին անասուններ, իսկ վերին՝ երկրորդ հարկում բնակվում էին ընտանիքի անդամները: Եղել են նաև գյուղական «տներ»՝ ալուններ, որոնք կառուցվել են դիմտուների շուրջը և կոչվել են գյուղական բնակավայրեր: Յուրաքանչյուր ընտանեկան համայնք ունեցել է իր հողամասը, որը կոչվել է **էվրու** «տիրույթ» և գտնվել է **էվրիի**՝ նահապետի տիրապետության տակ: Հավանաբար սկզբում համայնքի անդամները հողը մշակել են համատեղ: Ավելի ուշ, համաձայն գրավոր աղբյուրների, այն առանձին հողաբաժիններով տրվել է համայնքի չափահաս անդամներին: Այդ հողագործները կոչվել են ilku-ներ[4]:

Հողը նրանք կարող էին ժառանգել, իսկ վաճառել՝ ոչ, որովհետև դա նրանց սեփականությունը չէր: Հողը համայնքի սեփականությունն էր, իսկ շարժական գույքը՝ տղամարդու: Տրված հողի դիմաց համայնքի չափահաս բնակիչները տալիս էին բերքի մի մասը և որոշակի ծառայություններ էին կատարում: Համայնքի անդամները պարտավոր էին փոխադարձաբար օգնել իրար և միասին կատարել համայնական պարհակները, ավելի ուշ՝ պետական պարհակները:

Հողաբաժիններից մեկը, որ կոչվում էր **կաշկա**, նվիրված էր տոհմական աստվածներին և գտնվում էր էվրիի տիրապետության տակ[5]: Նահապետի մահից հետո ընտանեկան համայնքը ղեկավարում էին արյունակցական, ազգակցական կապերով կապված «եղբայրները»: Մեծ ընտանիքները տրոհվում էին: Նոր առաջացած ընտանիքները մեծ դժվարությունների էին հանդիպում: Նրանք կամ պետք է սովամահ լինեին, կամ որդեգրվեին այլ համայնքների կողմից, կամ էլ արագ մեծանալով նոր տոհմական համայնք ստեղծեին: Նուզից հայտնաբերված տեքստերը թույլ են տալիս նկատել, թե ինչպես էին առաջանում խոշոր հողատերերը: Աղքատացած հողատերը չէր կարող վաճառել հողը, և նա գործարքի մեջ էր մտնում ապագա հողատիրոջ հետ: Կնքվում էր գործարքի պայմանագիրը (վկայագիրը): Հարուստ հողատերը որդեգրում էր աղքատացած հողատիրոջը և իբրև ժառանգություն ստանում նրա հողը: Հայտնաբերված տեքստում հողը իբրև «որդեգիր» ժառանգություն ստացած Թեխիպ-Թիլը, որն արքունիքում բարձր դիրք է ունեցել, պարտավորվել է իր որդեգիր հորը «նվեր» տալ բերքի մեկ երրորդը: Ավելի ուշ որդեգրվողը վճարել է ilku[6]: Նոր ստեղծված տոհմական համայնքը շարունակում էր կապված մնալ իր ցեղակիցներին, հատկապես պաշտամունքային ու կրոնական հարցերում:

Ազգակցականից բացի գոյություն են ունեցել նաև դրացիական կապեր: Մի քանի ազգակից կամ ոչ ազգակից համայնքներ կարող էին ստեղծել միաս-նություն՝ գյուղ «ալու» (աքադերեն), երդում տալ որևէ էվրիի ու մտնել նրա հովանավորության տակ: Գյուղերը իրենց հերթին համախմբվում էին ամրացված բնակավայրերի (ամրոցների)՝ դիմտուների շուրջ և ստեղծվում էին քաղաքներ: Քաղաքներում էին գտնվում տաճարները, այստեղ էին գործում կառավարիչները, այստեղ էին հավաքվում ավագների խորհուրդները և այլն: Քաղաքները ենթարկվում էին թագավորին: Այսպիսին էին սոցիալ-տնտեսական հարաբերությունները խուրրիական պետության ծայրամասում (Արրապխայում), անշուշտ այդպիսի սոցիալ-տնտեսական հարաբերություններ էին գործում նաև խուրրիական պետության ու Հայկական լեռնաշխարհի այլ մասերում ևս, մ.թ.ա. 3-2-րդ հազարամյակներում:

Հողագործության զարգացումը, մասնավորապես մասնագիտացված օգտագործումը (դաշտավարություն, խաղողագործություն, արոտավայրեր) մի կողմից բարձրացնում էր եկամտաբերությունը գյուղատնտեսության մեջ, մյուս կողմից առաջացնում էր ներքին փոխանակության պահանջ: Այս պայմաններում աճում էր գույքային շերտավորումը: Առաջ են գալիս նաև պարտապաններ ու պարտատերեր: Տոհմի ներսում առաջանում են կախյալ անդամներ, որոնց համար պատասխանատու էր էվրին և այլն: Կային կախյալ ստրուկներ, բայց գնահատվում էին օտարածին ստրուկները:

Հասարակության մեջ համայնքի ներսում նրա անդամները մասնագիտանում էին արտադրության մեջ: Հանդես են գալիս ընտանեկան տոհմեր, որոնք

1. Որոշ ուսումնասիրողներ չեն ընդունում խուրրիական ընտանեկան մեծ համայնքի գոյությունը, պատճառաբանելով, որ դրանք վկայված չեն գրավոր աղբյուրներով: Հաշվի առնելով, որ հայկական գյուղը միշտ ապրել է ընտանեկան մեծ համայնքով, նահապետի գլխավորությամբ, պետք է ընդունել, որ Հայկական լեռնաշխարհում այդ ժամանակ ևս գոյություն է ունեցել ընտանեկան մեծ համայնք:
2. ИДВ, II , с. 78.
3. *Н. Янковская,* Г. Вильхельм-ի "Древний народ хурриты" գրքի առաջաբանը, էջ 7.
4. *Г. Вильхельм,* с. 80.
5. *И. Дьяконов,* 1968, с. 61.
6. *Г. Вильхельм,* с. 83, *Н. Янковская,* ВДИ, 1951, 1, с. 45.

զբաղվում էին միայն խեցեգործությամբ, մանածագործությամբ, ոչխարաբուծությամբ, դարբնությամբ, առևտրով, դպրությամբ, գրչությամբ և այլն: Մասնագիտացումը թույլ էր տալիս հմտանալ ու շատ արտադրել, որը վաճառվում կամ փոխանակվում էր: Առաջանում էին հարուստներ, որոնք ավելի հարուստ էին քան էվրի-նահապետը: Առանձին խոշոր շրջաններ կառավարում էին արքայազունները: Կային նաև ինքնավար թագավորություններ, որոնք ենթարկվում էին Միտանիի թագավորին: Օրինակ՝ Աշշուրը ղեկավարում էին ավագների խորհուրդը և կառավարիչը: Բայց կար նաև **սուկալլու** (պաշտոնյա), որը նշանակվում էր թագավորի կողմից: Սուկալլուն մասնակցում էր քաղաքի ղեկավարմանը: Նշենք, որ սուկալլուները հիմնականում նշանակվում էին սահմանամերձ շրջաններում[7]: Յուրաքանչյուր նշանավոր քաղաքում կար քրմուհի՝ **էնտու** «կին-թագավոր», որը մեծ ազդեցություն է ունեցել ոչ միայն պաշտամունքային արարողությունների ժամանակ, այլև ակտիվ դեր է ունեցել քաղաքականության և տնտեսության կառավարման մեջ:



Խուրրի (հայ) ռազմիկները զուրգով և նիզակով, պարկեր միտանյան կնիքից

Ռազմիկներ տրամադրում և մասամբ հանդերձավորում էին համայնքները, բայց զորատեսի և արշավանքների ժամանակ նրանց պահում էր արքունիքը, որը նետեր ու հանդերձանք էր մատակարարում շարքային զինվորներին[8]: Միտանիի բանակի մարտական ուժը հեծելազորն էր՝ այրուձին, որը հռչակված էր հին աշխարհում: Հիշենք, որ ավելի ուշ՝ վաղ միջնադարում ևս հայոց այրուձին մեծ հռչակ է ունեցել Առաջավոր Ասիայում: Հայկական լեռնաշխարհը հարուստ էր մետաղահանքերով, և հայերը վաղ են սկսել մշակել մետաղները (պղինձ, բրոնզ, երկաթ): Հայկական ցեղերը շատ վաղ են մետաղե զենքեր պատրաստել և զինված են եղել ժամանակի լավագույն զենքերով: Հայաստանը նաև ձիու ընտելացման հնագույն տարածքներից է և՛ հայերը ձին նույնպես վաղ են օգտագործել մարտի դաշտում: Հայերը (խուրրիներ, հայասացիներ) լավ հեծյալներ էին և լավ մարտակառք վարողներ (Կիկկուլիի ձեռնարկը ձիամարզության մասին, Մուրսիլիս 2-րդի բանակում ծառայության էին

7. ИДВ I, II, с. 79.
8. *Н. Янковская*, ВДИ, 1951, I, с. 42-43.

վերցվում հայասացի հետիոտն և մարտակառք վարող զինվորներ): Խուրրի ռազմիկների (նաև խեթ ռազմիկների) համար բնութագրական են եղել կատարավոր սաղավարտները, նիզակը, կլոր կամ 8-ածև վահանը: Հագել են կարճ վերնաշապիկ և կարճ կիսաշրջազգեստ՝ պարեգոտ (ուրարտական շրջանում երևան են գալիս ասուրական տիպի երկար հագուստներ և սաղավարտ): Խուրրիները ունեցել են մարտական մի կազմակերպություն, որն էլ ավելի մարտունակ է դարձրել նրանց ռազմական ուժը: Միտանիի էլիտար՝ բարձր դասի մեջ էին մտնում այն ազնվականները, որոնց հիմնական զբաղմունքը զինվորական գործն էր: Ձիեր ու մարտակառքեր ձեռք բերելը թանկ հաճույք էր, ինչը միայն հարուստները կարող էին թույլ տալ իրենց: Արրապխայում բնակչության այդ շերտին անվանում էին r kib narkabti «մարտակառքով գնացողներ»: Միտանիում (նաև Սիրիայում ու Պաղեստինում) նրանց անվանում էին marianni-na: Սա ռազմական էլիտան էր: Այսպիսի մարտիկները կազմում էին ընտրյալ ջոկատ, որն էլ վճռում էր ճակատամարտի ելքը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ marianni-ն (mariannu) «ազնվական հեծյալ դաս» իմաստն է ունեցել: Marianni-ն շրջապատում էր թագավորին, իրենց հերթին այս marianni-ները շրջապատված էին իրենց marianni-ներով: Marianni-ն նաև «ազնվական, պետ, առաջնորդ» իմաստն է ունեցել[9]: Այս բացատրությունը հիմնավորվում է Խաթթիի և Հայասայի միջև կնքված դաշնագրերի տեքստի վկայություններով: Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին Հայկական լեռնաշխարհի հյուսիսում կազմավորված հայկական մեկ այլ պետության՝ Հայասայի առաջին թագավորը կրել է Մարիա (առաջնորդ) անունը, որը ժամանակակից է եղել Թութխալիա 3–րդին (1420–1397): Հայասայի թագավորներից մեկը՝ Հուկանան և Խաթթիի թագավոր Սուպիլուլիումասը դաշն են կնքել ընդդեմ Միտանիի: Դաշնագրի տեքստում, որն ինչպես վերևում նշվել է ուղղված էր Միտանիի դեմ,



Հայ (խուրրի) ռազմիկները մարտակառքով, բարձրաբանակ, Մալաթիա, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կես

9. Ուսումնասիրողները արամերեն mar բառը արիական փոխառություն են համարում, որի նախնական իմաստը «այր», «արք» է եղել, Հ. Վինքլեր «Արիացիները Բողազ-Քյոյի արձանագրությունների համաձայն», ՀԱ, IV, 1913, էջ 208:

Հուկաննա (գուցե Հակ, Հայկ) անվան փոխարեն հաճախ օգտագործվում է Մարյա (Մարիա) անունը, օրինակ. «Եթե դուք Հայասայի երկրի մարդիկ պաշտպանեք ինձ, ապա ես ձեզ՝ Հայասա երկրի մարդկանց, Մարիային (թագավորին), Հայասա երկրի մյուս ցեղակիցներին կպաշտպանեմ»[10]:

Ինչպես տեսնում ենք, Մարիան «տեր, առաջնորդ, թագավոր» իմաստով որպես տիտղոս կարող էր օգտագործվել հաջորդ թագավորների համար[11]: Ի դեպ լատիներենում[12] և էտրուսկերենում[13] հանդիպում է maro բառը, որը «ղեկավար, առաջնորդ, իշխող» իմաստներն ունի, իսկ ռազմական վերնախավի համար՝ «առաջնորդ, հերոս» իմաստները: Վեդայական գրականության մեջ վկայված marja-ն համեմատվում է marianni-ի հետ: Մարյանիները քաջ կռվողներ ու հմուտ հեծյալներ էին, լավ զինված, ունեին մետաղե (երկաթե) զենքեր ու պաշտպանված էին մետաղե զրահներով: Պաշտպանված էին նաև նրանց ձիերը (հիշենք հիքսոսներին): Դժվար էր մարյանիին գերի վերցնելը: Նրանք գերադասում էին մեռնել, քան գերի ընկնել թշնամու ձեռքը: Այդ են վկայում եգիպտական փարավոնների արձանագրությունները, ուր նրանք հատուկ շեշտում են յուրաքանչյուր գերի ընկած mrjn-մարյանիի մասին: Գերված մարյանիների թիվը շատ քիչ է եղել: Այսպես Թութմոս 3-րդը հայտնում է, որ գերել է հինգ mrjn, Ամենեմհեբը՝ (Թութմոս 3-րդի զորավարը) երկու mrjn և այլն: Գերիների ամենամեծ թիվը հանդիպում է Ամենհոտեպ 2-րդի արձանագրության մեջ: Նա հայտնում է, որ գերել է 550 կենդանի mrjn[14]: Ինչպես տեսնում ենք, փարավոնները այնքան մեծ կարևորություն են տվել մարյանիներին, որ անգամ երկու գերի վերցնելու դեպքում արձանագրել են փաստը:

Ալալախից հայտնաբերված տեքստերը վկայում են, որ եղել են նաև այնպիսի marianni-ներ, որոնք մարտակառքեր չեն ունեցել: Այդ տեքստերից տեղեկանում ենք, որ marianni կարող էին դառնալ թագավորի հրամանով[15], կատարած որևէ ծառայության դիմաց: Ծառայության դիմաց մարյանին հող էր ստանում, որը մշակում էին ընտանիքի անդամները և ստրուկները (ոչ շատ թվով): Մարյանիները կարող էին դառնալ խոշոր հողատերեր, կարող էին նաև աղքատանալ: Երկրի արևմուտքում marianni լինելը սոցիալական կարգավիճակ էր, դաս, իսկ արևելքում՝ օրինակ Արրապխայում, marianni-ները միայն մարտակառք վարողներ էին: Միտանիում յուրաքանչյուր ազնվական շրջապատված էր փոքր ազնվականների՝ մարյանիների խմբով, որոնցից յուրաքանչյուրը ուներ իր հեծելազունդը: Իսկ նրանց միասնությունը պատրաստի

10. KUB, V, 3, Leipzig, 1916-1985, 1-xxx, Վ. Խաչատրյան, էջ 48:
11. Այս մասին տես նաև Վ. Խաչատրյան, էջ 48:
12. *Г. Джаукян*, 1964, с. 37.
13. *В. Георгиев*, 1988, с. 190.
14. *Հ. Վինքլեր*, Արիացիները ..., ՀԱ, 1913, IV, էջ 203:
15. *Г. Вильхельм*, с. 48.

զորագունդ էր տալիս: Այսպիսով Միտանիի բանակը բաղկացած էր ազնվականներից կազմված մարտակառք վարող ջոկատներից՝ մարյանիներից, հեծելազորից և աշխարհազորից: Միտանիները հայասացիների նման հռչակված էին որպես հմուտ մարտակառք վարողներ և նրանց փորձը հաճույքով էին փոխառնում խեթերը և ասորեստանցիները: Այս ամբողջ մարտական ուժը գլխավորում էր թագավորը: Միտանի պետության գլուխ կանգնած էր թագավորը՝ միապետը, սակայն այս միապետությունը տարբերվում էր Եգիպտոսի, Բաբելոնի և այլ միապետություններից, որտեղ միապետը անսահմանափակ իշխանություն ուներ և հանդիսանում էր աստծո փոխանորդը երկրի վրա:

Խուրրիի ազնվականներ, պատկեր միտանյան կնիքից

Միտանիում թագավորը շրջապատված էր «**խուրրի մարդկանցով**»՝ ազնվական մարյանի ավագանիով, որոնք մասնակցում էին երկրի կառավարմանը: Այդ են վկայում Միտանիի և Խաթթիի թագավորների միջև կնքված պայմանագրերի տեքստերը: Այսպես. Սուպիլուլիումաս 1-ինի և Միտանիի թագավոր Շատտիվազայի միջև կնքված պայմանագրի տեքստը վկայում է «Միշտ, կրկին ու կրկին թող կարդացվի այս (տեքստը) Միտանի երկրի արքայի և Խուրրի երկրի մարդկանց առջև»[16]: Կամ «Եթե ես Շատտիվազա արքայորդիս և մենք խուրրի մարդիկ այս դաշնագրի ու երդումի խոսքերը չպահենք...այն ժամանակ աստվածները՝ երդումի տերերը թող մեզ ոչնչացնեն»:

16. KBO, 7, 25, 50, *Ա. Խաչատրյան*, էջ 489, 490, 491:

Միտանիում գահը ժառանգական էր, այն փոխանցվում էր Առաջին՝ Գլխավոր կնոջ ավագ որդուն: Միտանիում արքունիքին էր պատկանում մետաղի արտահանման մենաշնորհը: Արքայի պալատում կային պահեստներ, ուր պահում էին զենքեր ու զրահներ մարդկանց, նաև ձիերի համար: Պատերազմի ժամանակ արքունիքն էր հանդերձավորում և մթերքով ապահովում զինվորներին: Միայն մարյանիներն էին իրենց ապահովում զենքով, ձիով ու մարտակառքով:

Թագավորը երկիրը ղեկավարում էր իր պաշտոնատար անձանց՝ šakin–mati-ների և sukallu-ների (նախարար, պաշտոնյա) միջոցով: Թագավորի կողմից նշանակված պաշտոնատար անձինք էին նաև ḫalzuhlu-ները «քաղաքապետերը» կամ «բերդի պարետները»[17]:

Այսպիսով, Միտանիում (նաև ծայրամասային թագավորություններում) գոյություն ուներ հետևյալ կառավարման կարգը. թագավոր, արքայազուններ (թագավորիկներ), ավագների խորհուրդ (մարյանի մարդիկ), էվրի, ժողովրդական հավաք և գյուղական համայնք:

ՄՇԱԿՈՒՅԹ, ԿՐՈՆ

Խուրրիների մշակութային, կրոնական, պաշտամունքային ու դիցաբանական հարցերի մասին տեղեկություններ կան Խաթթուսասից, Մարից, Ուգարիտից, Արրապխայից, Բաբելոնից և այլ հնագույն բնակավայրերից հայտնաբերված գրավոր տեքստերում: Կարևոր են հատկապես Խաթթուսասի արքայական արխիվից հայտնաբերված գրավոր աղբյուրները, որոնց մեջ վկայություններ կան խուրրիների ծիսական ու պաշտամունքային արարողությունների մասին: Խեթական այդ տեքստերը թարգմանություններ են խուրրիերենից և գրվել են աքադերենով խուրրիալեզու «գրիչների» կողմից: Թարգմանությունները հաճախ տողացի են, հաճախ էլ բառերը, նույնիսկ ամբողջական նախադասություններ ու արտահայտություններ գրված են խուրրիերենով: Խուրրիների մշակույթի ու պաշտամունքային հարցերի մասին տեղեկությունները ամբողջանում են հնագիտական գտածոների շնորհիվ:

Անդրադառնանք խուրրիական դիցաբանությանը: Խուրրիական աստվածների և դիցարանի մասին տեղեկությունները մեզ են հասել խեթական գրավոր աղբյուրների միջոցով, այն է խեթերեն թարգմանվելու, ինչպես նաև խուրրի ու խեթ թագավորների միջև կնքված պայմանագրերի շնորհիվ: Սուպիլուլիումաս 1-ինի և Շատտիվազայի միջև կնքված պայմանագրի տեքստում վկայված են արիական չորս աստվածների անուններ: Խեթերեն թարգմանված ու հայտնաբերված գրական արժեքներից մեծ նշանակություն ունի «Երկնային թագավորության մասին» պոեմը, որտեղ նկարագրվում է, թե ինչպես են երկնքում

17. *Г. Вильхельм*, с. 83.



Ծիսական արարողության պատկերով գլանաձև կնիք: Կենտրոնում՝ Արևի թևավոր սկավառակը

հաջորդաբար իրար փոխարինում խուրրիական դիցարանի չորս աստվածներ. **Ալալուն, Անուն, Կումարբին և Ամպրոպի աստվածը**: Այս աստվածներից յուրաքանչյուրը երկնքում իշխում է 1000 տարի: Կարևորվում է այս պոեմի հատկապես 4-րդ մասը, որտեղ պատմվում է Երկրի զավակների ծննդի մասին: Պոեմում Երկնքից Մայր Երկրի տիրակալ Էա (Հայա) աստծո (աստվածուհու) տիրապետության տակ գտնվող Ապսուվ (Աբգու) երկիր է գալիս Երկնային Կառապանը իր Աստղային կառքով և Մայր Երկրի հետ ծնունդ տալիս Երկրի զավակներին: Ծնված երկվորյակներին իր հովանավորության տակ է առնում Էա (Հայա) աստվածուհին: Այս պոեմում պահպանվել է Մայր Երկրում մարդու արարման մասին հնագույն ավանդություններից մեկը. մարդը երկրի վրա (Հայկական լեռնաշխարհ) արարվել է երկնային ու երկրային ուժերի կողմից[18]: Պոեմում հիշատակվում են այլ աստվածների ու աստվածուհիների անուններ ևս. Նարաս, Էնլիլ, Արև-Աստված, Զաբաբա և այլն: Ամպրոպի Աստծո սրբազան եզներն են Սերրին և Թելլան[19]: Խուրրիական դիցաբանության մեջ կար «Աստվածների ավագ սերունդ» և «կրտսեր սերունդ»: «Ավագ սերնդի» տիրակալը **Կումարբին** էր[20], որի պաշտամունքային կենտրոնը գտնվում էր Ուրկեշում (այժմյան Մարդինի մոտ):

Կումարբիի մասին (նաև խուրրիական այլ աստվածներ) տեղեկություններ կան «Երգ Ուլլիկումի մասին» (Երգ Քարե հրեշի մասին) ստեղծագործության մեջ, որը պահպանվել է խեթերեն թարգմանվելու շնորհիվ: Պոեմի մեջ պատմվում է, որ Կումմի քաղաքի փոքրիկ աստվածը՝ Կումարբին բանակցությունների մեջ է մտել Օվկիանոսի աստծո հետ, որի պաշտպանությամբ Ուպելլուրի աստծո ուսերից օվկիանոսում աճում էր քարե լեռ (հմմ. հունական դիցաբանությունից

18. Այս մասին մանրամասն տես Ա. Տերյան, «Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան», 2002, էջ 13-14:
19. ՀԱՊ, էջ 185, 554:
20. ИДВ, II, с. 82.

հայտնի Ատլանտը, որն իր ուսերին կրում էր Երկինքն ու Երկիրը): Աճող լեռանը տեսնում է Արև-Աստվածը և այդ մասին զգուշացնում Կումարբիին: Էայի օգնությամբ Ուլլիկումը կտրում է աճող լեռան հիմքը և գրկում նրան իր ուժից: Այս ստեղծագործության մեջ նկատվում է խուրրիների պաշտամունքը քարի ու լեռան հանդեպ: Դա անշուշտ կապված էր Միտանիի լեռնային երկիր լինելու հետ:

«Երիտասարդ սերնդի» աստվածների տիրակալը փոթորկի, ամպրոպի ու որոտ–կայծակի աստված **Թեշշուբն** էր: Թեշշուբի զույգն էր **Խեբաթ (Հեպատ)** աստվածուհին[21]: Խեբաթը ընկալվում էր որպես մայր աստվածուհի: Ուրարտական դիցարանում Թեյշեբայի կինն էր Խուբա դիցուհին, որը համապատասխանում էր Խեբաթին[22]:

Նրանց պաշտամունքային կենտրոններն էին Կումմանե (Կոմանա) քաղաքը Կիցվատնայում (Կիլիկյան Տավրոսի լեռներում) և Կումմե (Կումանի, Կումանե) քաղաքը Մեծ Զաբ գետի վերին հոսանքի շրջանում: Ուրարտական շրջանում Կումենեն (Կումենու) շարունակում է լինել Թեյշեբա (Թեշշուբ) աստծո պաշտամունքի կենտրոնը: Ավելի ուշ Կումենեն դառնում է Աղաի պաշտամունքային կենտրոնը ասորեստանցիների համար ու հանդես գալիս Կումմեն անունով: Համախուրրիական Թեշշուբ աստվածը շարժվում էր քառանիվ կառքով, որին լծված էին եզներ՝ Շերիշ (Երեկո) և Խուրիշ կամ Խուրվիշ (Առավոտ), այլ տարբերակով՝ Շերիշ և Թիլլ անուններով եզներ[23]: Միտանիի անկումից հետո Հայկական

21. ИДВ, II, с. 84.
22. *Г. Меликишвили*, Наири-Урарту, Тб., 1954, с. 372-373.
23. МНМ, II, с. 505, 608, *Г. Вильхельм*, с. 88, *Ս. Հմայակյան*, 1990, էջ 43:

Ծիսական արարողության պատկեր ոսկե թասի վրա, Հասանլու (Ուրմիա լճից հարավ)

լեռնաշխարհում ստեղծված խուրրիական թագավորություններում շարունակում էր պահպանվել Թեշշուբ աստծո պաշտամունքը: Այսպես, 1-ին հազարամյակի սկզբների գրավոր աղբյուրները (ասուրական, ուրարտական) վկայում են, որ Շուպրիայի գլխավոր աստվածը Թեշշուբն էր[24]: Իսկ այդ ժամանակ դեպի Շուպրիա ռազմական արշավանք ձեռնարկած Ասորեստանի թագավոր Ասարհադոնի նամակներում վկայված են Շուպրիայի թագավորի և նրա երկու որդիների անունները՝ Նիկ-Թեշուբ, Լիգի-Թեշուբ և Շերպի Թեշուբ[25]:

Խուրրիական դիցարանում արևի աստվածը Թեշշուբի եղբայրն է և հանդես է գալիս **Շիմագե** (հարավում՝ Շիմիկա, Շիմիդի) անունով (ուրարտական դիցարանում՝ Շիվինի): Ուրարտական հնավայրերից հայտնաբերված մշակութային արժեքների վրա (գոտիներ), որպես Շիվինիի խորհրդանիշներ պատկերված են Արևի թևավոր սկավառակը (Կարմիր բլուր), սվաստիկան (Աղանայի թանգարան) ու ձին (Արին բերդ)[26]: Լուսնի աստվածը **Կուշուխն** է (նաև Կուժուխ): Թեշշուբի քույրը ևս աստված է՝ հանդես է գալիս **Շավուշկա** «Զենք» անունով: Շավուշկան (Իշտար) հանդես է գալիս իբրև ռազմի աստվածուհի: Շավուշկան նաև պտղաբերության ու սիրո աստվածուհին էր: Շավուշկան հաճախ պատկերվել է թևերով, կանգնած առյուծի մեջքին: Կնիքադրոշմների և այլ գտածոների վրա նա պատկերված է իբրև թևավոր աստվա-

24. АВИИУ, 67.
25. АВИИУ, 67, 70.
26. *Ս. Հմայակյան*, 1990, էջ 45, 113:



Թեշշուբը (ձախից՝ կանգնած երկգլաք լեռան վրա՝ վեր բարձրացրած զուրգով) և Հեպատը (կենտրոնում՝ ցուլի վրա): Գլանաձև կնիք

ծուռի: Շավուշկան ունի երկու ծառայողներ (աղախիններ)՝ Նինատտուն և Կուլիտտան[27]: Նրան ուղեկցել են նաև այլ աստվածուհի-օգնականներ: Շավուշկան (նաև Հեպատ կամ Խեբատ) պատկերվում էր ծածանվող հագուստով և մերկ ոտքերով: Ենթադրվում է, որ նրան նվիրվել են պաշտամունքային օրգիաներ (խրախճանքներ): Այս դեպքում Նինվեի Իշտարը համեմատվում է Շավուշկայի հետ: Ի դեպ Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդի (721–705) արձանագրություններից հայտնի է, որ Իշտարի հնագույն անունը Շավուշկա էր[28]: Շավուշկան վկայված է Ուրի 3-րդ դինաստիայի ժամանակներից: Նա գլխավոր աստվածուհի էր Միտանիում, Արրապխայում,ավելի ուշ նաև Ասորեստանում: Տուշրատան Շավուշկային անվանում է «իմ երկրի տիրուհի», «երկնային տիրուհի»[29]: Խուրրիական դիցաբանության մեջ իրենց տեղն ունեն նաև առաջավորասիական (խուրրիական) հնագույն աստվածություններ՝ **Անուն** (նման է շումերական **Անին**) և Համաշխարհային օվկիանոսի ու իմաստության **Էա - Հայա** (արխայիկ ձևը A a) աստվածությունները: Հայտնի աստված էր նաև **Շիդուրին** «Կույսը», որը հանդես է գալիս որպես Սիդուրի աստվածային տան կույս-տիրուհի (տնտեսուհի): Շիդուրին ներկայանում է «Գիլգամեշ» դյուցազնավեպի աքադական տարբերակում:

Հայտնի են նաև **Իշխար** (Ուժխար) աստվածուհու (նման է Շավուշկայի պաշտամունքին) և երկրի աստվածուհի **Կուբաբայի** (հունական դիցաբանության մեջ Կիբելե) պաշտամունքները: Ուգարիտում հիշատակվում են **Նիկկալ** և **Պենդիգալլի** աստվածուհիների անունները: Ենթադրվում է, որ Պենդիգալլին լուսնի կամ սանդարամետի աստվածուհին էր[30]: Խուրրիական հնագույն գրա-

27. *О. Герни*, с. 122.
28. Հանդես Ամսօրեա, 1913, էջ 209, Տեղեկագիր, 1923, 1, էջ 27:
29. *Г. Вильхельм*, с. 90.
30. ИДВ, II, с. 84.



Որմնանկար Նուզի պալատից, Թեշշուբ, Հեպատ և Թիլլ աստվածների պատկերով

վոր աղբյուրներում (Ուրկեշ, Նավար) հայտնաբերված Արիսենի կամ Աբալշենի և Տիշաթալի արձանագրություններում հանդիպում է **Ներիգալ (Ներգալ)** աստծո անունը, որին նվիրված տաճար են կառուցել: Ենթադրվում է, որ Ներիգալը փոխառնված աստված է, որի ծագումն անհայտ է[31]: Հայտնի են նաև Թեշշուբի որդի **Թիլլ, Նուբադիգ** և այլ աստվածների անունները:

Վերը նշվել է, որ Սուպիլուլիումաս 1-ինի և Շատտիվազայի միջև կնքված պայմանագրի տեքստում վկայված են չորս աստվածների անուններ.

Mi it ra a si l/i/ *Միթրա*

U ru wa na as i el (տարբերակ A ru ne a i il) *Վարունա*

In tar (տարբերակ In da ra) *Ինդրա*

Na a at ti ta an na *Նաասատիա:*

Պայմանագրի տեքստը աքադերեն է, իսկ ձևը, որով տրվում են աստվածների անունները, Ի. Դյակոնովը ոչ խուրրիերեն է համարում, ոչ հնդիրանական[32]: Ուսումնասիրողները համակարծիք են, որ պայմանագրի տեքստում հիշատակված աստվածների անունները նույնանում են Ռիգվեդայում հիշատակվող Միթրա, Վարունա, Ինդրա, Նասատիա (Աշվիներ) աստվածությունների հետ: Առաջին երկու աստվածների- il մասնիկը Ժ. Դյումեզիլը խուրրիական է համարում[33]: Կամմենհուբերը U-ru-wa-na-ն համադրում է Varuna-ի հետ: Իսկ Urugana-Վարունան համադրվում է ուրարտական դիցարանի Ուարուբանի (Արուբանի, Բագբարտու) աստվածության հետ[34]: Ուսումնասիրողները, սակայն, հիմնականում համակարծիք են, որ պայմանագրի տեքստում ներկայացված են արիական աստվածների անուններ:

31. *Г. Вильхельм*, с. 94.
32. *И. Дьяконов*, Арийцы...., с. 52.
33. *Ж. Дьюмезиль*, 1986, с. 18.
34. *Ս. Հմայակյան*, 1990, էջ 111 (գլուխ 3-րդ, ծանոթագրություն 87):

Խուրրիական քրմեր, պարկեր միրանյան կնիքից

Հայտնաբերված հնագույն տեքստերում համեմատաբար շատ տեղեկություններ կան խուրրիական (նաև խեթական) հասարակության կրոնական և ծիսական արարողությունների մասին: Խուրրիական հասարակության յուրահատկություններից էր այն, որ յուրաքանչյուր խուրրիական տերիտորյալ մեծ համայնքում (շրջանում) գոյություն ուներ քուրմ (քրմուհի), որն արձանագրություններում ընթերցվում է **ենտում** (աքադական տեքստում) և **էնդա** (խուրրիական տեքստում), որոնք «կին–թագավոր», «քուրմ–թագավոր»[35] իմաստներն ունեն: Ենթադրվում է, որ էնդայի հիմնական պարտականությունը «սրբազան ամուսնության» ծիսակատարությունն էր տեղական համայնքային աստվածությունների պաշտամունքային արարողությունների ժամանակ: Էնդաները «սրբազան ամուսնություններից» ունենում էին երեխաներ, որոնց հայրերը անհայտ էին մնում (ենթադրվում է, որ այդ օրը որևէ քուրմ կատարում էր աստծո դերը): Ծնված աղջիկները վերցվում էին մայրերից և դաստիարակության տրվում ազնվական կանանց: Այդ երեխաները համարվում էին ապագա էնդաներ: Էնդա Տիշնայի «Սիրտ, Սրտիկ» մասին վկայություն կա Նուզից հայտնաբերված տեքստում[36]: Տիշնայան Նուզի համայնքի, բերդի կառավարչի ու առևտրական Թեխիբ-Թիլլի աղջիկն է: Տիշնայայի որդին և դուստրը դաստիարակության են տրվել Թեխիբ-Թիլլի կնոջը՝ Խինձուրին (Խնձոր), որը հավանաբար երեխաների տատն էր: Արձանագրության մեջ վկայված է, որ Տիշնայան իր որդու և դստեր համար մեկ ձին փոխանակել է մեկ տղա և մեկ աղջիկ ստրուկների հետ: Ինչպես վերը նշվեց, Էնդային չի թույլատրվել դաստիարակել «սրբազան ամուսնությունից» ծնված իր երեխաներին:

Նյութական արժեքների (կնիքներ) վրա եղած պատկերները վկայում են, որ հնագույն այլ ժողովուրդների նման խուրրիների մոտ ևս գոյություն է ունեցել մարդկային զոհաբերություն, որը կատարվել է ինչ-որ ծիսական արարողության ժամանակ:

Քանի որ գոյություն են ունեցել մշակութային ու կրոնական սերտ հարաբերություններ խուրրիների և խեթերի միջև, անդրադառնանք նաև խեթական

35. ИДВ, II, с. 86.
36. ИДВ, II, с. 86.

դիցարանին: Խեթական պանթեոնի գլխավոր աստվածը երկնային որոտի աստվածն էր (անունը հայտնի չէ, ենթադրվում է՝ **Տարու**, որը լուվիերենում կարող էր կոչվել **Տարխունտաս**): Խեթական դիցարանի գլխավոր աստվածուհին Արինննա քաղաքի արևի **Վուրուսեմու** աստվածուհին էր (համեմատության համար նշենք, որ Արինու կամ Արինա քաղաք կար Արարատ–Ուրարտայում, որի մասին հիշատակում է Ասորեստանի թագավոր Սալմանասար 1–ինը)[37]:

Սիրո, պտղաբերության և պատերազմի աստվածուհի Շավուշկան (գլանաձև կնիքադրոշմ)

Յազըլիկայայի (Բողազքոյի մոտ) կրոնական կենտրոնի պատկերազարդ նյութերում պատկերված են խեթական պանթեոնի աստվածները: Հետաքրքիր է, որ լուվիերենով տրված են աստվածների խուրրիական անունները[38]: Խեթական պանթեոնում ներկայացված են նաև առաջավորասիական (խուրրիական) այլ աստվածներ. **Անու, Անտու, Էլլիլ, Նինլիլ, Էա** և այլն: Ենթադրվում է, որ խեթական պանթեոնի **Անկիս** աստվածությունը արիական **Ագնի** աստված է[39]: Կարծիք կա, որ Յազըլիկայայի (ժայռի) սրբատանը կատարվել են մոգական մաքրագործող ծիսակատարություններ, և որ Յազըլիկայայում տաճար չի եղել, այլ միայն Ժայռ–սրբատուն[40]: Եվ՝ խուրրիական, և՝ խեթական տաճարներում ու սրբավայրերում կատարվել են ծիսական արարողություններ, որոնք շատ նման են եղել իրար: Խաթթուսասից հայտնաբերված երկու տեքստեր վկայում են չորսօրյա ձմեռային մի տոնակատարության մասին, որը նվիրված է եղել Իշտար Նինվեացուն (Շավուշկային):



Նուզի Իշտար-Շավուշկայի տաճարից հայտնաբերված կնիքադրոշմ

Տեքստերում շատ կան խուրրիերեն բառեր և արտահայտություններ: Մեկ այլ տեքստ վկայում է խուրրիական մեծ մի տոնակատարության մասին, որը

37. АВИИУ, I, 22.
38. Տարածված է այն կարծիքը, որ Յազըլիկայայի ժայռաքանդակներում պատկերված աստված-աստվածուհիները խուրրիական պանթեոնն են ներկայացնում, (О. Герни, с. 127), որոնց մեծ մասը ընդունվել էր խեթերի կողմից:
39. ИДВ, II, с. 153.
40. *Г. Вильхельм*, с. 112.



Յազըլիկայայի ժայռաքանդակներ

կատարվել է խեթական թագուհի Պուդո-Հեպայի հովանավորությամբ, որը խուրրիական Կիցվատնա-Կիլիկիայի քրմապետի դուստրն էր: Տեքստը վկայում է, որ թագավորը, թագուհին և գլխավոր քուրմը զոհաբերություններ են (թռչուն, այծ, ոչխար) կատարել **Ալլանի, Նուպատիկ** և այլ աստվածների համար: Նրանք նաև ոսկե ու արծաթե գավաթներով սրբազան ջուր են հեղել աստվածների առաջ[41]: Հայտնաբերված տեքստերը վկայում են, որ գլխավոր աստծո՝ Թեշշուբի տաճարում կարող էին արարողություններ, զոհաբերություններ կատարել արական այլ աստվածությունների համար ևս, որոնք մոտ էին իրենց նշանակությամբ ու ծագումնաբանությամբ, իսկ Հեպատ (Շավուշկա) աստվածուհու տաճարում՝ կարող էին նույն ծիսակարգով արարողություններ կատարել կանացի այլ աստվածությունների համար: Տաճարներում դրվել են աստվածների պատկերներ ու արձաններ, որոնք հիմնականում պատրաստվել են ոսկուց և զարդարվել թանկարժեք քարերով: Յուրաքանչյուր աստված պատկերվում էր իրեն բնութագրող խորհրդանիշով՝ զենքով, գավազանով և այլն: Տաճարներում պահպանվող և օգտագործվող պաշտամունքային ու ծիսական իրերի մասին տեքստերի տեղեկությունները ամրապնդվում են պեղումների ժամանակ հայտնաբերված ծիսական ու պաշտամունքային գտածոներով (գավաթներ, սափորներ, սրվակներ): Օրինակ հայտնի է, որ մայրաքաղաք Վաշշուգանիում եղել են «**մաքրագործվելու տներ**»՝ տաճարներ,

41. *Г. Вильхельм*, с. 109.

որտեղ օգտագործել են սրբազան հեղուկով մաքրագործող ուժ ունեցող արծաթե սափորներ: Նուզի Իշտար–Շավուշկային նվիրված տաճարում եղել են առյուծների քանդակներ: Իսկ ծեսերի ժամանակ սրբազան հեղուկի համար օգտագործել են առյուծաձև անոթներ: Խուրրիների մոտ մեծ է պաշտամունքը եռոտանի օջախի հանդեպ, որը հաճախ աստվածացրել ու զոհեր են մատուցել[42]: Տաճարներում դրվել են գահ, մահճակալ, աթոռ նստելու համար՝ «tapri» և աթոռ ոտքերի համար՝ «tuni»[43], որոնք նախատեսված են աստվածների համար: Այդպես էր նաև ուրարտական տաճարներում, օրինակ Արդինի-Մուսասիրում գտնվող Խալդիի տաճարում դրված են եղել մահճակալ, հագուստ և այլ պիտույքներ: Խալդիին նվիրաբերվել են նաև գինի, միս ու հաց[44]:

Ինչպես տեսնում ենք, խուրրիական և խեթական պանթեոնները ունեն շատ նմանություններ ու ընդհանրություններ: Սակայն զգացվում է խուրրիական պանթեոնի ազդեցությունը խեթականի վրա:

Չնայած խուրրի–ուրարտական լեզվական ու մշակութային ընդհանրություններին, նրանց դիցաբանական պանթեոնները քիչ ընդհանրություններ ունեն: Այս դեպքում նկատենք, որ խուրրիական տարբեր ցեղերի պանթեոնները ևս տարբերվել են իրարից, օրինակ Արրապխայի խուրրիական պանթեոնը տարբերվել է Միտանիի, Կիցվատնայի և այլ վայրերի պանթեոններից: Տարբերվում էին նաև հարթավայրային և լեռնաբնակ խուրրիների պանթեոններն ու կրոնական, ծիսական արարողությունները: Դա բնական պետք է համարել, եթե ի նկատի ունենանք այն հսկայական տարածքը՝ Միջերկրական ծովից մինչև Կովկասի նախալեռներ, ուր ապրում էին խուրրիները:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

Խուրրիները նշանակալից ձեռքբերումներ ունեն նաև նյութական մշակույթի ասպարեզում: Միտանիի հզորության ժամանակ կատարվել են երկու մեծ հայտնագործություններ, որոնք հարստացրել են նաև Փյունիկիայի և Սիրիայի մշակույթները: Մ.թ.ա. 18–17–րդ դդ. խուրրիաբնակ Հյուսիսային Սիրիայում և Վերին Միջագետքում հայտնագործվել է **անթափանց գունավոր ապակուց** սպասք պատրաստելու եղանակը[45]: Այս արվեստը շատ արագ ընդօրինակել են Ստորին Միջագետքի բնակիչները, փյունիկեցիները, եգիպտացիներն ու բաբելացիները: Երկար ժամանակ խուրրիները և փյունիկեցիները ապակե սպասք պատրաստելու և այն վաճառելու մենաշնորհ են ունեցել համաշխարհային առևտրում: Ենթադրվում է, որ խուրրիներն են առաջինը պատրաստել **բրոնզե թերթավոր**

42. *Г. Вильхельм*, с. 112.
43. *Г. Вильхельм*, с. 113.
44. АВИИУ, 49 (112).
45. ИДВ, I, с. 222. ИДВ, II, с. 88.

Առյուծի պատկեր Ուրկեշի Ներիգալ աստծո տաճարից

զրահները, բրոնզե կատարավոր սաղավարտը և բրոնզե սուրը: Միտանին նաև ձիաբուծության և մարտակառքերի պատրաստման հնագույն երկիրն է:

Խուրրիական մշակույթի եզակի նմուշներ են Ուրկեշից հայտնաբերված առյուծի երկու բրոնզե քանդակները (սեպագիր տեքստով, մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջ): Տեքստը վկայում է, որ Ուրկեշի տիրակալ Տիշաթալը տաճար է հիմնադրել՝ նվիրված Ներիգալ աստծուն: Շատ հետաքրքիր քանդակ է հայտնաբերվել Ալալախում: Այն պատկերում է Իդրիմի թագավորին՝ նստած առյուծներով զարդարված գահին: Համեմատաբար լավ է ուսումնասիրված խուրրիական նյութական մշակույթի երկու տեսակ՝ կիրառական արվեստը՝ **խեցեղենը և գլանաձև կնիքագործությունը:**

Մ.թ.ա. 15–րդ դարում Առաջավոր Ասիայում հայտնաբերվել է յուրատեսակ խեցեղեն, որի տարածման արեալը համապատասխանում է Միտանի պետության տարածքին, ներառյալ վասալ պետությունները արևելքում և արևմուտքում: Այդ խեցեղենը յուրահատուկ է իր ձևով ու զարդանախշով: Գերակշռում են սլացիկ անոթները և կարճ ոտքերով (նստուկ) գավաթները: Կարմիր դարչնագույնից մինչև սև մուգ ֆոնի վրա պատկերված են երկրաչափական (պարույր, եռանկյունի, զիգզագ, հյուսք), կենդանական ու բուսական (թռչուններ, այծեր, արմավի ճյուղեր) պատկերներ: Ուսումնասիրողները առանձնացնում են Նուզյան խեցին, որը հայտնաբերվել է Նուզում: Ավելի ուշ Նուզյան խեցուց առաջացել է Ալալախյան խեցին: Այս խեցեղենները (Նուզյան և Ալալախյան) աչքի են ընկնում հարուստ բուսական զարդանախշերով[46]: Սև կամ շագանակագույն ֆոնին պատկերվել են սպիտակ զարդանախշեր:

Երկաթե դաստակով բրոնզե թուր, Նուզի

Խուրրիական մշակույթի նվաճում է համարվում նաև միտանյան կնիքագործության հայտնի ոճը, որին հատուկ է գլանաձև կնիքի տիպը, պատրաստված սև հեպատիտից և այլ մետաղներից: Խուրրիական կնիքները զարդարված են առասպելական էակների՝ հրեշների, թևավոր սֆինքսների, առյուծների, այծերի և եղջերուների պատկերներով, որոնք եզերված են հյուսածո քանդակներով: Հայտնա-

46. *Г. Вильхельм*, с. 132: Ի դեպ ուսումնասիրողները այս մշակույթն են դնում Կրետեյան մշակույթի զարգացման հիմքում:

Արրապխայի թագավոր Իթիի-Թեշշուբի գլանաձև կնիքադրոշմը

Արևի թևավոր սկավառակ, Սաուսադաթրարի գլանաձև կնիքը



Միտանյան գլանաձև կնիքադրոշմ



Նուզի միջնաբերդից հայտնաբերված կնիքադրոշմ, նեսրաշիզը որսի ժամանակ

Միջագետքյան խեցի, Ալալախ (այժմ՝ Ալչանա)

բերվել են Սաուսադատտար և Արրապխայի Իտխի-Թեշշուբ թագավորների կնիքները, որոնք հայտնի են «քերքուկյան կնիքներ» անունով: Այս կնիքների վրա պատկերված են թևավոր առասպելական էակների պատկերներ, սրբազան ծառ, որի սաղարթը բաղկացած է արմավի ճյուղերից, արևի սկավառակ և այլն:

Խուրրիական կնիքները աչքի են ընկնում յուրատեսակ մի առանձնահատկությամբ: Կնիքագործ վարպետները կնիքի մակերեսը լցրել են պատկերներով, այնպես որ դատարկ տարածություն չմնա: Սաուսադատտարի կնիքի վրա պատկերված է արևի թևավոր սկավառակ առյուծների վրա, որը արևի պաշտամունքն է խորհրդանշում: Քերքուկյան կնիքները մեծ



Միջագետքյան խեցի, Նուզի, Թել-Բրակ

ազդեցություն են ունեցել ասորեստանյան կնիքագործության վրա, սակայն հետո ասորեստանյանը նոր զարգացում է ունեցել:

Խուրրիական մշակութային արեալը շատ ընդարձակ էր: Խեցեգործության, սպառազինության, շինարարության, ճարտարապետության և այլ ասպարեզներում եղած ընդհանրությունները ուսումնասիրողներին (Բ. Պիոտրովսկի) թույլ են տալիս ասելու, որ ամուր կապեր են եղել Վերին Միջագետքի, Հյուսիսային Սիրիայի, Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկասի բնակիչների միջև, «Հավանաբար մ.թ.ա. 2-րդ հազարամյակում միատարր էթնիկ խուրրի բնակչություն է եղել Արրապխայից, Հյուսիսային Միտանիից մինչև ժամանակակից Հայաստան ու Հարավային Վրաստան (հնարավոր է մինչև Կովկասյան լեռնաշղթա)»[47]: Ինչպես վերևում նշվել է, մեծ ընդհանրություններ կան շումերական (շումերա-աքադական) և խուրրիական մշակութային արժեքների միջև: Մեծ է եղել խուրրիական մշակույթի ազդեցությունը խեթական մշակույթի վրա:

Խուրրիական մշակույթի ազդեցությունը զգացվում է փոքրասիական Տավրոսից և Հյուսիսային Միջագետքից հարավ ընկած տարածքներում[48]:

47. ИДВ, II, с. 90.
48. ИДВ, II, с. 90.

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից սեմականացող Աշշուրը (ապագա Ասորեստանը) ևս կրել է խուրրիական մշակույթի ազդեցությունը:

Այսպիսով՝ չնայած խուրրիական մշակույթի մասին ամբողջական պատկերացում չունենք՝ հնագիտական նյութի քիչ լինելու պատճառով, այնուամենայնիվ հայտնաբերված հոգևոր (տեքստեր, գրավոր ստեղծագործություններ) և նյութական (կնիքներ, խեցեղեն) մշակութային արժեքները թույլ են տալիս ասելու, որ Միջերկրական ծովից մինչև Կովկասի նախալեռներ ընկած տարածքներում ապրող խուրրիները՝ հայ-արմենները են կանգնած առաջավորասիական հնագույն քաղաքակրթության ստեղծման ակունքներում:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մ.թ.ա. 15–14-րդ դարերում Հայկական լեռնաշխարհի հարավում Վանա լճի և Զագրոսի լեռների միջև ընկած տարածքներում ապրող խուրրիական (հայկական) միտանի ցեղի առաջնորդները (թագավորներ) և ազնվականությունը կարողացան իրենց շուրջը համախմբել ու միավորել խուրրիական (հայկական) շատ ցեղերի, մանր ու միջին պետական կազմավորումների և ստեղծել Միտանի պետությունը: Միտանին Հայկական լեռնաշխարհում ստեղծված առաջին հայկական հզոր պետությունն էր: Հզոր պետության ստեղծումը վկայում է Միտանիի թագավորների համախմբող դերի, ուժի ու հմտության մասին, որը թույլ է տվել մոտ 2,5 դար Առաջավոր Ասիայում պահպանել ուժեղ լինելու և առաջատարի համբավը:

Միտանիի թագավորները համառ ու դժվարին պայքարի մեջ էին Հին աշխարհի ուժեղ պետությունների՝ Եգիպտոսի ու Խաթթիի հետ և դժվարին պայքարում հաջողության են հասել, ստեղծելով ուժեղ պետություն, որի սահմանները տարածվել են Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջաններից, Կիլիկիայից մինչև Աշշուր, Նինվե, Արրապխա (Քերքուկ) ու Կովկասի նախալեռներ:

Միտանին Առաջավոր Ասիայում կենտրոնական դիրք է գրավել: Նրա հսկողության տակ են գտնվել այն բոլոր առևտրական ճանապարհները, որոնք կապել են Միջերկրականի արևելյան առափնյա մասերը Միջագետքի, Զագրոսի ու Պոնտոսի հետ: Նրա ձեռքին էին Եփրատ ու Տիգրիս գետերի ակունքների շրջանը, Սիրիայի հյուսիսի հարուստ ու ծաղկուն քաղաքները, որոնք հիմնականում խուրրիաբնակ էին և ծաղկուն ու հարուստ էին դարձել խուրրիների շնորհիվ:

Առաջավոր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում 19–20-րդ դարերում կատարված հնագիտական պեղումները վկայում են, որ դեռևս մ.թ.ա. 8–4-րդ հազարամյակներում ստեղծվել են հզոր մշակույթներ, որոնք հայտնի են Կոնիայի հարթավայրի, նեոլիթյան, հալաֆ-հասունյան (ավելի ուշ՝

Սամարրյան), շենգավիթյան կամ կուր-արաքսյան և այլ անուններով: Այս մշակույթների հայրենիքը՝ Հյուսիսային Միջագետքը, Հայկական լեռնաշխարհն ու շրջակա տարածքներն են, իսկ այդ մշակույթների ու քաղաքակրթությունների ստեղծման ակունքներում կանգնած են Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ խուրրիները (հայ-արմենները):

Հայ-արմենները վաղագույն ժամանակներից զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ, խեցեգործությամբ ու մետաղների մշակմամբ: Իսկ ընդունված է, որ մշակութային այս տարրերն են դրված մարդու կողմից ստեղծված վաղ քաղաքակրթության հիմքում: Հյուսիսային Միջագետքում, Հայկական լեռնաշխարհում և շրջակա տարածքներում հիմնադրվել են բազմաթիվ բնակավայրեր՝ գյուղեր ու քաղաքներ, այդ թվում մայրաքաղաք Վաշշուգանեն, Երուսաղեմը, Աշշուրը, Նինվեն, Բաբելոնը, Ալալախը (այժմ Ատչանա), Արրապխան կամ Արրապխեն (այժմ Քերքուկ), Հարրանը (Խառան), որոնք հարստացել են արհեստների ու առևտրի շնորհիվ: Ստեղծված հարստությունը և մշակույթը գրավել են հայ-արմենների հարևանությամբ ապրող ցեղերի ուշադրությունը և մ.թ.ա. 3–2-րդ հազարամյակներից (հավանաբար նաև ավելի վաղ) սկսվել են սեմական ցեղերի (աքադացիներ, բաբելացիներ, ասորեստանցիներ, արամեացիներ) ու եգիպտական փարավոնների թալանչիական, կողոպտչական արշավանքները դեպի Հյուսիսային Միջագետք, Հայկական լեռնաշխարհ ու շրջակա տարածքներ:

Խուրրի թագավորներին երկար ժամանակ հաջողվել է երկիրը զերծ պահել ներքին դժգոհություններից ու գժտություններից: Սակայն արտաքին թշնամու (Խաթթի, սեմականացող Բաբելոն ու Աշշուր) սադրանքների հետևանքով երկրում սկսվել են գահակալական գժտություններ, որոնք էլ ճակատագրական են դարձել Միտանիի համար: Միտանին նախ բաժանվել է երկու՝ Խուրրի և Միտանի մասերի, իսկ ավելի ուշ՝ չկարողանալով դիմակայել սեմական ցեղերի, հատկապես հզորացող Աշշուրի (ապագա Ասորեստանի) անընդհատ հարձակումներին, պարտություն է կրել և որպես պետություն դադարել գոյություն ունենալուց:

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներից սկսված սեմական ցեղերի ներհոսքը դեպի խուրրիաբնակ Հյուսիսային Միջագետք, Հարավային Միջագետք, Հայկական լեռնաշխարհի հարավային մասեր, Միջերկրականի արևելյան ափամերձ շրջաններ՝ Պաղեստին, Սիրիա, Հորդանան, Փյունիկիա (Լիբանան) և այլ տարածքներ էլ ավելի է ուժեղացել Միտանիի թուլացումից և անկումից հետո: Սկսվել էր սեմականացող Միջագետք-Հայկական լեռնաշխարհ հակամարտությունը: Այդ հակամարտության արձագանքներն են Մ. Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության միջոցով պահպանված «Հայկ ու Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», Արամ թագավորի մասին և այլ ավանդազրույցներ:

Սեմականանում են նախկինում խուրրիաբնակ (հայաբնակ) Բաբելոնը, Աշշուրը, Նինվեն, Երուսաղեմը, Արրապխան (Քերքուկ), Հյուսիսային Միջագետքի շատ տարածքներ, նաև Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջանները և այլն: Սեմական ցեղերի ճնշման տակ հայկական (խուրրիական) ցեղերը մղվել են դեպի լեռներ: Հարթավայրերում մնացողները շրջապատվել են սեմական ցեղերով, կտրվել ցեղակիցներից ու, չնայած երկարատև դիմակայությանը, ի վերջո ծուլվել նրանց: Այդ է պատճառը, որ Ասորեստանի, Բաբելոնի ու Միջերկրական ծովի արևելյան ափամերձ շրջանների, Սիրիա-Պաղեստինի, Լիբանանի և այլ վայրերի բնակչության մեջ (նաև նրանց հետնորդների մեջ) շատ են արմենոիդ մարդաբանական տիպին պատկանող բնակիչները:

Այսպիսով, մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսին ստեղծված հզոր Միտանի պետությունը ժամանակի հզոր պետություններից մեկն էր Առաջավոր Ասիայում, որն ինչպես նշվեց վերևում տարածվում էր Միջերկրական ծովից մինչև Կովկասի նախալեռներ: Այդ տարածքը համաշխարհային քաղաքակրթության ու մշակույթի ստեղծման հնագույն տարածքներից է: Մեծ է հնագույն գրավոր աղբյուրներում խուրրիներ (նաև միտանիներ, հայասացիներ, նաիրցիներ...) անվանվող Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայ-արմենների ավանդը այդ քաղաքակրթության ստեղծման մեջ: Այս առումով ավելորդ չէ հիշել Մ. Խորենացու մի վկայությունը: Խոսելով Տիգրան Երվանդյանի սխրագործությունների մասին (մ.թ.ա. 1-ին հազարամյակի կես) պատմահայրը գրում է. (նա) «մեր բնակության սահմաններն ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը» (Մ. Խորենացի, 1981, էջ 85): Ինչպես տեսնում ենք, Մ. Խորենացու վկայությունը պատահական արտահայտություն չի եղել: Այն ունեցել է պատմական հիմք, որի մասին հավանաբար Մ. Խորենացին իմացել է չպահպանված հին մատյաններից: Բացի սերունդներին փոխանցվող նյութական ու հոգևոր արժեքներից, կա նաև գենետիկ հիշողություն, կապ անցյալի հետ, որը նույնպես հազարամյակներ շարունակ պահպանվում ու փոխանցվում է հետագա սերունդներին, այս դեպքում արարչական ժամանակներից իր բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում, իր հողի վրա ապրող հայ-արմենների և նրանց ժառանգներին:

SUMMARY

In the 14th -15th centuries BC the chieftains (kings) and nobles of the Hurri-Armenian tribe of Mitani (Mittani,Mitanni) living in the south of the Armenian Highland between Lake Van and the Zagros mountains could consolidate a number of the Hurri-Armenian tribes small and middle state formations and establish the State of Mitani which was the first Armenian powerful state in the Armenian Highland. The kings of Mitani struggled successfully against the two powerful states of the ancient world Egypt and the Hittite kingdom and established a powerful state, the boundaries of which stretched from the eastern shores of the Mediterranean Sea and Cilicia to Ashur, Nineveh, Arrapkha (Kerkuk),the Zagros and in the north-east - to the Caucasian foothills.

The powerful Mitani had a central position in western Asia. Mitani had taken under its control all the trade routs binding the eastern offshore regions of the Mediterranean Sea with Mesopotamia, Zagros and Pontus. Mitani controlled the region of the sources of the Tigris and the Euphrates rivers as well as rich and blossoming cities of North Syria which were populated mainly by the Hurrians and became rich mainly due to Hurries.

According to the archeological excavations carried out during the 19th – 20th centuries in western Asia and, particularly, in the Armenian Highland wealthy cultures establish which are known by the names of the Konya lowland, Neolithic, Halaf-Hasun (later Samarian), Shengavitian or Kur-Arax and so on. The homeland of these cultures is northern Mesopotamia, the Armenian Highlands and neighbouring areas. At the sources of these cultures and civilizations were the autochthones of the Armenian Highland - the Hurries (Hay-Armenians).

The states and state-formations founded by the autochthones-Hay-Armenians of the Armenian Highland have ancient history and during millennia many tribes and peoples appeared by their neighbourhood which used different names concerning our country and people.

For example, Sumerians, the settlements of the Hurries, the southern parts of the

Armenian Highland and Northern Mesopotamia called Subir, Acadians – Subaru-Subari, Subartu (Shubartu). Egyptians called Hurries by the name of h'rw (kharu, khuru). They also used the names Nhrjn, Nakhrina, Nakharini, Maittani and Mitani. The written sources in the Assyrian and Babylonian scripts used the names Hanigalbat, Haligalbat. The Hittites used the name Hurry (Hurla), the Hurry kings called themselves Hurry, and the state Mitani.

The cuneiform group hu-u-ur researchers of the ancient inscriptions (H. Winkler, E. Meyer, E. Waydner, Forer, Waysbakh) read har, others - hur (B. Hrozni, A. Ungnad). Researcher connects the form har with the name Arians, and language of Hurries consider as an the old Arian language. Later in the text found in the capital of the Hittites Hattusas the form hurlili was read as hurri. Thus was rejected the viewpoint which accepted the form harri and considered Hurrians as Arians. In scientific world the form hurry was accepted. In the middle of the 20-th century many new viewpoints and opinions appeared about the proto-homeland of the Arian tribes. The theory considering the Armenian Highland and the neighbouring territories as the Homeland of the ancestors of the Indo-Europeans was scientifically put into circulation. It is testified by the archeological excavations (early agriculture, pottery, metallurgy, the cult of Sun-God and its symbols (cross, swastika), anthropological (continuity of anthropological type of "Armenoid"), linguistic (the Armenian language has all phonemes of the Indo-European language family). One can also notice that there is a particle ar (ur) both in the words harri and hurri, which also appears in the forms ir/er. Consequently, both the forms hurri and harri with their ar, ur roots are connected with the name of the God Ar –Ara(Cosmic Creator,in Armenian –Araritch) and the Armenian Highland (Armani, Aratta, Ararat, Armenia, Arax, Aragats, Urartu, Urme, Urmia).

From ancient times Hay-Armenians were engaged in agriculture, cattle-breeding, metallurgy and pottery. It is accepted that these cultural elements created by human beings are in the basis of early civilization. Many settlements - villages and cities were founded in Northern Mesopotamia, the Armenian Highland and surrounding territories, including the capital city Vashugane, Jerusalem, Ashur, Nineveh, Babylon, Alalakh, Arrapkha (now Kirkuk), which became rich due to trade and handicraft. The wealthy cities and developed cultures attracted many tribes living in the neighbourhood of the Hay-Armenians and from the 3d-2nd milenium B.C. (probably earlier) began the devastating invasions of the Semitic tribes, the Hittites and Egyptians to northern Mesopotamia, the Armenian Highland and so on.

At the beginning of the 2-nd millennium B.C. two aggressive states - the Hittite and Egyptian, in the neighborhood of the Hurries, began realization of the expansionist policy. And in order to resist against these two hostile states the Hurries had to

unite and establish a powerful state. This project was successfully implemented by the Mitani.kings. Before the unification of the tribes of Hurry and the formation of the state of Mitani, the Hittite texts inform about the military union of the Hurrian kings. During the struggle against Hittits the king of Mitani managed to lead the king of Hurrian warriors, and then the countries of the kings of the Hurrian tribes.

Owing to the military-political situation the military alliance of the united tribes was followed by their political and economic unification. According to the written sources the first king of Mitani was Shutarna I (the end of 16-th century B.C.), the son of Kirta. During the times of Parattarna (the beginning of 15-th century B.C.) and his successor Sausadattar (the middle of the 15-th century) Mitani became on the greatest states of western Asia in complicated international political and military conditions. The burglar invasions of Egyptian kings were going on to Syria-Palestine. Tutmos I (the second part of 16-th century B.C.), Tutmos III (the second part of 15-th century), Amenhotep II (the end of the 15-th century B.C.) and Tutmos IV had organized many campaigns to Syria-Palestine often reaching the Euphrates. The periodical invasions conformed that the Hurrians resisted firmly the Egyptians which made them to sign a peace treaty at the reign of Tutmos IV. According to the treaty Karkemish, on the one hand, Halep and Alalakh remained under Mitani's control, and on the other hand, Palestine and southern parts of Syria passed to Egypt. Matchmaking ties were established between Egyptians and Hurrians. The princesses of Mitani Gilu-Hepan (the daughter of Shutarna II), Tadu Hepa (also Nefertiti, the daughter of Tushratta) and Tia, the daughter of the prince of Nihria (Nairi) were famous queens in the Egyptian royal court. Signing the peace treaty with Egypt Mitani had an opportunity to become more powerful and prosperous. But Hittits didn't accept that state, which for its own turn challenged territories in Syria and along the coast of the Mediterranean sea. But all attempts of the Hittites were unsuccessful being confronted by the military forces of the Hurrians.

In 1345 B.C. Supiluliumas I (1345-1322 B.C.), a skilful diplomat, succeeded to the thron in Hatti. His period of reign was fatal for Mitani. After the king of Mitani Shutarna II during the struggle for succession on the throne between his son Artashumara and his brother Artadama the latter was killed by the courtier Utkhi. But the supporters of Artashumara succeeded to enthrone his younger brother Tushrata. As a result of the rivalry of external and internal hostile forces Mitani was divided into two parts: Hurri (the basin of the Aratsani) and Mitani (the basin of Tigris, Aghdznik, Tsopk). In this situation Supiluliumas I played a great role. Further attempts of the Hurrians to recover the might of the state failed. Strengthening (and semitizing) Assyria and Babylon for their turn continuously attacked and weakened Mitani, expending their boundaries on account of weakening Mitani. Hittits,

Babylon, Assyria and other small kingdoms united against Mitani. As a result of that Mitani was defeated and divided by them. However, the kings of Assyria, Salmanasar I (1277-1245 B.C.), Tukulti- Ninurta I, Tiglatpalasar I (1115-1077 BC) and others in their inscriptions attested to frequent rebellions of the Hurriians and their punitive campaigns to suppress them. In the middle of the 13-th century B.C. ended the history of Mitani (Hurri-Mittani), the ancient Armenian state established in the Armenian Highland.

From the beginning of 3-rd millennium BC the influx of the Semitic tribes to the Hurry-populated Mesopotamia, southern parts of the Armenian Highland, eastern offshore regions of the Mediterranean sea (Palestine, Syria, Jordan, Phonice (Lebanon) and the other territories intensified especially after the fall of Mitani. The confrontation had started between semitizing Messopotamia and the Armenian Highland (the Armenian-Arrian territory). That confrontation was reflected in the epic histories of "Haik and Bell", "Ara Handsome and Shamiram", "About King Aram" and others owing to Movses Khorenatsi's "History of Armenian"(5th century). The fall of Mitani was the end of the state, but the nation continued to live. In the north of the Armenian Highland the state of Haiassa and in the south Alzi (Aghdznik) continued their existence .At the same time new state formations had been established such as Shupria (Arme-Shupria, Sasun), Isuva (Tsopk), Babkhi (the mountainous regions of the Armenian Taurus) and so on.

After Mitani the states of the Hittits (the beginning of 12-th century B.C.) and Egypt (the end of I century B.C.) also vanished from the historic arena. And while these states vanished leaving only the name and the culture, the state of Mitani had a new continuation on behalf of a state of Ararat-Urartu formed at the beginning of the 9-th century B.C.

РЕЗЮМЕ

В 15–14 вв. до н. э. вожди (цари) и знать хурритских (армянских) племен митани, живущих на юге Армянского нагорья, между озером Ван и горами Загроса, смогли сплотить и объединить вокруг себя множество хурритских (армянских) племен, мелкие и средние государственные образования и создать государство Митани (Митанни, Миттани, Хурри–Митани). Митани стало первым мощным армянским государством на территории Армянского нагорья.

Воюя с сильнейшими государствами Древнего мира, Египтом, Хеттским царством, цари Митани, в ходе упорной борьбы достигли успеха, создав крупнейшую державу, чьи границы простирались от восточного побережья Средиземного моря и Киликии до Ашшура, Ниневии, Аррапхи (совр. Керкук), Загроса, а на юго-востоке до Кавказского предгорья.

В передней Азии сильное Митанийское царство занимало центральное место. Оно контролировало торговые пути, которые связывали районы Восточно-средиземноморского побережья с Месопотамией, Загросом и Понтом. Под влиянием Митани находилась территория, охватывающая устья рек Ефрата и Тигра, а также богатые и цветущие города на севере Сирии, населенные в основном хурритами. Именно благодаря хурритам и процветали эти города.

В 19–20 вв. археологические раскопки, произведенные в Передней Азии и Армянском нагорье свидетельствовали о том, что еще в 8–4-ом тысячелетиях до н. э. на этих территориях возникли высокоразвитые культуры, известные как культура долины Конни, неолитская, халаф-хассунская (позже самаррская), шенгавитская или куро-аракская культура.

Северная Месопотамия, Армянское нагорье и прилегающие к ним территории–родина этих культур. А у истоков создания культур стоят коренные жители Армянского нагорья – хурриты (hay-armenians).

Государства и государственные образования созданные коренными

жителями Армянского нагорья, hay-арменами, имеют давнишнюю историю. На протяжении тысячелетий племена и народы, оказавшиеся по соседству, давали разные наименования нашему народу и стране. Так например, шумеры места обитания хурритов, южные районы Армянского нагорья и Северную Месопотамию называли Субир, аккадцы Субару, Субари, Субарту (Шубарту).

Египтяне хурритов называли h'rw (хару, хуру). Они использовали также наименования Нахрина, Нахарини, Нахарина, Maittaniu, Mittani. Аккадоязычные (вавилонские, ассирийские) письменные источники использовали наименования – Hanigalbat, Haligalbat, Hanagalbat, а хетты – Hurri (Hurla). Хурритские цари себя называли hurri, а страну Mitanni.

Группу знаков древнейших клинописей, hu-ur одни исследователи (Г. Винклер, Э. Мейер, Э. Ваиднер, Форер, Вайсбах) читали как <u>h</u>ar, другие – (Б. Грозный, А. Унгна) как <u>h</u>ur. При чтении, как <u>h</u>ar, исследователи связывали с арийским наименованием, а хурритский язык считали древним арийским языком. Позже, в обнаруженном из хетской столицы Хаттусы тексте, hurlili (на хеттском языке hurla – хурриты) было прочтено как hurri: тем самым harri как вариант отпал, отпала и версия о том, что хурриты есть арийцы. В научном мире как наименование был принят вариант hurri:

Во второй половине 20-ого века появились новые мнения о прародине арийских племен. Была выдвинута точка зрения, согласно которой прародиной арийских племен, предков индоевропейцев, является Армянское нагорье и прилегающие к нему территории. Об этом свидетельствуют результаты археологических раскопок (раннее земледелие, гончарное ремесло, металлообработка, культ солнечного божества и его символов – креста, свастики, культ лошади, льва, орла), антропологические исследования продолжительность типа арменоид, лингвистические исследования (в армянском языке присутствуют все звуки, свойственные языкам индоевропейской языковой семье) и т. д. В выше упомянутых наименованиях hurri (h-ur-ri) и harri (h-ar-ri) как оказалось частички ar (ur) могли быть заменены на ir и er. Следовательно, и <u>h</u>urri, и <u>h</u>arri своими корнями <u>ur</u> и <u>ar</u> связываются с именами бога Ар (Ара) и Армянским нагорьем (Армани, Аратта, Арарат, Армения, Араке, Арагац..., Урарту, Урме, Урмиа...).

С древнейших времен hay-armenias занимались земледелием, скотоводством, гончарным ремеслом и обработкой металлов, т. е. всем тем, что составляло основу ранней человеческой цивилизации.

В северной Месопотамии и Армянском нагорье, а также на

прилегающих к ним территориях были основаны многочисленные поселения, деревни и города. Среди них митаннийская столица Вашшукани, Иерусалим, Ашшур, Ниневия, Вавилон, Алалах (совр. Атчана), Аррапха (совр. Кернук) разбогатевшие благодаря ремеслам и торговли.

Богатства и достаток привлекали внимание племен, живущих рядом с hay-armenias. С 3–2 тысячелетия до н. э. (возможно еще раньше) начались опустошительные походы семитских племен (аккадцев, вавилонян, ассирийцев), хеттов и египетских фараонов на северную Месопотамию, Армянское нагорье и прилегающие к ним территории. В начале 2-го тысячалетия до н. э. усилились захватнические настроения соседствующих с хурритами хеттов и египтян. Чтобы противостоять двум опасным соседям, хурритам необходимо было объединиться и создать сильное государство, что и осуществили успешно хурритские (армянские) цари.

До объединения хурритских (армянских) племен и образования государства Митани, хеттские тексты неоднократно свидетельствовали о военном союзе **царей хурритских войнов**. Во время борьбы против хеттов, митанийскому царю (имя неизвестно) удалось возглавить уже объединившихся царей хурритских войнов. Вскоре военному союзу племен, объединенных во время внешней угрозы, последовало их экономическое и политическое объединение. Согласно письменным источникам, первым царем Митани был Шуттарна I (конец 16 в. до н. э.), сын Кирты. Во времена его последователей Параттарны (начало 15 в. до н. э.) и Саусадаттары (половина 15 в. до н. э.) государство Митани достигло своего расцвета. При Саусадаттаре Митани стало одним из сильнейших государств Передней Азии. Усиление Митани происходило при сложнейших внешних военнополитических условиях. Продолжались грабительские походы египетских фараонов на Сирию и Палестину. Тутмос I (вторая полавина 16 в. до н. э.), Тутмос III (второе половина 15 в. до н. э.), Аменхотеп II (конец 15 в. до н. э.) и Тутмос IV совершая частые набеги на Сирию и Палестину, доходили до берегов Ефрата. Повторные походы свидетельствовали о том, что хурриты оказывали достойное сопротивление египтянам, что в свою очередь привело к заключению соглашения между противниками. Согласно договору, скрепленному при Тутмосе IV, Каркемыш, Алепп и Алалах оставались под властью Митани, а южные части Палестины и Сирии отходили к

Египту. Союз Египта и Митани скрепляется династическими браками. Принцессы Митани – Гилу Хепа (дочь Шуттарны II-го), Таду Хепа (она же Нефертити, дочь Тушратты), Тиа (дочь вельможи Нихрины–Наирин) после замужества становятся известными царицами при египетском дворе. Заключив с Египтом мирный договор, митанийское царство получило возможность спокойно развиваясь еще более укреплять свою мощь. С создавшимся положением не могло смириться Хеттское царство, которое имело свои притензии на расширение границ царства вплоть до берегов Средиземного моря и Сирии. Однако столкнувшись с военной мощью хурритов, все попытки хеттов окончились неудачей.

В 1345 г. до н. э. на хеттский престол взошел Супилулиума I (1345–1322 гг. до н. э.), искушенный дипломат и дальновидный политик. Происшедшие при нем события оказались судьбоносными для Митани.

После царя Шуттарны II-ого в Митани началась борьба за престол между его сыном Арташумаром и братом Артадамом. Вскоре Арташумара был убит придворным Утхием. Однако сторонникам Арташумары удалось посадить на трон его младшего брата Тушраму. Дворцовые заговоры и интриги продолжали ослаблять гоударство. В конце концов Митани распалось на две части – Хурри (бассейн реки Арацани) и Митани (басейн реки Тигра, Агзник, Цопк).

Распад Митани – результат победы внутренних и внешних вражеских сил. Немаловажную роль при этом сыграл хеттский царь Супилулиума I.

Дальнейшие попытки хурритов возродить былую мощь государства не имели успеха. Усиливающиеся (и семитизирующиеся) Ассирия и Вавилон в свою очередь постоянными набегами ослабляя государство Митани, расширяли за его счет свои границы. Против Митани объединились Вавилон, Хеттское царство, Ассирия и другие мелкие царства. Потерпев поражение в неравной борьбе, Митани оказалось поделенным на части между ними. Однако ассирийские цари Салманасар I (1274–1245 гг. до н. э.), Тукульти–Нинурта I, Тиглат–Паласар I (1115–1077 гг. до н. э.) и другие в своих многочисленных актах свидетельствовали о том, что хурриты часто восставали из-за чего возникала необходимость снова и снова подавлять эти восстания.

В середине 13-ого в до н. э. закончилась история древнейшего на Армянском нагорье армянского государства Митани (Хурри–Митани).

Начавшийся с начала 3-его тысячелетия до н. э. поток семитских племен, на заселенную хурритами Северную Месопотамию, Южную Месопотамию, южные ройоны Армянского нагорья, районы Восточно-средиземноморского побережья-Палестину, Сирию, Иорданию,

Финикию (Ливан) и другие территории, особенно усиливается после падения государства Митани. Начинается противостояние между семитизируемой Месопотамией и Армянским нагорьем (армяно-арийской территорией).

Отголосками этого противостояния являются народные предания о <Айке и Белле>, <Ара Прекрасном и Шамирам>, <О царе Араме>, дошедшие до нас благодаря <Истории Армении> Мовсеса Хоренаци.

Упадок Митании означал конец истории государства, но не народа. На севере Армянского нагорья продолжало существовать государство Айаса, на юге–Алзи (Агзник). Зарождались новые государственные объединения: Шуприа (Арме-Шуприа, Сасун) Исува (Цопк), Бабхи (горные районы Армянского Тавра) и другие.

После падения Митани с исторической арены изчезают также Хеттское царство (начало 12 в. до н. э.) и Египет (конец первого тысячелетия). Если эти государства исчезли, оставив только название и культуру, то Митани получило новое продолжение в лице сформированного в 9-ом веке до н. э. нового армянского государства Арарат–Урарту.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԵՐԻ ԵՎ ԱԶՆՎԱԿԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսի Առաջավոր Ասիայի գրավոր աղբյուրները վկայում են Մեծ Զաբ գետի վերին հոսանքների շրջանում, Վանա և Ուրմիա լճերի միջև գտնվող Մանա պետության մասին: Այս պետությունը հիշատակվում է Մաննա, Մենի (ասուրական արձանագրություններ), Մանա (ուրարտական արձանագրություններ), Մինի (Աստվածաշունչ), Մատիենե (հունական գրավոր աղբյուրներ) և այլ անուններով: Հույն պատմիչ Ստրաբոնը Ուրմիա-Կապուտան լիճը անվանում է Մանտիենե լիճ[1]: Հայտնի է, որ այս տարածքները խուրրիական (հայկական) միտանի ցեղի նախնական բնակության վայրերն են, հայրենիքը: Հայկական լեռնաշխարհի հողագործ, անասնապահ, հատկապես ձիաբույծ ու ձիապաշտ այս ցեղին տարբեր ժամանակներում հաջողվել է կազմակերպվել ու ստեղծել պետություն, որոնք հայտնի են Միտանի, Մանա, նաև Մարաստան–Մեդիա անուններով: Գոյություն ունենալով մի քանի հարյուրամյակ, մ. թ. ա. 616–615 թթ. Մանան նվաճվել է մ.թ.ա. 7-րդ դարում կազմավորված ու հզորացած իր արյունակից Մարաստան–Մեդիայի կողմից ու դադարել գոյություն ունենալուց որպես ինքնուրույն պետություն: Այնուհետև երկար ժամանակ Մանան և Մարաստան–Մեդիայի մի մասը կազմել են Հայաստանի անբաժան մասերը՝ լինելով հայ նախարարական տների (Արծրունի, Ամատունի, Մանդակունի, Մուրացան կամ Մարացեան) ժառանգական տիրույթները:

Միտանի պետության հասարակության վերնախավը ներկայացնող ազնվական շատ տոհմեր ու տներ պահպանել են իրենց գոյությունը նաև ուրարտական (արարատյան) և հետագա ժամանակներում:

Հայոց նախարարական տների ու տոհմերի մասին գրավոր աղբյուրները խոսում են 5-րդ դարից սկսած: Մ. Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության մեջ և «Գահնամակում» հիշատակված Արծրունի, Մանդակունի, Ամատունի, Մարզպետունի և Մուրացան (Մարացվոյն տեր՝ ըստ Մ. Խորենացու) կամ Մարացեան (ըստ «Գահնամակի») նախարարական տների ու

1. *Ստրաբոն*, Աշխարհագրություն, 11 (44.8)

տոհմերի անունները միտանյան ծագում ունեն և գալիս են միտանյան ժամանակներից:

Արծրունի նախարարական տոհմը (Վասպուրական աշխարհի տերերը) հայոց հնագույն ազնվականական տներից է, որի անունը ըստ ուսումնասիրությունների Արզն–Արձն–Արծրունի–Արծրունի անցումների հետևանք է:

Մանդակունի նախարարական տան անունը բաղկացած է **Մանդ**-ակ-ունի, **Ամատունի** անունը՝ Ա-**մատ**-ունի, Մարդապետունի անունը՝ **Մարդ**-պետ-ունի, **Մուրացան** կամ Մարացվոյն, Մարացեան անունները՝ **Մար**-ացվոյն տեր (ըստ Մ. Խորենացու՝ մարերի արքայական տնից սերված) և **Մար**-աց-եան բաղադրիչներից, որոնց մեջ առկա են **ման** (դ)-, **մար** (դ)-, **մատ**-, **մուր**- (կամ **մար**-) բաղադրիչները, որոնք անկասկած ծագում են Միտանի, Մայտենի, Մատիենե, նաև Մանա, Մարաստան պետությունների ու միտանի-մանա ցեղերի անուններից:

Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մասերը՝ Վան-Ուրմիա լճերի և Մեծ Զաբ գետի վերին ու միջին հոսանքների շրջանում գտնվող տարածքները աչքի են ընկնում այլ հետաքրքիր առանձնահատկություններով ևս, այն է. այստեղից են սերվել **հայկական** (միտանական, ուրարտական, Երվանդական) և **իրանական** (մար-մեդական, աքեմենյան) մի շարք արքայատոհմեր: Այդ տարածքում են եղել նրանց սրբավայրերը՝ Արդինի–Մուսասիրը (Խալդի աստծո պաշտամունքի կենտրոնը, Մեծ Զաբ գետի վերին հոսանքների շրջանում, պատմական Կորճայքում) և Կումենու–Կումեն (Թեյշեբա աստծո պաշտամունքի կենտրոնը, Մեծ Զաբ գետի միջին հոսանքների շրջանում):

Հայտնի են Միտանիի արքաների (նաև նրանց հայրերի) անունները (մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկիզբ), որոնք շատ հաճախ կրկնվում են: Իսկ թե ինչ արքայատոհմ, կամ արքայատոհմեր են իշխել Միտանիում, հայտնի չէ: Նույն վիճակն է Արարատ–Ուրարտուում: Դարձյալ հայտնի են արքաների (նաև նրանց հայրերի) անունները (Մենուա, Արգիշտի, Ռուսա), որոնք կրկնվում են: Իսկ դա նշանակում էր, որ իշխանությունը գտնվում էր նույն արքայատոհմի ձեռքին և գահը ժառանգվում էր հորից որդուն (հաճախ եղբորը): Երկու դեպքում էլ վկայություններ չկան որևէ արքայատոհմի մասին, ինչպես օրինակ ավելի ուշ հանդես եկած Երվանդունի (Երվանդական), Արտաշեսյան, Արշակունի, Բագրատունի արքայատոհմերն են: Միտանիում և Արարատ–Ուրարտուում արքայատոհմերի անունները չկան, բայց կա մի փաստ, որն ընդհանուր է նրանց համար, որը կապում է նրանց: Դա այդ արքայատոհմերի նույն տարածքից, նույն երկրից ծագելու փաստն է:

Հայտնի է, որ Ուրմիա լճի հարավային մասում (ներառյալ Արդինի-Մուսասիրը) ապրող միտանի ցեղի առաջնորդներին (թագավորներ) հաջողվել է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի սկզբներին միավորել խուրրիական (հայկական)

ցեղերին և ստեղծել հայոց հնագույն Միտանի պետությունը: Մ.թ.ա. 9-րդ դարում Վանա լճի հարավարևելյան մասերում ապրող հայկական ցեղերին նորից հաջողվել է Միտանիից հետո ստեղծել հայոց նոր հզոր պետություն՝ Արարատ–Ուրարտուն: Ուրարտական ժամանակաշրջանում Արդինի-Մուսասիրը սրբազան վայր է եղել իշխող արքայատոհմի համար: Այստեղ է եղել պետության հովանավոր աստված Խալդիի (Ալդի) տաճարը, այստեղ են թաղադրվել ուրարտական արքաները, այստեղ է եղել արքունիքի գանձարանը և այլն: Արդինի–Մուսասիրի այս կարգավիճակը թույլ է տալիս մտածելու, որ Ուրարտական արքայատոհմը սերտորեն կապված էր Արդինի-Մուսասիրի հետ:



Խալդի աստծո տաճարը Արդինիում (Մուսասիր), մ.թ.ա. 8-րդ դար

Ուստի պատահական չէ, որ երբ Ասորեստանի թագավոր Սարգոն 2-րդը (721–705) գրավել ու կողոպտել է Արդինի-Մուսասիրը և Խալդի աստծո տաճարը, Ռուսա 1-ինը (735–713) ինքնասպան է եղել, լսելով այդ լուրը[2]: Ուրարտական հպարտ արքայի համար մեծ սրբապղծություն էր այդ սրբավայրի գրավվելն ու կողոպտվելը թշնամու կողմից: Այդ փաստը հիշատակող Սարգոն 2-րդի արձանագրությունից հայտնի է դառնում նաև, որ ուրարտական արքայատոհմի թագավորները Արմարիլիից (Վանա և Ուրմիա լճերի միջև) էին: Սարգոնը գրում է, որ դեպի Ուրարտու արշավանքի ժամանակ նվաճել և ավերել է Արբուն՝ Ուրսայի (Ռուսա) տոհմի բնակատեղին, Ռիաքը՝ Սարդուրի քաղաքը և շրջակա յոթ այլ բնակավայրեր, որտեղ բնակվում էին արքայի եղբայրները[3]:

2. АВИИУ, 54, (72). Այլ վկայության համաձայն Ռուսան ապրել է ևս մեկ տարի, ՀԺՊ, էջ 328:
3. ՀԺՊՔ, էջ 31:

Նշենք, որ Ասորեստանի թագավորների արշավանքների ժամանակ Ուրարտուն և Մանան հաճախ օգնել են իրար և հանդես եկել միասին: Ամեն անգամ ասորեստանցիներին հարկ էր լինում նորից նվաճել Մանայի բնակավայրերը և այնտեղ նշանակել նոր կառավարիչներ, որոնք նրանց հեռանալուց հետո անմիջապես կապեր էին հաստատում ուրարտական արքաների հետ, «հույս դնելով կարգ ու կանոն չիմացող դաշնակցի՝ ուրարտացի Ուրսայի (Ռուսայի) վրա»[4], ինչպես գրում է Սարգոն 2-րդը իր արձանագրության մեջ: Այս փաստը վկայում է նրանց ազգակցական, արյունակցական կապերի մասին, որն ինչպես տեսնում ենք երևան էր գալիս հատկապես թշնամական հարձակումների ժամանակ:

Ուրարտական վերջին թագավոր Ռուսա 4-րդից (609–590) հետո Արարատ-Ուրարտուում՝ Հայաստանում գահն անցել է նոր՝ Երվանդունիների արքայատոհմին: Այս արքայատոհմի առաջին թագավորը Երվանդ 1-ին Սակավակյացն էր (580–560):

Ինչպես տեսնում ենք, այս փոփոխությունը տեղի է ունեցել Ռուսա 4-րդի մահից տասը տարի հետո: Այս ժամանակահատվածում Հայաստանում հայտնի չեն ինչ-որ խոշոր հուզումներ, ցնցումներ, օտարերկրյա ներխուժումներ, որոնք պատճառ հանդիսանային արքայատոհմի փոփոխության: Հետևաբար այդ փոփոխությունը տեղի է ունեցել խաղաղ ճանապարհով: Ուրարտական արքայատոհմը այլևս ի վիճակի չէր երաշխավորել երկրի ապահովությունն ու անվտանգությունը: Եվ գահը իրենց ձեռքն են վերցրել ազնվական այլ ընտանիքի ներկայացուցիչներ, այս դեպքում՝ Երվանդ 1-ինը և սկիզբ է դրվել Երվանդունիների (Երվանդական) արքայատոհմի իշխանությանը:

Առաջավոր Ասիայի պատմության մ.թ.ա. 6-րդ դարի սկզբների համար կարևոր գրավոր աղբյուր է «Բաբելոնյան ժամանակագրությունը», ուր վկայություն կա Բաբելոնի թագավոր Նաբուպալասարի մոտավորապես մ.թ.ա. 609 թ. դեպի Ուրարտու ձեռնարկած «մեղական» արշավանքի մասին[5]: Հավանաբար Ուրարտու-Արարատը այս ժամանակ գտնվում էր հզորացող Մարաստան-Մեդիայի ազդեցության տակ: Այդ մասին չկան ուղղակի վկայություններ: Վկայություններ չկան նաև ասորեստանցիների դեպի Ուրարտու կազմակերպած «մեղական» արշավանքի մասին: Նույնիսկ Ուրարտուում դեռ իշխում էր Ռուսա 4-րդը: Իսկ «Բաբելոնյան ժամանակագրությունը» վկայում է ասորեստանցիների դեպի Ուրարտու կատարած «մեղական արշավանքի» մասին: Ըստ փաստերի մարերը (մեդեր), մանա–մատիենները և արարատ–ուրարտացիները ազգակիցներ ու արյունակիցներ էին և Մարաստան-Մեդիան բարեկամաբար էր

4. АВИИУ, 28 (79), ՀԺՊՔ, էջ 28, (79):
5. ВДИ, 1951, 2, ՀԺՊ, էջ 336:

տրամադրված իր արյունակից Արարատ-Ուրարտուի (Հայաստանի) հանդեպ: Նույն տրամադրվածությունն էր նաև երկրի ներսում՝ Արարատ–Ուրարտուում: Դժգոհություններ չեն եղել, երբ ավելի քան 300 տարի գոյատևած Ուրարտական կամ Վանի արքայատոհմին փոխարինել է նոր՝ Երվանդունիների արքայատոհմը: Իսկ Երվանդունիների և մարերի հարաբերությունները տեր և վասալ հարաբերություններ չեն եղել, այլ մարաց թագավոր Կիաքսարը (625–585) ազգակիցների, հավասարների մեջ առաջինն է եղել: Ավելի ուշ, երբ Դարեհ 1-ին Աքեմենյանը (522-485) փորձել է սահմանափակել հայ և մար ազնվականների իրավունքները, իրադրությունը սրվել է և սկսվել են թշնամական հարաբերություններ նրանց միջև:

Մատենագրական կցկտուր տեղեկությունները վկայում են, որ Երվանդունիները ծագում են Մատիենե (Մանա) երկրին կից Մուսասիր–Արդինի երկրից: Հռոմեացի պատմիչ Պլինիոսը (1-ին դարի սկիզբ) այդ տարածքում հիշատակում է Օրոանդների ցեղի մասին[6]:

Երվանդունիները Վասպուրականի գավառներից մեկի՝ Հայոց ձորի (Արուանդունիք, Երվանդունիք) ժառանգական իշխաններն էին: Թ. Արծրունին իր «Պատմություն տանն Արծրունեաց» աշխատության մեջ աղոտ տեղեկություններ է տալիս Երվանդ թագավորի մասին, որը բնակվել է Տոսպ գավառում և գավառը նրա անունով անվանվել է նաև Երվանդական[7]: Իսկ հայոց մի շարք ձեռագիր հիշատակարաններում (18-րդ դար) Վան քաղաքը Երվանդի անունով վկայակոչված է Երուանդավան[8] ու Երվանդական անուններով: Այս տեղեկությունները թույլ են տալիս մտածել, որ Երվանդունիները ծագում են Արդինի-Մուսասիրից և մինչև հայոց գահին նստելը, գործել են Տոսպ գավառում ու Վան քաղաքում, նաև մեդական և աքեմենյան ժամանակներում: Մար-մեդական հնագույն արքայատոհմը ևս այդ տարածքից էր[9] (Դեյոկես, Կիաքսար 1-ին, Աժդահակ–Աստիագես, Կիաքսար 2-րդ, Կյուրոս Մեծ (558–550), որի ընկերն էր հայոց Երվանդ 1-ին թագավորի որդի Տիգրանը): Գոյություն ունեցող մի տեսակետի համաձայն Մատիենե-Մանային կից (հաճախ ներառյալ) Պարսուա, (Պարսուաշ, Պարսկահայք) երկրից են ծագում Աքեմենյանների իրանական արքայատոհմի անդամները[10]:

Ինչպես տեսնում ենք, արյունակցական, ազգակցական կապեր են գոյություն ունեցել խուրրի-միտանական, արարատ-ուրարտական, Երվանդական,

6. *Պլինիոս*, VI, 1, 18:
7. *Թ. Արծրունի*, Պատմություն Տանն Արծրունեաց, 50:
8. Մեսրոպ Մագիստրոսի արխիվ, թղթապանակ 33, էջ 270 (մատենադարան):
9. ՀԺՊ, 1971, էջ 440:
10. *В. Струве*, Советская этнография, 1947, VI–VII, с.117–124. ՀԺՊ, 1971, էջ 440:

մար-մեդական և Աքեմենյան արքայատոհմերի միջև: Այս բոլոր արքայատոհմերը, որոնք իշխել են մ.թ.ա. 2-րդ–1-ին հազարամյակներում ծագում են նույն տարածքից՝ Վան–Ուրմիա լճերից մինչև Մեծ Զաբ և սրբազան Արդինի-Մուսասիր: Արյունակցական, ազգակցական կապեր են գոյություն ունեցել նաև այլ ազնվական տոհմերի, ինչպես նաև ժողովուրդների միջև:

Այսպիսով, մանա-միտանիները, արարատ-ուրարտացիները (հայկական ցեղեր) և մար-մեդերը, պարսիկները, պարթևները (իրանական ցեղեր) արիական ծագում են ունեցել և նույն ցեղի տարբեր ճյուղավորումներ են:

ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԻԼԻԿԻԱՆ

Կիլիկիան աշխարհագրորեն դուրս է Հայկական լեռնաշխարհից, բայց ոչ հնագույն Հայաստանի սահմաններից և մշտապես գտնվել է հայկական մշակութային արեալում: Այս առումով Կիլիկիայի պատմությունը Հայաստանի պատմության անբաժանելի մասն է: Յուրաքանչյուր հայ Կիլիկիան ու նրա պատմությունը սիրելի ու հարազատ է համարում: Եվ անմիջապես առաջանում են մի շարք հարցեր. արդյոք պատահակա՞ն էր հայության սերն ու նվիրվածությունը և հավաքվելը այդ տարածքում, պատահակա՞ն էր հայկական թագավորության ստեղծումը Կիլիկիայում 1080թ., արդյոք Կիլիկիայում հայկական առանձին պետության ստեղծման նախադեպ եղե՞լ է նախկինում և այլն: Կիլիկիայի պատմությամբ զբաղվող գիտնականները հիմնականում ուշադրություն են դարձրել Կիլիկյան հայկական թագավորության ստեղծման պատմությանը և անտեսել կամ հարևանցիորեն են անդրադարձել հնագույն շրջանին: Մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ կարևոր է Կիլիկիայի պատմության հատկապես հնագույն շրջանը: Հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական ու հոգևոր մշակութային արժեքները վկայում են, որ Կիլիկիան ու նրա պատմությունը հնագույն ժամանակներից սերտորեն կապված են եղել Հայաստանի ու Հայկական լեռնաշխարհի հետ: Անդրադառնանք վերը հնչեցված հարցերին և փորձենք նորովի պատասխանել ինչպես այդ, այնպես էլ մի շարք այլ հարցերի:

Կիլիկիան Առաջավոր Ասիայի հնագույն երկրներից է, ուր ստեղծված մշակույթը հնագույն քաղաքակրթության անբաժանելի մասն է: Այստեղ հայտնաբերված մշակութային արժեքների (նյութական, հոգևոր) հետքերը հասնում են մ.թ.ա. 6–5-րդ հազարամյակներ:

Կիլիկիան հիմնականում բաժանվում է 2 մասի՝ Դաշտային (հարավարևելյան) և Լեռնային (հյուսիսարևելյան, կա նաև ծովային Կիլիկիա): Ղ. Ալիշանը Լեռնային Կիլիկիան անվանում է «Գահ Կիլիկիո»[1]: Երկրի հարավ-արևելքում գտնվող Ամանոսյան լեռնաշղթայով Կիլիկիան բաժանվում է Ասորիքից: Կի-

1. *Ղ. Ալիշան*, Սիսուան, Վենետիկ, Ս. Ղազար, 1885, էջ 4:

լիկյան Տավրոսի, Անտիտավրոսի և Ամանոսի լեռնաշղթաներով երեք կողմից շրջապատված Կիլիկիան հարավից ողողվում է Միջերկրական ծովի ջրերով:

Լեռնային Կիլիկիայի լեռնաշղթաները, որոնց գագաթները հաճախ հասնում են 3500 մետրի, և այնտեղ կառուցված բազմաթիվ ամրոցներն ու բերդերը (11-րդ դարում դրանց թիվը ավելի քան 100 էր, այդ թվում Լամբրոնը, Վահկան) հանդիսացել են բնական (լեռները) ու արհեստական (բերդերը) պաշտպանական ամրություններ, որոնք պաշտպանել են Կիլիկիան թշնամական հարձակումներից:

Առաջավոր Ասիայի հնագույն գրավոր աղբյուրները (խեթական, խուրրիական) վկայում են, որ մ.թ.ա. 3–2-րդ հազարամյակներում Կիլիկիան (Կիցվատնա, Կիցցուվատնա) բնակեցված էր խուրրիներով (հիշենք, որ Հայկական լեռնաշխարհի բնիկների համար օգտագործվող հնագույն գրավոր աղբյուրների hu-ur սեպախումբը ուսումնասիրողները ընթերցում են **խուր** ձևով):

Աքադի թագավոր Նարամ Սուենը (մ.թ.ա. 21-րդ դար) իր արձանագրություններից մեկում գրում է՝ «նվաճողը Սուբարուի մինչև անտառը մայրիների» այն է. Փյունիկիա, Լիբանան և Կիլիկիա: Ինչպես տեսնում ենք, Սուբարուն տարածվում էր Աքադից մինչև Փյունիկիա ու Կիլիկիա: Ընդունված է, որ Սուբարուի բնակիչները խուրրիներն էին (Սուբարուն կամ Սուբիրը աշխարհագրական անվանում է և ոչ էթնոնիմ): Հետևաբար Նարամ-Սուենի արձանագրությունը վկայում է, որ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջերին Զագրոսից մինչև Կիլիկիա ընկած տարածքները (ներառյալ Հայկական լեռնաշխարհը) բնակեցված էին խուրրիներով՝ հայ-արմենոներով:

Ուսումնասիրողները (Ջ. Պարչ, Է.Մարկվարտ, Հ.Մանանդյան) Կիցվատնա-Կիլիկիան համարում են արիական հնագույն տարածք[2]: Նրանք Հոմերոսի «Իլիականում»[3] հիշատակված հրաբուխների երկիրը՝ Արիմայսը տեղադրում են Կիլիկիայի Արգեոս (այժմ Էրջիաս) լեռան շրջակայքում, իսկ այնտեղ ապրող արիմներին նույնացնում են արմենների (արիներ) հետ: Հիշենք, որ Պլատոնի հերոսներից մեկը՝ Էր Արմենիոսը ևս Կիլիկիայից էր (Պամփուլիա)[4]:

19-20-րդ դարերում Կիլիկիայում (Մերսին, Տարսուս) կատարված հնագիտական պեղումները վկայում են, որ Կիլիկիան քաղաքակրթության ստեղծման հնագույն տարածքներից է: Մերսինում և Տարսուսում (Տարսոս, Տարսոն, Տարսիս) կատարված պեղումների ժամանակ հայտնաբերված մշակութային արժեքները թվագրվում են մ.թ.ա. 6–5-րդ հազարամյակներով: Մ.թ.ա. 6-րդ հազարամյակով թվագրվող նեոլիթյան լավ ուսումնասիրված հուշարձան է Մերսինի Յումուկ-թեփե հնավայրը:

2. *Հ.Մանանդյան*, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան. 1977, հ. 1, էջ 25:
3. *Հոմերոս*, Իլիական, Եր. 1987, էջ 69:
4. *Платон*, Республика, М., 1929, с. 614.

Այս հնավայրի մշակութային շերտերը ունեն մոտ 25 մետր հաստություն[5]: Բլուրը ունի 32-33 մշակութային շերտ, որից՝ 8-9 (մոտ 10 մետր) թվագրվում են նեոլիթյան ժամանակաշրջանով: Այս ժամանակաշրջանով թվագրվող նյութերը նման են Արարատյան դաշտավայրի նեոլիթյան Կղզյակ բլուր, Մաշտոցի բլուր և այլ հուշարձաններից հայտնաբերված նյութերին: Հայտնաբերվել են քարե, հիմնականում օբսիդիանից պատրաստված աշխատանքային և կենցաղային գործիքներ, մանգաղի ներդիրներ, նետերի սլաքներ, ոսկորից պատրաստված հերուններ, ասեղներ և այլն: Հայտնաբերվել է և՛ հասարակ (գորշ, հարդի խառնուրդով), և՛ լավ որակի (փայլեցված, սև, կարմիր) խեցեղեն, որոնք ոչ բարդ նախշազարդեր ունեն[6] (1-2 շարք գծիկներ, եղունգադրոշմ, ոլորապտույտ գծեր, կլոր կամ ձվաձև ներս ճկված նախշեր, սանրաձև դրոշմներ): Հանդիպում են խեցեղենի այնպիսի նմուշներ, որոնք ունեն կպցված կանթեր: Այդպիսիք հանդիպում են նաև Մաշտոցի բլուրի նեոլիթյան նմուշներում: Մերսինը նեոլիթյան նստակյաց հողագործական-անասնապահական մեծ համայնքի բնակավայր է եղել՝ զարգացած տնտեսությամբ և մշակույթով[7]: Վաղ Մերսինի մշակույթ է հայտնաբերվել նաև Յումուկ-թեփեից ոչ հեռու (մոտ 20 կմ) գտնվող Կիլիկիայի մեկ այլ հնավայրում՝ Տարսուսում: Տարսուսը իր հերթին ընդհանրություններ ունի Հայկական լեռնաշխարհի նեոլիթյան Բառոժ, Զաղա բնակավայրերի հետ: Մերսինը և Տարսուսը Հայկական լեռնաշխարհի մյուս հնագույն բնակավայրերի (Շենգավիթ, Քյոլ-թափա, Շրեշ բլուր, Կղզյակ բլուր, Մոխրաբլուր) նման ունեն նաև նեոլիթին հաջորդող էնեոլիթյան (սղնձի քարեդարյան) մշակույթ, որի բնորոշ հատկանիշը սև, փայլեցված խեցին է՝ զարդարված երկրաչափական նախշերով:

Մերսինը որպես բնակավայր շարունակել է իր գոյությունը նաև հետագա ժամանակաշրջանում: Հնավայրի 25-րդ վերին հորիզոնում հայտնաբերվել է գունազարդ խեցի՝ գորշ գույնի վրա պատկերված են կարմիր գույնի նախշեր: Այս գտածոները թվագրվում են վաղ էնեոլիթի ժամանակաշրջանով (մ.թ.ա. 4-րդ հազ.): Այս տիպի խեցի հայտնաբերվել է նաև Հյուսիսային Միջագետքի Հասունա բնակավայրից[8], Արարատյան դաշտավայրի Կղզյակ բլուրի 2-րդ շերտից, Ասորիքի Ռաս-Շամրայի 4-րդ շերտից և այլն: Տարսուսում ևս հայտնաբերվել է գունազարդ խեցի, որը թվագրվում է ուշ էնեոլիթի ժամանակաշրջանով[9]: Նշենք,

5. *T. Garstang*, Prehistorie Mersin, Oxford, 1933, էջ,11. *Ս.Սարդարյան*, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան,1967, էջ 152:
6. *Дж. Мелларт*, Древнейшие цивилизации Ближнего Востока, М. 1982, с. 60.
7. *M. Burkitt*, The earlier cultures at Mersin. Annals of Archeologe and Antropology, V. XXVI, № 1-2, Liverpool, 1939, էջ108. *Ս.Սարդարյան*,1967, էջ 152:
8. *Дж. Мелларт*, 1982, с.64.
9. *T. Garstang*, Prehistorie Mersin..., Tarsus, vol.III, p. 359: No 390, *Ս.Սարդարյան*, 1967, էջ 215:

որ Առաջավոր Ասիայի նշանավոր ու լավ ուսումնասիրված նեղիթյան շատ հնավայրեր, այդ թվում Չաթալ-հույուքը, Ալան-հույուքը, Ամուկի հովտի հնավայրերը և այլ հուշարձաններ գտնվում են Կիլիկիայի հարևանությամբ:

Հայկական լեռնաշխարհի նեղիթյան (մ.թ.ա. 6–5-րդ հազարամյակներ) և էնեոլիթյան (4-րդ հազարամյակ) խեցեղենի և Կիլիկիայի (Մերսին, Տարսուս), Ասորիքի ու Պաղեստինի (Քիրբեթ-Քերակ) մշակութային նմանություններն ու կապերը ակնհայտ են[10]: Իսկ մշակութային ընդհանրությունները թույլ են տալիս ասելու, որ նույնն է նաև այդ մշակույթները ստեղծող ու տարածող էթնիկ տարրը, այս դեպքում Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ հայ-արմենները (հայ-արիները):

Կիլիկիայի մասին հնագույն գրավոր աղբյուրները քիչ են, իսկ եղածներն էլ խոսում են մ.թ.ա. 2-րդ հազարամյակի 1-ին կեսերի իրադարձությունների մասին: Գրավոր աղբյուրներում երկրի անունը ընթերցվում է Կիցվատնա (Կիցցուվատնա): Կիցվատնա-Կիլիկիան ընդգրկում էր անտիկ Կիլիկիան և այժմյան Ադանայի շրջակայքը, տարածվելով Ջեյհան և Սեյխան (հուն. Պիրամոս և Սարոս) գետերի ափերով մինչև Կապադովկիա (ներառյալ): Հոգևոր կենտրոնը Կումմանեն էր (հռոմեացիների ժամանակ Կոմանա): Հայտնի չէ, երբ է ստեղծվել անկախ Կիցցուվատնա պետությունը: Հնարավոր է, որ ստեղծվել է խուրրիների Խաթթի ներխուժումից հետո՝ մոտավորապես մ.թ.ա. 1510թ., Խաթթի թագավոր Խանտիլիսի ժամանակ: Մոտավորապես մ.թ.ա. 1480թ. Ադանի (Ադանա) քաղաքը (երկիրը) մասնակցել է խեթական թագավոր Ամմունասի դեմ ստեղծված դաշինքին[11]: Կիցվատնայի ինքնուրույնությունը ընդգծվում է նաև հետագա ժամանակաշրջանում: Այսպես. Իշպուտախշու թագավորը (մոտ. մ.թ.ա. 1460թ.), որի կնիքը հայտնաբերվել է Տարսուս քաղաքի պեղումների ժամանակ, հավակնում էր մեծ թագավորի տիտղոսի: Իշպուտախշուն նաև պայմանագիր է կնքել Խաթթիի թագավորի հետ: Այդպիսի պայմանագրեր կնքել են նաև այլ թագավորներ՝ Էխեյը և Պատտատիշշուն:

Խաթթիի թագավոր Մուրսիլիս 2-րդի (1345-1320) հաջորդի (Ցիդանտեսի) ժամանակ Կիցվատնայի թագավոր Պիլլիան խեթական թագավորի հետ պայմանագիր է կնքել պատերազմը դադարեցնելու մասին: Այդ պայմանագրից (նաև ավելի ուշ կնքված այլ պայմանագրերից) հայտնի է դառնում, որ Կիցվատնան Խաթթիի վասալը չէր սովորական իմաստով և երկու կողմն էլ ուշադրություն էին դարձնում ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Գրավոր աղբյուրները վկայում են, որ Կիլիկիա-Կիցվատնան մ.թ.ա. 3–2-րդ հազարամյակներում հիմնականում խուրրիաբնակ է եղել: Ընդունված է, որ այս տարածքից են խուրրիական բարքերը, սովորույթները, աստվածների պաշտամունքները և մշակութային այլ արժեքներ մուտք գործել Խաթթի ու խեթական արքունիք:

Նոր խեթական թագավորության (1450-1175) առաջին արքայատոհմի թագավորները ունեն խուրրիական անուններ: Սակայն նրանք ունեն նաև գահակալական անուններ, որոնք խեթական են: Այսպես. Մուվատալլիի խուրրիական անունը Tešub է, Մուրսիլիսինը՝ Urhi Teššob, Թութիալիա 3-րդինը՝ Sarruma[12] և այլն: Ենթադրվում է, որ Նոր խեթական թագավորության այս արքայատոհմը սերում էր Կիլիկիա-Կիցվատնայից: Խեթական թագավոր Խաթթուսիլիս 3-րդի (13-րդ դար) կինը Կիցվատնայի գլխավոր քրմի աղջիկն էր՝ Պուդու Հեպան, որը ազդեցիկ tawannas էր արքունիքում[13]: Արնուվանդաս 1-ինի ժամանակ (մոտ. մ.թ.ա. 13-րդ դարի սկիզբ) Կիցվատնան հիշատակվում է որպես հատուկ տարածքային միավոր, բայց նաև որպես երկրի մաս: Արնուվանդասի օրոք նկատվում է Կիցվատնայի հոգևոր ու մշակութային ուժեղ ազդեցությունը Խաթթիի վրա: Փոխառվում են խուրրիական հարուստ ծիսական ավանդույթները, աստվածների պաշտամունքը, կենցաղը, սովորույթները և այլն:

Կիլիկիա-Կիցվատնայում կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված նյութական մշակույթը կապվում է Հայկական լեռնաշխարհի և շրջակա տարածքների հետ: Այս տարածքները ոչ միայն Հայկական լեռնաշխարհում ստեղծված պետական կազմավորումների մշակութային ու տնտեսական ազդեցության ոլորտում են միշտ գտնվել, այլև հանդիսացել են Հայկական լեռնաշխարհում ստեղծված հզոր պետությունների՝ այս դեպքում Միտանիի (Խուրրի-Միտանի) անբաժանելի մասը և վարչականորեն ենթարկվել են կենտրոնական իշխանությանը՝ ունենալով իրենց կառավարիչները (արքայիկները): Գրավոր աղբյուրները վկայում են, որ ժամանակ առ ժամանակ Կիցվատնան ենթարկվել է նաև Խաթթիի թագավորներին (Թուրխալիաս, Արնուվանդաս I, Սուպիլուլիումաս I), երբ խեթերը հաջողություն են ունեցել իրենց ռազմական արշավանքների ժամանակ:

Մ.թ.ա. 14-րդ դարի սկզբներին Խաթթիում գահ է բարձրացել եռանդուն ու համարձակ Սուպիլուլիումաս 1-ինը (1380-1346), որն իր երկիրը ընդարձակելու և Ասորիքին, Սիրիային ու Միջերկրական ծովի ափերին տիրելու մեծ ցանկություն ուներ: Սակայն այդ տարածքները գտնվում էին Առաջավոր Ասիայի հզոր խուրրիական Միտանի պետության ենթակայության տակ: Սկսվում է պայքար Խաթթիի ու Միտանիի միջև: Գահակալական գժտությունների և բանսարկությունների միջոցով Սուպիլուլիումասին հաջողվում է հաղթել Միտանիին: Երկիրը տրոհվում և բաժան-բաժան է արվում Խաթթիի, Բաբելոնի ու Աշշուրի (ապա-

10. *Ս.Սարգսյան*, 1967, էջ 255:
11. *Ի.Դյակոնով*, ВДИ. 1970, 4, с. 44.

12. *Г. Вильхельм*, Древний народ хурриты, М. 1992, с. 53.
13. История Древнего Востока, М., 1988, ч.II, с. 151.



Այաս նավահանգիստը

գա Ասորեստան) միջև: Միտանիի պարտությունից հետո Կիցվատնան հայտնվում է մեկուսացման մեջ: Սակայն շատ մեծ էր Կիցվատնա-Կիլիկիայի ազդեցությունը խեթական արքունիքում և Սուպիլուլիումաս 1-ինը առանձին վերաբերմունք է ցուցաբերում Կիցվատնայի հանդեպ: Նա պայմանագիր է կնքում Կիցվատնայի թագավոր Սունասսուրասի հետ: Պայմանագրով Կիցվատնային տրվել է կիսանկախ վիճակ, իսկ թագավորը ենթարկվել է Խաթթիին: Նա պարտավորվել է պատերազմի ժամանակ Խաթթիի թագավորին տրամադրել 100 մարտակառք և 1000 հետևակ զինվոր: Պայմանագրի տեքստում Սուպիլուլիումասը գրում է. «Խուրրիները Սունասսուրասին ստրուկ էին անվանում, իսկ իմ Արևը (Նոր խեթական թագավորության արքաների տիտղոսը) նրան դարձրեց օրինական թագավոր»[14]: Այս արձանագրության մեջ չափազանցություն կա, Սունասսուրասը[15] ստրուկ չէր կարող լինել իր երկրում: Նա պարզապես Միտանիի կողմից նշանակված (կամ ընտրված) տեղական առաջնորդ էր և ենթարկվում էր կենտրոնական իշխանությանը՝ Միտանիի արքային: Սուպիլուլիումասը իբր բարձրացնելով Սունասսուրասին և թագավոր կոչելով նրան, ցանկանում էր շահել նրա բարեկամությունը:

Կիցվատնայի, հատկապես նրա հոգևոր կենտրոն Կումմանիի ազդեցությունը և նշանակությունը շատ մեծ է եղել Խաթթիում և Սուպիլուլիումասը իր որդի Տելեպինուսին Կումմանիի գլխավոր քուրմ է նշանակել:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերին Միտանիից քիչ հետո Առաջավոր Ասիայում ստեղծված շատ պետությունների նման Խաթթին ևս վերացավ պատմության թատերաբեմից, պարտություն կրելով Եգիպտոսից և ենթարկվելով «ծովի ժողովուրդների» ներխուժմանը:

Մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերի և 1-ին հազարամյակի սկզբի Առաջավոր Ասիայի գրավոր աղբյուրները (ասուրական, ուրարտու-արարատյան) շարունակում են տեղեկություններ տալ Կիլիկիա-Կիլակուի (Քիլակու) և շրջակա տարածքների մասին: Այսպես. Ասորեստանի թագավոր Թիգլաթ-պալասար 1-ինը (1115-1077) իր արշավանքներից մեկի ժամանակ հարձակվել է Խանիգալբատ երկրի ուժեղ ու անհնազանդ Մելիդիա (Մալաթիա) քաղաքի (երկրի) վրա[16]: Եփրատ գետը անցել և Մելիդ-Մալաթիա են արշավել նաև ուրարտական թագավորներ Արգիշտի 1-ինը (786-764) և Սարդուրի 2-րդը (764-735): Սարդուրի 2-րդի որդի և հաջորդ Ռուսա 1-ինը (735-713) իր արշավանքներից մեկի ժամանակ հասել է Կիլակու (Քիլակու)-Կիլիկիա[17], և այս տարածքը նորից մտել է Հայկական լեռնաշխարհում կազմավորված Ուրարտու (Արարատ) հայկական պետության կազմի մեջ: Մ.թ.ա. 6-րդ դարից Առաջավոր Ասիայում հայտնվում են նոր պետություններ ու նոր տիրակալներ: Աքեմենյան Պարսկաստանի հիմնադիր Կյուրոսը (550-529) և նրա որդի Կամբիսը (529-522) նվաճել և ընդարձակել են իրենց պետության սահմանները: Մ.թ.ա. 546թ. նրանք նվաճում են Փոքր Ասիան, այդ թվում՝ Կիլիկիան և հասնում Էգեյան ծովի ափեր:

Մ.թ.ա. 334թ. Ալ. Մակեդոնացին անցել է Հելլեսպոնտոսը (Դարդանելի նեղուցը) և Գրանիկ գետի մոտ պարտության մատնել պարսից փոքրասիական սատրապների միացյալ զորքը: Այնուհետև նա նվաճել է Փոքր Ասիան, Կիլիկիան և Ասորիքը: Մակեդոնացու մահվանից հետո՝ 323թ. նրա հսկայածավալ պետությունը բաժանվել է նրա երեք զորավարների միջև: Կիլիկիան մտել է Սելևկյան պետության կազմի մեջ:

Մ.թ.ա. 2-րդ դարի կեսից Հռոմը սկսում է նվաճողական քաղաքականություն վարել Արևելքում: Մ.թ.ա. 102թ. հռոմեացիները նվաճում են Լեռնային

14. *Ա. Խաչատրյան*, 1933, էջ 498, KBO, 15:

15. Ըստ ավանդության Սասունը իր անունը ստացել է Ասորեստանի Սենեքերիմ թագավորի որդի Սանասարի անունից, որն իր եղբոր հետ փախել է այդտեղ, կառուցել բերդ և բնակեցրել շատերին: Ինչպես տեսնում ենք, Կիլիկիա-Կիցվատնայում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին կար Սունասսուրա կամ Սանասուրա անունով թագավոր: Այս անունը բացահայտորեն հնդեվրոպական հիմք ունի՝ San «արև»:

16. АВИИУ 10, (V, 33), ՀԺՊՔ, էջ 20:

17. *Г. Меликишвили*, УКН, М. 1960.

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, 12–13-ՐԴ ԴԱՐԵՐ



Կիլիկիայի արևմտյան մասը, իսկ այնուհետև՝ ամբողջ Կիլիկիան: Մ.թ.ա. 92թ. Կիլիկիայի փոխպրետորն էր Սուլլան: Հռոմեական, նաև պարթևական վտանգը հայերին ստիպում է համախմբվել: Մ.թ.ա. 95թ. Հայաստանում գահ է բարձրանում Տիգրան 2-րդ Մեծը (95-55), որի ժամանակ Հայաստանը դառնում է Առաջավոր Ասիայի հզոր պետություններից մեկը: Մ.թ.ա. 84-83թթ. հայկական բանակը առանց լուրջ դիմադրության գրավում է ողջ Ասորիքն ու Կիլիկիան: Սակայն մ.թ.ա. 69թ. Տիգրանակերտի ճակատամարտում հայկական զորքի պարտությունից հետո Ասորիքը, Կիլիկիան և այլ տարածքներ անջատվում են Հայաստանից և դառնում հռոմեական պրովինցիաներ: Կիլիկիան դառնում է առանձին պրովինցիա: Այնուհետև Կիլիկիան մտնում է Արևելահռոմեական կամ բյուզանդական կայսրության կազմի մեջ: Հունա-հռոմեական նվաճումներից հետո Կիլիկիայում հայերից բացի սկսում են բնակվել նաև հույներ ու ասորիներ: Սակայն բնակչության գերակշռող մասը միշտ եղել են հայերը: 4-րդ դարի հռոմեացի պատմիչ Ամիանոսի վկայությամբ Իսոսի ծոցը (այժմ Ալեքսանդրետ) ժամանակին կոչվել է «Հայկական ծոց»[18]:

18. *Հ. Ժամկոչյան*, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 507:

Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի առաջին (387թ.) և երկրորդ (591թ.) բաժանումներից հետո Բյուզանդիան որդեգրել է իր տիրապետության տակ անցած Արևմտյան Հայաստանի հայ բնակչության տեղահանումը դեպի կայսրության արևմտյան մասեր՝ Կապադովկիա, Ասորիք, Կիլիկիա և հարակից այլ տարածքներ: Այդ քաղաքականության հետևանքով հայերի թիվը այդ տարածքներում էլ ավելի է ստվարացել:

7-րդ դարում արաբները գրավել են դաշտային Կիլիկիան և մինչև 10-րդ դար այն պահել իրենց տիրապետության տակ: 10-րդ դարում Բյուզանդիան նորից ետ է նվաճել Կիլիկիան, որը դարձել է բյուզանդական կայսրության մարզերից մեկը: Այս ընթացքում Բյուզանդիան շարունակում էր հայերին տեղահանելու քաղաքականությունը՝ նրանց նորից բնակեցնելով Եփրատից արևմուտք ընկած տարածքներում: Դրանով նա փորձում էր Հայաստանը դատարկել հայերից, նրանց որպես պատվար օգտագործել արաբների դեմ, ռազմական ուժն օգտագործել արաբների և Արևմուտքից իրեն սպառնացող զանազան ցեղերի դեմ և վերջապես դավանափոխ անելու միջոցով հայերին ձուլել հույներին: Տեղահանության համար գործի էին դրվում զանազան միջոցներ՝ սպառնալիքներից ու բռնություններից մինչև շատ մեծ ու լայն իրավունքների ու կալվածքների տրամադրում նոր վայրերում: Տեղափոխվում էին իշխաններ ու ազնվականներ իրենց ազգուտոհմով և հպատակներով: Նրանք հանձնում էին իրենց հայրենի կալվածքներն ու տիրույթները և փոխարենը բյուզանդական կայսրերից ընդարձակ կալվածքներ ստանում Կիլիկիայում, Ասորիքում, Կապադովկիայում և Եփրատից արևմուտք ընկած այլ տարածքներում: Այսպես. 1044թ. Գրիգոր Պահլավունին հանձնում է հայրենի Բջնին և փոխարենը կալվածքներ ստանում Միջագետքում: 1065թ. Կարսի Գագիկ թագավորը իր թագավորությունը զիջում է Բյուզանդիայի կայսրին և տեղափոխվում Կիլիկիա[19]: 1073թ. Գանձակի Օշին իշխանը թողնում է հայրենի Մայրեաց ջուրը և ազգուտոհմով տեղափոխվում Կիլիկիա[20]:

11-րդ դարի 40-ական թվականներին Եփրատից արևմուտք ընկած տարածքներում ստվարացած հայ բնակչությունը և հայ իշխանները ստեղծեցին հայկական իշխանություններ, որոնք ավելի ուշ միավորվեցին՝ ստեղծելով Կիլիկյան հայկական թագավորությունը: 1080թ. Գագիկ 2-րդ Բագրատունու (1043-1045) թիկնապահ իշխաններից մեկին՝ Ռուբենին հաջողվեց Կիլիկիայում ստեղծել հայկական նոր իշխանություն (ավելի ուշ թագավորություն), որը գոյատևեց մինչ 1375թ. (մոտ 300 տարի):

12-րդ դարի վերջերին Առաջավոր Ասիայում հանդես եկան նոր պետություններ՝ Եգիպտոսի (Էյուբյանների) և Իկոնիայի (Ռումի) սուլթանությունները:

19. *Մ. Ուռհայեցի*, 1898, էջ 151:
20. *Ս. Անեցի*, 1893, էջ 117: *Դ. Ակիշան*, Սիսուան, էջ 77:

Իկոնիայի սելջուկյան (թուրքմենական) սուլթանությունը հաղթանակներ էր արձանագրում Բյուզանդիայի դեմ մղվող պայքարում և ընդարձակում է իր տարածքները Փոքր Ասիայում՝ ի հաշիվ թուլացող Բյուզանդիայի:



Լևոն 2-րդի ձեռագիր-վավերագիրը

Եգիպտոսի սուլթանությունը ևս հաջողություններ էր արձանագրում: Նրանք իրար հետևից նվաճում են Միջագետքը, Ասորիքը, Երուսաղեմի լատինական թագավորությունը (1187թ.) և հասնում Կիլիկիային սահմանակից Անտիոքի լատինական թագավորության սահմանները: Եվ Իկոնիայի, և Եգիպտոսի սուլթանությունները թշնամաբար էին տրամադրված Կիլիկիայի հանդեպ: Այս պայմաններում Կիլիկիայի հայկական իշխանության գլուխ անցավ Լևոն 2-րդը (1185-1219): 1187թ. հյուսիս-արևմուտքից Իկոնիայի սուլթանի զորքը հարձակվեց Կիլիկիայի վրա և ասպատակելով երկիրը՝ հասավ Սիս քաղաք: Սիսից ոչ հեռու Ռավին կոչված վայրում Լևոն 2-րդը ջարդեց թուրքմեններին և նրանց ետ շպրտեց երկրից:

Ամանոսյան լեռների կողմից Եգիպտոսի սուլթանը ևս ներխուժեց Կիլիկիա: Լևոն 2-րդը դարձյալ հաջողություն ունեցավ և հաղթեց նաև արաբներին: Ինչպես տեսնում ենք, մեծ էր արտաքին վտանգը: Հենց այս վտանգն էլ ստիպեց, որ հայերը նորից միավորվեն: Լևոն 2-րդը ու նրա հաջորդները դիվանագիտական հաջողություններ ունեցան, որոնց արդյունքում ստեղծվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը: Հատկապես մեծ էր Լևոն 2-րդի (թագադրվելուց հետո Լևոն 1-ին, ըստ Ղ. Ալիշանի) դերը, որը կարողացավ ճիշտ կողմնորոշվել ստեղծված բարդ քաղաքական պայմաններում: Նա կապեր հաստատեց եվրոպական միապետների հետ, համագործակցեց խաչակիրների հետ և թագեր ստանալով Բյուզանդիայի (1196թ.) ու Գերմանիայի (1198թ.) կայսրերից հանդիսավորությամբ թագադրվեց Տարսոն քաղաքում: 1045թ. Բագրատունյաց թագավորության անկումից հետո Առաջավոր Ասիայում նորից ստեղծվեց հայկական պետություն: Նոր ստեղծված հայկական պետության տարածքը մոտ 40.000 քառ.կմ էր, բնակչությունը մոտ 1միլիոն: Պետության խոշոր քաղաքներն էին Սիսը, Տարսոնը, Ադանան, Անարզաբան (Անազարբան), Մամեստիան, Այասը և Կոռիկոսը: Վերջին երկուսը նաև խոշոր նավահանգիստներ էին:

1226թ. Կիլիկիայում հաստատվում է Հեթումյան արքայատոհմի իշխանությունը, երբ Կոնստանտին Գունդստաբլի որդի Հեթումը ամուսնանում է Լևոն 1-ինի (Լևոն 2-րդ) դուստր Զաբելի հետ: Հեթում I-ի թագավորության տարիներին

սկսվում են մոնղոլ-թաթարական արշավանքները դեպի Փոքր Ասիա: Կիլիկիան շրջապատող երկրների (Իկոնիայի և Եգիպտոսի սուլթանություններ) թշնամական վերաբերմունքի պատճառով հայերը որոշեցին չընդհարվել մոնղոլների հետ և բանակցությունների մեջ մտնելով դաշինք կնքեցին նրանց հետ: Այս քաղաքականությունը արդարացրեց իրեն: Մոնղոլները չմտան Կիլիկիա, երկիրը զերծ մնաց մոնղոլական ավերածություններից: 1254թ. Հեթում 1-ինը մեկնեց Կարակորում, ընդունվեց Մանգու խանի կողմից և կնքվեց պայմանագիր, որը ձեռնտու էր երկու կողմին: Մոնղոլները դաշնակից էին ձեռք բերում Առաջավոր Ասիայում, իսկ հայերը պահպանում էին իրենց ինքնուրույնությունը, նաև մոնղոլների օգնությամբ նոր տարածքներ էին միացնում իրենց թագավորությանը: Կիլիկիայի հաջողությունները անհանգստացնում էին թշնամիներին, հատկապես Եգիպտոսի սուլթանին: Մոնղոլների թուլացումից հետո Կիլիկիան փորձում է օգնություն ստանալ քրիստոնյա Եվրոպայից: Սակայն դա առաջացնում է Եգիպտոսի թշնամական վերաբերմունքը հայերի հանդեպ: Եգիպտացիները հայերին մեղադրում են եվրոպացիներին նոր խաչակրաց արշավանքի դրդելու մեջ: Եվ եգիպտացիները 1335թ., 1336թ., 1337թ. մի շարք արշավանքներ են կազմակերպում դեպի Կիլիկիա: 1337թ. կնքվում է ծանր պայմանագիր, որով երկրի հարավարևելյան մասերը, նաև Այաս նավահանգիստը անցնում են եգիպտացիներին: Լևոն 4-րդ (Լևոն 5-րդ) Լուսինյանը պարտավորվում է բանակցություններ չվարել եվրոպական պետությունների ու Հռոմի պապի հետ: Ստեղծվում է ծանր վիճակ Կիլիկյան Հայկական թագավորության համար: Մահմեդական պետություններով շրջապատված Լևոն 4-րդը (Լևոն 5-րդ, 1320-1342) և Լևոն 5-րդը (Լևոն 6-րդ, 1374-1375) լատինամոլ քաղաքականություն էին վարում: Այդ, ինչպես նաև արքունիքում սկսված կրոնական վեճերի պատճառով երկիրը կանգնեց կործանման եզրին: 1375թ., չնայած հայ զինվորների խիզախությանը, եգիպ-

Կիլիկիան բանակի հայ հեծյալ զինվոր. 12–13-րդ դարեր

տական մամլուկները գրավում են Սիս մայրաքաղաքը: Ավարտվում է Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը:

Այսպիսով, Կիլիկիան ու նրա բնակչությունը (խուրրի=հայ-արմենններ) հնագույն ժամանակներից մաս կազմելով հայոց պատմության, Հայաստանում ստեղծված հոգևոր ու նյութական մշակութային արժեքների ստեղծողներ, կրողներ ու տարածողներ, կիսեցին նաև մայր ժողովրդի ճակատագիրը: Կիլիկիան ևս ենթարկվեց բազմաթիվ հարձակումների ու նվաճումների: Գրավվեց խեթերի, հույների, պարսիկների, հռոմեացիների, բյուզանդացիների, արաբների ու թուրքերի կողմից: Արևմտյան Հայաստանի նման Կիլիկիայի բնակչությունը ևս 1915-1923թթ. թուրքերի կողմից ենթարկվեց դաժան ցեղասպանության, ու Կիլիկիան դատարկվեց հայերից: Այսօր հայաթափված Կիլիկիան Արևմտյան Հայաստանի նման սպասում է իր իսկական տերերի՝ հայերի վերադարձին:

ՄԻՏԱՆԻԻ ԱՐՔԱՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Կիրտա – մ.թ.ա. 16-րդ դարի կես
Շուտարնա 1-ին – մ.թ.ա. 16-րդ դարի կես
Պարատտարնա – մ.թ.ա. 15-րդ դարի սկիզբ
Սաուսադատտար – մ.թ.ա. 15-րդ դարի առաջին կես
Արտադամա – մ.թ.ա. 15-րդ դարի վերջ
Շուտարնա 2-րդ – մ.թ.ա. 14-րդ դարի սկիզբ
Արտաշումարա – ———
Տուշրատա – մ.թ.ա. 14-րդ դարի կես
Արտադամա 2-րդ – մ.թ.ա. 14-րդ դարի կես
Շուտարնա 3-րդ – մ.թ.ա. 14-րդ դարի 2-րդ կես
Շատտիվազա – մ.թ.ա. 14-րդ դարի վերջ
Շատուարա 1-ին – մ.թ.ա. 13-րդ դարի սկիզբ
Վասաշատա – մ.թ.ա. 13-րդ դարի 1-ին կես
Շատուարա 2-րդ – մ.թ.ա. 13-րդ դարի 1-ին կես

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *Մ.Խորենացի,* Հայոց պատմություն, Երևան, 1981
2. *Թ.Արծրունի,* Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս.Պետերբուրգ, 1887
3. *Երեսերի Պամփիլեաց Կեսարացիոյ,* Ժամանակագրականք, մասն Ա., Վենետիկ, 1818
4. *Հերոդոտոս,* Պատմություն, Երևան, 1986
5. *Սուրաբոն,* Աշխարհագրություն, Երևան, 1940
6. *Ադոնց Ն.,* Հայաստանի պատմություն, Երևան, 1972
7. *Աճառյան Հ.,* Հայերեն արմատական բառարան, Երևան, հ. II, 1973
8. Բազմավէպ, 1912
9. *Բարսեղյան Լ.,* Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագրության մեջ, Երևան, 1996
10. *Գավուրջյան Մ.,* Հայ արմեն անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրութ, 1973
11. *Դանիելյան Է.,* Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները և պատմական նշանակությունը, Երևան, 1997
12. *Եսայան Ս.,* Հայաստանի հնագիտություն, Երևան, 1993
13. *Երեմյան Ս.,* Հայաստանն ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963
14. *Ժամկոչյան Հ.,* Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975
15. *Խանզադյան Է.,* Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. 3-րդ հազարամյակում, Երևան, 1967
16. *Խաչատրյան Ա.,* Միտանի-Խուրրի ժողովուրդը, նրա հայրենիքը և պատմական հնությունը, Տեղեկագիր, 1926, 1: «Հայաստանի սեպագրական շրջանի պատմություն», Երևան, 1933
17. *Խաչատրյան Վ.,* Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998
18. Հայ ժողովրդի պատմություն, հ. I , Երևան, 1971
19. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981
20. Հին Արևելքի պոեզիա, Երևան, 1982
21. *Հոմերոս,* Իլիական, Երևան, 1987
22 *Հմայակյան Ս.,* Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990
23. *Մանանդյան Հ.,* Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Եր., հ. I, 1977
24. *Մարտիրոսյան Հ.,* Քարի դարից Ուրարտու, Երևան, 1971
25. *Մարտիրոսյան Ն.,*Պրպտումներ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ, 1961, 3-4
26. *Մովսիսյան Ա.,* Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների) Երևան, 2005
27. *Շահինյան Լ.,* «Ուրարտու» առեղծվածը, Երևան, 1994
28. *Ջահուկյան Գ.,* Զրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992
29. *Սարգսյան Ս.,* Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967
30. *Վինքլեր Հ.,* Արիացիները Բողազ-Քոյի արձանագրությունների համաձայն, ՀԱ, 1913, IV (թարգմանությունը գերմաներենից Հ.Մատիկյանի)
31. Տեղեկագիր Գիտության և Արվեստի ինստիտուտի, 1926, 1
32. *Քոսյան Ա.,* Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Եր., 1999
33. *Քոսյան Ա.,* Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004

34. *Аветисян Г.,* Государство Митанни, Ереван, 1984
35. *Афанасьева В.К.,* Шумерская эпическая песень "Гильгамеш и гора Бессмертного", ВДИ, 1969, 1
36. *Бикерман Э.,* Хронология древнего мира, Москва, 1976
37. *Винклер Г.,* Западная Азия в древние времена (История Человечества, т. III) С.Петербург, 1903
38. *Вильхельм Г.,* Древний народ хурриты, Москва, 1992
39. *Вулли Л.,* Забытое царство, Москва, 1986
40. *Гамкрелидзе Т.,* Передвижение согласных в хеттском, "Переднеазиатский сборник", Москва, 1961
41. *Гамкрелидзе Т., Иванов В.,* Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, ч. I, II
42. *Гельцер М.,* Новые тексты из Алалаха, ВДИ, 1956, 1, 2
43. *Герни О.,* Хетты, Москва, 1987
44. *Гиоргадзе Г.,* Хетты и хурриты по древнехеттским текстам, ВДИ, 1969, 1
45. *Георгиев В.,* Исследования по сравнительно-историческому языкознанию, Москва, 1988
46. *Дьюмезиль Ж.,* Верховные боги индоевропейцев, Москва, 1986
47. *Дьяконов И.,* Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, 2-3, (=АВИИУ)
48. *Дьяконов И.,* История Мидии от древнейших времен до конца IV века д.н.э., Москва-Ленинград , 1956
49. *Дьяконов И.,* Языки древней Передней Азии, Москва, 1967
50. *Дьяконов И.,* Предыстория армянского народа, Ереван, 1968
51. *Дьяконов И.,* Малая Азия и Армения около 600 г. д.н.э., ВДИ, 1981, 2
52. *Дьяконов И.,* Арийцы на Ближнем Востоке:Конец мифа, ВДИ, 1970, 4
53. *Джаукян Г.,* Взаимоотношение индоевропейских, хурито-урартских и кавказских языков, Ереван, 1967
54. *Джаукян Г.,* Ханасский язык и его отношение к индоевропейским языкам, Ереван, 1964, с. 37
55. *Иванов В.,* История и языки Древнего Востока. Памяти И.М.Дьяконова, С.Петербург, 2002
56. *Иессен А.,* Кавказ и Древний Восток в IV-III тысячилетиях до н.э., КСИА, 1963, вып. 93
57. История древнего Востока, Москва, 1979
58. История древнего мира, Москва, 1982
59. История древнего Востока, Москва, ч. I, II, 1983,1988
60. *И.Канева,* Энмеркар и верховный жрец Аратты, ВДИ, 1964, 4
61. *Лапис И.А.,* К вопросу последовательности правления гиксосских царей в древнем Египте, ВДИ, 1959, 1
62. *Масперо,* Древняя история народов Востока, Москва, 1911
63. *Массон В.,* Средняя Азия и Древний Восток, Москва-Ленинград, 1964
64. *Меликишвили Г.,* Наири-Урарту, Тбилиси, 1954
65. *Мелларт Дж.,* Древнейшие цивилизации Ближнего Востока, Москва, 1982
66. Мифы народов мира, т. 1-2, Москва, 1991-1992

67. *Платон*, Республика, Москва, 1929
68. Поэзия и проза Древнего Востока, Москва, 1973
69. *Редер Д., Черкасова Е.*, История древнего мира , ч. I, Москва, 1970
70. *Хазарадзе Н.*, К вопросу о локализации матиенов в свете древнегреческих источников VI-V в.в. д.н.э., 2(60), с.с. 200-210, ՊԲՀ
71. *Хачикян М.*, Хурритский и урартский языки, Ереван, 1985
72. *Ханзадян Э.*, О древнейшей металлургии Армянского нагорья и городища Мецамор, Вопросы геологии четвертичного периода Армении (журнал), Ереван, 1983
73. *Чайлд Г.*, Древнейший Восток в свете новых раскопок, Москва, 1956
74. *Янковская Н.*, Землевладение большесемейных домовых общин в клинописных источниках Передней Азии, ВДИ, 1951, 1
75. *Янковская Н.*, Хурритская Аррапха, ВДИ, 1957, 1
76. *Янковская Н.*, Клинописные тексты из Кюль-Тепе в сборниках СССР, Москва, 1968

77. *A.Kammenhuber,* Die Arier in Vorideren Orient, Heidelberg, 1968
78. *Wilhelm G.*, The Hurrians, Warminster, 1989
79. *Wilhelm G.*, Die Inschrift des Tišatal von Urkeš, "Bibliotheca Mesopotamia", 26,1998
80. *Winckler Hugo,* Die Arier in den Urkunden von Boghazköi (հայերեն թարգմանությունը Հանդէս Ամսօրեայում, 1913, N 4 ապրիլի)
81. *Hrozny B.*, Die Länder Hurri and Mitanni and die alteste Inder, Archiv Orientalni, vol.1, 2, 1929
82. *Manetho,* The Aegyptiace...London, 1948
83. *Petrie F.*, A history of Egypt during the 18 and 19 dynasties, II, 1924
84. *Wiseman D.*, The Alalach Tablets, London, 1953, (=AT)
85. *Wooley L.*, A Forgotten Kingdom, London, 1953
86. *Gelb I.*, Hurrians and Subarians, Chicago, 1944
87. *Lloyd S.*, The Archaeology of Mesopotamia, London, 1978
88. Ancient Near Fastern Texts Related to the Old Testament (ed. by J.B.Pritchard) New Jersey, 1969 (=ANET)

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱ – Հանդէս Ամսօրեայ
ՀԱՊ – Հին Արևելքի Պոեզիա
ՀԺՊ – Հայ Ժողովրդի Պատմություն
ՀԺՊՔ – Հայ Ժողովրդի Պատմության Քրեստոմատիա
ՀՍՀ – Հայկական Սովետական Հանրագիտարան
ԲԵՀ – Բանբեր Երևանի Համալսարանի
ՊԲՀ – Պատմա-Բանասիրական Հանդես

АВИИУ – Ассиро-Вавилонские источники по истории Урарту
ВДИ – Вестник Древней Истории
ИДВ – История Древнего Востока
ИДМ – История Древнего Мира
МНМ – Мифы Народов Мира
КСИА – Краткие сообщения Института археологии АН СССР
УКН – Урартские Клинообразные Надписи

KBO – Keilschrifttexte aus Boghazköi
KUB – Keilschrifturkunden aus Boghazköi

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 5
Առաջավոր Ասիայի հնագույն նյութական մշակույթը և խուրրիները 13
Հնագույն գրավոր աղբյուրները խուրրիների մասին 31
Խուրրիական գրավոր աղբյուրները 37
Միտանի պետության կազմավորումը 41
Միտանին Առաջավոր Ասիայի հզոր պետություն 56
Միտանիի թուլացումն ու անկումը 72
Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Միտանիում 81
Արքունիքը, բանակը 81
Մշակույթ, կրոն 88
Նյութական մշակույթ 97
ՎԵՐՋԱԲԱՆ 103
Summary 106
Резюме 110
ՀԱՎԵԼՎԱԾ 115
Հայկական և իրանական հնագույն արքայատոհմերի մասին 115
Հայոց հնագույն Կիլիկիան 121
Միտանիի արքաների անվանացանկ 133
Օգտագործված գրականության ցանկ 134
Համառոտագրություններ 137

ԱՆԺԵԼԱ ԱՎԵՏԻՍԻ ՏԵՐՅԱՆ

ՄԻՏԱՆԻ
(ԽՈՒՐՐԻ-ՄԻՏԱՆԻ)
ՀԱՅՈՑ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հրատ. խմբագիր Գ. Վ. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Տեխ. խմբագիր Ն. Մ. ՍԱՐԳՍՅԱՆ
Համակարգչ. էջադրում Ռ. Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

9(479.925)
Հ77-47
Հշ.

ԱՆԺԵԼԱ ԱՎԵՏԻՍԻ ՏԵՐՅԱՆ

Պատմաբան: Ուսումնասիրում է մեր ժամանակներում շատ արդիական և մեծ կարևորություն ունեցող հայոց պատմության հնագույն ժամանակաշրջանը: Թեմայի վերաբերյալ հրատարակել է բազմաթիվ հոդվածներ տարբեր ամսագրերում և թերթերում:

1995թ. լույս է տեսել «Ար Աստծո պաշտամունքը Հայաստանում» աշխատությունը: Շարունակելով ուսումնասիրությունները՝ 2002թ. հրատարակել է «Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան» աշխատությունը: Իսկ ՀՀ պաշտպանության նախարարության «Հայրենիքի մարտիկ» ամսագիրը 2006թ. թիվ 1 համարը ամբողջովին նվիրել է Ա.Տերյանի տարբեր ժամանակներում լույս տեսած հոդվածներին (հիմնականում ռազմական թեմաներով, որոնք բացահայտում են հայոց հնագույն ռազմարվեստը և հայ ռազմիկի ոգին):

2004թ., 2006թ. զեկուցումներով հանդես է եկել տարբեր հայագիտական գիտաժողովներում: